

ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ԱՐԴԱՀԱՄՅԱՆ, Մ. ԱՂԱԲԵԿՅԱՆ, Զ. ԲԱՌՆԱՍՅԱՆ,
Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Վ. ԿԱՏՎԱԼՅԱՆ, Հ. ՄԵՍՐՈՊՅԱՆ,
Ժ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐԱԿ Ա

ԵՐԵՎԱՆ

ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2022

ՀՏԴ 811.1928

ԳՄԴ 81.51- 025.7

Բ 344

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Վ. Կատվայան

Բարբառագիտական հետազոտություններ: Պրակ Ա.- Եր.: ՀՀ

Բ 344 ԳԱԱ ԼԻ հրատ., 2022.- 179 էջ:

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների աշխատանքները, որոնք 2013 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում, գրքերում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի հնչունաբանության, բառապաշարի ու ձևաբանության ոլորտներում կատարված հետազոտությունների արդյունքներ, զուգադրահամեմատական բարբառագիտությանն առնչվող հարցեր: Ժողովածուն կարող է օգտակար լինել բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, ազգագրության մասնագետներին: Ներկայացված նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

ՀՏԴ 811.1928

ԳՄԴ 81.51- 025.7

ISBN 978-9939-9277-7-0

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2022

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը մեծ ավանդ ունի բարբառային հայերենի գիտական հետազոտության բնագավառում: Տասնամյակներ շարունակ բաժնի գիտաշխատողների ուսումնասիրության առարկան եղել են բարբառային առանձին միավորներ ու հատկանիշներ, բառապաշարային, հնչյունաքերականական զանազան իրողություններ, բազմաթիվ հրապարակումներում արծարծվել են բարբառագիտական տեսական հարցեր, առաջադրվել և իրագործվել են բարբառային խոսքի գրառման, ուսումնասիրության և նկարագրության նոր եղանակներ: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են տասնյակ մենագրություններում, հարյուրավոր հոդվածներում ու զեկուցումներում: Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով շուրջ 500 տետրերում գրանցվել են ինչպես Հայաստանի (առավելաբար՝ Արևմտյան Հայաստանի), այնպես էլ արտերկրի հայաբնակ բազմաթիվ բնակավայրերի խոսվածքներ:

Ներկայում լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում աշխատանքներ են ընթանում չուսումնասիրված բարբառային միավորների հետազոտության, հայ բարբառների պատմական և համեմատական ուսումնասիրության, բարբառային բառապաշարի, հնչյունաքերականական հատկանիշների տարածագործական հետազոտության, «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» ծրագրի իրականացման ուղղություններով: Կատարվում են բարբառագիտական ատլասի նյութերի թվայնացման, բարբառային հատկանիշների տարածման աղյուսակների կազմման, բարբառային ձայնադարանի համալրման աշխատանքներ:

Իր գիտական արդյունքները ի մի բերելու, հանրությանը և հատկապես բարբառագետների ու բարբառներով հետաքրքրվողների ներկա ու հաջորդ սերունդներին ամփոփ կերպով ներկայաց-

նելու նպատակով ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Բարբառագիտական հետազոտություններ» ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած տարբեր ամսագրերից ու ժողովածուներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Շարքի առաջին պրակը պարունակում է բաժնի աշխատակիցներ Ա. Աբրահամյանի, Մ. Աղաբեկյանի, Ջ. Բառնապանի, Գ. Գևորգյանի, Հ. Խաչատրյանի, Վ. Կատվալյանի, Հ. Մեսրոպյանի, Ժ. Միքայելյանի, Ս. Միքայելյանի, Գ. Մկրտչյանի աշխատանքները, որոնք 2013 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում, գրքերում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի հնչյունաբանության, բառապաշարի ու ձևաբանության ուղղորտներում կատարված հետազոտությունների արդյունքներ, զուգադրահամեմատական բարբառագիտությանն առնչվող հարցեր:

Վ. Կատվալյան

ԳԼՈՒԽ Ա. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԵՌԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Աղաբեկյան Մելադա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում ՀԲԱ ծրագրով¹ գրառված հայերենի տարածքային տարբերակների նյութերի համակարգչային մշակման՝ թվայնացման հարցը առաջ է քաշվել դեռ անցյալ դարի իննսունական թվականներին: Գործի կազմակերպմանը, սակայն, առաջին հերթին խանգարում էր մոտ 500 ձեռագիր միավորներում հայերեն բարբառների հնչատարբերակների համար օգտագործված տառադարձման անմիօրինակությունը, ոչ համակարգային բնույթը:

Բանն այն է, որ այդ նյութերի (այսուհետ նաև՝ տետրեր) հեղինակները ոչ միշտ են կիրառել հիշյալ հարցարան-ծրագրի կողմից առաջարկվող տառադարձումը: Հատկապես երբ անհրաժեշտ է եղել գրավոր արտահայտել մինչ այդ չնկարագրված, հետևաբար՝ համապատասխան գրանշաններ չունեցող հնչյուններ, նրանք օգտագործել են նաև այլ, երբեմն անհասկանալի տարբերակիչ (դիակրիտիկ) նշաններ կամ տառակապակցություններ: Բացի այդ, բարբառային հնչյունների համար ՀԲԱ ծրագրի կազմողների ստեղծած տառադարձման նոր համակարգը սկզբունքորեն հնից՝ աճառյանականից, ինչպես ընդունված է այն կոչել, չէր տարբերվում, թեպետ ուներ որոշ լրացումներ: Այս դեպքում, սա-

* «Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 154- 159:

¹ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր», Ե., 1977:

կայն, պահպանվելով հին, արդեն ավանդորդն ընկալվող գրանշանները, պահպանվում էին նաև հնչյունի գրանցման բազմիցս քննադատվող երկակի մոտեցումները: Այսինքն՝ մեկ պարզ հնչյունը տառադարձվում էր ոչ միայն մեկ, այլև երկու, իսկ երկբարբառը՝ նաև մեկ տառով: Ծրագրում, օրինակ, նշվում է. «*ը*՝ պարզ ձայնավոր (թեև արտահայտված է երկու տառով) ունի *ը*-ի և *է*-ի միջին արտասանություն»²: «...երկբարբառների արտահայտման համար պետք է առաջնորդվել ընդհանուր սկզբունքով՝ դրանք արտահայտելով ձայնավոր և ձայնորդ տառերի զուգորդություններով (*ուա, ուէ, աու, ըա, ուոյ* և այլն): Այստեղ բացառություն են կազմում միայն *ուօ, իէ, ուօ* երկբարբառները, որոնք ընդունված է բառամիջում արտահայտել *ո, է, ու* տառերով»³:

Պարզ էր, որ ձեռագիր նյութի թվայնացումը սկսելուց առաջ նախ անհրաժեշտ էր ստեղծել հայերենի բարբառային հնչատարբերակների տառադարձման համապարփակ, բայց միևնույն ժամանակ խիստ կանոններով ու սկզբունքներով կարգավորվող բաց համակարգ: Այն պետք է գերծ մնար երկակի չափանիշներ գործադրելուց և ընձեռեր ավելի մեծ հնարավորություններ ոչ միայն մեզ հայտնի, այլ նաև նոր, դեռ չբնութագրված հնչյունները գրավոր ձևով նկարագրելու համար:

Անցյալ դարի իննսունականների կեսերին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի մի քանի աշխատակիցներից կազմված խումբը մշակեց և գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց տառադարձման նոր համակարգի կազմման սկզբունքները, որոնք հավանության արժանացան: Երկու տարվա լարված աշխատանքի հետևանքով համակարգչային մշակմամբ ստեղծվեց հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը⁴, որը գիտխորհուրդը նույնպես դրականորեն գնահատեց: Այնուհետև 2009 թ. սկսվե-

² Նույնը, էջ 21:

³ Նույնը, էջ 22:

⁴ Մ. Աղաբեկյան, Ա. Հանեյան, Ռ. Ուռուտյան, *Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը*, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 2010, էջ 5-22:

ցին ՀԲԱ հարցարանով գրառված բարբառային միավորների թվայնացման աշխատանքները:

Բարբառագետների փոքր խումբը պետք է այդ տեսությունները նախապատրաստեր թվայնացման համար: Առաջին հերթին անհրաժեշտ էր նոր տառադարձմամբ շտկել ձեռագրերի բարբառային ձևերը: Խնդիր էր դրված ուղղումները կատարել այնպես, որ չխաթարվի թվայնացման աշխատանքների ընթացքը:

Ինչպես ձեռագիր բարբառային նյութերի համակարգչային մշակման խմբի, այնպես էլ այս կամ այն նպատակով դրանց առնչվողների համար գուցե ավելի հարմար կլինեին ձեռքի տակ ունենալ առկա բոլոր գրանշանների նորագույն համարժեքների առանձին աղյուսակ: Մակայն դրա ստեղծումը բավական ժամանակ կլիներ և կուշացներ թվայնացումը: Ուստի մենք հարմար գտանք ուղղումներն անել յուրաքանչյուր առանձին տետրում և այն հանձնել համակարգչային մշակման: Իսկ նշված տիպի աղյուսակ կարելի է կազմել հետագայում՝ բոլոր բարբառային ձեռագրերի տառադարձման աշխատանքները ավարտելուց հետո:

Հենց 2009 թ. սկսվեցին տետր առ տետր բարբառային նյութերի նոր տառադարձմամբ ուղղումները: Դրանք, բնականաբար, կատարվում են տեքստից դուրս, այլապես կառաջանան խճողումներ՝ խաթարելով բառաձևերի հնչարտաբերական յուրահատկությունների ընկալումը: Այսինքն՝ տվյալ հնչյունի համար օգտագործված, այսպես ասած, ոչ ճիշտ տառադարձումը տետրի սկզբում «Տառադարձում» վերնագրի տակ արտագրվելով՝ = նշանով ավելացվում է նրա նոր համարժեքը ($n=m$, $l'=l$, $\eta''=\eta$ և այլն): Բայց այդ նյութը թվայնացման նախապատրաստելու կամ հենց թվայնացման ընթացքում ի հայտ են գալիս զանազան խնդիրներ, որոնք անհապաղ լուծում են պահանջում:

Նախ նշենք, որ մենք հարմար ենք գտնում տետրի տեքստում չուղղել ոչ միայն կոնկրետ այս կամ այն բարբառային ձևի, ըստ մեզ, ոչ ճիշտ՝ հին գրանցումը կամ ընդհանրապես չտառադարձելը, այլ անգամ՝ վրիպակները: Որոշ դեպքերում, ասենք, տվյալ էտալոնային հնչյունի բարբառային երկու տարբերակները միանման

ձևով են տառադարձվել կամ հակառակը՝ միննույն երևույթը տարբեր ձևերով է ներկայացվել: Բնականաբար, միջամտությունը ճիշտ չի լինի, քանի որ մեր նպատակը ոչ թե հեղինակի կողմից հնչյունական ընկալումները, այլ տառադարձումները նորովի շտկելն է: Դա թողնելով հետագա հետազոտողներին՝ խուսափում ենք ձեռագրում հապճեպ արվող ուղղումների անընդունելի հետևանքներից:

Հաճախ դժվարություններ են հարուցում տառադարձման հին սկզբունքները: Այսպես՝ երկբարբառների, եռբարբառների բաղադրիչները, ինչպես վերը նշվեց, տեսրերում կողք կողքի առանձին տառերով ներկայացվելով՝ *ոււա, ոււէ, աու, ըա, ուոյ* և այլն, անտեսվում է այդ երկբարբառների բնույթը՝ բարձրացող-իջնող, իջնող-բարձրացող կամ բարձրացող-իջնող-բարձրացող և այլն: Տառադարձման նոր կանոնով, երկբարբառների բաղադրիչներից մեկը մյուսի ցուցիչում գրելով (բարձրացող՝ ^{ու}օ, իջնող՝ օ^{ու}, իջնող-բարձրացող-իջնող՝ ^ըօ^{ու} = ^ըօ^{ու}), կարողանում ենք տալ այդ հնչյունների ամբողջական նկարագիրը: Որոշ հեղինակներ (ինչպես օրինակ՝ Ա. Հանեյանը) սովորաբար նախաբանում գրում են, թե տվյալ բարբառային միավորի որ երկբարբառներն են բարձրացող կամ իջնող, որով հեշտանում է դրանց նորովի տառադարձումը: Սակայն, ցավոք, բարբառը գրանցողները քիչ դեպքերում են հարկ համարում ներկայացնել երկբարբառների համար օգտագործված այդպիսի տառամիացությունների արտասանական բնութագիրը:

Մյուս կողմից, ձայնավորների միմյանց հաջորդող գրությունը շփոթ է առաջացնում բուն երկբարբառների և երկհնչյունների կամ առանձին վանկեր կազմող տարբեր ձայնավորներով հորանջային երևույթների միջև: Այստեղ դժվարությունը տեսրերում միանման գրությամբ ներկայացվող այդ տարբեր բնույթի հնչյունական արտահայտությունները միմյանցից զանազանելն է: Դարձյալ շատ քիչ դեպքերում է, որ տվյալ տեսրի հեղինակը նշում է դրանց ինչպիսին լինելը: Այսպես. Խարբերդի նյութը գրանցողը (տեսրում անունը նշված չէ), օրինակ, գրում է, որ խոսվածքը երկբարբառ չունի, և բարբառին միջձայնավորային դիրքում յ-ի հավելումը

բնորոշ չէ: Հետևաբար՝ *էա*-ն երկբարբառ չէ. *կըքաշեաք, կըվարեաք*, նույնը և՛ *բաղըլաին մէշը, կըպառնաին, չաղաին* «երեխային», *ծիռ, կը խաղաին*, (տե՛ս տետր 213): Մինչդեռ շատ այլ տետրերում, կարելի է ասել, այս առումով լռություն է տիրում:

Տառադարձման հարցում կողմնորոշվելը ավելի դժվար է լինում, երբ բարբառային միավորը գրանցողները հնչյունները, առանց նկարագրելու, ներկայացնում են ինչ-որ անծանոթ գրանշաններով: Այդպիսի երևույթների սովորաբար հանդիպում ենք ոչ մասնագետ հեղինակների լրացրած նյութերում: Ընդհանրապես, ՀԲԱ հարցարանով ոչ մասնագետների գրառած բարբառային միավորները լեզվի ինստիտուտի բարբառագետները ժամանակին ստուգել և համապատասխան շտկումներ են արել: Բայց և այնպես, որոշ քանակի տետրեր, ինչպես երևում է, նման ձևով չեն խմբագրվել: Այս և վերը նշված մյուս դեպքերում հարցը պարզելու համար օգտվում ենք տվյալ բնագավառում առկա հետազոտություններից, դիմում ենք համապատասխան մասնագետի կամ կոնկրետ բարբառախոսի օգնության: Սակայն լուրջ դժվարություններ են առաջանում հատկապես արևմտահայ խոսվածքների համապատասխան շտկումների ժամանակ: Դրանցում ի հայտ եկող հարցականների պատասխանները գտնելը այսօր չափազանց դժվար, եթե չասենք՝ անհնար է: Ոչ քիչ դեպքերում տվյալ անհատը, որի խոսքը ժամանակին գրառել են, գտնված միակ, հաճախ՝ խիստ առաջացած տարիքում, բարբառակիր է եղել:

Ինչպես նշեցինք, նոր համակարգը ընձեռում է հնչյունները հնարավորինս ճիշտ տառադարձելու միջոցներ: Մինչդեռ մեր ուղղումների ընթացքում առայժմ որոշ գրանշաններ շատ քիչ կամ բոլորովին չեն օգտագործվել: Դրա հիմնական պատճառը, կարծում ենք, այն է, որ բարբառային միավորը գրանցողը այս կամ այն հնչյունի հատկանիշները ոչ միշտ է ճիշտ ընկալել կամ էլ՝ էտալոնային հնչյունի համեմատ փոքր տարբերությունը ոչ էական համարել: Բայց պարզվեց նաև, որ նոր համակարգում չենք տեղադրել, օրինակ, քմային բոլոր բաղաձայնները, որոնք բնորոշ են հատկապես Արցախի որոշ խոսվածքների: Թվայնացնող խմբի դե-

կավարը՝ Ռ. Ուռուտյանը, բացը լրացրեց՝ օգտագործելով տառադարձման նոր համակարգի հնարավորությունները (*բ, բ, դ, մ, ս, ծ* և այլն)՝ առանց խախտելու ընդունված սկզբունքներն ու կանոնները:

Մեր նախաձեռնությամբ սկսեցինք նաև հայերենի տարածքային տարբերակների ՀԲԱ ծրագրով լրացված ձեռագիր միավորների բազմահատկանիշ դասակարգմամբ թվայնացման աշխատանքները: Ինչպես հայտնի է, Գ. Զահուկյանը իր աղյուսակներում տեղադրել է այդպիսի 120 միավոր⁵: Մինչդեռ մենք պետք է կարողանանք ձեռագիր վավերացում ունեցող մոտ 500 բարբառային միավորների ճիշտ տեղերը գտնել այդ նույն աղյուսակներում: Մեզ այս հարցում, իհարկե, օգնում են բարբառը լրացնողի հաղորդած՝ հատկապես արևմտահայ բարբառախոսների հայրենիքի, այնտեղի բարբառակիր բնակիչների մասին տվյալները: Երբեմն տեսրերում հանդիպում է տվյալ բարբառային նյութը գրանցող կամ խմբագրող բարբառագետի հստակ կարծիքը այդ միավորի, այսպես ասած, բարբառային պատկանելության վերաբերյալ: Բայց նման տեղեկությունները, ցավոք, դարձյալ ընդհանուր բնույթ չեն կրում:

Ծագումնաբանական խնդիրները լուծելու ամենավստահելի մեթոդը, իհարկե, տեսրերում գրանցված և Գ. Զահուկյանի ընտրած 100 բարբառային հատկանիշներ⁶ համեմատության արդյունքներով կողմնորոշվելն է: Մենք, առաջնորդվելով այդ սկզբունքով, հրաժարվում ենք, սակայն, հեղինակի օգտագործած վիճակագրական մեթոդը գործադրելուց, քանի որ այն մեզ համար առայժմ դժվար ու ժամանակատար է: Այդպիսով խնդրո առարկա միավորների մեր դասակարգումը ինչ-որ չափով ընդհանուր բնույթ ունի: Այսինքն՝ որոշվում է, թե քննվող միավորը մոտավորապես որ բարբառին է պատկանում, բայց վերջինիս խոսվածքների հետ նրա ունեցած առնչակցությունների բացահայտումը մնում է հետագա հետազոտողներին: Իսկ տեսրերում առկա և ջահուկյանական

⁵ Գ. Բ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132-136:

⁶ Տե՛ս նույնը, էջ 45-119:

հատկանիշների համեմատությամբ որոշված բարբառային միավորը մեր կազմած աղյուսակում տեղադրվում է աստղանիշով: Մինչ այժմ բազմահատկանիշ դասակարգման աղյուսակում կարողացել ենք տեղադրել տետրերում գրանցվածների մեծ մասը:

Այսպիսի աղյուսակը առաջին հերթին կօգնի տետրերից օգտվողներին առանց երկար փնտրտուքների իրենց անհրաժեշտ բարբառային նյութը ավելի արագ գտնել: Այն միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս պարզելու ՀՀԱ ծրագիր-հարցարանով հավաքված նյութերում այս կամ այն բարբառային միավորի ներկայացվածության քանակը կամ՝ իսպառ բացակայությունը: Հասկանալի է, որ դաշտային աշխատանքների (սկսվել են յոթանասնականների վերջերին) հիմնական ուղղվածությունը եղել է Արևմտյան Հայաստանի, իրանահայ միջավայրի բարբառային միավորները կորստից փրկելը, և գրանցվածների մոտ կեսը (200-ից ավելի) հիշյալ տարածքներից է: Այդ նյութը, սակայն, ըստ բարբառների, հավասարաչափ բաշխվածություն չունի հասկանալի պատճառներով: Եթե Մուշի, Մասունի, Վանի, Խոյի բարբառներն, ասենք, դասակարգման աղյուսակում կարողանում ենք ներկայացնել՝ յուրաքանչյուրը մի քանի տասնյակ միավորով, իսկ մյուսները՝ ընդամենը մեկով կամ մի քանիսով, ապա Մարզվան-Ամասիայի, Ղրիմ-Նոր Նախիջևանի, Միվրիհիսարի, Կյուրիհի, Սյոյոզի, Կեսարիայի, Արդեալի բարբառների վանդակները դեռ բաց են մնում: Գրեթե նույնը կարելի է ասել նաև արևելյան խմբակցության բարբառների վերաբերյալ:

Այսպիսով՝ սկսվել է հայագիտության համար շատ կարևոր մի գործ: Հայերենի տարածքային տարբերակների ձեռագիր նյութերի թվայնացմամբ ոչ միայն դրանց երկարակեցությունը, այլև համացանցի միջոցով միջազգային շրջանառությունն է ապահովվում: Ցավալին այն է, որ մեր բարբառային միավորների ամբողջական պատկերը թերի է, քանի որ դրանց հավաքչական գործը դեռ չի ավարտվել: Այն ընդհատվեց, և վերականգնումը աններելիորեն ուշանում է, մինչդեռ և՛ արևմտյան, և՛ արևելյան տարբերակների անկասելի կորուստը շարունակվում է:

Агабекян Мелада – Проблемы оцифровки письменных материалов армянских диалектов. – В институте языка НАН Армении с 2009 года начались работы над оцифровки письменных материалов армянских диалектов. Задачей группы диалектологов института -подготовление около 500 письменных единиц к оцифровк. В основном надо транскрибировать диалектные формы этих материалов по новой, единой транскрипционной системе. Во время работы возникают разные проблемы требующие неотложные решения. Началась также оцифровка классификации этих диалектных единиц.

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱԳԱՆՁԻ ԵՐԱԽՏԱՎՈՐ
ԳՐԱՌՈՂՆԵՐԸ^{*}

Մեսրոպյան Հայկանուշ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Վանի բարբառը մեր մայրենի լեզվի անկապտելի մասն է, նրա հարստությունը: Բարբառախոս բնօրրանի կորստի հետևանքով Վանի բարբառը մոռացվել է: Մինչև 1915 թ. Վանի բարբառը կենսունակ հաղորդակցության միջոց էր Վան քաղաքի, քաղաքամերձ Ավանց, Շահբագ, Մոզահ, Լեզք, Կուռուբաշ, Արտամետ, Բերդակ, Ծվստան և այլ գյուղերի, ինչպես նաև Հայոց ձորի, Արձակի, Արծկեի, Թիմարի, Խոշաբի, Բերկրու, Արճեշի և Ալջավազի գավառների հայության համար: Վանի բարբառի խոսվածքներով էին հաղորդակցվում Շատախում, Մոկսում, Ոստանում, Կարկառում, Գյավաշում, Կարճկանում, Ոզմում բնակվող հայերը:

Վանի ինքնապաշտպանական մարտերից հետո՝ 1915 և 1918 թթ. հայրենիքից արտագաղթող վասպուրականցիները շարժվում են տարբեր ուղղություններով: Վանի նահանգի բնակչության մի մասը Վան-Բաղդադ երկաթուղու ճանապարհով նախ անցնում է Իրաք՝ հիմնականում բնակչություն հաստատելով Բաղդադում: Քաղաքաբնակներն ընթանում են դեպի հյուսիս-արևելք՝ մասնավորաբար Երևան, Թիֆլիս, գյուղական բնակչությունը հաստատվում է Արարատյան դաշտում, ինչպես նաև Թալինում, Ապարանում, Վարդենիսում և այլուր: Վասպուրականցիներից շատերին ճանապարհներն ավելի հեռու են տանում՝ Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր քաղաքներ՝ Գանձակ, Նովոռոսիյսկ, Կրասնոդար, Դոնի Ռոստով և այլուր: Բարբառակիրների այսպիսի լայնա-

^{*} Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1, Վան, Ե., 2013, էջ 293-297:

¹ Տե՛ս *Վանի բարբառային բառազանձի երախտավոր գրառողները*, «Հայաստանի մայրաքաղաքները», գիրք 1, Վան, 2013, էջ 293-297:

ծավալ ընթացքը պատճառ է դառնում Վասպուրականի հանրության մասնատման և Վանի բարբառի աստիճանական մահացման:

Բարբառագիտական գրականության մեջ Վանի բարբառը հայտնի է որպես արևմտյան խմբակցության բարբառախմբի «կը» ճյուղի բարբառ, որն ունի երկշարք ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ (*պ-փ, կ-ք, տ-թ, ճ-ջ, ծ-ց*): Մ. Աբեղյանը Մոկսի, Շատախի, Վանի խոսվածքներն այնքան մոտ է համարում, որ դիտարկում է միասին՝ նշելով քերականական ոչ էական տարբերություններ: Գ. Ջահուկյանը բազմահատկանիշ դասակարգման սկզբունքով Մոկսի և Շատախի լեզվական միավորները ներկայացնում է որպես Վանի բարբառի խոսվածքներ²:

Բարբառի հիմնական հատկանիշներից են ձայնեղ բաղաձայնների խլացումը (գոյն > *կո՛ն*, ձոր > *ծո՛ր*, բոյս > *պո՛ւս*, բողկ > *պո՛խկ*, բոյն > *պո՛ն*, գող > *կո՛ղ* և այլն), դրանց հաջորդող ձայնավորների քմայնացումը (բարակ>*պա՛յրակ*, գագաթն> *կա՛լկա՛յթ*, դալար > *տա՛լա՛ր*, ձախ > *ծա՛խ*, ջուր > *ճո՛ւր* և այլն): Վանի բարբառի այս կարևոր առանձնահատկությունը Հ. Աճառյանը ձևակերպում է այսպես. «Վանի բարբառում *ա* ձայնավորը, գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է *ա՛*, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է *ա*»: Ապա ավելացնում է. «Այս կանոնը այնպիսի հետանկարներ է բաց անում մեր առաջ և այնպիսի գաղտնիքների բանալին է հանդիսանում, որ ես համարում եմ իմ բոլոր բարբառագիտական աշխատանքների պսակը և հրճվանքով լցված անվանում եմ «Աճառյանի օրենք»³:

Վասպուրականցիների խոսքում *հ*-ն միշտ և բոլոր դիրքերում դառնում է *խ* (հայ > *խայ*, համ > *խամ*, հացահան > *խացխան*, հին > *խին*, հոտ > *խոտ*, պահել > *պախել*, մահ > *մախ* և այլն): Գրաբարի *ը* ձայնավորով սկսվող բառերը բարբառում կորցնում են այդ ձայնավորը կամ փոխարկում *ի*–ի (ընկեր > *ինգեր* կամ *գեր*, ընկոյգ > *գո՛գ*): Բարբառում առկա են *ե* և *ո* երկբարբառներ, *էօ*, *իւ* երկհնչյուններ: Հոլովման համակարգում եզակի բացառականը կազմ-

² Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

³ Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*. Ե.: 1952. էջ 20:

վում է *-ից, -ուց* (պապիկ > *պապկից*, երկինք > *երկնուց*, այր > *հրիմուց*), երբեմն՝ *-նէ* (կարմրութիւն > *կարմրութնէ*) վերջավորություններով, հոգնակի սեռականը՝ *-աց* (հացերի > *խացերաց*, կանանց > *կիկտերաց*) հոլովակերտով: Բարբառին բնորոշ չէ գրաբարյան հայցական հոլովի *զ* նախդիրը: Հոգնակիակերտներից են՝ *-եր* (հող > *խողեր*, ձիւն > *ծնէր*), *-ներ* (կաքաւ > *կաքաւներ*, արեւ > *արիւմներ*), *-ք* (լեզու > *լէզիւք*, կատու > *կատուք*), *-տեր* (տղայ > *տղէտեր*), *-ստար, -ստանք* (այգի > *էկէստար*, սատանա > *սատանէստար*) և այլն: Անորոշ հոդը ետադաս է (մի ձի > *ծիւ*, մի շուն > *շոււ*, մի հաց > *խացըւ*, մի տուն > *տոււ*): Բայն ունի *-ել, -իլ, -ալ* լծորդություններ (փշիլ > *պլէլ*, այրել > *իրիցել*, գովել > *կէօվալ*, ծիծաղիլ > *ծծղալ*, շարել > *շարիցի*, շրջել > *սռճիցի*): Վաղակատար դերբայը կազմվում է *ը* մասնիկով (լսել եմ > *լսիր եւ*, եկել ես > *իկիր ես*)⁴:

Վասպուրականցիների լեզվական հարստության հիմնական մասը գրաված և ուսումնասիրված է⁵: Վանի բարբառային նյութի պահպանմանը մեծապես նպաստել են Գյուտ քահանա Աղանյանը, Ն. Աղանյանը, Ե. Լալայանը, Ավ. Իսահակյանը, Խ. Լևոնյանը, Գ. Ծիլվանը, Ս. Հայկունին, Մ. Մկրյանը, Տ. Նավասարդյանը, Գ. Շերենցը, Գ. Սրվանձտյանցը, Ա. Տեր-Մարգսյանցը, Ղ. Փշիկյանը, Ղ. Փիրդալեմյանը և այլք, որոնք «Արարատ», «Արևելեան մամուլ», «Էմինեան ազգագրական ժողովածու», «Լուսա», «Ազգագրական հանդէս», «Աւետաբեր», «Բիւրակն», «Ծաղիկ» և այլ պարբերականների էջերում տպագրել են տարբեր ժանրերի բանահյուսական ստեղծագործություններ, գրի առել առածներ, հեքիաթներ, կազմել ժողովրդական երգերի ժողովածուներ:

Հր. Աճառյանը՝ իր գրքում մանրամասն ներկայացնելով բարբառի հնչյունական, քերականական, ձևաբանական և այլ առանձնահատկություններ, աշխատության վերջում ներկայացնում է

⁴ Տե՛ս Հր. Աճառյան *Քննություն Վանի բարբառի*, Ե.: 1952, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառային ձեռագիր նյութ N 7:

⁵ Հր. Աճառյան *Քննություն Վանի բարբառի: Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն*, Ե.: 1953: Մ. Մուրադյան, *Շատախի բարբառը*, Ե., 1962 և այլն:

բարբառային բառերի համառոտ բառարան: Բառարանի հավաստիության մասին այսպես է վկայում մեծ բարբառագետը. «Վանի բարբառի քննությունը ձեռնարկել եմ Էջմիածնում 1898-1902 թվերին, երբ Գևորգյան ճեմարանում տաճկերեն լեզվի ուսուցիչ էի: Ինձ աջակցում էին բարձր լսարանների տասնյակ ուսանողներս, որոնք բոլորը նոր էին գաղթել Վանից և շատ լավ գիտեին իրենց մայրենի բարբառը»⁶: Այսպես ջանադիր բառարանագիր է հիշատակում Մելիքսեթ Տեր-Ղազարյանին, որի կազմած ընդարձակ և մասնագիտական բառարանի հիման վրա էլ կատարել է իր քննությունը⁷:

Վանի բարբառի լիակատար բառարան կազմելու հաջողված փորձ է կատարել վանեցի պատմաբան Հ. Թուրշյանը (1900-1978)⁸: Նա հայտնի է «Սարդարապատի հերոսամարտը» (1965՝ երկրորդ հրատ. 1969) բարձրարժեք ուսումնասիրությամբ, հայ ժողովրդի պատմությանն ու կենցաղին նվիրված այլ հետազոտություններով⁹, ինչպես նաև Գորկու, Հերցենի, Բելինսկու և ռուս այլ հեղինակների երկերի՝ ռուսերենից կատարած թարգմանություններով:

Բարբառագետ Մ. Մուրադյանը, որը 1977 թ. բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի համաձայն գրի է առնել Վան քաղաքի խոսվածքը, տետրի առաջաբանում գրում է. «Բառային հատկանիշները լրացնելիս մեզ համար տեղեկատու է եղել Վան քաղաքի նախկին բնակիչ, պատմաբան Հարություն Թուրշյանը: Նա Վանից գաղթել է 1915 թվականին և հիմա պատկառելի ծերունի է: Բառային հատկանիշները լրացնելիս մենք օգտա-

⁶ Հր. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե.: 1952, էջ 5:

⁷ Նշվ. աշխ. էջ 6:

⁸ Հ. Թուրշյան, *Բառարան Վանի բարբառի*, Աշխատասիրությամբ՝ Հ. Մեսրոպյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. Ե.: 2018:

⁹ Տե՛ս, օրինակ, Հ. Թուրշյան, *Շահ-ի-Արմեններ, ՊԲՀ*, 1964, թիվ 4, էջ 117-134: Նույնի՝ Զրօգտագործման սիստեմը Վասպուրականում, ՊԲՀ, 1967, թիվ 2-3, էջ 246-253: Նույնի՝ Պահլավունիների վերելքն ու անկումը XI-XIII դարերում, ՊԲՀ, 1974, թիվ 1, էջ 147-161: Նույնի՝ Սուրհանդակային սպասարկությունը միջնադարյան Արևելքում, ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 105-114: Նույնի՝ Սարդարապատի թիկունքը (Սարդարապատի հաղթանակի 60-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1978, թիվ 2, էջ 67-73: Տե՛ս նաև՝ Վ. Միքայելյան, Սարդարապատի հերոսամարտի առաջին մեկնաբանը, «Երկիր», 28 մայիսի, 1998 թ.:

գործել ենք նաև ընկ. Թուրշյանի կազմած Վանի բարբառի բառարանի (ձեռագիր է) տվյալները»¹⁰:

Բարբառագետ Մ. Մուրադյանի այս վկայությունը խոսում է Թուրշյանի կազմած բառարանի կարևորության մասին: Այն, թեև ձեռագիր, մոտավորապես 30 տարի առաջ անգամ կատարել է իր գիտագործնական բարբառանպաստ դերը՝ որպես արժանահավատ և վստահելի աղբյուր:

Արժեքավոր է հատկապես Հ. Թուրշյանի բառարանի առաջաբանը, որում հեղինակը խոսում է Վանի տեսարժան վայրերի, կրթամշակութային հաստատությունների, սովորույթների, բարբառի մի շարք առանձնահատկությունների մասին, հանգամանորեն հիշատակում բոլոր երախտավոր վանեցիներին, որոնք զրի են առել բարբառային բառազանձը՝ փրկելով այն անդարձ կորստից: Թուրշյանն անդրադառնում է Վանի բարբառին նվիրված ուսումնասիրություններին և բառարանային նյութերին, կատարում մի շարք արժեքավոր դիտարկումներ և ճշգրտումներ:

Առաջաբանը տեղեկացնում է, որ Վանի բարբառի բառարաններ առաջինը կազմել են վանեցիներ Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրդալեմյանը (1830-1891), Արսեն վարդապետ Թոխմախյանը (1843-1892) և Արիստակես վարդապետ Տեկանցը, որոնց բառարաններն ունեցել են տարբեր ճակատագրեր և չեն տպագրվել: Երուսաղեմում վախճանված Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրդալեմյանի ձեռագրերը Երուսաղեմից ուղարկել են Թիֆլիս՝ Գյուտ քահանա Աղանյանին, որը գուցե բառացանկը որոշակի մշակումից հետո 1898-99 թթ. հրատարակել է «Լումայի» էջերում՝ «Գաւառաբառեր» վերնագրով¹¹:

Արսեն վարդապետ Թոխմախյանի կազմած բառարանը նույնպես չի տպագրվել: Մկրտիչ կաթողիկոսի եղբորորդին՝ Խորեն Խրիմյանը, 1909 թվականին Թիֆլիսում Թոխմախյանի բառարանը նվիրում է Սահակ վարդապետ Ամատունուն, որն էլ գրառած նյութերը ներառում է իր «Հայոց բառ ու բանում»: Ամատունու բա-

¹⁰ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառային ձեռագիր նյութ N 7:

¹¹ Հր. Աճառյան. *Քննություն Վանի բարբառի*. Ե. 1952. էջ 7:

ռարանի «Յառաջաբանում» կարդում ենք. «Բառակոյտ հայկազեան լեզուի, ժողովեց Արսէն վարդապետ Թոխմախեան Վանայ կեդրոնական բանդում, ձեռագիր»¹²:

Հ. Թուրշյանը հիշատակում է Արմենակ Մաքսապետյանին, որը 1954 թվականին Թեհրանում պրոֆ. Ռուբեն Աբրահամյանի խմբագրությամբ լույս է ընծայում «Ֆարսի և արաբ բառերը Վանի բարբառի մեջ» ուսումնասիրությունը:

Պատմաբանը նշում է, որ Վանի բարբառի բառարան կազմելու ջանքեր է գործադրել Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանը (1840-1892), որի «Համով-հոտով» և «Մանանա» երկերի վերջում գետեղված են Վանի և Մշո բարբառների համառոտ բառարաններ: Հ. Թուրշյանն անդրադառնում է համաքաղաքացի Գևորգ Շերենցին (1848-1921), որը շրջագայել է գավառից գավառ, գյուղից գյուղ ու արժեքավոր նյութեր հավաքել իր «Վանայ սագ» և «Պանդուխտ վանեցին» ժողովածուների համար, որոնց վերջում գետեղել է բարբառային բառարաններ:

Բառարանագիրների շարքում Հ. Թուրշյանն առանձնացնում է հատկապես Հր. Աճառյանին և ընդգծում նրա մեծ դերը Վանի բարբառի պահպանման գործում:

Մինչ բարբառը բառարանագրելը, Հ. Թուրշյանը ներկայացնում է բարբառախոս միջավայրի առանձնահատկությունները, ընդգծում, որ քաղաքի բառապաշարը տարբերվում էր գյուղերի բառապաշարից, քաղաքի ներսում էլ հայ բնակչության տարբեր խավերի խոսքն ուներ բարբառային ոճական տարբերություններ, անգամ տղամարդիկ և կանայք տարբերվում էին իրենց խոսքով: Պաշտոնատար անձնանց, կառավարող դասի և շուկայի հետ առնչվող հայերի բառապաշարում զգալի թիվ էին կազմում թուրքերեն բառերը: Հայերենն ավելի անաղարտ էր պահպանվել գյուղերում, հատկապես կանանց բառապաշարում: Կանայք տանից հազվադեպ էին դուրս գալիս, չէին շփվում արտաքին աշխարհի հետ, որի հետևանքով նրանց խոսքը զերծ էր մնում թուրքաբանություններից:

¹² Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ*, 1912, էջ ԺԱ:

Հ. Թուրշյանը համեստորեն նշում է, որ իր ուժերից վեր է բառերի ծագման մասին խոսելը, ուստի աշխատել է ներկայացնել միայն բառերի լուսանկարչական պատկերը, որ մնացել է իր հիշողության մեջ:

Վանեցու պատկերավոր լեզվամտածողությունը, խոսակցական լեզվի հարստությունը, բարբառի ճկունությունը ցույց տալու համար Հ. Թուրշյանը վկայաբերում է *մեռնել* բայի հոմանիշները:

«*Մեռավ* (սովորական, անհայտ մեկը) // *վախճանվեց* (հոգևորականը, բարեգործը, վաստակավորը) // *խանգավ* // *ննջեց* (առաքինի անձնավորությունը) // *խանգստացավ* (երկար ժամանակ տառապած մարդը) // *ծեռից կընաց* (երբ կարելի էր փրկել, սակայն անտերությունից և անփութությունից մահանում է) // *տան սյունն ընկավ* (երբ մեռնողը տան կերակրողն է) // *ճըրաքը մարեց* (երբ մեռնողը տվյալ ընտանիքի վերջին ներկայացուցիչն է) // *պաղեց* // *վռտները փրոտեց* // *խոկի՛ն տըվեց* // *ճո՛ջ քուն քընեց* (երբ հայտնողը չի համակրում մեռնողին) // *սատկեց* (անասունը, թուրքը, գողավազակը, վատ հայը) // *խատավ* (անասունը, թուրքը, հատկապես քուրդը) // *դարդավարամ էլսիլ* (վշտահարը) // *ճըմեց* (մեծահարուստ վատ հայը) // *շանսատակ էլսիլ* (գող-ավազակը) // *նազաստան ընկավ-մեռավ* (սովորական մարդու հանկարծամահ լինելը) // *պըրթաց* (վատ մարդու հանկարծամահ լինելը) // *թօջկեց* (տեղորի ենթարկվածը) // *Քրիստոս կանչեց* (բողոքականը)»¹³:

Բառարանում ընդգրկված են պարսկերեն, արաբերեն և թուրքերեն բառեր, որոնք հետաքրքիր են միևնույն տարածքում խոսվող լեզուների փոխազդեցության տեսանկյունից: Բառարանում կան նաև արդի գրական և խոսակցական հայերենում գործածվող մի շարք բառեր (*վերջնեկ*, *չայ* և այլն)՝ խոսուն բնագրային օրինակներով:

Հ. Թուրշյանի բառարանը հարուստ է բնագրային հետաքրքիր օրինակներով, առաձներով ու ասացվածքներով, որոնք առանձնակի արժեք կարող են ներկայացնել ոչ միայն բարբառագետների,

¹³ Հ. Թուրշյան, *Բառարան Վանի բարբառի*, Աշխատասիրությամբ՝ Հ. Մեսրոպյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2018, էջ 147:

այլն ազգագրագետների, պատմաբանների, Վանով ու վանեցի-
ներով հետաքրքրվողների համար: Ահավասիկ մի քանի օրինակ՝
վանեցիների պատկերավոր մտածողության շտեմարանից:

«Վանըցու կաղ Հընդըստան ի խասե:

Էրկու քո՛ւրդ մէջ քա՛յրվան, էրկու կընհիկ մէջ դիվան:

*Քայրվընջու էթալ -կալը չեն խարցուցի, վաստակ կըխարցու-
ցեն:*

Քանի կեր, պատանք չըկեր, վոր մեռավ, քումբեր կապեցին:

Ճըշնէն իկուց խան թալ տո՛ւս, ֆուկարի վոտ՝ տընհց»¹⁴:

Հ. Թուրշյանը ցավով է ավարտում իր խոսքը. «Իմ ծննդա-
վայրը, որ հազարամյակներ շարունակ շողշողացել է ոչ միայն
հայոց պատմության մեջ, այլև դրանից էլ շատ առաջ, այսօր սոսկ
երազ ու հուշ է դարձել նրա հարազատ զավակների համար:
Վանեցին այսօր կա ու բազմանում է, և այս բառարանը Վանի
հուշարձանն է, այդ ժողովրդի բազմերանգ լեզվի հուշարձանը¹⁵»:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնին
ևս հաջողվել է վերապրած վանեցիներից գրի առնել Վան քաղաքի
և հարակից Հազարեն, Բերկրի, Դարման, Ծվստան, Կողպանց, Շու-
շանց, Կյուսնենց, Մխկյա, Մխկներ, Լէսք, Ավրակ, Խավենց, Քոեր,
Այյուր, Գոմա, Արձակ, Աղբակ, Խէք, Հառեն (Արձկե), Արջրա (Արձ-
կե), Առնջկույս (Արձկե), Ծայծակ (Արձեշ), Խարկեն (Արձեշ), Կըտ-
րած քար (Արձեշ), Բոլորմակ (Արձեշ), Մանդան (Արձակ), Սևան
(Արձակ), Զարանց (Արձակ), Լիմ (Արձակ), Դոնաշեն (Թիմար),
Քոճանի (Յաժի Թիմար), Գործոթ (Բերկրի), Գուզակ (Բերկրի),
Հուդթուկ (Խոշաք), Հնդստան (Խոշաք), Զենիս (Խոշաք), Հօրմրո՛ւր
(Վերին Հայոց ձոր), Նոր գեղ (Հայոց ձոր) բնակավայրերի խոս-
վածքները:

¹⁴ Հ. Թուրշյան, *Բառարան Վանի բարբառի*, Աշխատասիրությամբ՝ Հ. Մեսրոպ-
յանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2018, էջ XIX, էջ XII:

¹⁵ Նշվ. աշխ., էջ XIX:

Месропян Айкануш - Преданные лексикографы ванского диалекта.- В статье представлены преданные лексикографы ванского диалекта-одной из забытых региональных вариантов армянского языка. До 1915 г. Ванский диалект был основным средством общения для армян Васпуракана. После самообороны Вана в 1915 и 1918 гг. васпураканцы, эмигрировавшие с родины, движутся в разных направлениях. Масштабный процесс миграции диалектоносителей вызывает раздробленность васпураканской общности и постепенную гибель ванского диалекта.

Основная часть языкового богатства васпураканцев записана и изучена. Сохранению ванского диалектного материала способствовали Г. Агаян, Н. Агаян, Е. Лалаян, А. Исаакян, Х. Левонян, Г. Тсильван, С. Айкуни, М. Мкрян, А. Тевканц, Т. Навасардян, Г. Шеренц, Г. Срвантсянц, А. Тер-Саркисянц, Г. Пшикян, Г. Пирга-лемян, А. Тохмахян, А. Максапетян, Р. Ачарян и А. Туршян.

Вышеуказанные лексикографы сохранили основную лексику диалекта Вана, интересные образцы речи, словосочетания, пословицы, поговорки, сказки, народные песни и другие языковые единицы.

Mesropyan Haykanush - Devoted lexicographers of the Van dialect. - The article presents the devotees of the lexicography of the Van dialect, one of the forgotten regional variants of the Armenian language. Until 1915, the Van dialect was the main means of communication for the Armenians of Vaspurakan. After the self-defense of Van in 1915 and 1918. Vaspurakans who emigrated from their homeland are moving in different directions. The large-scale process of migration of dialect speakers causes the fragmentation of the Vaspurakan community and the gradual death of the Van dialect.

The bulk of the linguistic wealth of the Vaspurakans has been recorded and studied. The preservation of the Van dialect material was facilitated by G. Aganyan, N. Aganyan, E. Lalayan, A. Isahakyan, K. Le-

vonyan, G. Tsilvan, S. Haikuni, M. Mkryan, A. Tevkants, T. Navasardyan, G. Sherents, G. Srantsyants, A. Ter-Sarkisyants, G. Pshikyan, G. Pirgalemyan, A. Tokhmakhyan, A. Maksapetyan, R. Acharyan and A. Turshyan.

The above lexicographers have preserved the basic vocabulary of the Wang dialect, interesting speech patterns, phrases, proverbs, sayings, fairy tales, folk songs and other language units.

ԳԼՈՒԽ Բ. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ*

Կատվայան Վիկտոր
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բարբառի հնչյունական համակարգի ամբողջական բնութագրումը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր հնչյունի հնչյունախոսական ու հնչույթաբանական նկարագրություն, այլ նաև նրա սերման, պատմական ու համաժամանակյա հնչյունափոխական, տարբեր հնչյունադիրքերում հանդես գալու յուրահատկությունների, ձևակազմական ու բառակազմական դրսևորումների ներկայացում¹: Այս առումով հետաքրքրական պատկեր է ներկայացնում Բայազետի բարբառի ձայնավորական համակարգը, որն ընդհանուր հայերենյան ձայնավորներից բացի ընդգրկում է նաև բարբառային մի շարք հնչյուններ: Անդրադառնանք բարբառիս ձայնավոր հնչյուններին առանձին – առանձին:

ա. հետին շարքի ստորին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի **ա**-ից: Ունի դիրքային և տարբերակ, նվազագույն հակադրության մեջ է և հնչույթի հետ /քար-քան, թափուկ - թանփուկ, թալ - թալ/: Համապատասխանում է հինհայերենյան **ա**-ին /բարձր > բ'անցըր, քար > քար, վարդ > վառթ/, երբեմն էլ՝ այլ հնչյունների, ինչպես՝ գովել > գ'ովալ, դեպի > դըբա, խօսել > խօսալ, շնորհաւոր > շընախաւոր, սկեսրայր > կէսրար, փայծաղն > փացեղ: Պատմականորեն սղվել է երեք և ավելի վանկ ունեցող բառերի նախաշեշտ վանկում /բաժանել >

* «Ձախուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 179-189:

¹Տե՛ս նաև Հ. Պետրոսյան, *Ղարաբաղի բարբառի հնչյունական կազմը*, Բանբեր Ե.ի համալսարանի, Ե., 1986, 2, էջ 53-54:

բ'աժնել, վաստակել > վաստրկել, չարչարել > չարչրել, ուրախանալ > ուրխընալ, մկրատել > մըգրըդել, միայնակ > միյնակ, դադարել > դ'աթրել, արիւնաթաթախ > արընթըթախ/, երբեմն էլ սղվել է առաջին վանկում /համար > խըմար, շալակ > շըլակ, լակել > լրկել, ամէն > հ'ըմէն, անցանել > հընցընել/²: Շեշտից գրկվելով՝ բազմավանկ բառերի վերջնավանկի **ա**-ն սովորաբար սղվում է /բ'ամբակ – բ'ամբրկէ, բ'արակ – բ'արկել, գ'անգատ – գ'անգըտել, գ'անգըտվոր, գ'երեզման – գ'երեզմըները, երկանք – երկընքի/: Բառավերջի **ա**-ն բառի հոլովման ժամանակ ընկնում է /տըղա – տըղի, տըղից, տըղով, գ'աթա – գ'աթի, գ'աթից, գ'աթով/, ավելացող հոդից և **ք** հոգնակերտից առաջ դառնում է **է** /տըղէս, տըղէն, գ'աթէն, գ'աթէքը, գ'աթէքով/: Բարբառումս **ա** ձայնավորը լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ է մ հնչյունի հետ, ուստի ունի գործառական սահմանափակություն. հանդես չի գալիս բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ բաղաձայններից /բացի **հ** և **խ** շփականները/, **մ** և **ն** ձայնորդներից հետո³: Այլ դիրքերում **ա** ձայնավորը կիրառության որևէ խոչընդոտ չունի, չնայած նկատելի է, որ բառավերջում սրա դրսևորման դեպքերը համեմատաբար սակավ են: Բառակազմական պլանում **ա**-ն հանդես է գալիս հոդակապի արժեքով /ջ ոչախան, գ'եղախըրիկ, խանքապատառ, ծմա**ա**յօթիկ/: Ձևակազմական պլանում **ա**-ն դրսևորվում է իբրև օժանդակ բայի ձև /էթում **ա**, նըստում **ա**/, բայական վերջավորություն /տէս**ա**, գ'ըր**ա**՝ «գրի՛ր», գ'ըր**ա**՝ «գրի՛»/, խոնարհիչ /էթ**ալ**, մըն**ալ**, խասկըն**ալ**/, հոլովիչ /Հ'երէվն**ա**՝ «Երևանի», Հ'երէվն**ա**ն՝ «Երևանին», Հ'երէվն**ա**՝ «Երևանից», թունդըր**ա**, բանակ**ա**/:

Ա. հետին շարքի ստորին բարձրացման շրթնայնացած ձայնավոր է՝ մոտավորապես **ուա** սերտ արտասանությամբ: Ա հնչույ-

² Պատմական մասնավոր փոփոխություններին այստեղ չենք անդրադառնում:

³ Բացառություն են կազմում մի քանի ձայնարկություններ, ձայնարկության արժեք ստացած բառեր (այ, ահա, այսի, այտի, այնի, այտենց, այսենց, առա, ախար, ա հա հա, պա պա պա պահօ, պահ, տաշ, այմաթ), որոնցում այնուամենայնիվ *ա*-ն հանդես է գալիս իր համար ոչ սովորական դիրքում:

թի դիրքային տարբերակն է, որ հանդես է գալիս բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ /բացի **խ** և **հ** շփականները/ բաղաձայններից, **մ** և **ն** ձայնորդներից հետո /մբբանք, մթօռ, մքլօր, պմնիր, կմտու, շմտ, սմր, մմտ, նմխիր/: Համապատասխանում է նշված դիրքերի հինհայերենյան **ա**-ին: Այս հնչյունի առկայությունը բարբառային որոշակի տարածքում ենթադրվում է նաև հինհայերենյան շրջանում⁴: Նոր և նորագույն փոխառությունների համապատասխան դիրքերում ևս **ա** հնչյունի դիմաց հանդես է գալիս մ-ն /մղաշ, մղյալ, մզաբ, մղրես, կմսինգա, կմսաբ, մմլա, մմլադօ, նմղարա, նմսկի, շմնջու, շմրիկ/: Բայերի սկզբի մ-ն դառնում է **ա** ժխտական չ- մասնիկից հետո /մսել – չասել, չասա, մոնել – չառնել, չառավ/, ինչպես նաև **ինչ** բառից հետո՝ սերտ արտասանության դեպքում /ինչ ասում, ինչ առար/:

ա. առաջնային շարքի ստորին բարձրացման ձայնավոր է, ինքնուրույն հնչույթ է և **ա** հնչույթի հետ կազմում է նվազագույն հակադրական գույգեր, ինչպես՝ քար – քար «շառ», թաթ «անհասկացող» – թանթ /ձեռքի/, լալ «համր» – լմլ «լալ», թառ /հավի/ – թան «մաքուր, սպիտակ»: Բայագետի բարբառում հանդիպում է հիմնականում նոր փոխառյալ բառերում /թամբնլ, անգիգ, ամանկ, բեջմրել, գանդմ/: Որոշ դեպքերում հարևան բարբառների ազդեցությամբ **ա** հնչյուն է ի հայտ եկել նաև ընդհանուրհայերենյան բառաշերտի բնիկ և փոխառյալ բառերում, ինչպես՝ գմտիկ, թանթիկ, թաննք, ժանգ, ժանժել, լնց, խանյի, կիրանկի, հ'անշկ, հ'անոչ, հ'անու, միյնանկ, շիտանկ, վըրմ, տեքանրկընիկ, փան, փեսան, քանոի և այլն: Ընդհանուր առմամբ, այս հնչյունը դիրքային սահմանափակումներ չունի, այն պայմանավորված չէ բարբառիս արտասանական բազայի առանձնահատկությամբ, և նրա դրսևորումը բարբառիս հնչյունական օրինաչափություններից չի բխում: Շեշտից զրկվելով՝ բազմավանկ

⁴ Տե՛ս Գ.Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 163 – 165:

բառերի վերջնականի ան սովորաբար սղվում է /դ'աննկ - դ'աննկի, ջիգսր - ջիգրի, սիֆտանկ - սիֆտըկել, դարգանխ - դարգըխ-ները, դուշման - դուշմըննանկ, գնվգնկ - գնվգըկել/, բայց որոշ դեպքերում էլ պահպանվում է /բնգըրգան - բնգըրգանի, թնլնք - թնլնքի, դոշմբ - դոշմբով, լնչնո - լնչնոռութուն, խնննք - խնննքվմբի/: Բառավերջի ան, ա ձայնավորի պես, բառի հոլովման ժամանակ ընկնում է /կըսն > կըսի, կըսից, կըսով, թուլն > թուլի, թուլից/, ավելացող հոդից և ք հոգնակերտից առաջ դառնում է Է /գնյլն - գնյլետ, գնդն - գնդէք/:

Է առաջնային շարքի միջին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի Է ձայնավորից: Շեշտակիր վանկում նվազագույն հակադրական գույգեր է կազմում երկբարբառային Ե հնչյունի հետ, ինչպես՝ մեր «մայր» - մեր, աներ /անեւ բայի խոնարհված ձև/ -աներ «կնոջ հայրը», կեր «կար» - կեր «անասնակեր», գ'ըրեր /ըդձ. ապառնի/ - գ'ըրեր ա /վաղակատար/: Համապատասխանում է հինհայերենյան Է երկբարբառակերպին /կէս > կէս, մէջ > մէչ, աղուէս > մողվէգ, տէր > տէր, էգ > էք, գրէր > գ'ըրեր/, որոշակի դիրքերում՝ գրաբարյան Ե գրով արտահայտվող հնչյունին /երթալ > էթալ, երկու > էրկու, երագ > էրագ, էփել > էփել, բերան > բ'երան, գերան > գ'երան, գերի > գ'երի, բարեկամ > բ'արեկամ/, այ երկբարբառին /գայլ > գ'ել, ձայն > ձ'էն, կայծակն > կէծակ, այս > էս, փայտ > փէդ, լայն > լէն/⁵: Սակավ դեպքերում պատմականորեն դարձել է Ի /երէք > իրէք, երեկոյ > հ'իրկուն, երես > հ'իրես, սկեսուր > կիսուր, փեսուր > փիդուր, լեզու > լիզու, հրեշտակ > խըրիշտակ/: Շեշտից գրկվելով՝ Է-ն սովորաբար դառնում է Ի /գ'ել - գ'իլվանք, ծեր - ծիրի, էշ - իշի, կէս - կիսատ, ջէք - ջիքի/, երբեմն սղվում է /գ'օմէշ- գ'օմշի, մէչ - մըչի,

⁵ Ավելի հանգամանորեն տե՛ս Վ.Կատվայան, Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը, Ե., 2006, էջ 101:

անդվեզ - անդվըզի, հ'ըմեն - հ'ըմընսով, հ'երկեն - հ'երկընալ, անջեր -
 անծբանտես, հ'առեչ - հ'առչի/, այլ դեպքերում որևէ փոփոխության չի
 ենթարկվում /հ'երեկ - հ'երեկվա, բ'ետ - բ'ետընալ, բ'ըփռեճ -
 բ'ըփռեճի, ժակեթ - ժակեթով, ջըրեզ - ջըրեզի, հավես - հավեսով/
 Բայագետի բարբառում **է** ձայնավորը հանդես է գալիս և՛
 բառասկզբում /էշ, երկու, էթալ, երեցել, էտի, էկա/, և՛ բառամիջում
 /Հ'երեվան, լենքեն, կեսբ'երան, կրլետկա, կուզեկուզ, կօղբես/, և՛
 բառավերջում /օրե, փեղե, կըղե, կրլե, կըճե, կուռե, ճլե, մե, մերե/
 Որևէ դիրքում չի հանդիպում **ռ, դ, խ** բաղաձայններից առաջ՝
 այդպիսով **ե** երկբարբառի հետ գտնվելով նաև լրացուցիչ բաշխման
 հարաբերության մեջ: Բառակազմական պլանում հանդես է գալիս
 իբրև արմատ՝ **է** /ձայնարկ./, ածանց /երկըթե, վոսկե, բ'ըռթե,
 բ'ամբրկե, փեղե/, կրկնավոր բարդությունների ձևավորման միջոց
 /բ'երներ'երան, հ'իրկընեհ'իրկուն, ձ'եռնեձ'եռ, դ'ըռնեդ'ուռ/, հասա-
 րակ ու հատուկ անձնանունների հուզաարտահայտչական
 իմաստի ձևավորման միջոց /մերե, խերե, նմնե, պմպե, Սօնե,
 ճրկըթե, գրսկե, զընգըլե, Կօլե, Վըլե, ցընե/: Ձևակազմական
 պլանում դառնում է բացառական հոլովի իմաստի ցուցիչ /տընե,
 մօրե, հ'առավտընե, խօրե, քեզնե/:

ե առաջնային շարքի միջին բարձրացման երկբարբառային
 արտասանությամբ ձայնավոր է: Շեշտակիր վանկում նվազագույն
 հակադրական զույգեր է կազմում **է** պարզ ձայնավորի հետ,
 միաժամանակ **է**-ի հետ գտնվում է լրացուցիչ բաշխման հարաբե-
 րության մեջ ինչպես շեշտակիր, այնպես էլ անշեշտ վանկերում⁶:
 Համապատասխանում է հինհայերենյան շեշտակիր վանկի՝ **ե**
 տառով արտահայտված հնչյունին /աշակերտ > անշակետո, աւել >
 հ'ավել, գետ > գ'ետ, գիշեր > գ'ըշեր, դեղ > դ'եղ, ընկեր > հ'ընգեր,
 ծեփ, ծեր, կճեպ > կըճեփ, ձմեռն > ձ'ըմեռ/, ոչ շեշտակիր վանկի՝ **դ,**
խ, ռ հնչյուններից առաջ **ե** տառով արտահայտված հնչյունին /սե-
 ղան, լեղի, խեղդել > խեխտել, հեռանալ > յեռվընալ/, սակավ դեպ-

⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 43-49:

քերում՝ **եա** երկբարբառին /լեառն > լեռ, ցորեան > ցորեն, բարեալ > բ'արեվ, սեալ > սեվ, մեռեալ - մեռել/, **իւ** երկբարբառին /իւղ > յեղ, գիւղ > գ'եղ, միւռոն > մեռոն/, շեշտակիր վանկի՝ բաղաձայնական խմբից առաջ հայտնված **է**-ին /անէծք > անեսկ, օրէնք > օրենք, վերք > վերք/: Պատմականորեն վերածվել է **յե** կապակցության միավանկ բառերի սկզբում /երգ > յերք, եզն > յեզ, ել > յել, երբ > յեփ/, բազմավանկ բառերի սկզբում՝ **դ, ռ** բաղաձայններից առաջ /եղիճ > յեղըճիկ, եղունգն > յեղունգ, եռալ > յեռալ, երեսուն > յեռսուն/: Սակավ դեպքերում այն ընկել է /երեսուն > յեռսուն, թեթել > թեթըվ, թիթեռնիկ > թիթըռնեկ/: Շեշտից զրկվելով՝ հաճախ սղվում է /հ'ավել - հ'ավընալ, ձ'ըմեռ - ձ'ըմըմա, ցորեն - ցորնի, հ'իրես - հ'իրսով, կըշեռք - կըշըռքի, շեռ - շըռել, գ'ըլխըվեր - գ'ըլխըվըրել, ցեռ - ցըռան/, այլ դեպքերում պահպանվում է /գ'ըշեր - գ'ըշերվա, հ'ընգեր - հ'ընգերտանք, աներ - աներանք, վիրել - վիրելնալ, օրենք - օրենքով, իրեք - իրեքտանկ/: Շեշտագրկված **ե**-ն հաճախ դառնում է **է**/ծեփ - ծեփել, ծեփոն, խելք - խելօք, կե'ր - կերա, խերկ - խերկել, ներկ - ներկել/, հաճախ էլ չի փոփոխվում /ցեց - ցեցօտել, սեվ - սեվնալ, թել - թելել, ծեր - ծերանալ, թեք - թեքել, շենք - շենքել, ցեփ - ցեփավոր/: Բարբառումս **ե** հնչյունը հանդես է գալիս շեշտակիր փակ վանկում /բացառությամբ **շ, ժ, ջ, ճ** հնչյուններին նախորդող դիրքը, որտեղ միշտ ունենք **է**/, անշեշտ դիրքերում հանդես է գալիս **դ, իւ, ռ** հնչյուններից առաջ: Անշեշտ դիրքում հանդիպում է նաև բառաբարդման կամ ածանցման արդյունքում շեշտագրկման հետևանքով չհնչյունափոխվելու դեպքում: Բառավերջում հանդիպում է որոշ կրճատ ձևերում՝ սակավ բայերի եզակի հրամայականում /բ'ե՝ «բե'ր», կե՝ «կե'ր», տե՝ «տե'ս»/, առանձին դերանունների ուղիղ կամ թեք հոլովներում /ըստե «այստեղ», ըտե «այդտեղ», ընդե «այնտեղ», քե «քեզ», մե «մեզ», ձ'ե »ձեզ»/, վաղակատար դերբայի ձևերում /գ'ըրե - գ'ըրեր ա, նըստե - նըստեր ա/: Բառասկզբում հանդես չի գալիս, եթե հաշվի չառնենք օժանդակ բայի **եմ, ես, ենք, են** ձևերը, որոնք միշտ

նախորդ բառի հետ սերտ արտասանություն ունեն /Էթում եմ/: Երբեք հանդես չի գալիս բառասկզբի **հ**՝ հնչյունից հետո: Ձևակազմական պլանում հանդես է գալիս իբրև խոնարհիչ /ուտել, թըռնել, ըսկըսվել, նեխարոտել/:

օ. հետին շարքի միջին բարձրացման շրթնային ձայնավոր է, լրացուցիչ բաշխման մեջ է **ո** երկբարբառային հնչյունի հետ, սակավ դեպքերում այդ հնչյունի հետ կազմում է նվազագույն հակադրական զույգեր. թօռ «ցանց» - թոռ «թոռ», խօր /հայր բառի սեռ./ - խոր «հոր», դօր «հերթ» - դոր «ուր»: Համապատասխանում է **ա** երկբարբառից առաջացած հինհայերենյան **օ** հնչյունին /օր, օց «օձ», օղ, օքուղ «օգուտ», մքօտ «արօտ», կմքօտ «կարօտ», ծմնօթ «ծանօթ», խօսալ «խօսել», մնդօտկ «աղօթք», գօրք, ճօճ/, անշեշտ վանկի **ո** տառով արտահայտված հնչյունին /ցօրեն «ցորեան», կօճակ «կոճակ», օղորմի «ողորմի», օխճար «ոչխար», մօրթել «մորթել», օրօտում «որոտումն», օշիլ «ոջիլ»/, **վ**-ից առաջ գրվող **ո**-ին /կօվ «կով», սօվոր «սովոր», ժօղօվ «ժողով», սօվ «սով»/, ենթակայական դերբայի վերջավորության ձայնավորին /գ՛րբօղ «գրբող», գ՛ացօղ «գնացող»/, որոշ դեպքերում՝ շեշտակիր վանկի **ո**-ին /մխօռ «ախորո», մթօռ «աթոռ», մքլօր «աքլոր», ջ՛օկ «ջոկ»/: Մակավ բառերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության՝ դառնալով երկբարբառային **ո** /առաօտ > հառավոտ, պաշտօն > պմշտոն, օրօր > օրոր/ կամ **ու** /մօրուք > մուրուս, յօնք > հունք, թոնիր > թունդիր, կորնչել > կուրել/⁷: Շեշտից գրվվելով լս սակավ է հնչյունափոխվում /գ՛լլօխ – գ՛լլխի, գ՛լլխանց, ժօղօվ – ժօղվել, կօղօվ – կօղվի, մըռթօշ – մըռթըշվորել/: Բարբառումս **օ** հնչյունը դիրքային սահմանափակում չունի /օթ, օթաղ, բօջակ, գ՛օտիկ, համօգել, կօլօտ, հաջօղ, պօլ, կօն, ջ՛ոչօ, Սուրօ/: Բառակազմական պլանում դառնում է հասարակ ու հատուկ անձնանունների կրճատ ձևի կամ հուզաարտահայտչական իմաստի ձևավորման միջոց /ցընօ, գընջօ, գըռխօ, քըռչօ, յեգօ, Մըռտօ, Հօվօ, Գուգօ, Նունօ,

⁷ Վերջին երկու բառերում, կարծում ենք, **ո** տառով արտահայտվել է պարզ **օ** ձայնավոր:

Նրվօ/: Ձևակազմական պլանում հանդես է գալիս իբրև **օ** ներքին հոլովման ցուցիչ /խէր - խօր, մէր - մօր, ամխալէր - ամխաօր/:

ռ. հետին շարքի միջին բարձրացման շրթնային ձայնավոր է՝ երկբարբառային արտասանությամբ: Հնչմամբ նույնանում է ամ ձայնավորի հետ և արտասանվում է իբրև **ռա**: Լրացուցիչ բաշխման հարաբերությունների մեջ է **օ** և ամ ձայնավորների հետ, սակավ դեպքերում նվազագույն հակադրական գույգեր է կազմում **օ-ի** հետ՝ հանդես գալով իբրև առանձին հնչույթ: Համապատասխանում է հինհայերենյան շեշտակիր վանկի **ռ** գրով արտահայտվող հնչյունին /բոլոր > բ'օլոր, բոց > բ'ոց, գորտ > գ'ոտ, գործ > գ'ոռծ, դող > դ'ող, խմոր > խըմոր, կոտոշ > կօտոշ, խնձոր < խընձոր, փոս, փոր/: Միավանկ բառերի սկզբում ենթարկվել է պատմական հնչյունափոխության՝ վերածվելով **վռ** կապակցության /որ > վոր, որդ > վորթ, ռխ > վռխ, որձ > վոռց, ոտն > վոտ, որբ > վորփ/, նման փոփոխություն կատարվել է նաև երկվանկ ոսկի > վոսկի, որդի > վոռթի բառերում: Շեշտից գրկվելով՝ **ռ**-ն երբեմն սղվում է /կօլոն - կօլնել, կօտոշ - կօտըշխըրել, բ'օլոր - բ'օլըրել, հառավոտ - հառավտընէ, բ'օրփոս - բ'օրփըսնէ, ծամոն - ծամնի, մօլոր - մօլըրել, օլոր - օլըրել, օսկոռ - օսկըռխընէ, սմպոն - սմբնի/, հաճախ էլ բայակազմության ժամանակ դառնում է **օ** /գըլոր - գըլօրել, գ'ող - գ'օղնալ, դ'ող - դ'օղալ, թեփոտ - թեփօտել, քոր - քօրել, տըլոտ - տըլօտել, գ'ոռծ - գ'օռծել, թող - թօղել/: Այլ դեպքերում **ռ** հնչյունը որևէ փոփոխության չի ենթարկվում /խըմոր - խըմորագ'ունդ, խընձոր - խընձորներ, գ'ոռծ - գ'ոռծի, գ'ոտ - գ'ոտալող, վորթ - վորթընէ, վոտ - վոտբ'օպիկ, բ'ոց - բ'ոցել, կըտոր - կըտորտանք, դիլխոր - դիլխորնալ/: Բայագետի բարբառում **ռ** հնչյունը բառասկզբում և բառավերջում չի հանդիպում: Հանդես է գալիս շեշտակիր վանկում /փոր, դոր, կող, մոմ, կըլոր, խոց, քըռչոտ, կօտոշ/: Անշեշտ վանկերում հանդիպում է, եթե շեշտագրկման հետևանքով հնչյունափոխության չի ենթարկվում /դիլխորնալ, կըտորտանք, վողնաման, գըլորգընդի, գ'ողէգ'ող, կօտոշավոր, փոցխել/: Գործառական նման բաշխումը որպես կանոն բացառում է **ա** հնչույթի

շրթնային տարբերակի հետ նույն դիրքում հայտնվելու և իմաստային շփոթ առաջ բերելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, միավանկ մի քանի բառերի դեպքում առաջ է գալիս նույնահունչ համանունություն. շոր «հագուստ» - շմբ «շարեւը», մոմ - մմմ «մայրիկ», կոթ «բահի կոթ» - կմթ «կաթ»: Մի շարք դեպքերում էլ օ-ո հակադրությունն ուղեկցվում է նախորդող բաղաձայնների ձայնեղություն – շնչեղ ձայնեղություն հակադրությամբ. դ՛ող /դողալը/ - դօղ «անվաղող», բ՛ոզ «անբարոյական» - բօզ /գույն է/, գ՛ոլ /ոչ շատ տաք/ - գօլ «լիճ»: Նկատելի է նաև, որ **ո** հնչյունի փոխարեն **օ** արտասանությունը իմաստային շփոթ չի առաջացնում, այլ թողնում է գրական արտասանության տպավորություն, մինչդեռ **օ**-ի փոխարեն **ո** արտասանությունը աղճատում է իմաստը: Ձևակազմական պլանում հանդես է գալիս իբրև հոլովիչ **քուր** բառի դեպքում՝ սեռ. քրվոր, բաց. քրվորից:

ի. առաջնային շարքի վերին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի **ի** հնչյունից: Համապատասխանում է հինհայերենյան **ի** ձայնավորին /հինքը «ինքն», ինչ, իմ, հ՛իմնալ «իմանալ», գ՛ին, խին «հին», խիվանդ «հիւանդ», բ՛մծինք «բաժինք», գ՛առշելի «գարշելի», գ՛երնդի «գերանդի», գ՛երի «գերի», գ՛ինի, թունդիր «թոնիր»/: Սակավ դեպքերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության /**ի** > **ե** - անդրանիկ - անդրանեկ, ջիղ - ձեղ, դրակից - դ՛րկեց, թիթեռնիկ - թիթռոնեկ, ծիրտ - ծերտ, կոտիմն - կօտեմ, **ի**>**է** - գիծ - գէծ, մի - մէ, **ի** > **ա** կամ՝ **ւ** - դեպի - դըբա, եղի - յեղա, սպի - սըբւ, **ի** > **գրո** - ճիպո - ճըբուռ, շիճուկ - շըտուկ, պիտի - պըտի, գիշեր - գ՛ըշեր, գլխիվայր - գ՛ըլխըվեր, ճիպոտ - ճըպոթ, ծիծաղ - ծըձաղ/: Շեշտագրկված **ի**-ն ընկնում է, և դիրքով պայմանավորված՝ նրա փոխարեն կարող է հնչել կամ չհնչել **ը** /ինը - ըննոց, ինչ - հ՛ընչի, գ՛իր - գ՛ըրել, միտկ - մըտկել, քըռտինք - քըռտընքի, էրինջ - էրընջի, լիտըր - լըտրանոց, խըլինք - խըլընքոտ, գ՛ըրիչ - գ՛ըրչօվ, մմիս - մմսըվա, հ՛առիք - հ՛առքի, բ՛օպիկ - բ՛օպկընալ, գ՛ետին - գ՛էղնախընոր, դ՛եղին - դ՛էղնել, կըռիվ - կըռվել, օջիլ - օշլոտ/: Սակավ դեպքերում շեշտա-

գրկված **ի**-ն չի հնչունափոխվում /խըմիշկ - խըմիշկներ, խավիծ - խավիծի, թիթիզ - թիթիզնալ, ժարիթ - ժարիթի, խօպանիստ - խօպանիստներ, հարիֆ - հարիֆցունել, քերիկ - քերիկի, քրծիբ - քրծիբություն, քրսիկ - քրսիկի/: Բազմավանկ բառերի վերջի **ի**-ն հոլովվելիս սեռականում հերթագայվում է **ու** հոլովիչով /զ ինի - գ ինու, քամի - քամու, գ՛արի - գ՛արու/, բացառականում և գործիականում սղվում է /զ ինուց, գ ինով, քամուց, քամով, գ՛արուց, գ՛արով/, բառաբարդման ու ածանցման ժամանակ ընկնում է /քամի - քամապընչուկ, խընամի - խընամակմնչ, խընամոնք, խօթի - մէ խօթավոր, թըշնամի - թըշնամություն, փօշի - փօշոտ, գ՛երի - գ՛երություն, լեղի - լեղաճմք, մնօթի - մնօթնալ, վոսկի - վոսկէ, գընջի - գընջոտ, գօջի - գօջանոց, կմրնչի - կմրնչություն/: Միավանկ բառերի վերջի **ի** ձայնավորը որևէ փոփոխության չի ենթարկվում /ձ ի < ձիյավոր, թի < թիյակ/: Բարբառումս **ի** հնչյունը դիրքային սահմանափակում չունի /իմալ, իսան, տիզնակըօնձ, թունդիր, ժեխթափիկ, գ՛երընդի, գ՛արի/: Բառակազմական պլանում **ի**-ն դրսևորվում է իբրև ձայնարկություն /ի՛/, սակավ բառերում հանդես է գալիս իբրև ածանց /մնի, ձ՛րի, նեղի, խօսկի, լենի, կմնանչի/: Ձևակազմական պլանում **ի**-ն դրսևորվում է իբրև օժանդակ բայի ձև (էթում **ի** /էի/, նըստում **ի** /էի/), բայական վերջավորություն /գ՛ըրի «գրեցի», նըստի՛ «նստի՛ր»/, հոլովիչ /գ՛եղի «գյուղի», մըտկի «մտի»/:

ու. հետին շարքի վերին բարձրացման շրթնային ձայնավոր է: Արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի ու ձայնավորից: Համապատասխանում է հինհայերենյան **ու**-ին /ութ, ուտել, տուն, հ՛առու «առու», էրմունգ «արմունկ», բ՛ագուկ, դ՛ուս «դուրս», թըթու, թուխտ «թուղթ»/, **ոյ** երկբարբառին /բ՛ուն < բոյն, լուս < լոյս, բ՛ուն < բոյն, քուր < քոյր, պմդրուք < պատրոյգ/, բառավերջի **ոյ** կապակցությանը /կու < կոյ, մմօթու < մմօթոյ, հ՛իրկուն < երեկոյ, գ՛ըրէլու < գրէլոյ/, **իւ** երկբարբառին /մլուր < ալիւր, հ՛ախպուր < աղբիւր, գ՛օղութուն < գողութիւն, դ՛ուրել < դիւրել, խուս < խիւս, հուսիս < հիւսիս, ձ՛ութ < ձիւթ, ձ՛ուն < ձիւն, ճուղ < ճիւղ, շուղ <

շիւղ/։ Բարբառումս **ու**-ն սակավ դեպքերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության. սղվել է բայի պատճառական ածանցում (իջուցանել – հ իչըցնել), խոնարհիչի դերում փոխարինվել է **ե**-ով /առնուլ > մոնել, թողուլ > թօղել/. դարձել է **օ** /զուլիս > գ ըլօիս, ուղարկել > հ՛օղըրկել, ուղղորդ > ողղոթ/. ընկել է /ուղարկել > դըրկել, հ՛ըղըրկել, ուղեղ > հ՛ըղեղ, քուրջ > քըռջ/։ Գավառի խոսվածքում բաղիյուսական բարդություններում ու-ն փոխարինվել է **ը** ձայնավորով /դ՛ուռըղ ուս, լենըթօլ, դ՛արըղ աշտ, տունըտեղ/։ Շեշտագրկված **ու**-ն ընկնում է, և դիրքով պայմանավորված՝ նրա փոխարեն կարող է հնչել կամ չհնչել **ը** /ջ՛ուր – ջ՛ըրվոր, հ՛առավտուն – հ՛առավտընե, բ՛ուք – բ՛ըքել, դ՛ըթում – դ՛ըթմի, կմկուղ – կմգդել, կմկըղել, ձ՛ըմէրուկ – ձ՛ըմէրկի, փըշուր – փըռշել, քառսունք – քառսընքան/։ Այլ դեպքերում շեշտագրկված **ու**-ն չի հնչյունափոխվում /մփրուստով «ապրուստով», թըրթուռի «թրթուրի», խանութի, կունգուլիի «կնգուղի», մուրուսով «մորուքով», հ՛ուսումի «ուսման»/։ Միավանկ և երկվանկ բառերի վերջի **ու**-ն ձայնավորից առաջ դառնում է **վ** (ձ՛ու – ձ՛ըվի, թըթու – թըթվել, յեռու – յեռվընալ, հ՛առու – հ՛առվի, լիզու – լիզվանի), բազմավանկ բառերի դեպքում նման փոփոխություն տեղի չի ունենում (ճըրաքու – ճըրաքույ, դ՛ասատու – դ՛ասատույ)։ Բարբառումս **ու** հնչյունը հանդես է գալիս և՛ բառասկզբում (ուրախ, ուտել), և՛ բառամիջում (սութ, մըռմուռ), և՛ բառավերջում (մըռու, մըչու)։ Բառակազմական պլանում **ու**-ն հանդես է գալիս իբրև արմատ՝ **ու** /շաղկապը/, ածանց /գ՛ըլիս, մմօթու, հախու/։ Ձևակազմական պլանում **ու**-ն հանդես է գալիս իբրև հոլովիչ (գ՛արի – գ՛արու, թըշնամի – թըշնամու), խոնարհիչ (նըստըցում «նստեցնես», խասկըցուս «հասկացնես»), բայական վերջավորություն (մօսկըցո՛ւ)։

ը. միջին շաբթի միջին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի **ը** ձայնավորից։ Համապատասխանում է հինհայերենյան ինչպես գաղտնավանկի, այնպես էլ գրության մեջ արտահայտված ը-ին (գ՛ըլօիս < գլուիս, թըփըռտալ < թպրտալ, հ՛ընգեր < ընկեր, հ՛ընղըրել < ընտրել,

լիտրը < լիտր, ըսկըսել < սկսանել, ըսպանել > սպանանել, ըստեռձ < ստերջ, տէքըր < տեգր), պատմական կամ շեշտափոխական հնչյունափոխության ենթարկված այլ ձայնավորների (կմրկըտան < կարկատան, խըմար < համար, հ'ընցընել < անցանել, հ'ըմէն < ամէն, գ'անգըտել – գ'անգատ, սիֆտըկել – սիֆտակ, հ'երկըննալ – հ'երկէն, մըչի – մէչ, թեթըվ < թեթէ, թիթըռնել < թիթեռնիկ, հ'ավըլնալ – հ'ավել, մըռթըշվորել – մըռթօշ, բ'օլոր – բ'օլըրել, պըտի < պիտի, ծըձաղ < ծիծաղ, ըննոց < ինը, մըտկել – միտկ, հ'ըղեղ < ուղեղ, քըռչ < քուրջ, քառսընքան – քառսունք, մըթըվեր – մութ): Սակավ բառերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության՝ փոխարինվելով այլ ձայնավորով (շիվար < շուար, կուկու < կկու, կունգուխ < կնգուղ, հ'իստըկել < յատակել): Բառի աճման հետևանքով գաղտնավանկի ը-ի անկում սովորաբար տեղի չի ունենում (մասըղօվ – մասըղ, մանդըրաբ'անիկ – մանդըր, պօվըրական – պօվըր, սմլըխօվ – սմլըխ, քախծըրություն – քախծըր, բ'անցըրություն – բ'անցըր), բայց հանդիպում են և ը-ի անկման դեպքեր (խաթրաշմիխ – խաթըր, փոցխել – փոցըղ): Բարբառումս ը հնչյուն առավել հաճախ հանդիպում է բառամիջում, երբ բաղաձայնական կուտակումները չեն կարող արտասանվել առանց ձայնավորական հենարանի (կըրունգ, բըլօջ, գըղգըղալ, գըմփիկ, գըռեխ, ծմանդըր, ծըմըրկըտալ, քըլուփըստ, գ'ըրել, սըթից, հ'ավըլնալ): Այլ դեպքերում ը-ի առկայությունը պայմանավորված է ոչ թե արտաբերական պահանջով, այլ բառի ձևավորման և իմաստաարտահայտման պահանջով (բալըշ, չըփըցընել, տըլըբալ, ճըլըթալ, գաբընել, մըթըվեր, չարընալ, գըռըթըփ, հ'առչըկըտուր, տմխտըկել, տըրըրփալ, կըրըրփոց, էրկուտըկել): Կան դեպքեր էլ, երբ բարբառային խոսքում բառամիջյան ը-ն կարող է և չարտասանվել, բայց նման արտասանությունը կունենա գրական երանգ (գ'ըտըռնակ – գ'ըտոնակ, գ'ոռտըռնուկ – գ'ոռտոնուկ, պմոգըկա – պմոգկա, կօպըտել – կօպտել, շուստըրի – շուստրի, կըտըցել – կըտցել): Բառասկզբում ը-ն սակավ բառերում /այն էլ՝ բաղաձայնական խմբից առաջ/ է

հանդես գալիս (ըխտիբար, ընձի, ըստե, ըսկի, ըսկըթօ, ըշալիյօն, ըտե), բառավերջում ևս քիչ է հանդիպում իբրև բառամաս (խառը, դուզը, լիքը, լը, հ'ըլը, հ'ինքը, բը, դը, դ'անը): Սակայն բառավերջում ը-ի գործառույթը ընդլայնվում է իբրև հոդ հանդես գալու շնորհիվ: Ը-ն կարող է լինել մի շարք միավանկ ու բազմավանկ բառերի միակ ձայնավորը (բըռ, բըսկ, դընգ, դըրբ, ծըպկ, ձըքս, մըզմըզ, մըդըմբ, նըֆս, շըխկ, շըրըխկ, չըռ, ռըթըր, սըռ, տընգըվըզ, փըռչ, քըլք, քըռթ): Բառակազմական պլանում ը-ն հանդես է գալիս իբրև ձայնարկություն՝ ը: Ձևակազմական պլանում ը-ն գործառում է իբրև որոշիչ հոդ:

Այսպիսով՝ Բայազետի բարբառում գործառում են ձայնավոր 10 հնչյուններ՝ ա, օ, օ, է, է, օ, ո, ի, ու, ը: Սրանցից իբրև հնչույթ հանդես չի գալիս միայն օ ձայնավորը՝ լինելով ա-ի դիրքային տարբերակ: Ընդհանուր հայերենյան ա, է, ի, ու, օ, ը ձայնավորները սերում են հինհայերենյան համապատասխան ձայնավորներից, հաճախ էլ դրսևորվում են ընդհանուր և մասնավոր հնչյունափոխությունների հետևանքով: Ե, ո երկբարբառային ձայնավորները դեռևս հինհայերենյան շրջանում որոշակի տարածքում և որոշակի դիրքում առաջ եկած իրողություններ են ներկայացնում, իսկ օ հնչյունը բարբառիս բնորոշ դիրքային պայմանավորվածությամբ հնչյուն է: Միայն օ հնչյունն է, որ բարբառ է ներթափանցել այլ լեզուներից ու բարբառներից: Հնչյունափոխության քիչ է ենթարկվում ը-ն, գրեթե չի ենթարկվում օ-ն: Բառակազմական գործառույթ չեն ունենում օ, օ, է, ու հնչյունները: Ձևակազմական գործառույթ չունեն օ, օ հնչյունները: Դիրքային սահմանափակումներ չունեն ի, ու, օ հնչյունները, սակայն վերջինս սահմանափակում ունի բառաշերտի առումով:

Katvalyan Viktor – General description of dhe vowels used in the dialect of Bayazet. – Ten vowel sounds are used in the dialect of Bayazet – [a], [ǎ], [ä], [e], [ye], [o], [vo], [i], [u], [ə], from which the sound [ǎ] is a

positional variant of the phoneme [a]. The common Armenian vowels originate from the corresponding vowels of the Old Armenian language; the diphthongized sounds [ye] and [vo] are language phenomena occurred during the Old Armenian period; the sound [â] is a sound typical to this dialect and conditioned by its position; the sound [ä] has penetrated into the dialect of Bayazet from other languages and dialects. The sound [ə] undergoes few sound changes, and the sound [ǎ] undergoes almost no sound changes. The sounds [â], [ä], [ye], [vo] have no word-building functions. The sounds [â], [ä] never function as non-root morpheme endings in the structure of word-forms. The sounds [i], [u], [ǎ] have no positional restrictions.

ԱՐԱԲԵՐԵՆԻ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ
ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ
(հնչյունաբանական քննություն)*

Միքայելյան Սոնա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Արաբերենի հնչյունական համակարգը Անտիոքի կամ ծայր հարավ-արևմտյան բարբառախմբի (Քեսաբ-Սվեդիայի բարբառ՝ Քեսաբի, Քարուսիեի, Յոդուն-Օլուկի, Հաջի-Հաբիբլիի, Արամոյի խոսվածքներով և Բեյլանի բարբառ՝ Բեյլանի խոսվածքով)¹ հայերեն բարբառներում արտացոլվում է հիմնականում արաբերենից կատարված փոխառություններով²: Հայտնի է, որ արաբերենը և հայերենը՝ իրենց տարածքային տարբերակներով հանդերձ, տարբեր լեզվաընտանիքների անդամներ են, ուստի նրանց միջև ընդհանրություններն ավելի հաճախ ի հայտ են գալիս հնչյունաբանական մակարդակում՝ փոխառությունների միջոցով³:

Արաբական երկրներում ընդհանուր արաբերենը ներկայանում է գրական (al-fuṣḥā) և խոսակցական (al-‘aāmmiyya) տարբերակներով⁴: Դասական արաբերենը ձևավորվել է 7-րդ դարում՝ Ղուրանի և հինարաբական պոեզիայի հիմքի վրա: Ներկայումս այն օգտագործվում է հիմնականում կրոնական ոլորտում: Ժամանակակից գրական լեզուն, որ դասականի զարգացման արդյունք է, իր

* «Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 200-208:

¹ Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132:

² Արաբական փոխառությունները վերցրել ենք. Յ. Չոլաքեանի «*Քեսապի բարբառը*», Երևան 2009, Տ. Անդրեսայանի «*Սվեդիայի բարբառը*», Ե., 1967 թ. հրատարակված, Հ. Քյուփեյանի «*Բեյլանի բարբառը*» (ատենախոսություն), Ե., 2008, Պ. և Կ. Մախշիկյանների «*Քեսաբի բարբառի բառարան*», Ա. Փաշայանի «*Քեսապի բարբառը*» ձեռագիր աշխատություններից:

³ У. Вайнрайх, *Языковые контакты*. Перевод с английского языка, Киев, 1979, с. 102.

⁴ S. Altoma, *The Problem of Diglossia in Arabic*. A Comparative Study of Classical and Iraqi Arabic. Harvard Middle Eastern Monograph Series, 1969, p. 3-6.

գործառնությամբ բազմաբնույթ է. այն գիտության, կրթության, հասարակական-քաղաքական, վարչական, գեղարվեստական գրականության, մամուլի լեզուն է: Այս երկուսն ունեն էական բառապաշարային, մասամբ նաև շարահյուսական տարբերություններ⁵: Սակայն գրական արաբերենի երկու ենթաշրջաններն էլ բնութագրվում են բաղաձայնների, հատկապես՝ կոկորդային, միջատանային և ուժգին արտաբերմամբ (վերհատության), լայն զարգացած համակարգերով: Ընդհանուր արաբերենն ունի յուրաքանչյուր երկրում գործառնող խոսակցական, այսինքն՝ տարածքային տարբերակներ, որոնք կոչվում են նաև բարբառներ⁶: Սիրիայի բարբառն իր հատկանիշներով գրական լեզվին ամենամոտն է⁷: Գրական լեզվի յուրահատկությունները պահպանելով հանդերձ՝ այն արտաբերական դժվարություններով աչքի ընկնող որոշ բաղաձայններ, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում պարզեցրել է⁸:

Խնդրո առարկա հայերեն բարբառային միավորների բաղաձայնական ենթահամակարգերը հին հայերենի՝ գրաբարի համեմատությամբ բնորոշվում են հպականների տեղաշարժ-տեղափոխությամբ, այսինքն՝ հին ձայնեղների խլացմամբ և խուլերի ձայնեղացմամբ⁹: Շնչեղ խուլ հպականները և բոլոր շփականները համակարգային փոփոխության գրեթե չեն ենթարկվել: Ավելացել են *ʃ* խուլ շփական և արաբերենից փոխառյալ խոր հետնաքիմքային *ħ* (q) և *h* (‘) բաղաձայնները: Այսպիսով, Անտիոքի բարբառային միավորներում, այնուամենայնիվ, առկա է հպականների հինհայերենյան եռաշարք հակադրությունը (բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ):

⁵ В. Шагаль, *Языковой аспект национальных процессов в арабских странах*, М., 1987, с. 52.

⁶ М. эль-Массарани, В. Сегаль, *Арабско-русский словарь сирийского диалекта*, М., 1978, с. 3, В. Шагаль, նշված աշխատությունը, էջ 39:

⁷ А. Ковалев, Г. Шарбатов, *Учебник арабского языка*, М., 1969, с. 6.

⁸ В. Шагаль, *Языковой аспект национальных процессов в арабских странах*, М., 1987, с. 60.

⁹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 59:

Անտիոքի բարբառախմբի հնչյունական համակարգերը, ի տարբերություն հայերենի և արաբերենի գրական տարբերակների, փորձառական քննության չեն ենթարկվել: Մեր հետազոտության ժամանակ հենվել ենք վերոհիշյալ բարբառային միավորների վերաբերյալ հրատարակված ուսումնասիրությունների և ձեռագիր նյութերի հեղինակների դիտարկումների վրա: Դրանցում այդ բարբառների բաղաձայնական ենթահամակարգերը ներկայացված են հիմնականում գրական արևելահայերենի համապատասխան հնչյունների համեմատությամբ. տարբերություններ գրեթե չկան:

Արաբերենի և մեր կողմից ուսումնասիրվող հայերեն բարբառների բաղաձայնների մի մասը, եթե անգամ հնչարտաբերական հատկանիշներով չեն նույնանում, այնուամենայնիվ, միմյանց մոտ գծեր են ցուցաբերում: Հետևաբար՝ փոխառություններում արաբական բաղաձայնները, իրենց յուրահատկություններով նմանվելով Անտիոքի բարբառախմբի համապատասխան հնչյուններին, նույն կերպ են արտացոլվել և ունեն միևնույն գործառություններն¹⁰:

Այսպես, արաբական փոխառությունների *b* և *d* ձայնեղ հպականները համապատասխանաբար նույնացել են բարբառների հպական *բ* և *դ* բաղաձայններին. *բեդեվի* «բեդվին» - *badawī*¹¹, *բինա* «շենք» - *bināʾ*, *կաբըր* «մահմեդականի գերեզման» - *qabr*, *կուրբուն* «մատաղ» - *qurbān*, *շօբօ* «երիտասարդներ, առողջ և գրավիչ մարդիկ» - *šabāb*, *սսբսբ* «պատճառ» - *sabab*, *դին* «կրոն» - *dīn* «հավատ, կրոն», *դերեջու* «աստիճան, մակարդակ» - *daraja*, *բօղ* «փոխարեն, այլև՝ փոխարժեք, փրկագին» - *badal*, *ջէլլադ* «դահիճ» - *jallad*, *շահադ* «վկա» - *šāhid*:

¹⁰ Հնչյունները հիմնականում հանդիպում են բառի բոլոր դիրքերում, ուստի կրկնություններից խուսափելու համար ոչ միշտ ենք այդ մասին նշում:

¹¹ Գրական արաբերենի բառաձևերը վերցված են *ʿAl-Qāmūs ʿal-jadīd*, Tūnīs, 1985 (արաբերեն) և *Х.Баранов, Большой арабского-русский словарь*, т. 1-2, М., 2002 բառարաններից: Արաբերեն բառերի տառադարձումը կատարվում է *Encyclopedia of Arabic Language and Linguistics* –ի կողմից ընդունված համակարգով:

Արաբերենի ոչ լարված, թույլ շնչեղությամբ խուլ հպական **տ**-ն նմանվում է հայերենի **թ**-ին¹²: Իսկ միջքիմքային **կ**-ն, որն արտաբերվում է փափուկ և որոշ շնչեղությամբ, նույնացել է հետքիմքային **ք**-ին: Այսինքն՝ հայերենի նշված հնչյունների հետ արաբական այդ բաղաձայնների, հատկապես **կ**-ի, նույնացումը պայմանավորված է նրանց ընդհանուր հատկանիշով՝ շնչեղությամբ. *թենեքու* «թիթեղ» - *tanak*, *թենք^{ու}oh* «զգուշացում» - *tanbīh*, *քուումու* «դեզ» - *kūma*, *քելիմու* «բառ, խոսք» - *kalima*, *բեքերու* «ճախարակ» - *bakara*, *մ^ըքթուր* «նամակ» - «1. գրված, 2. գրություն, ուղերձ» - *maktūb*, *ֆալակ* «ճակատագիր» - *falak* «1. երկինք, ուղեծիր»:

Հարկ է նշել նաև, որ գրական արաբերենում բացակայում են գրական հայերենին, ինչպես և քննվող բարբառներին հատուկ **փ**, **պ**, **գ**, **կ** հպականները, **ձ**, **ծ**, **ց** կիսաշփականները, **ճ** և **չ** կիսաշփականները, ուստի և այս բաղաձայնները փոխառություններում չեն հանդիպում: Այն ունի միայն մեկ նախաքիմքային կիսաշփական ձայնեղ բաղաձայն՝ **յ**-ն, որն արտասանությամբ գրեթե նույնանում է հայերեն **ջ**-ին: Թեև Սիրիայի բարբառում, անգամ նաև գրական արաբերենի սիրիա-լիբանանյան, թունիսյան տարբերակներում ընդհանուր արաբական այս շփականը բոլոր դիրքերում հիմնականում փոխարինվում է ձայնեղ շփական **ջ(ժ)**-ով¹³, երբեմն նաև՝ խուլ կիսաշփական **ջ(յ)**-ով¹⁴, սակայն հայերեն բարբառների արաբական փոխառություններում **յ**-ի նման տարբերակվածություն չկա: Այն հանդիպում է փոխառյալ բառերի բոլոր դիրքերում, օրինակ՝ *ջումլա* «ամբողջը, բոլորը» - *jumla* «1. նախադասություն,

¹² Հնչյունների նկարագրության համար հիմք ենք ընդունում փորձառական հետազոտությունների արդյունքները՝ հենվելով Դ. Шарбатов, *Современный арабский язык*, М. 1961, А. Ковалев, Դ. Шарбатов, *Учебник арабского языка*, М., 1969, Ա. Խաչատրյան, *Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն*, Եր., 1988, աշխատությունների տվյալների վրա:

¹³ В. Э. Шагаль, *Языковой аспект национальных процессов в арабских странах*, М., 1987, с. 9

¹⁴ М. эль-Массарани, В. Сегаль, *Арабского-русский словарь сирийского диалекта*, М., 1978, с. 17.

2. հանրագումար, արդյունք», Սիր. բար. žimle¹⁵, ջետուս «լրտես» - jāsūs, ֆըլըջ «կաթված» - fālīj, իլաջ «դեղ» - ilāj, դերեջու «աստիճան, մակարդակ» - daraja, Սիր. բար. daraže, թենջերու «կաթսա» - tanjara:

Առավել մեծ ընդհանրություններ են ցուցաբերում երկու լեզուների շփական բաղաձայնները: Արաբերենի **z, s, š, ġ, x, f, h** շփականները վերոհիշյալ բարբառախմբում համարժեք են համապատասխանաբար **q, u, ʒ, ɲ, ɬ, ʃ, h** բաղաձայններին. **z** - զընթոր «իշամեղու» - zunbūr, **h**°լըզուն «խխունջ» - ḥalazūn, ջոնի «աննշան» - juzi', ըրթոզ «բրինձ» - 'urẓ, **u**°րթ°զ «կենտրոն» - markaz, **s** - ս^hէլ «հեղեղ» - sayl, **u**րր «գաղտնիք» - sirr «1. գաղտնիք, 2. գերեզման, 3. սիրտ, հոգի», թիմ^uհ «կոկորդիլոս» - timsāh, **h**իսաբ «հաշիվ» - ḥisāb, նամրս «պատիվ» - nāmūs «1. օրենք, կանոն, 2. պատիվ, խիղճ», **f**°u «1. բավական է, 2. միայն, միայն թե» - bas, **f** - ֆիլ «փիղ» - fīl, ֆյւլյւթ «ճակատագիր» - falak «1. երկինք, ուղեծիր», սուֆրու «ճաշասեղան» - sufra, **h**ֆտար «նախաճաշ» - iftār, նահիֆ «նրբամարմին» - nahīf - նիհար, շ°ր°ֆ «պատիվ» - šaraf, **š** - շարթ «պայման» - šart «պայման, պահանջ», շահադ «վկա» - šāhid, մըշմէշ «ծիրան» - mišmiša, մուշլ°ի «լայն վերնազգեստ» - mušlah «թիկնոց, վերարկու», տարբուշ «զվարկ» - ʔarbūš, **x** - խաբիա «կարաս» - xāb'a, իըշդ «նիզակ» - xušt «նիզակ, գեղարդ», մյիյթոմ «կնքված, փակ» - maxtūm «1. կնիք կրող, 2. կնքված», մասխարու «ծաղրածու» - masxara «1. ծաղրի առարկա 2. դիմակ», բեդ^hէխ «սեխ» - baṭṭīx 'ašfar, շ^hէխ «շելխ» - šayx, **ġ** - դ°րբ° «արևմտյան հով» - ġarb «արևմուտք», դէր «ուրիշ» - ġayr «ուրիշ, այլ», բաղբաղան «թութակ» - babbagā', լաղըլ «ական» - laġam (ġ-ն փոխառությունների բառավերջում չի հանդիպում), **h**-հավու «օդ» - hawaā' «օդ», հոնջոմ «հարձակում» - hujūm «հարձակում, գրոհ», քահրիբար «սաթ» - kahrābā', մեշհուր

¹⁵ Որպես Սիրիայի բարբառային ձևեր բերվում են գրականից տարբերվողները:

«հայտնի, անվանի» - mašhūr «հայտնի, անվանի, փառաբանված», *ջահիլ* «անգետ, փխ.՝ երիտասարդ» - jāhil «տգետ, անուս», *թենք^mօհ* «զգուշացում» - tanbīh: Ուշագրավ է, որ փոխառյալ բառերում առավել մեծ թիվ են կազմում **h** զուտ արաբական հնչյունով փոխառյալ բառերը, մինչդեռ **h** հնչյունով փոխառությունները շատ սակավաթիվ են:

Արաբերենի **m, n, l, y** ձայնորդները նույնպես հայերենի համեմատությամբ հնչարտաբերական և գործառական յուրահատկություններ չեն ցուցաբերում: Միայն, **l**-ն ունի ավելի փափուկ արտասանություն. **m** - *միհ^o*՝ «նավահանգիստ» - mīnāʾ, *մ^oր^ou* «ժառանգություն» - mirāt, *ջումլա* «ամբողջը, բոլորը» - jumla, *դայման* «միշտ» - dāʾiman, **n** - *նիզամ* «կարգապահություն» - nizām, *նիկ^hդի* «կաթիլ» - nuqṭa Միր. բար. niʿta, *նադիր* «հազվագյուտ» - nādir, *բինա* «շենք» - bināʾ, *ինքար* «ուրացում» - inkār, *զեման* «ժամանակ» - zamān, *դայման* «միշտ» dāʾiman, - *լըբ^mou* «ջրիկ մնացած ապուր» - labūs, *լահլա* «անագ» - lahm «1. զոդում, 2. Զոդվածք», *ֆսլսը* «ճակատագիր» - falak «1. երկինք, ուղեծիր», *հ^oլըզուն* «խիտունջ» - ḥalazūn, Միր. բար. ḥalazōn, *ֆթել* «պատրույգ» - faṭīl «պատրույգ, բռնկիչ, խայծ», *կաբլ* «ընդունված, ընդունելի» - qābil «1. ընդունող, դիմավորող, 2. հաջորդ», **y**-*յարաբ* «ռձլ Աստված» - yā rabb, *յ^hնի* «այսինքն» - yaʾnī, *խայալ* «ուրվական» - xayāl (փոխառությունների բառավերջում y-ն չի հանդիպում):

Արաբերենի **r** ձայնորդն հնչարտաբերական հատկանիշներով ավելի մոտ է հայերենի **ռ**-ին: Անտիոքի բարբառախմբում, որտեղ գործառում են և՛ *ռ-ն*, և՛ *ր-ն*, հիմնականում այն համապատասխանում է *ր* -ին և հանդիպում է փոխառյալ բառերի բոլոր դիրքերում: Ընդ որում, բառասկզբի *ր*-ն ձայնավորային հենարան, ինչպես հայերենին է հատուկ, ոչ միշտ է ստանում. *րահուն* «ռեհան» - riḥān, *րէսմի* «պաշտոնական» - rasmi «պաշտոնական, օրինական», *ջըրըդ* «ժապավեն» - šarīṭ, *ջուրաբ* «զուլպա» - jaurab, *իֆտար* «նախաճաշ» - ifṭār, *խումար* «բախտախաղ» - xumār, *ըրրօզ* «բրինձ» - ʾurz, *ըրօպ* «քառորդ» - rubʿ, *ըրրօբ, ռուպ* (Սվ.) «ռուպ» -

rub', *խուռնու* «անկյուն» - qurna: Ըստ Հ. Չոլաքյանի՝ բառասկզբի *ը* ձայնավորային հենարանով բառաձևերը ավելի հին փոխառություններ են¹⁶: Այսինքն՝ հայերեն հիշյալ բարբառները բառասկզբի *ը*-ի ձայնավորային հենարան ստանալու ավանդույթը արդեն կորցրել են:

Հայերեն բարբառների արաբերեն փոխառություններում **w** հնչյունը և՛ բաղաձայնային, և՛ երկբարբառային դիրքերում արտահայտված է որպես շրթնատամնային *վ* բաղաձայն: Հավանաբար պատճառն այն է, որ արաբերենի **w**-ն հիմնականում գործառնում է որպես ձայնեղ շփական բաղաձայն. *վեզեր* «վեզիր, նախարար» - wazīr, *վախըթ* «ժամանակ» - waqt, *վալիա-փիլա* «իրավ որ, Աստված վկա» - wa'allah bi'allah, *բեդելի* «բեդվին» - badawī, *հոլվու* «հալվա» - ḥalwā', *հավըշ* «բակ» - ḥawuš: Փոխառություններում, սակայն, **w**-ի՝ բառավերջում գործածության օրինակներ չգտանք:

Արաբերենի բաղաձայնական ենթահամակարգը, Անտիոքի բարբառախմբի հետ որոշ ընդհանրություններ ցուցաբերելով հանդերձ, ունի նաև հստակորեն առանձնացող յուրահատկություններով հնչյուններ, որոնք հաճախ դարձյալ նույնացել են քննվող բարբառների այս կամ այն հատկանիշով նման հնչյուններին: Հայերենը չունի միջատամնային ձայնեղ **đ** և խուլ **t** շփականներ, որոնք հնչարտաբերական հատկանիշներով նմանվում են անգլերենի ձայնեղ *th*-ին [ð], օր.՝ *this* «այս» և խուլ *th*-ին [θ], օր.՝ *thing* «իր»): Սիրիայի բարբառում **đ**-ն, արտաբերմամբ պարզեցվելով, նույնացել է տվյալ համակարգի պարզ ձայնեղ շփական **z**-ին: Հիշյալ բարբառախումբում ևս այն արտացոլված է *զ*-ով: Դրանով փոխառյալ բառերը մի քանիսն են. *օզ'ն* «մոլլայի աղոթք» - 'adān «աղոթքի կանչ, կոչ», *օզ'ն գինչիլ* «օզ'ն կանչել» - 'adān «աղոթքի կանչ, կոչ», հայտնել (ժամի, ժմնկի) աղոթքի մասին, *կ'օզ'բ* «տառապանք» - 'adāb «տառապանք, տանջանք» բառերում: Իսկ **t** բաղաձայնն իր արտասանական հատկությունը պահպանում է գրական արաբերենի իրաքյան, բայց ոչ եգիպտական, սիրիա-լիբանանյան

¹⁶ Յ. Չոլաքեան, *Քեսապի բարբառը*, Ե., 2009, էջ 22:

տարբերակներում, որոնցում հաճախ արտասանվում է շնչեղ խուլ հպական *t* կամ շփական *s*¹⁷: Քեսաբի խոսվածքում, որում արաբական փոխառությունները մյուսների համեմատ ավելի շատ են, այն հանդիպում է ընդամենը մի քանի փոխառյալ բառերում: Ընդ որում, բառասկզբում և բառավերջում՝ բաղաձայնից հետո համապատասխանում է *թ-ին*՝ *թեռլթ* «մեկ երրորդ» - *tult*, Սիր. բար. *tult*, իսկ միջձայնավորային դիրքում և բառավերջում՝ ձայնավորից հետո՝ *ս-ին*. *ս^oս^oլ* «1. օրինակ, 2. առակ, զրույց» - *matāl*, «1. օրինակ, նմուշ, 2. նմանություն, 3. ասացվածք, առակ», Սիր. բար. *matāl*, *ս^oր^oս* «ժառանգություն» - *mirāt*:

Արաբերենի խոչակային խուլ շփական **հ**-ն այս բարբառներում փոխարինվել է հիմնականում հայերենի կոկորդային խուլ շփական *հ*-ով և հանդիպում է փոխառյալ բառերի բոլոր դիրքերում. *հ^mոկ* «իրավունք» - *haqq*, *մահրում* «զուրկ, զրկված» - *mahrūm*, *թըսբ^oհ* «համրիչ» - *tasbīh* «1. փառաբանում, դրվատում, 2. տերողորմյա, համրիչ»: Բսկ բառամիջում և բառավերջում **հ**-ն որոշ փոխառություններում համապատասխանում է հայերենի *խ* խուլ շփականին. *մսիխքեմու* «դատարան» - *mahkama*, *մուշլ^oխ/մուշլահ* «լայն վերնագգեստ» - *mašlah* «թիկնոց, վերարկու», *իֆլախիլ* «բախտավորվել, հաջողություն ունենալ» - *ʿaflaḥa* «1. հաջողություն ունենալ, 2. երջանկանալ, բախտավորվել»: Հարկ է նշել, որ Սիրիայի բարբառում **հ**-ն պահպանվել է. *mahkame*, *mašlah*:

Արաբերենի բաղաձայնների մի շարքն (*ḍ*, *ẓ*, *ṣ*, *t*) բնութագրվում է որպես վերատամնային, վերհատության (ուժգնային) հնչյուններ, որոնք Սիրիայի բարբառում պահպանվել են: Չայնեղ հպական **ժ**-ն Անտիոքի բարբառախմբում բառասկզբում ձայնավորից առաջ և միջձայնավորային դիրքերում համապատասխանում է *դ-ին*. *դաղըթ* «ճնշում» - *ḍağt* «1. ճնշում, 2. սեղմում», *դարբա* «հարված» - *ḍarba*, *կադա* «դատավոր» - *qāḍin*, *հեթեթ* «պատրաստ

¹⁷ В. Шагаль, *Языковой аспект национальных процессов в арабских станах*, М., 1987, с. 96.

«- hāḏir «1. ներկա 2. ընթացիկ 3. պատրաստ, կանխիկ», բաղաձայնից առաջ՝ *q-ին*, որը սակայն հազվադեպ է հանդիպում. *h°qul* «մարտություն» - haḏm: Իսկ Սիրիայի բարբառում **ḏ**-ն պահպանվել է. haḏm: Խուլ հպական **ṭ**-ն Անտիոքի բարբառախմբի փոխառյալ բառերում հիմնականում վերածվել է շնչեղ խուլ հպական **ṭ-ի** թափ^{ու}ոլ՝ «պնակ» - ṭabaq, *բարթել* «կաշառք» - barṭil, *շարթ* «պայման» - šarṭ «պայման, պահանջ»: Կան նաև *տ*-ով (բառավերջում դրա գործածության օրինակ չգտանք) և *դ*-ով համապատասխանություններ՝ *տարբուշ/թարբուշ* «գլխարկ» - tarbūš, *նուկտա* «կետ» nuqta, *իֆտար* «նախաճաշ» - ifṭār **դ-ի**՝ *դակըմ* - «մի ձեռք հագուստ կամ ատամնաշար» - ṭaqm «1. լրակազմ, 2. Կոստյում», ṭaqm al-ʿasnān «արհեստական ատամնաշար», *նիկդի* «կաթիլ» - nuqta, *շըրըդ* - šarīṭ «ժապավեն»: Սիրիայի բարբառին հատուկ է արաբերենի ձայնեղ շփական **ṣ**-ի ինչպես պահպանումը, այնպես էլ **ṣ** > ḏ, հնչյունափոխությունը, օրինակ՝ naḏar: Հիշյալ փոխառություններում **ṣ** -ն հանդիպում է միայն բառամիջում, այն էլ՝ մի քանի բառում և արտասանությամբ պարզեցվելով՝ նույնացել է հայերենի *q*-ին. *նազար* «նայվածք» - naẓar «1. տեսողություն, 2. հայացք», Սիր. բար. naḏar, *նիզամ* «կարգապահություն» - niẓām, Սիր. բար. niẓām, *նիզամի* «կանոնավոր» - niẓāmī «1. Կարգականոնի վերաբերող, 2. կանոնավոր»: Խուլ շփական **ṣ**-ն քննվող փոխառություններում նույնացել է *u-ին*. *սահի* «խրավ» - saḥīḥ, *մահսուս* «մասնավոր» - maxṣūš - «հատուկ, յուրահատուկ», *ուսուլ* «կանոն, կարգ» - ʿuṣūl, *թասդըլ*՝ «1. փաստ, 2. փաստացի» - taṣḏīq «1. հավատ, 2. հաստատում»: Սիրիայի բարբառը պահպանել է **ṣ**-ի գրական արտասանությունը. saḥī:

Արաբերենի՝ վերը նկարագրված բաղաձայնները Անտիոքի փոխառյալ բառերում նույնացել են այդ տարածքի հայերեն բարբառների համապատասխան հնչյուններին: Բայց արաբերենն ունի նաև *q* *և*՝ (այն) բաղաձայնները, որոնք հայերենին խորթ են հնչարտաբերական իրենց գրերե բոլոր հատկանիշներով:

Խոր հետնաքիմքային խուլ պայթական գ բաղաձայնն արտաբերվում է որոշակի ուժգնությամբ և արտաբերական ապարատի լարումով: Միջքիմքային k-ից տարբերվում է արտաբերման տեղով և լարվածության առկայությամբ ու շնչեղության բացակայությամբ և գրական արաբերենում ունի գործառության բարձր հաճախականություն: Այն փոխառություններում նույնությամբ պահպանվել է. *կարար* «որոշում» - qarār, ինթիկամ «վրեժ» - intikām, *թասդըկ* «1. փաստ, 2. փաստացի» - taṣdiq «1. հավատ, 2. հաստատում, 3. վավերացում»: Օտար այս հնչյունը, ամրանալով Անտիոքի բարբառախմբի հնչյունական համակարգերում, սկսել է ի հայտ գալ հայերեն բառերում նույնպես՝ փոխարինելով հետնաքիմքային խուլ *կ*-ին, որը ծագում է հինհայերենյան *q*-ից (*q < q*). *կըննիլ* «գտնել», *ակրուլ* «ազոալ», *կըլօխ/կըլօխ* «զուլխ», *կուրծ* «գործ», *կըրզիլ* «գործելի», *կուրտ* «գորտ», *կազգախ* «զազաղ», *կըմեմ* «գտանեմ» և այլն: Արաբերենից փոխառյալ *կ*-ն, ինչպես երևում է *կըլօխ/կըլօխ*, սանսոդ/խ/կ «սանդուղք», *կըրտիմ* // *զըրդիմ* «կտրեմ», *մընջըկէկ* // *մընճըդէդ* «մժեդ» և այլն զուգաձև օրինակներից, Անտիոքում ինքնուրույն հնչույթ չէ և համապատասխան բաղաձայնների հետ հնչությային հակադրություն չի ստեղծում: Փոխառություններում առկա են նաև հիշյալ օրենքից եզակի շեղումներ. *հ°լ°օգ* «օղակ» – ḥalaq, *q < q*, *խուռնու* «անկյուն» - qurna, *վախըթ* «Ժամանակ», *q < ḥ*: Արաբական բարբառներում, այդ թվում նաև՝ Սիրիայի, կաֆը փոխարինվել է մեկ այլ բաղաձայնով՝ համզայով (°)¹⁸. գրակ. qatqat Սիր. բար. 'at'at «ժլատ», *զը. fauqa* - fō' «վերևում»:

Համզան խուլ հպական խոչակային բաղաձայն է, որի արտասանության ժամանակ ձայնալարերը միմյանց հպվում են և բացվում՝ օդի հոսանքի ուժգին արտամղումով: Սիրիայի բարբառում այն ավելի հաճախ առկա է բառասկզբում և բառավերջում. 'ab «հայր»: Անտիոքի փոխառություններում չի պահպանվել. *ուսուլ*

¹⁸ В. Э. Шагаль, *Языковой аспект национальных процессов в арабских стпанах*, М., 1987, с. 59-60.

«կանոն, կարգ» - 'uṣūl, *u°u°lmi* «հարց» - mas'ala, *phēna* «շենք» - binā': Միջձայնավորային դիրքում *u*՝ Անտիոքում, *u*՝ Սիրիայի բարբառում դրա փոխարեն *j* կիսաձայնն է ի հայտ գալիս, որը կարելի է համարել նաև ոչ թե *hամգա* > *j* հնչյունափոխություն, այլ համգայի անկումով պայմանավորված ձայնավորների միջև առաջացած հորանջը վերացնող հնչյուն, ինչպես՝ *խայրն* «դավաճան, նենգամիտ» - xā'in Սիր. բար. xayen, *դայման* «միշտ» - dā'imān:

Արաբերենից փոխառյալ մյուս բաղաձայն հնչյունը՝ *h*-ն, կոկորդային ձայնեղ շփական այնն է (°)¹⁹: Հնչարտաբերական հատկանիշներով այն արաբերենի ամենաբարդ հնչյունն է: Սիրիայի բարբառում 'ը առկա է բառի բոլոր դիրքերում, իսկ Անտիոքի բարբառախմբում՝ միայն բառամիջում. °*l°u* «մարդկություն» - 'aālam, *իլաջ* «դեղ» - 'ilāj, *ուշօր* «տասանորդ (տուրք)» - 'uṣr, *ըրրօր* «քառորդ» - rub', *կըտ* «քիչ, հազվագյուտ» - qit' «կտոր, մաս», *մաղղու* «ստամոքս» - ma'ida, *մաղղում* «իրավ որ, այդպես է» - ma'lūm «1.հայտնի, 2. իհարկե, անկասկած: Միայն երկու բառում տեղի է ունեցել հետևյալ անցումը. ' > *h* - *h°q°p* «տառապանք» - 'adaāb «տառապանք, տանջանք», ' > *h* - *uūhūṣ* «ժամ, ժամացույց» - sā'a:

Ընդհանուր արաբերենի բաղաձայնական համակարգում գործառում են նաև տևական հնչյուններ, որոնք գրությամբ արտահայտվում են բաղաձայնների կրկնությամբ: Դրանք Անտիոքի արաբական փոխառություններում արտացոլված են որպես այդպիսիք, քանի որ հայերենի տարածքային այս տարբերակներին նույնպես հատուկ է բառամիջում բաղաձայնների տևական արտասանությունը՝ գուցե հենց արաբերենի ազդեցությամբ: Օրինակ՝ *կուբբու* «գմբեթ» - qubba, °*u°* «1. հորեղբայր, 2. կնոջ հայր 3. տարեց մարդկանց կոչական դիմելաձև» - 'amm, *իլ°* «մասնավորապես, բացի» - 'illā «1. եթե ոչ 2. բացի, բացառությամբ»: Սակայն մի շարք

¹⁹ Հ. Չոլաքյան, *Քեսաբի բարբառը*, Ե., 2009, էջ 16:

բառերում բաղաձայնների տևականությունը չի պահպանվում.
յարաբ «ոմլ Աստված» - yā rabb, *շակ* «շերտ, ճեղք» - šaqq «1. ճեղք,
ծերպ 2. կես, մաս», *հեղըրիլ* «պատրաստել» - haqdara:

Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքներից ելնելով, կարող ենք անել որոշ եզրակացություններ: Արաբական փոխառություններն, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, հիմնականում կատարվել են Անտիոքի բարբառախմբում հպական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությունից հետո, քանի որ դրանցում արաբական հնչյունների ձայնաբանական հատկանիշները նշված հնչյունափոխության չեն ենթարկվել: Դրանք՝ որպես հայերենի խնդրո առարկա տարածքային տարբերակների հնչյունական համակարգերի անդամներ, ենթարկվում են միայն բառում դիրքից կախված, տվյալ համակարգին բնորոժ փոխազդեցական հնչյունափոխության, *ն*-ի մոտ խուլերի ձայնեղացում, իսկ *բ*-ից հետո՝ ձայնեղների խլացում և այլն:

Արաբերեն այն հնչյունները, որոնք հնչարտաբերական հատկանիշներով բավական մոտ կամ նման գծեր են ցուցաբերում Անտիոքի բարբառախմբի բաղաձայններին, փոխառություններում վերջիններիս հետ նույնացել են: Դրանք հիմնականում շփականներն ու ձայնորդներն են: Համապատասխան հնչյուններով են փոխարինվել նաև մեկ-երկու հատկանիշով հայկականին նմանվող արաբերենի օրինակ՝ միջատամնային *ձ*, *է*, վերհատությային *ճ*, *չ*, *ջ*, *տ* բաղաձայնները:

Ուշագրավ է, որ *գ* (կաֆը), լինելով զուտ գրական արաբերենի հնչյուն, որը գործառում է հատկապես մտավորականների խոսքում²⁰, իսկ խոսակցական տարբերակներում և բարբառներում փոխարինվել է համզայով, ըստ Հ. Չոլաքյանի՝ պահպանվել է Քեսաբի խոսվածքում՝ խուլ *կ*: Սակայն Անտիոքի բարբառների մյուս հետազոտողները (Տ. Անդրեասյան, Ա. Փաշայան, Ա. Հանեյան, Գ. Հանանյան) դա ներկայացնում են հայերեն ձայնեղ շփական *ղ*-

²⁰ В. Э. Шагаль, *Языковой аспект национальных процессов в арабских степанах*, М., 1987, с. 59.

նվ: Մինչդեռ Հ. Չոլաքյանը այդպես տառադարձում է Քեսաբի խոսվածքում մի քանի բառերով վկայված մեկ այլ հնչյուն՝ ‘-ը (այն), որը նշված հեղինակները որևէ ձևով չեն առանձնացնում: Ընդհանրապես հայերեն բարբառների փոխառություններում գ (կաֆը) չունի միատեսակ արտացոլում: Արաբախոս տարածքների հայերեն խոսվածքներում այն ունի արաբերենին մոտ արտասանություն և տառադարձվում է խուլ *ġ-nv* կամ ձայնեղ *ġ-nv*, իսկ մյուսներում նույնանում է հայերեն *կ, ղ, խ* հնչյուններին: Դա առաջին հերթին գուցե պայմանավորված է գ-ի (կաֆի) արտաբերման տեղով (խոր հետնաքիմքային), որը միջին դիրք է զբաղում հետնալեզվային *կ*-ի և փափկաքիմքային *ղ*-ի, *խ*-ի միջև:

Հին հայերենի համեմատությամբ, Անտիոքում, ինչպես վերը նշվեց, ավելացել է նաև *ջ* շփականը, որով բավական փոխառություններ կան կատարված և՛ արաբերեն, և՛ հարևան մյուս լեզուներից: Սակայն տեղի հայերեն բարբառներում դրա կայունացմանը, կարծում ենք, նպաստել է նաև արաբերենը:

Արաբերենի ազդեցություն է, հավանաբար, փոխառյալ բառերի սկզբում, շփական *ը* բաղաձայնի գործածությունը՝ առանց ձայնավոր հենարանի:

Անտիոքի հայ բնակչությունը, հարյուրավոր տարիներ սերտ շփումներ ունենալով Սիրիայի արաբների հետ, բնականաբար, կատարել է անմիջական փոխառություններ: Դրանց մեծագույն մասը առօրյա խոսակցական բառապաշարից վերցված ձևեր են: Սակայն տեղի՝ Սիրիայի բարբառի կրած բաղաձայնական փոփոխությունները քիչ դեպքերում են արտացոլվել այդ փոխառություններում:

Микаелян Сона – Отражение арабских согласных в антиокских армянских диалектах. - Арабские заимствования вошли в антиокские армянские диалекты после завершения в последних функционирования исторического закона смычных передвижения-переход (*р>ц, ц>р*). В этих словах арабские согласные в основном заменились соответственными фонемами антиокских армянских диалек-

тов. Лишь два арабские согласные – айн и каф, сохранили свои артикуляционные свойства. Более того, каф (**q**) вошел в фонетическую систему названных армянских диалектов, заменяя смычного **q** в некоторых позициях.

ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ*

Միքայելյան Սոնա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Ուսումնասիրության ընթացքում քննության առնելով Անտիոքի հայերեն բարբառների (Քեսաբ-Սվեդիայի, Բեյլանի)¹ խոսվածքներին նվիրված հետազոտություններում արձանագրված արաբական փոխառությունները՝ աշխատել ենք բացահայտել դրանց հնչյունական դրսևորման էական մի քանի առանձնահատկություններ: Ստորև ներկայացնում ենք նման մոտեցմամբ ձայնավորների ուսումնասիրության արդյունքները:

Արաբերեն և հայերեն հիշյալ բարբառների հնչյունական, հատկապես ձայնավորային ենթահամակարգերը, որոշ ընդհանրություններով հանդերձ, ունեն էական տարբերություններ:

Գրական արաբերենի հիմնական պարզ ձայնավորները ավանդաբար համարվում են երեքը՝ կարճ և երկար տարբերակներով (a, i, u, ā, ī, ū): Դրանց ավելանում է երկու երկբարբառ՝ aw և ay, որոնք «խոսքում կոնկրետ դիրքով պայմանավորված, հիմնականում փակ վանկում ձևավորվող հնչյունների համադրության արդյունք են»²: Երկարները կարճերից տարբերվում են տևականությամբ և նրանց համեմատությամբ ունեն գրեթե 2 անգամ ավելի երկար տևողություն³: Արաբերենի կարճ ձայնավորները, կարելի է ասել, իրենց հնչարտաբերական հիմնական հատկանիշներով նման են հայերենի *ա, ու, ի* հնչյուններին:

Ի տարբերություն գրականի, արաբերեն բարբառների ձայնավորային ենթահամակարգերն առավել բազմազան են. դրան-

* «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երրորդ գիտաժողովի նյութեր», Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 84-93:

¹ Հայերեն բարբառային միավորները ներկայացնում ենք ըստ բազմահատկանիշ դասակարգման աղյուսակի:

² Шарбатов Г., *Современный арабский язык*, М., 1961, с. 17.

³ Ковалев А., Шарбатов Г., *Учебник арабского языка*, М., 1969, с. 14.

ցում առկա են նաև միջին բարձրացման երկար և կարճ $\bar{o}$, o , e , $\square$ ձայնավորներ, ինչպես նաև այլ երկբարբառ՝ ս^Է: Միրիայի բարբառում, որի միջավայրում վաղուց ի վեր գոյատևում են Անտիոքի հայերեն խոսվածքները, գործառում են նշված հինգ ձայնավորներն՝ իրենց երկար ու կարճ տարբերակներով, երկբարբառները, ինչպես նաև՝ կարճ $\bar{a}$ հնչյունը⁵: Այս հնչյունափոխություններն առաջացել են արաբերենի պատմական զարգացման ընթացքում և այսօր, օրինակ, խոսակցական, բարբառային տարբերակներին բնորոշ է գրականի ստորին բարձրացման a -ի փոխարեն նաև առաջին շարքի, i , e ձայնավորներն օգտագործելը⁶:

⁴ Шагаль В., *Языковой аспект национальных процессов в арабских странах*, М., 1987, с. 5, Шарбатов Г., *Современный арабский язык*, М., 1961, с. 17.

⁵ M. W. Cowell, *A reference Grammar of Syrian Arabic* with audio CD, W., 2005, p. 2, М. эль-Массарани, В. Сегаль, Арабско-русский словарь сирийского диалекта, М., 1978, с. 19-20.

⁶ Шагаль В., *Языковой аспект национальных процессов в арабских странах*, М., 1987, с. 64.

⁷ Նույնը, էջ. 97:

⁸ Նույն տեղում:

մոտենում է օ-ին, իսկ i-ն (քասրա) նմանվում է ռուսերենի ե-ին: «Փափուկ» բաղաձայնների հարևանությամբ (փափուկ են համարվում մյուս բոլորը) a-ն հնչվում է e, u-ն՝ u, i-ին՝ i: Իսկ բառում տարբեր բնույթի «կոշտ» և «փափուկ» բաղաձայնների առկայության դեպքում գործում է կոշտերի ներգործության օրենքը⁹:

Անտիոքի հայերեն բարբառների ձայնավորային համակարգերը ոչ միայն արաբերեն գրական լեզվի, այլև բարբառների համեմատությամբ ավելի հարուստ են և՛ պարզ ձայնավորներով, և՛ երկբարբառներով, և՛ հետին շարքի ձայնավորների քմային տարբերակներով: Այստեղ համեմատաբար քիչ են տևական ձայնավորները, իսկ խոսվածքների նույնատիպ հնչյունները էական տարբերություններ չեն բերում:

Քեսաբի խոսվածքի պարզ ձայնավորներն են՝ ա, է, ը, *ը*, *ի*, *ի*, ու, օ և հետնալեզվայինների առաջնալեզվային, այսինքն՝ քմային տարբերակներ՝ *ե*(<°), °, *օ*, *ի*, երկբարբառներ՝ բարձրացող՝ *էօ*, *իէ*, *ուօ*, իջնող՝ *էի*, *իի*, *օ*¹⁰:

Սվեդիայի տարածքի (Խտրբեկ, Քաբուսիե, Յոդուն-Օլուկ) խոսվածքում առկա են պարզ կարճ *ա*, *է*, *ը*, *ի*, *ու*, *ի*, *օ*, *ի* և երկար *ա̄*, *է̄*, *օ̄* ձայնավորները: Կան միայն իջնող երկբարբառներ. *օ*^{ու}, *ա*^{ու}, *է*^{ու}, *օյ*, *ա̄յ*, *այ*, *ի*^{ու}, *է*^{ու}, *էյ*: Ձայնավորի տևականությունը բնորոշ է Անտիոքի միայն այս խոսվածքին: Այն առաջանում է գոյականի առկայացման ժամանակ, երբ բառի վերջին վանկի ձայնավորը, որակը պահպանելով կամ հնչյունափոխվելով, հաճախ դառնում է տևական, որը, փաստորեն, որոշյալության հատկանիշ է, ինչպես՝ *գընսնգ* - *գընս̄* «կին - կինը», *ջանջ* - *ջոնջ* «ճանճ - ճանճը», *պըզ* - *պէ̄*, «բակ - բակը»¹¹: Հատկանշական է, որ խոսվածքի ձայնավորների

⁹ Юшманов Н. В. , *Грамматика литературного арабского языка*, М., 1985, с. 32.

¹⁰ Չոլաքեան Յ., *Քեսաբի բարբառը*, Ե. 2009, էջ 15-28, Փաշայան Ա. *Քեսաբի բարբառը* (ձեռագիր), էջ 17-19:

¹¹ Հանանյան Գ., *Սվեդիայի բարբառը*, Ե., 1995, էջ 21-33, Տ. Անդրեասյան, *Սվեդիայի բարբառը*, Ե., 1967, էջ 43-46:

ենթահամակարգում, *ō, ȝ* ձայնավորների առկայությամբ հանդերձ, պարզ *o* չի գործառում: Նշենք, որ շրթնային այս հնչյունի բոլոր տարբերակները գրական (դասական) արաբերենում բացակայում են:

Բեյլանի բարբառը մեծ տարբերակվածություն չունի. պարզ ձայնավորներն են՝ *u, ɛ, ɐ, i, m, o, ɛ(<°), °, ȝ, mī*, իսկ և բարձրացող երկբարբառները՝ *^mu, ^mo*¹²:

Անտիոքի հայերեն խոսվածքների արաբական փոխառություններում բավական շատ են մայրենի լեզվի գրական ձևից, այսինքն՝ գրավոր տարբերակից, շեղվող բառերը: Դրանք մեծ մասամբ ոչ թե հայերենի տվյալ տարածքային տարբերակների արտասանական ինչ-ինչ նորմերին ենթարկված ձևեր են, այլ՝ հենց արաբերենում պատմական զարգացմամբ առաջացած հնչյունական օրենքների գործառման հետևանք:

Արաբական փոխառությունների ձայնավորների դրսևորումները հայերեն հիշյալ բարբառներում կարելի է խմբավորել որոշ ընդհանուր հատկանիշներով:

1. Արաբերեն բառերի ձայնավորները Անտիոքի հայերեն բարբառներում հնչյունափոխության չեն ենթարկվել:

Կարճ *a, u, i* ձայնավորները մի շարք փոխառություններում արտացոլվել են որպես այդպիսիք, ինչպես՝ *darba* «հարված», Սիրիայի բարբառ՝ *darbe* - *ḡarḡar*, *zabaq* «շուշան» - *qanḡarāḡ*, *naḡar* «1. տեսողություն, 2. հայացք» - *ḡaḡar* «նայվածք» (Քեսաբ)¹³, *qabr* «գերեզման» - *ḡaḡar*, *qamar* «լուսին» - *ḡamār*, *ʿaraq* «օղի» - *arāḡ*, (Սվեդիա), *qumāš* «կերպաս» - *ḡumāš*, *xumār* «բախտախաղ» - *ḡum-*

¹² Քյուփեյլան Հ., *Բեյլանի բարբառը* (ատենախոսություն), Ե., 2008, էջ 25-29:

¹³ Հայերեն բարբառային օրինակները բերում ենք ըստ Յ. Չոլաքեանի և Տ. Անդրեասյանի՝ վերը նշած աշխատությունների արաբերեն փոխառյալ բառերի բառացանկերի, գրական արաբերեն ձևերը՝ *Al-Qāmus 'al-jadīd*, Tūnīs, 1985, (արաբերեն) և Баранов Х., Большой арабского-русский словарь, т.1-2, М., 2002 բառարանների, Սիրիայի բարբառինը՝ М. Эль-Массарани, В. Сегаль, Арабского-русский словарь сирийского диалекта, М., 1978 բառարանի:

մար (Քեսաբ), *bināʾ* «շենք» - *բինա*, *nādir* «հազվագյուտ» - *նադիր* (Քեսաբ): Ինչպես կարելի է նկատել, արաբական օրինակների ձայնավորները չեն հնչյունափոխվել, քանի որ այդ ձևերում առկա են «կոշտ» բաղաձայններ կամ երկար *ā*:

Հարկ է նշել, սակայն, որ արաբերենի հատկապես *u*, *i* կարճ ձայնավորների չհնչյունափոխված օրինակները հայերեն հիշյալ բարբառներում բավական սակավաթիվ են, եթե չասենք՝ եզակի:

Երկար *ā*, *ī*, *ū* ձայնավորներն Անտիոքի հայերեն խոսվածքների փոխառյալ բառերում վերածվում են կարճի՝ առանց որակական փոփոխության, քանի որ, ինչպես նշվեց, այս բարբառախումբը երկար ձայնավորներ գրեթե չունի. *ʿilāj* «դեղ» - *իլաջ*, *māl* «ունեցվածք», Սիր. բար.՝ *māl* - *մալ*, *intikām* «վրեժ» - *ինթիկամ* (Քեսաբ), *ʿiftār* «նախաճաշ» - *իֆթար*, *ʿal-ʿayyām* «հիշարժան օրեր», եզ.թ.՝ *yaum* «օր» *այյամ* - «աբևոտ, առանց անձրևի, պարզկա օրեր» (Սվեդիա), *taxīl* «հատակագծում», Սիր.բար. *taxīl* - *թախթիղ*, *naḥīf* «նիհար» - *նահիֆ* «նրբամարմին», *nizāmī* «կանոնավոր» - *նիզամի* (Քեսաբ), *munāḥ* «տանն օգտագործելու կարևոր և տնական պաշար» - *muna*, (Սվեդիա), *maxšūš* «հատուկ, յուրահատուկ», Սիր. բար.՝ *maxšūš* - *մախսուս* «մասնավոր», *maḥrūm* «զուրկ, զրկված» - *մահրում* (Քեսաբ), *šarmūṭa* «1.փալաւ, 2.մարմնավաճառուի» - *շարմութ/տա* (Քեսաբ), (Սվեդիա):

Արաբական երկար ձայնավորների չհնչյունափոխված օրինակներ Սվեդիայի խոսվածքում հազվադեպ են հանդիպում:

Պետք է նշել, որ ժամանակակից արաբերենի ինչպես խոսակցական տարբերակներում, այնպես էլ բարբառներում երկար և կարճ ձայնավորների միջև տարբերությունը հաճախ այնքան աննշան է, որ հանգեցնում է երկարության և կարճության հատկանիշի հնչյությայնության կորստի, հետևաբար նաև՝ տնականության վերացման¹⁴:

Արաբերենի կարճ *a* ձայնավորը և՛ գրական, և՛ բարբառային տարբերակներում ունի որոշ չափով առաջնալեզվային, այսինքն՝

¹⁴ Шагаль В., *Языковой аспект национальных процессов в арабских странах*, с. 63, Шарбатов Г., *Современный арабский язык*, с. 19.

քմային արտաբերություն՝ երկար և կարճ ä¹⁵, որը նույնությամբ արտացոլվել է Անտիոքի հայերեն խոսվածքներում՝ առանց տևականությանն տարբերակման: Ինչպես՝ haḏm Սիր.բար. haḏm - *հօզմ* «մարտություն» (Քեսաբ), jarm «նավակ, ձկնորսանավակ» - *ջօրմ* (Սվեդիա):

Հայտնի է, որ արաբերենում բառարմատը մեծ մասամբ ընկալվում է նրա եռաբաղաձայն հաջորդականությամբ, քանի որ քերականական իմաստները հաճախ արտահայտվում են նաև արմատի ներքին ձայնդարձով: Հավանաբար, ինչպես սովորաբար նշվում է, այդ յուրահատկությունն է պատճառը, որ արաբերենում, ի տարբերություն շատ լեզուների, բառի մեջ ոչ թե ձայնավորները, այլ հաճախ բաղաձայններն են ազդում նրանց վրա՝ առաջացնելով հնչարտաբերական հատկանիշների փոփոխություններ: Այդ պատճառով հարևան բաղաձայնի տեսակից կախված՝ տվյալ ձայնավորի որակը փոխվում է կամ մնում է նույնը¹⁶: Հատկանշական է, որ գրային արտահայտում ունեն միայն երկար ձայնավորները, իսկ կարճերն անհրաժեշտության դեպքում արտացոլվում են տողի վերևում և ներքևում դրվող նշանների՝ *ձայնանիշերի* միջոցով:

Արաբերենին, բնորոշ է, օրինակ, այսպես կոչված «միջին» բաղաձայնների (b, d, t, f, s, z, m, n) ազդեցությամբ հետին շարքի a-ի կարճ և երկար տարբերակների առաջնալեզվային արտաբերությունը, անգամ որակի փոփոխությամբ e կամ i ձայնավորների վերածվելը¹⁷:

Անտիոքի բարբառախմբի խոսվածքներում արձանագրված են այդպիսի բառերի արդեն հնչյունափոխված ձևերը. dars «դաս», Սիր. բար. darəs - *դյւրս*, nafs, Սիր. բար. nafəs - *նօֆս* «1.հոգի, 2. ձգտում, 3. Ախորժակ», ġāmi՝ «մզկիթ», Սիր. բար. žame՝ - *ջօմի* (Քեսաբ), nahit «սրբատաշ» (քար) - *նօհիտ* (Սվեդիա), mašlah

¹⁵ Ковалев А., Шарбатов Г., *Учебник арабского языка*, с. 16.

¹⁶ Юшманов Н. В. , *Грамматика литературного арабского азыка*, М., 1985, с. 32, Ковалев А., Шарбатов Г., *Учебник арабского языка*, с. 14-16.

¹⁷ Նշված հնչյունները արաբագիտության մեջ հաճախ կոչվում են նաև «միջին» բաղաձայններ, Ковалев А., Шарбатов Г., *Учебник арабского языка*, с. 16.

«թիկնոց, վերարկու» - *u^oz^oh* «ամբողջ մարմինը ծածկող արաբական վերարկու», *bāšiq* «բազե»- *ṣ^oz^hā* (Սվեդիա), *ṣ^oz^hā* «բեդվին» - *badawī* (Քեսաբ), *muštarin* «հաճախորդ» (Քեսաբ), *nuqta* «կաթիլ» - *ḥ^oq^h* (Քեսաբ):

Հատկապես երկվանկ և բազմավանկ բառերում այս օրինաչափությունից շեղումները հաճախ արդյունք են ձայնավորների ներդաշնակության օրենքի գործառության (այդ մասին ստորև): Ինչ վերաբերում է վերին բարձրացման երկար և կարճ *i*, *u* ձայնավորներին, ապա միջին բաղաձայնների հարևանությամբ դրանք որևէ փոփոխություն չեն կրում¹⁸ և փոխառություններում էլ նույնությամբ պահպանվել են, առանց, իհարկե, տևականության հատկանիշի. *binā'* «շենք» - *ṣ^hinā*, *nādir* «հազվագյուտ» - *ḥanq^h*, *naqdī*, Սիր. բար. *na'dī* - *ḥanq^h* «առձեռն», *muš^oz^h* «լայն վերնագգեստ» - *muš^olāh* «թիկնոց, վերարկու» (Քեսաբ): Հիշյալ օրենքից, իհարկե, կան նաև շեղումներ. *murabba* «մուրաբա» - *muṣ^oṣ^o* (Քեսաբ), *mulk* «ունեցվածք» - *muṣ^oṣ^o* (Քեսաբ), *mudīr* «կառավարիչ» - *muṣ^oṣ^o* (Քեսաբ):

Արաբերենում միջին բաղաձայնների հարևանությամբ կարճ *a*-ն և երկար *ā*-ն չեն քմայնանում, եթե բառում առկա է կոշտ, ուժգին արտաբերմամբ (*emfatik*) բաղաձայն (*ḍ*, *ṭ*, *ẓ*, *ṣ*): Այս յուրահատկությունն արտացոլված է նաև հայերեն բարբառների փոխառություններում, ինչպես՝ *ḍarba* «հարված», Սիր.բար. *darbe* - *ḡarṣai*, *barṭīl* «կաշառք» - *ṣarṣṣ^h* (Քեսաբ), *taxṭīl* «հատակագծում» - *ṣarṣṣ^h* (Քեսաբ), *maxṣūš* «մասնավոր, հատուկ» - *maḥṣūṣ* (Քեսաբ):

2. Որոշ դեպքերում դժվար է պարզել, թե Անտիոքի հայերեն բարբառներում արաբական այս կամ այն փոխառությունը որ լեզվի՝ արաբերենի՞, հայերենի՞, թե՞ թուրքերենի հնչյունական օրինաչափության կրողն է: Այսպես՝ արաբերենում *ī* ձայնավորն օժտված է հարևան վանկի *ā*-ին հաղորդելու *ē* արտաբերման

¹⁸ Ковалев А., Шарбатов Г., *Учебник арабского языка*, с. 16.

հակվածություն: Այսինքն՝ բառում վերին բարձացման $\bar{i}$ -ն, ազդելով մյուս վանկի ստորին բարձրացման $\bar{a}$ -ի վրա, արտաբերման տեղով մոտեցնում է իրեն: Այդ երևույթն արաբերենում կոչվում է *'imālah*¹⁹: Ի դեպ, ներքին այդպիսի հնչյունափոխությունը բառի կամ քերականական իմաստի փոփոխություն չի առաջացնում: Օր.՝ *'elim* > *'ālim* «գիտնական»:

Ձայնավորների նշված տիպի առնմանական հնչյունափոխությունը, որ կոչվում է նաև ձայնավորների ներդաշնակություն, հատուկ է և՛ արաբերենին, և՛ Անտիոքի հայերեն խոսվածքներին²⁰: Որոշ դեպքերում այսօր արդեն դժվար է ասել, թե տվյալ փոխառությունում ձայնավորների ներդաշնակությունը հայերենում է առաջացել, թե արաբերենում: Ավելին, այս երևույթը, ինչպես հայտնի է, բնորոշ է նաև թուրքերենին: Ուրեմն հարց կարող է առաջանալ. հարյուրամյակներ շարունակ Օսմանյան կայսրության միջավայրում գոյատևող Սիրիայի արաբերենը, թուրքերենը, Անտիոքի հայերեն բարբառները այս առումով ինչպե՞ս, ի՞նչ չափով են միմյանց վրա ազդել: Յուրաքանչյուրը, բնականաբար, ունի հնչյունական այդ օրենքի գործառնման իր յուրահատկությունները: Ձայնավորների ներդաշնակությունը հայերեն բարբառներում բավական տարածում ունի, և այն մեծ մասամբ իր գործառնական հատկանիշներով տարբերվում է և՛ թյուրքական լեզուների, և՛ արաբերենի համապատասխան հնչյունափոխությունից: Հայերենում այն և՛ առաջընթաց, և՛ հետընթաց գործառնություն ունի, մինչդեռ թուրքերենում միայն առաջընթաց է²¹: Իսկ արաբերենում այն սահմանափակ գործառնություն ունի և, բացի այդ, կարող է կասեցվել՝ պայմանավորված բառում ուժգին արտաբերմամբ բաղաձայնների առկայությամբ:²²

Փոխառությունների դեպքում հաճախ դժվար է լինում որոշել տվյալ բառում երևույթի առաջացման սկզբնաղբյուրը. օրինակ՝

¹⁹ Юшманов Н. В., *Строй арабского языка*, Лен., 1938, с 53.

²⁰ Փաշայան Ա., Քեսաբի բարբառը (ձեռագիր), էջ 21:

²¹ Աճառյան Հ., Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935, էջ 154:

²² Юшманов Н. В., *Строй арабского языка*, Лен., 1938, с. 53.

timsāh «կոկորդիլոս»- *թիմսահ* (Քեսաբ), բառում i-ի ազդեցությամբ ā-ի քմայնացում բոլոր երեք լեզուներում էլ կարող էր առաջանալ:

3. Միշտ չէ, որ փոխառություններում մայրենի լեզվի համեմատությամբ առկա հնչյունափոխությունը հնարավոր է լինում բացատրել արաբերեն կամ հայերեն բարբառների հնչյունական օրենքներով: Կարելի է, ենթադրել, որ դրանց մի մասը թուրքերենով միջնորդավորված ձևեր են. xatar «վտանգ» - *խաթըր* «հարգանք» (Քեսաբ), lağam «ական» - *լաղըմ* (Քեսաբ), ğarm «տուգանք» - *ջըրըմ* (Քեսաբ), hawud «ավազան» - *հավըզ* (Քեսաբ):

Մինչ այժմ անդրադարձանք հիմնականում այն դեպքերին, երբ արաբերեն փոխառյալ բառերը Անտիոքի հայերեն բարբառներ են թափանցել մայրենի լեզվում պատմական հնչյունափոխությամբ ձևափոխված տեսքով: Սակայն այդ բառերը որոշ դեպքերում ենթարկվել են նաև հայերեն բարբառներում գործող հնչյունափոխական օրենքներին: Ստորև անդրադառնանք Անտիոքի խոսվածքների հիմնական օրինաչափությանը՝ շեշտի հետ կապված հնչյունափոխությանը:

Արաբերենի շեշտը, ինչպես և Անտիոքի հայերեն բարբառներում, ուժգնային է և չունի դրսևորման տարբերակներ: Սակայն երկու լեզուներում էլ դրանք ունեն գործառնական տարբերություններ: Արաբերենում շեշտակիր է բառի նախավերջին երկար վանկը, իսկ կարճի դեպքում շեշտն անցնում է վերջից երրորդ վանկին²³: Անտիոքի բարբառներում շեշտվում է բառի վերջին ձայնավորը՝ բացառությամբ գաղտնավանկային *ը*-ի: Այդ փոխառությունները, ինչպես մեր ուսումնասիրությունն է ցույց տալիս, ի սկզբանե հիմնականում արտասանվել են Անտիոքի հայերեն բարբառային շեշտադրությամբ, թեև չի բացառվում, որ երբեմն պահպանվել է նաև բնիկ շեշտը, որը հատուկ է երկլեզվյա բնակչության խոսակցական լեզվին: Այսպիսի եզրակացության համար հիմք է ծառայում այն փաստը, որ արաբական փոխառությունների մի մասը ենթարկվել է քննվող խոսվածքներին հատուկ բառում շեշտադրությանն առնչվող հնչյունափոխական կանոնների: Այսպես. հայերեն բար-

²³ Юшманов Н. В., 1985, с. 38.

բառների արևմտյան խմբակցությանը, ինչպես և Անտիոքի բարբառախմբին, բնորոշ է բազմավանկ բառի միջնավանկի ձայնավորի սդում²⁴, որը դիտվում է նաև արաբական փոխառություններում. ḥalazūn «խխունջ», Սիր. բար. ḥalazōn - *հօլլըզուն* (Քեսաբ). այստեղ առկա է միջնավանկի a-ի սդում: Քեսաբի և Սվեդիայի խոսվածքներում շեշտված պարզ ձայնավորը փոխվում է երկբարբառի՝²⁵, որը դիտվում է նաև արաբական փոխառություններում. a, ā >^mo անցում՝ ḥalaq- *հօլլօզ* «օղակ» (Քեսաբ), ṭabaq, Սիր. բար. ṭabāʿ - *թաբֆօլ*՝ «պնակ» (Քեսաբ), qaṣṣāb - *կասսօբ* «մսագործ» (Քեսաբ), ḡulṡop «պահարան» - *գլլօբ* (Քեսաբ), xabar «լուր» - *խեբօր* (Քեսաբ), ḥāl «վիճակ» - *հօլ* (Քեսաբ), i, ī >^hē' baṭṭīx 'aṣfar «սեխ» - *բեդիխ* (Քեսաբ), bāṣiq «բազե» - *բաշիկ*՝ «ճուռակ, սակո, շահեն» (Քեսաբ), ḥāḍir - *հեդիր* «պատրաստ» (Քեսաբ), nirḡīs «նարգիզ» - *նիլըշիս* (Քեսաբ), u >^to ' - bulbul «սոխակ» - *բլլօլ* (Քեսաբ):

Անտիոքի հայերեն խոսվածքներում արաբական փոխառությունների ձայնավորների համեմատական այս քննությունն, իհարկե, ամբողջական չէ: Այստեղ աշխատել ենք վեր հանել դրանց հիմնական առանձնահատկությունները:

Հայերեն հիշյալ բարբառային միավորների և արաբերենի շփումները, ինչպես հայտնի է, սկիզբ են առնում շատ վաղ ժամանակներից: Հետևաբար արաբական ներթափանցումների սկիզբը հայերեն բարբառներ նույնպես հին է: Այդ փոխառություններն, իհարկե, իրենց մեջ պահում են պատմության ընթացքում մայր լեզվի կրած որոշ հնչյունափոփոխություններ: Սակայն դրանցում առկա են նաև փոխառու լեզվի՝ Անտիոքի հայերեն խոսվածքների ձայնավորային ենթահամակարգի այս կամ այն օրինաչափության դրսևորումները:

Անտիոքի հայերեն խոսվածքները, հարյուրամյակներ շարունակ գոյատևելով արաբերենի տևական շփման միջավայրում, բնա-

²⁴ Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Հ. 1, Ե., 1982, էջ 86:

²⁵ Չոլաքեան Յ., *Քեսապի բարբառը*, էջ 25-28, Հանանյան Գ., *Սվեդիայի բարբառը*, էջ 26:

կանաբար, կատարել են մեծաքանակ փոխառություններ: Դրանց մի մասում մայրենի լեզվի հնչյունական յուրահատկությունները պահպանվել են, քանի որ չեն հակասում հայերեն այդ խոսվածքների հնչյունական օրենքներին, իսկ մի որոշ մասն էլ ենթարկվել է այդ օրենքներին: Եվ այսօր ոչ բոլոր դեպքերում է հնարավոր պարզել, թե Անտիոքի հայերեն խոսվածքների արաբական փոխառություններում առկա ձայնավորային փոփոխություններից որոնք են օտար՝ արաբական և որոնք նոր՝ հայկական քերականական անձնահատկությունների արդյունք:

Микаелян Сона - Отражение гласных арабских заимствований в Антиокских армянских диалектах. - В Антиокских армянских диалектах арабские заимствования чаще отличаются по огласовке от литературных арабских, то есть письменных вариантов слов. Эти заимствованные формы результаты исторических перемен гласных в самом арабском, которые не зафиксированы в письме. Не мало и таких арабских заимствованных слов, гласные которых подчинились законам уамянутых диалектов. А в некоторых случаях трудно определить: прямое, или через другого, например тюркского языка, сделано заимствование.

ԳԼՈՒԽ Գ. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԱՌԿԱ «ԼԷԽՏԸՐ» ԲԱՌԱՆՎԱՆ ՇՈՒՐՋ*

Աբրահամյան Անահիտ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հայերենի բարբառներում «բահ» գործիքանիշ հասկացությունը գրանցվել է մի քանի բառային տարբերակներով, այդ թվում՝ *լէխտըր* բառանվամբ:

Բառը հայերենի բարբառների Տրապիզոնի խոսվածքում փաստել են Հ. Աճառյանը («երկու մատով բահ՝ գետինը բահելու կամ փորելու համար, պէլ») և Ս. Ամատունին («երկժանի, կոթի տեղը գոգաւոր մեծ բահ, որ գետին խթելով կունձղ /ճիւմ/ են հանում, ...պէլ»):¹

XX դարասկզբին Տրապիզոնի հայկական գյուղերում լեխտրի գործածությունը վկայել է Ս. Հայկունին: Նագրել է, որ ապրիլին հայ գյուղացին «բէյճուն ձեռքը կառնէ, չուանը ուսը կըձգէ, կըբարձրանա յանտառը, ուստի լուծ, հարոր, լեխտրի, փէտատի, կացինի, բէյճուի ևն. Գործիքներու համար յարմարագոյն փայտեր կըկտրէ...»²: Վ. Թոռլաքյանը նշումներունի Օրդուի շրջանում *լէխտըր* կոչվող գործիքի տարածվածության մասին: Նագրում է, որ այդ շրջանի «Աքյաղի գյուղը արևմտյան վերջին կետն էր, ուր օգտագործում էին լեխտըր», քանի որ «դէպի արևմուտք ընկած երկրամասերում լեխտրին փոխարինում է ինարորը, թինուփետատը»³: Վ.

* «ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, Ե., 2013, էջ 307–313:

¹ Տե՛ս Աճառեան Հ., *Հայերէն գաւառական բառարան* (= *Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 419, Սահակվորդ. Ամատունի, *Հայոց բառութան*, Վաղարշապատ, 1912, էջ 245:

² Հայկունի Ս., *Տրապիզոնի հայ գիւղացու կեանքը*. – Արարատ, 1905, յուլիս-օգոստոս, էջ 745:

³ Թոռլաքյան Բ.Գ., *Համշենահայերի ազգագրությունը*. – *Հայազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ*, 13, Ե., 1982, էջ 119:

Թողալքանը նաև տեղեկացնում է, որ բացի այդ լեխտրից՝ Օրդուի շրջանի գյուղերում տարածված էր *թիթիվ* /թեթև/ կամ *կէս-լէխտըր* /*Օրդուիլէխտըր* կոչվող գործիքը, որն «իր կառուցվածքով բահի /թի/ ուլեխտրի խառնուրդ էր ներկայացնում»⁴: Պետք է ասել, որ բառը գործածական էր ընդհանրապես Համշենի բարբառում⁵: Համշենահայերն այդ անվամբ գործիքը գործածել են անգամ գաղթից հետո, երբ վերաբնակվել են Ռուսաստանում. Ս.Երեմյանը նշում է, որ Ս.Գ.Բարխուդարյանը Դրանդի շրջանի Բոգովեշտա գյուղից բերել է մի գործիք, որը տեղի համշենահայերը կոչում են *լէխտըր*⁶, կա վկայություն Աբխազիայի Ծերելդա գյուղում այդ անվամբ գործիքի գործածության մասին⁷ (նկ. 1):

Հայոց լեզվի բարբառագիտական բառարանը Համշենի բարբառում արձանագրել է նաև *լէխտրել* «լեխտրով հողը փորել» բայը⁸: Ս. Հայկունին նշել է, որ «գիւղացին լեխտրով (երկճիւղանի բահ) կըլլխտրէ»⁹:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերում *լէխտըր* բառը չի գրանցվել:

Բառանունը գործածել են ոչմիայն հայերը: Ա.Պոպովը ընշում է, որ Պոնտոսի հույները լեռնային շրջաններում հողը փորելու համար գործածում էին «լեխտր» («лехтер») կոչվող հատուկ տեսակի բահ՝ երկճյուղ բերանով և փայտե կոր կոթով¹⁰:

⁴Նույն տեղում, էջ 120:

⁵Բոդյան Վ.Հ., *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Ե., 1972, էջ 56–59:

⁶Տե՛ս Еремян С.Т., *Происхождение некоторых орудий пашенного земледелия в древней Армении*. – *Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղագիտության պատմության*, հ. 1, Ե., 1964, էջ 20:

⁷ Տե՛ս Обосян С.Г., Габриелян М.Р., *Земледелие и обработка зерновых культур. – Армяне (серия: Народы и культуры)*, Москва, 2012, էջ 110:

⁸Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Ե., 2002, էջ 217:

⁹Հայկունի Ս., նշվ. աշխ. – Արարատ, 1905, հոկտեմբեր, էջ 938:

¹⁰Տե՛ս Попов А.П., *Понтийские греки*. – *Бюллетень: антропология, меньшинства, мультикультурализм*, вып. 2, Краснодар, 2000, էջ 113:



Նկ. 1. Աբխազիայի Շեբեղա գյուղի համշենահայերը լեխտրով աշխատելիս:

(ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի պահոց, թղթ. 22)

Հայերենի բառարաններում, բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ *լեխտրը* բառի ստուգաբանության կամ փոխառության աղբյուրի վերաբերյալ նշումներ չենք գտել: Բառանվան ծագման վերաբերյալ արժանահավատ տեսակետ է առաջ քաշել անգլիացի բյուզանդագետ Ա. Բրայերը: Նրա «Գավաժքները Տրապիզոնի կայսրությունում...» հոդվածում, որտեղ բերված են տվյալներ նաև կայսրության գյուղատնտեսական կյանքի վերաբերյալ, խոսվում է *լեխտրին* կոչվող երկմանի բահի մասին¹¹, իսկ հոդվածում տեղ գտածն կարներից մեկի համար (Fig.

¹¹St. uBryer A., The Estates of the Empire of Trebizond. Evidence for their Resources, Products, Agriculture, Ownership and Location. – Spring Symposium of Byzantine Studies, (12th: 1978: University of Birmingham), Athēnai, 1979 (ΑρχαίονΠόντου 35)

7), որտեղ պատկերված է լեխտրով փորելու տեսարան, նշված է հետևյալը. «Ժամանակակից պոնտական *λίχτρος*-ի (միջնադարյան պոնտական *έλικτρον*) գծապատկերը»¹²: Ի դեպ, *լիխտրը* հնչածը նույնպես գործածական է եղել համշենահայոց բարբառում: Օրինակ՝ գործիքն այդպես են կոչել Աբխազիայի Խաշուպսե բնակավայրի համշենահայերը¹³, Համշենի բարբառում այդ ձևի գործածությունը փաստել է նաև Վ. Թոռլաքյանը¹⁴:

Էլիկտրին կոչվող գործիքի մասին նշում կա Տրապիզոնի մոտ գտնվող Վազելոնի Ս. Հովհաննես Նախակարապետիվանքի XIII դ. Վավերագրերից մեկում¹⁵: Ա. Բրայերը, անդրադառնալով նշված

[նույնէջադրամաբարտաստված է. Bryer A.A.M., *The Empire of Trebizond and the Pontos*, London, 1980], էջ 398–399:

¹²Նույն տեղում, էջ 447 (հոդվածում Ա. Բրայերը նշում է, որ գծապատկերն արտատպված է հունարեն ժամանակակից մի աղբյուրից): Ավելի ուշ տպագրված մի հոդվածում նա արդեն հրապարակում է *λίχτρος* գործիքի և դրանով կատարված աշխատանքի լուսանկարներ՝ որոնք ներկայացնում են Պոնտոսի հույների երկրագործական մշակույթը (տե՛ս նույնի, *Byzantine Agricultural implements: The Evidence of Medieval Illustrations of Hesiod's Works and Days. – The Annual of the British School at Athens*, Vol. 81 (1986), էջ 72, 74, 75): Հեղինակը, անշուշտ, ծանոթ չէ համշենահայերի երկրագործական կյանքն արտացոլող գրականությանը և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական հավաքածուին, այլպես իր հոդվածներում կարտացոլեր նաև *λίχτρος* գործիքի գործածությունը համշենահայերի երկրագործական մշակույթում (համշենահայերի՝ լեխտրով աշխատանքի և գծապատկեր, և լուսանկար համապատասխանաբար տե՛ս, օրինակ, Բոդյան Վ. Հ., նշվ. աշխ., էջ 57, Թոռլաքյան Բ.Գ., նշվ. աշխ., աղյուսակ V, նկ. 1, աղյուսակ VI, նկ. 1, Обосян С.Г., Габриелян М.Р., նշվ. աշխ., էջ 110):

¹³Տե՛ս Менакеци (Варвашян) В., *Собрание предметов материальной культуры Амшенских армян района Хашупсе (краткое описание и значение терминов, фото, рисунки)*. – Амшен-Понто́с, вып. 3, Краснодар, 2010, էջ 68:

¹⁴Տե՛ս Թոռլաքյան Բ.Գ., նշվ. աշխ., էջ 118:

¹⁵Տե՛ս Успенский Ф.И., Бенешевич В.В., *Вазелонские акты. Материалы для истории крестьянского и монастырского землевладения в Византии XIII—XV веков*, Ленинград, 1927, Акт N 118, էջ 88:



Fig. 7. Drawing of modern Pontic λίστρε (medieval Pontic ἐλίστρον).

Նկ. 2

վկայություններում այդ գործիքի անվանը, վերջինիս համար նշում է ստուգաբանական հետևյալ ձևերը՝ հուն. λισγάριον (λισγάρι, λίσγος) և λίστρον «բահ»¹⁶: Հեղինակի համար առաջին ձևի հիմք են ծառայել Աստվածաշնչի և հատկապես Հեսիոդոսի «Աշխատանքներ և օրեր» էպիկական պոեմի բյուզանդական միջնադարյան մի շարք ձեռագրեր, որոնցում առկա որոշ մանրանկարներում պատկերված գործիքների մեջ կան նաև լեխտրի նման Π-ձևի երկ-

¹⁶ Տե՛ս Bryer A., *Byzantine Agricultural implements: The Evidence of Medieval Illustrations of Hesiod's Works and Days*, էջ 70:

Ժանի թաթ ունեցող բաւեր՝ վերոնշյալ անվանմամբ¹⁷: Երկրորդ՝ *λίστρον* ձևի համար Ա. Բրայերը հղում է Ա. Պապադոպուլոսին, որը պոնտական (է)λίχτρε նույնացնում է *λίστρον*-ին¹⁸: Պետք է նշել, որ, իրոք, դրանք նույնն են, քանի որ դրանց անվանումները մեկը մյուսի հնչյունափոխված տարբերակն են: Այդ մասին ուղղակի նշված է Դ. Օեկոնոմիդեսի «Պոնտերենի հնչյունաբանությունը» գրքում (որին հղում չկա Ա. Բրայերի՝ քննարկվող հարցին առնչվող աշխատություններում): Դ. Օեկոնոմիդեսը, անդրադառնալով հունարենի Պոնտոսի բարբառում հնչյունափոխությանը, գրում է, որտ-ից առաջ *σ*-ն վերածվում է քմային *χ*-ի միայն *λίχτρε* (դ)բառում (*λίστρο* / *λίστρον*-ից) [նաև՝ *λίχτρε* (ω *λίστρε* (ω))]¹⁹:

Այսպիսով, հայերենի Համշենի բարբառում առկա *լէխտըր* գործիքանիշ բառը փոխառված է հունարենի Պոնտոսի բարբառից և ծագում է հուն. *λίστρον* ձևից: Նշվածը և նաև Ա. Բրայերի կողմից բերված միջնադարյան բյուզանդական ձեռագրերում առկա նույն արմատով կազմված անվամբ կոչվող գործիքի պատկերները հիմք են տալիս ենթադրելու, որ հինհունական աղբյուրներում հանդիպող *λίστρον* կոչվող գործիքը ոչթե սովորական բահ է, ինչպես ընդունված է գրականության մեջ, այլ լեխտրի նման Ս-ձևի երկժանի թաթ ունեցող գործիք:

Նշված տեսակետի օգտին է խոսում նաև հետևյալ հանգամանքը: Դինոզավրերիդասի մեջ է մտնում լիստրոզավրը (*Lystrosaurus*), որի անունը կազմված է հուն. *λίστρον* (համապատասխան գրականության մեջ վերցված է «բահ» նշանակությամբ) և *σαύρα* «մողես» բառերից («բահ մողես»), իսկ անվան մեջ *λίστρον* բառի առկայությունը բացատրվում է նրանով, որ այդ կենդանու գլուխը

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 50 (Fig. 1), էջ 53 (Fig. 3), էջ 58 (Fig. 7), էջ 61 (Fig. 10), էջ 62 (Fig. 11), էջ 65 (Fig. 14), էջ 71 (Fig. 16), նաև Նույնի, *The Means of Agricultural Production: Muscle and Tools*. – A.E.Laiou (ed.), *The Economic History of Byzantium: From the Seventh through the Fifteenth Century*, Vol. 1, Washington, 2002, էջ 104 և 105-ի միջև (Fig. 1, 2, 3):

¹⁸ Տե՛ս Bryer A., *Byzantine Agricultural implements: The Evidence of Medieval Illustrations of Hesiod's Works and Days*, էջ 70:

¹⁹ Տե՛ս Oeconomides D.E., *Lautlehre des Pontischen*, Leipzig, 1908, էջ 48:

նման է բախի: Պետք է նշել, որ լիստրոզավրը պատկանում է երկժանիքավորների /dicynodonts/ դասին (ունի դեպի ներքև ձգվող երկու մեծ ժանիք), և նրա գլուխը նման է ոչթե սովորական, այլ Ս-ձևի երկժանի թաթ ունեցող բախի. որն էլ հենց պայմանավորել է կենդանու անվան մեջ *λίστρον* բառի առկայությունը (նկ. 3):

Հուն. *Λίστρον* բառը գրականության մեջ առաջին անգամ հանդիպում է Հոմերոսի «Ոդիսական» պոեմում՝ *λίστροισιν* /բառացի «լիստրոնով»/ և *λίστρεόντα* /բառացի «լիստրոնովփորել»/²⁰: Հետաքրքիր է, որ այդ երկի անգլերեն, ռուսերեն և հայերեն հրատարակություններում նշված բառերի թարգմանությունները միանշանակ չեն (ընդորոում միանշանակություն չկա երկի ոչմիայն տարբեր



Նկ. 3. Լիստրոզավր²¹

լեզուներով, այլ նաև տարբեր հեղինակների կողմից միևնույն լեզվով թարգմանություններում): Օրինակ՝

²⁰Տե՛ս The Odyssey of Homer, construed literally, and word for word/, by the Rev. Dr. Gilles, Vol. 4 (Books XIX–XXIV), London, 1800, համապատասխանաբար XXII, 455, էջ 146, XXIV, 225, էջ 195:

²¹Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Lystrosaurus#/media/File:Lystr_georg1DB.jpg

Լեզուն	Թարգմանիչը	Թարգմանությունը	
		λίστροισιν	λιστρεύοντα
անգլերեն	Dr. Gilles	<i>with scrapers</i>	<i>digging round</i>
	S.H.Butcher, A.Lang	<i>with spades</i>	<i>digging about</i>
	G.H.Palmer	<i>with shovels</i>	<i>hoeing round</i>
	A.T.Murray	<i>with hoes</i>	<i>digging about</i>
ռուսերեն	П.И.Соколов	–	<i>древосчищающего</i>
	В.А.Жуковский	<i>заступом</i>	<i>подчищая деревцо</i>
	П.А.Шуйский	<i>лопатами</i>	<i>откапывал</i>
	В.В.Вересаев	<i>скребками</i>	<i>кустокапывал</i>
հայերեն	Ե.Թումաճան	–	<i>շուրջբրեր</i>
	Ս.Գրքաշարյան	<i>քերիչներով</i>	<i>փորփրելիս</i>
	Հ.Համբարձումյան	<i>սուրբահերով</i>	<i>փորում... էր</i>

Հավանաբար թարգմանությունների ²² ոչ միանշանակությունը պայմանավորված է թարգմանիչների՝ նշված λίστρον կոչվող գործիքի կառուցվածքին ծանոթ չլինելով²³: Մի հանգամանք է: Եթե հունարեն բնագրում պարզ երևում է, որ Երգ 22-ում խոսվում է λίστρον կոչվող գործիքի մասին, և Երգ 24-ում նկարագրված փորելու գործողությունը նույնպես իրականացվում է

²²Տե՛ս նույնտեղում, էջ 146, 195, The Odyssey of Homer, done into English prose by S.H.Butcher and A.Lang, New York, 1883, էջ 373, 395, The Odyssey of Homer, translated by G.H.Palmer, Boston and New York, 1891, էջ 356, 377, Homer, The Odyssey with an English Translation by A.T.Murray, Vol. 2, Cambridge, MA., London, 1919, էջ 371, 419, Одиссея, героическое творение Омира, пер. с еллиногреческого языка [прозой П.И. Соколовым], ч.2, Москва, 1788, էջ 312, Гомер, Одиссея, пер. с древнегреческого В.А. Жуковского, Санкт-Петербург, 2006, էջ 351, 372, Гомер, Одиссея, пер. П.А.Шуйского, Свердловск, 1948, էջ 316, 336, Гомер, Одиссея, пер. В.Вересаева, Москва, 1953, էջ 270, 286, Հոմերոսի Ոդիսական, թարգմ. ի հելլենականէ Հ. Եղիա վ. Թումաճան, հ. Բ, Վենետիկ–Ս.Ղազար, 1848, էջ 420, Հոմերոս, Ոդիսական, հունարեն բնագրից թարգմ.՝ Ս.Գրքաշարյան, Ե., 1957, էջ 314, 333, Հոմերոս, Ոդիսական, հինհունարենից թարգմ. Հ. Համբարձումյանը, Ե., 1988, էջ 358, 379:

²³Ի դեպ, λίστρον բառի գործածությունը միանշանակ չէ նաև բառարաններում. օրինակ՝ Ա. և Ս. Ազարյանց եղբայրները բառը թարգմանել են՝ «տափան, փայտատ, բրիչ, բախ» (Ազարեանց Ա. և Ս., Նոր բառգիրք յունարէն, իտալերէն, հայերէն, տաճկերէն, Վիեննա, 1848, էջ 482):

λίστρον կոչվող գործիքով, ապա անգլերեն, ռուսերեն և հայերեն հրատարակություններում պարզ չէ, թե ինչ ձևի գործիքի մասին է խոսվում Երգ 22-ում, և ինչ ձևի գործիքով փորելու գործողություն է նկարագրվում Երգ 24-ում: Նկատի ունենալով համշենահայոց բարբառում տվյալ գործիքի «լեխտր» անվանումը, կարելի էր հայերեն թարգմանության մեջ Երգ 22-ում օգտագործել *լեխտրով* տարբերակը, իսկ Երգ 24-ում՝ *լեխտրել* բայը, որը ոչ միայն կնկարագրեր գործողությունը, այլև կմատնանշեր, թե ինչ գործիքով է այն կատարվել:

Նմանապես հայերենի բառապաշար կարելի է ներմուծել վերոնշյալ *Lystrosaurus*-ի հետևյալ համարժեքը՝ *լեխտրամողես /լեխտրազավր/*: Բացի դրանից՝ հուն. Λίστρον բառով են կազմված բուսական ու կենդանական աշխարհի որոշ անվանումներ, որոնց համապատասխան համարժեքները նույնպես կարող են տեղ գտնել հայերենի բառապաշարում, ինչպես՝ *Listrostachys* [խոլոքաների ընտանիքին պատկանող ծաղկաբույս, բառը կազմված է հուն. λίστρον+σταχυς «հասկ» բառերից]՝ *լեխտրահասկխոլոք*, *Listeroglossum* [նույնպես խոլոքաների ընտանիքին պատկանող ծաղկաբույս, բառը կազմված է հուն. λίστρον+γλῶσσα «լեզու» բառերից]՝ *լեխտրալեզուխոլոք*, *Lystrocephalos* [մաշկի մակաբույծ, բառը կազմված է հուն. λίστρον+κεφάλι «գլուխ» բառերից]՝ *լեխտրազուխ* և այլն:

Абрамян Анит - К вопросу о наименовании “lëxtər” в мшенском диалекте. - В армянских диалектах понятие “лопата“ (обозначающее орудие труда) употребляется в нескольких словесных вариантах, в том числе под названием lëxtər (двузубая лопата). Это название зафиксировано в говорах амшенского диалекта. Установлено, что это название происходит от греческого слова λίστρον, и на примере ряда источников показана, что оно в древнегреческом обозначало не обыкновенную, а двузубую лопату.

Abrahamyan Anait -On the question of the name “lëxtər” in the Hamshen dialect. -In Armenian dialects, the concept of “shovel” (denoting

a tool) is used in several verbal variants, including also under the name lēxtər (two-toothed shovel). This name is fixed in subdialects of the Hamshen dialect. It has been established is defined that this name comes from the Greek word λίστρον, and on the example of a number of several sources it is shown that in ancient Greek it meant not an ordinary, but a two-toothed shovel.

**ԱՌՈՒ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ***

Խաչատրյան Հասմիկ
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Առու հասկացության բառանվանումները դիտարկել ենք տուն և տնտեսություն իմաստային դաշտն արտացոլող բառանունների շարքում՝ հաշվի առնելով *առու* բառի սերտ առնչակցությունը տնտեսության հետ: Մարդու բնակության վայրը սովորաբար հիմնում էին այնտեղ, որտեղ կար ջուր, որն անհրաժեշտ էր կենսական կարիքները հոգալու համար: Ավելի մեծ ջրային տարածքներ չունենալով՝ Հայաստան աշխարհում մարդիկ իրենց բնակավայրերը հիմնում էին գետերի հովիտներում կամ նրանց վտակներին կից և ոռոգման նպատակով օգտագործում էին առուների ջրերը:

Առու հասկացության բառանունները հայերենի բարբառներում աչքի են ընկնում բարբառային տարբերակների բազմազանությամբ: Դրանք են՝ *առու*, *ուրդ արիս*, *կօրի*, *կավառ* և այլն:

Առու: Տարածքային մեծ ընդգրկում ունի *առու* հասկացության համանուն բառանունը՝ չնայած հայերենի բարբառներում որոշակի տարբերակվածությանը, որին կանդրադառնանք հընթացս: Հիշյալ բառանունը գրեթե համահայերենյան կիրառություն ունի. գործածվում է և՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառախմբերի խոսվածքներում (օրինակ՝ Սասուն, Զեյթուն, Նախիջևան և այլն): Բառը բարբառներում փաստված է նաև շնչեղ ձայնեղ՝ հ^Կառու (Փերիայի շրջանի գ. Բոլորան, Մարտունու շրջանի գ. Վարդենիկ), առաջնալեզվային *յ*-ով՝ հ^Կյռու (Վանի Ոստանի շրջանի Քարադաշտ գ.), ինչպես նաև *յնո* (հ^Կյնո^մ) երկբարբառային արտա-

* «Ձահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումներ»: Ե., «Էդիթ» Պրինտ» հրատ., 2013, էջ 171-179:

սանությամբ (Մոկսի Մամոտանց): Ի դեպ, բարբառագիտական ատլասի ծրագրով Մոկսի խոսվածքը գրանցող բարբառագետ Ա. Հանեյանը փաստել է, որ առու-ն լճից եկող առվակն է, *կուրեյ*-ը, այսինքն՝ *կորին*, արտի երկայնքով հոսող առվակն է, *դարսվ*-ը՝ փոքրիկ առվակը: Հաջընի բարբառում և Նախիջևանի Ագա գ.-ի խոսվածքում բառի կոշտ *ռ*-ն փոխվել է փափուկ *ր*-ի (*արու*), իսկ Սեփաստիայի Կանգալի գավառի Մանջալիկ գ.-ում փաստված է առաջնալեզվային *ւ*-ով և *ր*-ով տարբերակը *արու*:

Առու բառը, ըստ Հր. Աճառյանի, հնդեվրոպական արմատ է: Գիտնականը *առու*- 1. գետակ, վտակ, 2. ջրի ճամփա, անցք, փոս, երակ իմաստներն է ներկայացնում՝ հին մատենագրությունից բերելով հետևյալ վկայությունները. «Առուս աղբանոցաց (Ոսկ. մ.գ.կ), Զառուս տղմոյն ձգել (Ոսկ. յի. բ. 30), Մեծութիւն թե առուով գայցէ (Սաղմ. կա. 11)». առաջին երկուսի մեջ *առու* «անցք» նշանակությամբ է, և թեև հունարենում համապատասխան հատվածն ունի «*hnutughi*» իմաստը, բայց հայերենում դարձյալ «անցք» նշանակությունն ունի (ՀԱԲ, հ.1, էջ 264): Լեզվաբանական գրականության մեջ վիճարկվում է՝ արդյոք *առու* բառի նախնական նշանակությունը կապված է *hnutelnu*, թե *փորելու* և կամ *անցնելու* գաղափարի հետ: Ըստ Հր. Աճառյանի՝ եթե բառը առնչվում է *փորելու*, *անցնելու* գաղափարին, ապա բառը կապ չունի ոռոգել բառի և ոչ էլ հնդեվրոպական **sru* արմատի հետ, սակայն գիտնականը ավելի հավանական է համարում բառի առնչակցությունը *hnutelnu* գաղափարին: Եվ այս պարագայում *առու* բառը ծագմամբ նույնանում է *առոգել*, *ոռոգել* բառերի հետ: Աճառյանը հայերենից փոխառյալ է համարում նաև վրաց. *րու*, *րուլի* «ջրանցք» բառաձևերը, որոնք, ըստ նրա, ներկայացնում են հայերենի հնագույն ձևը՝ առանց նախաձայն ձայնավորի: Գիտնականը արձանագրում է, որ հայերենի նման են հնչում մինգրելերեն *րեկա* «առու», ուսիերեն *ուրեյն* «առու, ակունք», արևելյան թուրքերեն *arya*, *arav* «առուակ», չադաթ. (հին թուրքերեն) *arık*, *aruk* «ջրանցք, փոս», այս բոլորը կցվում են պարսկերեն *aryā*, *aryāb* «գետակ» բառերին, և հայերենի հետ նմանությունը պատահական

է համարվում: Իսկ Պետերսոնը, սրան հակառակ, վերոհիշյալ ձևերը փոխառյալ է համարում նախահայերեն **aragu* ձևից (ՀԱԲ, հ. 1, էջ 264-265):

Գ. Ջահուկյանը ևս բառը համարում է հնդեվրոպական արմատ՝ կապելով հ-ե. - *sru-t* արմատի հետ: Նա, ներկայացնելով վաղնջահայերենի բառապաշարի իմաստային խմբերը, ֆիզիկական աշխարհին վերաբերող բնիկ հնդեվրոպական բառերի մեջ առանձնացնում է մի շարք բառախմբեր, որոնցից են հոսող և կանգնած ջրի հետ կապված բառերը՝ *ջուր*, *լիճ*, *լիկ*, *գետ*, *հեղեղ*, *ողող*, *լավ* (հեղեղ), *առու*, *կաւառն* և այլն (ՀԼՊ. ՆՏ, էջ 207):

Առու-ն, բացի բուն իմաստով գործածությունից, բարբառներում ունի նաև դարձվածային բազմաթիվ կիրառություններ: Այսպես՝ *առու բանալ* դարձվածը Եվդոկիայում նշանակում է *զլիկ մազերը երկու մասի բաժանել*, *առուին վերի դին սերմ կը ցանէ* արտահայտությունը Քեսաբում անխելք, հիմար գործ բռնել իմաստն ունի, *հազար առուէ հազար ջուր բերել*՝ *զանազան փաստեր*, *օրինակներ մեջ բերել* (Հազար առուէ ջուր բերի, չեղավ, չհամոզվեցավ՝ Ակն), *առու թռչել*՝ *ապօրինի կենակցել* (առավելապես կնոջ մասին, օրինակ՝ Ձի դրկից առու կըթոնա), իսկ Վանում առուն թռած դարձվածը *կրոնափոխ եղած*, *թուրքացած* է նշանակում, *առուն թռչել*, *դենը կանգնել*՝ *ստացածն ուրանալ* (Ասեցի փոխ տված ցօրենս տու՛ր, առուն թռավ, էն կօղմը կաննեց. Ամատունի), առուն խելը մտնել՝ շատ ամաչել (Ըմուն պօ մը աստավ, օր առուս խելը մղնա՝ Համշեն), այսինչի առուն ջուր կգա, այսինքն՝ այսինչն էլ կբախտավորվի (Մպասե՛ք ձեր առուն էլ ջուր կուգա՝ Մասուն):

Ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի՝ հայերենի բարբառներում առու հասկացության բառանուն է արձանագրված կօրի բառաձևը: Կօրի-ն արտերում կամ բանջարանոցներում բացված առուն է, որով ջուր են բերում արտը կամ բանջարանոցը ջրելու համար, սակայն բարբառներում այն նաև բանջարանոցներում չորս կողմից ակոսներով կտրված, որևէ բույս ցանելու համար հատկացված փոքրիկ տարածությունն է: Բառը հանդիպում է

Ալաշկերտի Կազի, Ապարանի շրջ. Ծաղկալանջ, Մարտունու Լիճք, Անիի շրջ. Մառնադբյուր գյուղերում: Օրինակ՝ մարտունեցին կասի. «Հինգ կօրի կարտօլ էմ ցանէ»: Մուշի Հադգոն գ.-ի խոսվածքում փաստված է և՛ կօրի-ն, և՛ ուրդ-ը, և՛ հ՝առու-ն, և՛ ջրըզընա-ն: Եվ ինչպես վերևում արդեն հիշատակեցինք, Մոկսի Մամոտանցում հանո^{ու} (լճից եկող առվակ) բառին զուգահեռ գործածվել է կուրէյ բառանունը՝ որպես արտի երկայնքով հոսող առվակ: Հ. Աճառյանը կօրի բառի ծագումնաբանության վարկածներն է վկայակոչում, սակայն ինքը որոշակի կարծիք չի հայտնում: Իսկ որ կօրի բառանունը բարբառներում պահպանվել է իմաստային որոշակի տարբերակվածությամբ, փաստում է նաև նա: Գավառական տարբերակները ներկայացնելիս գիտնականը արձանագրում է, որ կօրի-ն բարբառներում գործածվում է զանազան նշանակություններով: Այսպես՝ Ալաշկերտ, Բուրանիա, Երևան (գօրի), Նոր Բայազետ, Մուշ (կօռի), Ոզմ (կուրե՛), Մոկս (կուրը՛)՝ արտի ոռոգման համար բացված նեղ առու, Ղարաբաղ՝ արտը վարելու ժամանակ առաջին անգամ վերևից ներքև քաշած ակոսը, որով արտը երկու մասի են բաժանում, Ակն, Կարին, Մաշկերտ, Շիրակ՝ արտի ամեն մի ածուն կամ բաժանմունքը, Համշեն (գօրին, գօրիմ)՝ երկու արտի սահմանը, միջավայրը կամ արտի մի տեսակ չափը (Աճառյան, ՀԱԲ, հտ.2, էջ 648):

Գ. Ջահուկյանը երկրագործություն, բուսականություն իմաստային թեմատիկ խմբում վկայում է կօրի (փոքր ջրանցք արտը ջրելու համար) բառանունը՝ փաստելով նրա աղերսները հայ. կօրի՝ առու հ.-է. *geu ծռել, թեքել արմատի հետ (Գ. Ջահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 212, Ե. 1987): Ըստ գիտնականի՝ հին հայերենը առատ է եղել երկրագործության հետ կապված բնիկ հնդեվրոպական անվանումներով, ինչը փաստում է, որ զարգացած է եղել վաղնջահայերի երկրագործական մշակույթը: Թվարկելով արտ, անդ, հարաւունք, այգի, սերմն, պտուղ և երկրագործության հետ առնչվող այլ բառեր՝ նա ավելացնում է, որ բացի հնդեվրոպական երկրագործական տերմիններից, վաղնջահայերենում պետք է հանդես եկած լինեին իմաստով մասնավորված և երկրագործական արժեք

ստացած այլ բառեր, ինչպես, օրինակ, կօրի՝ փոքր ջրանցք արտը ռոռգելու համար (Ջահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 264): Ինչպես տեսնում ենք, հասարակական-տնտեսական հարաբերությունների զարգացման հետ կապված տեղի է ունենում հնդեվրոպական արմատների իմաստային մասնավորեցում, որի ակնառու դրսևորումն է կօրի բառը. կօրի՝ արտը ռոռգելու նեղ ջրանցք իմաստից այսօր բառիմաստի նեղացումով բարբառներում ձեռք է բերել այլ իմաստներ՝ ակոս, թումբ և այլն:

Հուրթ: Հայերենի բարբառներում որպես առու հասկացության բառանուն է արձանագրված հուրթ-ը, որի ծագումնաբանությունը հստակ չէ: Այսպես՝ Նոր Բաղդիքը Հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ) բառարանում ուրդ կամ որդ բառաձևերը լծորդված են յորդ-ի և հորդ-ի հետ, և տրվում է հետևյալ մեկնաբանությունը. «Առուակ ռոռգանելոյ զպարտէզս, և սահանք նորա. առու փոքր. խողովակ, ջրանցք, աւազան, *Ած՝ զօրէն յորձանաց ուխից զարկածս չարութէն ընդ այլ ուրդս արձակել ցանկացեալ» (ՆՀԲ, հտ.2, էջ 560, Ե., 1981): Աճառյանը ևս ՀԱԲ-ում անդրադառնում է ուրդ բառաձևին՝ որպես «պարտեզները ջրելու համար փոքրիկ առու», և վկայում է որդ բառաձևի առկայությունը ըստ Փիլ. Նիս. Բ. 70 Նիւս. Կազ. (Վրք. հց), ինչպես և ըստ ՆՀԲ-ի, նաև՝ ըստ Տերվիշյանի, որը բառի *ուրդ նախաձևն է տալիս՝ կցելով այն սանս. *udra*, լտ. *unda*, հսլ. *voda* բառերի հետ (Հ. Աճառյան, ՀԱԲ, հտ. 3, էջ 616, Ե. 1977): Մեծանուն գիտնականը արձանագրում է նաև բառի զավառական տարբերակները. այսպես՝ Ջուղա, Մուշ՝ ուրդ, Ալաշկերտ՝ ուռթ, Սալմաստ՝ յիւրթ, Ագուլիս՝ էօռդ: Թալինի շրջանի Մաստարա և Գավառի Սարուխան գ.-երում առկա է նաև ուրդ բառի ուրց բարբառային տարբերակը:

Գ. Ջահուկյանը, Հայերենի ստուգաբանական բառարանում փաստելով ուրդ (որդ)՝ «պարտեզ ջրելու առու, ջրանցք», իմաստներով բառը, համարում է, որ բառի ծագումն անհայտ է, և հազիվ թե կապ ունենա յորդ բառի հետ (*ordh > ուրդ) (Գ. Ջահուկյան, ՀԱԲ, էջ 753, Ե. 2010):

Ստ. Մալխասյանցը ուրդ բառահոդվածում տալիս է հետևյալ բացատրությունը. «1. Առու, որով ջուրը գնում է պարտեզ՝ արտը ոռոգելու, և նույն առվով հոսող ջուրը, 2. Առվի բերանը պարտեզ մտնելիս» (Մալխասեանց, ՀԲԲ, հտ. 3, էջ 612, Ե. 2010):

Ինչպես տեսնում ենք բառարանային օրինակներից, բառի սկզբնական նշանակությունը առու-ն է եղել, այնուհետև ժամանակի ընթացքում բառիմաստի ճյուղավորմամբ ուրդ բառանունը հայերենի բարբառներում ձեռք է բերել առվի բերան նշանակությունը: Օրինակ՝ Արարատ գ.-ի խոսվածքում «հուռթը կապի՛, հուռթը բա՛ց, հուռթը փակի՛» արտահայտություններում հուռթ ստելով՝ նկատի են ունենում առվի բերանը:

Ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի՝ ուրդ բառանունը արձանագրված է հուռթ (Մոկսի Կճավ գ.), ուռդ (Մարտունի Թագա գ.), ուրդ (Մուշի Հաղզուն գ., Խնուսի Գոպալ գ.), ուրթ (Մասունի Քոփ գ.), ուռթ Նախիջևանի Ագնաբերդ գ.) հնչյունական տարբերակներով: Հայոց լեզվի բարբառային բառարանում ևս փաստված է հիշյալ բառանունը. «Ուրդ՝ Մուշ, օրդ՝ Ագուլիս. 1. Արտի կորիների (առու) բերան, կավառ, որտեղից ջուր է մտնում մարգերի մեջ: 2. Ագուլիս, Մաստարա. Այգու՝ պարտեզի մարգերի բերան» (ՀԼԲԲ, հտ. 2, էջ 320, Ե. 2010): «Քննութիւն Ագուլիսի բարբառի» աշխատության մեջ Հր. Աճառյանը ևս փաստում է ուրդ՝ «էտդ՝ ջրի ճամբայ», բառանունը (էջ 383, Ե. 1935):

Առու հասկացության իմաստով հայերենի բարբառներում գործառող բառաձևերի մեջ մի առանձին խումբ էլ կազմում է արխ բառանունը: Ստ. Մալխասյանցը այն համարում է թուրքական փոխառություն՝ արխ-*arx*, *arg*-առու (ՀԲԲ, էջ 477): Հ. Աճառյանը վկայում է, որ արխ-ը՝ որպես առու, հայերենում առաջին անգամ հիշատակված է մի արձանագրության մեջ 996 թ. «Բերկկայ այգին, որ ջրանցքի արխի տակն է. թրք. թթր. *arx* կամ *arg* ջրանցք, առու (ՀԱԲ, հտ.1, էջ 317):

Արխ բառանվան գործառության շրջանակն ընդգրկում է գերազանցապես բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի խոսվածքները: Օրինակ՝ Գո-

րիս, Հաղորութ, Գանձակ, Դաշքեսանի Բանանց գ., Հավարիկ, Շամախի, Կապան և այլ խոսվածքներում փաստված է արիս փոխառյալ բառանունը: Բառը սահմանափակ կիրառություն ունի նաև արևմտյան խմբակցության որոշ բարբառներում: Այսպես՝ Անտիոքի Բեյլանի Սովալուխ և Աթըխ գ.-երում վկայված է օռդ-մըր⁷, Մարաշում՝ օրդօ, Եդեսիայում՝ արըղ⁸, Եվդոկիայում և Կարինի բարբառի Ջավախքի խոսվածքներում (Փոգա, Աբուլ, Լոմատուրցիս գ.-եր)՝ հարդ: Ինչպես տեսնում ենք, արիս բառաձևը արձանագրված է տվյալ խոսվածքներին բնորոշ հնչյունական համապատասխանություններով:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի կողմից հավաքված շուրջ 500 խոսվածքային միավորներում առու հասկացության բառանուն է դիտարկվել նաև կավառ բառաձևը: Վերջինս առկա է Բիթլիսի նահանգի Զխուրի շրջանի Քիսսամ գ.-ում, իսկ Էջմիածնի Ամբերդ և Դոդս գ.-երում, որոնք, ի դեպ, բնակեցված են խոյեցիներով, ըստ գրանցողի՝ առուն մայր առուն է, իսկ կավառ-ը՝ այգու (բախչի) առուն: Գավառի Սարուխան գյուղում ևս առկա է կավառ բառանունը՝ որպես առվի ջրի բերանի հողաթումբ:

Հ. Աճառյանը ՀԱԲ-ում տալիս է կաւառ բառի «ջրի նեղ առու» իմաստը, ինչպես նաև ներկայացնում է ՀՀԲ-ի (Մխիթար աբբայի Բաղգիրք Հայկազեան լեզու)ի և ՆՀԲ-ի ու ՋԲ (Ջախջախյանի) մեկնաբանությունները, որոնցում բառը բխեցվում է կաւ բառից՝ «ի կաւոյ արարեալ»: Նա պատահական է համարում նաև ճապոներեն kawa առու բառի հետ նմանությունը, ինչպես և փաստում է, որ «առուի ջրաբերանը» իմաստով կաւառ-ը առկա է նաև բարբառներում՝ Երևան, Ակն, Արաբկիր, Բաբերդ, Խարբերդ, Կյուրին, Սեբաստիա (ՀԱԲ, հտ. 2, էջ 561):

Ըստ Ջահուկյանի՝ գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները երկու տիպի են. 1. Արմատներ, որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի

չէ և 2. արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին: Այս շարքում գիտնականը նշում է նաև կաւատ-ը (ցօս-)՝ «նեղ առու, արիս» իմաստով (Ակն, Արաբկիր, Խարբերդ, Կյուրին), և «ջրաբերան» նշանակությամբ (Երևան, Զեյթուն): Գ. Զահուկյանը ենթադրաբար հնարավոր է համարում, որ կաւատ-ը կապ ունենա հնդեվրոպական *geu –ծռել, թեքել արմատի հետ, որտեղից ծագում է կորի համիմաստ բառը՝ *go^ur-no? > կաւառն, այսինքն՝ հեռավոր աղերս է տեսնում կաւատ և կորի բառերի միջև (Զահուկյան, ՀԲՆ, էջ 286, Ե. 1972, ՀՄԲ, էջ 395, Ե. 2010):

Կաւատ բառանվանը անդրադառնում է նաև Ստ. Մալխասյանը՝ ներկայացնելով բառի հետևյալ իմաստները. 1. Նեղ արիս, որով ջուրը կապում են ածուների մեջ, 2. Ջրաբերան, այն կետը, որտեղ ջուրը առվից բաժանվում է և ուղղվում դեպի այգին, արխի գլուխ, 3. հեգն. բերան. Կաւատդ շատ մեծ մի՛ բանար (ՀԲԲ, հտ. 2, էջ 416, Ե. 1955):

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած Հայոց լեզվի բարբառային բառարանում ևս վկայված է կաւատ բառանունը՝ հետևյալ տարբերակներով և իմաստներով՝ 1. կավատ՝ Ակն, Արաբկիր, Խարբերդ, Խոտրջուր, կավար՝ Մալաթիա. նեղ առու, որով ջուրը կապում են ածուներին, 2. Արարատյան, Խարբերդ, Զեյթուն՝ Ջրաբերան, որտեղից ջուրը մտնում է այգու մեջ, ջրի մուտք: Եվ օրինակ է բերվում Պերճ Պոռոշյանից. «Վարդիթե՛ր ջան, տա՛ր փարխաջը վիրին կավառիցը լցո՛ւ՛ բեր, որ տղեքը ձեռները լվանան», 3. Խարբերդում և Ուրմիայում՝ առվի առջև շինված թումբ՝ ջուրը կտրելու և այլ հողամաս տանելու համար (Նա գնաց հիքին, տեսավ, որ ջրի հերթն իրանց հարևանինն ա, բահով կավառի տակիցը հենց բաց արեց, որ ոչ ով չիմացավ, Պ.Պ.) (ՀԼԲԲ, հտ. Գ, էջ 50, Ե. 2004): Հր. Աճառյանը Հայերեն Գավառական բառարանում ներկայացնում է կավատ բառով հետևյալ դարձվածները. «Կաւատ մը փլցունել» (Խարբերդ), այսինքն՝ փորձանք բերել մեկի գլխին, «Մեկուն կաւատը վար անել» (Ակն)՝ բարևը կտրել,

հետը հարաբերությունները խզել (Աճառեան, ՀԳԲ, էջ 561, Թ., 1913):

Հայ բարբառներում փաստված են նաև առու հասկացության՝ սահմանափակ գործածություն ունեցող բառեր: Օրինակ՝ Սասունի Գելիեգուզանում առու բառին զուգահեռ վկայված է օվիղ բառանունը, Խանլարի Գետաշեն գ.-ում՝ արխ/առու-ն, նաև՝ դաջ-ը, Նախիջևանի Աստապատ գ.-ում՝ հ'առու// չըդար-ը, որը, կարծում ենք, ջրատար բառի հնչյունափոխված բարբառային տարբերակն է, Մոկսում փաստված է անո/կուրել/դանրանվ-ը (փոքրիկ առվակ), Համշենի Օրդուի խոսվածքում՝ էղեգ-ը, Նիկոմեդիայի Խասկալ գ.՝ սըրալըխ-ը, Արաշատի Ագատավան գ.՝ արաբա-ն՝ որպես մեծ առու, Մուշի Հադգոնում՝ ջըրգզընա-ն: Որոշ բարբառներում վկայված են նաև ռուսերենից փոխառյալ կանալ (Ջավախք), կանավա (Համշենի Ճանիկ, Օրդուի Չիբուխլու գ.-եր, որոնց բնակիչները, ի դեպ, վերաբնակվել են Աբխազիայում, և բնականաբար ռուսերենի հետ շփումներն ավելի սերտ են):

Այսպիսով՝ առու հասկացության բառանվանումների բարբառային քննությունից ակնհայտ է դառնում, որ հայ բարբառները անադարտորեն պահպանել են հնդեվրոպական առու, կօրի, կաւառ բառանունները, թեև կօրի, կաւառ բառերի դեպքում՝ որոշակի իմաստային տեղաշարժերով: Բառիմաստային փոփոխության է ենթարկվել նաև ուրդ բառանունը, իսկ բարբառների մի հատվածում էլ առկա են փոխառյալ արխ, կանալ, կանավա, սըրալըխ և այլ բառաձևեր:

Համառոտագրություններ

ՀԱԲ- Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան
ՀԲՆ- Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն
ՀԲՈՒԲ -Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան
ՀԳԲ- Հ.Աճառեան, Հայերեն գաւառական բառարան
ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան

ՀԼՊ- Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն

ՀՍԲ- Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան

ՆՀԲ- Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի:

Գ. – ցյուղ, շրջ.-շրջան, ք.-քաղաք

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4. Ե., 1971-1979
2. Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թ., 1913
3. Աճառեան Հ., Քննութիւն Ագուլիսի բարբառի, էջ 62-63, Ե. 1935
4. Աճառեան Հ., Քննութիւն Համշենի բարբառի, Ե. 1947
5. Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912
6. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Ե., 1979-1981
7. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011
8. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, 2001-2012
9. ՀԲԱ ծրագրով հավաքած նյութեր
10. Ղազարյան Ռ., Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե. 2009
11. Մալխասեանց Ստ., Հայերենի բացատրական բառարան, Ե., 1955
12. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե. 1987
13. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե. 2010
14. Սուքիասյան Ա., Գալստյան Ս. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե. 1975:

Хачатрян Асмик - Сопоставительное изучение значений понятия առու (aru) в диалектах армянского языка. - Понятие առու (aru) в

диалектах армянского языка отмечено лексемами *առու* (aru), *ուրդ* (urd), *արի* (arkh), *կորի* (kori), *կավար* (kavar) и др. В статье представлены зафиксированные в армянских диалектах фонетические модификации упомянутых словоформ, сформированные с ними речевые обороты и устойчивые выражения, а также их территориальная характеристика. В результате диалектологического исследования понятия *առու* (aru) становится очевидным, что армянский язык в чистом виде сохранил индоевропейские лексемы *առու*, *կորի*, *կավар*, хотя в случае со словами *կորи* и *կավар* произошли некоторые смысловые сдвиги. Семантическим изменениям подверглась и лексема *ուրդ* (urd), а в некоторых диалектах присутствуют заимствованные словоформы *архи* (arkh), *канал* (kanal), *канавы* (kanava), *саралахи* (səraləkh) и др.

Khachatryan Hasmik - Study of the isoglosses of the concept “stream” in the dialects of Armenian. - The following versions of the concept “stream” have been observed in the dialects of the Armenian language: (aru)/առու, (urd)/ուրդ, (arkh)/արի, (kori)/կորի, (kavar)/կավար, etc. The article describes the phonetic versions of the abovementioned words in the dialects of the Armenian language, the idioms formed with them, as well as the territorial characteristics of these words. A study of the words representing the concept “stream” in the dialects of Armenian reveals that the dialects of Armenian have preserved the following Indo-European words intact – (aru)/առու, (kori)/կորի, (kavar) կավար, although there are certain semantic shifts in case of (kori)/կորի and (kavar)/կավար. The word (urd)/ուրդ has also undergone semantic changes. Several dialects contain the following borrowed forms: (arkh)/արի, (kanal)/կանալ, (kanava)/կանավա, (səraləkh)/սարալի, etc.

ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԱՐԳԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ԲԱՌԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ^{*}

Մեսրոպյան Հայկանուշ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Եկեղեցական պաշտոնավարությունը կամ իշխանությունը կոչվում է նվիրապետություն, քանի որ նրա անդամները ձեռնադրությամբ և օծումով նվիրվում են աստծուն: Նվիրապետությունը՝ որպես եկեղեցու վարչական և ներքին կարգապահական հարցեր լուծող կառույց, սահմանվել է 3-րդ դարում սրբազան հայրերի կողմից (Տերտուլիանոս, Կիպրիանոս և այլք): Ուղղափառ եկեղեցու նվիրապետության բարձրագույն ատյանը տիեզերական ժողովն է, որին ստորակայվում են եպիսկոպոսական, քահանայական և սարկավագական կարգերը²: Հայ եկեղեցուն առանձնահատուկ է եպիսկոպոսությանը գերակայող ևս մեկ կարգ՝ կաթողիկոսությունը, որը ներկայացնող բարձրագույն անձը ազգային եկեղեցական ժողովի կողմից ընտրվող կաթողիկոսն է³: Նվիրապետական կարգը դարերի ընթացքում համալրվում է՝ հասնելով համապատասխան գործառույթ ունեցող ինը դասի:

Քրիստոնեության առաջին դարերում քրիստոնեական համայնքները ղեկավարում էին եպիսկոպոսները, որոնք նշանակվում էին առաքյալների կողմից: Եպիսկոպոսությանը զուգահեռ գործում էր նաև քարոզելու արտոնություն ունեցող սարկավագությունը:

^{*} «Գիտական նյութերի ժողովածու (հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու)», Վանաձոր, 2013, էջ 141-148:

¹ Տե՛ս Նվիրապետական բարձրագույն կարգին առնչվող բառերի բարբառային բնութագիրը, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան ՊՄԻ, Գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, 2013:

² Նվիրապետական կարգերի մասին տե՛ս Մ. արք. Օրմանեան, *Հայոց եկեղեցին*, «Սևան» հրատ., Պեյրուք, 1961:

³ Տե՛ս Ս.Վ. Յ.Փ., Հայոց եկեղեցույ գլուխն ո՞վ է, «Յոյս», օրագիր բանասիրական, ի տպարանի Արմաշ, 1869, N 36, էջ 265-269:

Հետագա դարերում քրիստոնեական պաշտամունքային կառույցների շուրջ համախմբված համայնքները ղեկավարվում են հայրապետի կամ երեցի կողմից:

Հայ եկեղեցում հաստատված նվիրապետության դասերն են. ա) *կաթողիկոսություն*՝ ի դեմս ընդհանրական հայրապետի կամ ամենայն հայոց կաթողիկոսի, նաև պատրիարքի, բ) *եպիսկոպոսություն*՝ ի դեմս արքեպիսկոպոսի, քորեպիսկոպոսի, եպիսկոպոսի, գ) *քահանայություն*՝ ի դեմս քահանայի, երեցի, վարդապետի, ծայրագույն վարդապետի, արեղայի, դ) *սարկավագություն*, ե) *կիսասարկավագություն*, զ) *ջահրնկալություն*, է) *երդմնացուցչություն*, ը) *դպրություն* կամ *ընթերցողություն*, թ) *դոնապանություն*:

Ոչ բոլոր աշխարհականներն ու բարբառախոսներն են ծանոթ նվիրապետության նշված աստիճանների գործառությանին տարբերություններին, նաև դրանց պաշտոնակատարներին: Ընդհանուր առմամբ չտարբերելով հոգևոր սպասավորների գործառույթները և պարտականությունները՝ ընդունված է բոլորին հիմնականում *տերտեր* կամ *քահանա* անվանելը: *Տերտեր* կամ *քահանա* հոգևոր սպասավորից հասարակության կողմից հիմնականում առանձնացվում է նվիրապետության գլխավոր անձը՝ հայրապետը, որին անվանում են *կաթողիկոս*:

Վանեցիները կաթողիկոսին անվանում են հայրիկ. այդպես Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը ճանաչելի դարձավ Խրիմյան հայրիկ անունով: Վանեցիները *փրշոշ* բառով տարբերակում են ավետարանական կամ բողոքական եկեղեցու քարոզչին, որին քանաքեցիները, ըստ Խաչատուր Աբովյանի երկերի բառարանի, անվանում են *պաստոր*: Վանի բարբառին բնորոշ են *սևակլոխ* և *սևակնգուղ* հոմանիշները՝ ընդհանրապես «կրոնավոր, հոգևորական» իմաստով: Վանի բարբառում *սևակնգուղ*-ը հաճախ ունի անհատական նրբիմաստ: Վանեցիները անձավներում բնակվող ճգնավորներին պարզապես *սևավոր* էին անվանում: Ինչպես նկատելի է, բառիմաստի փոփոխությունը պայմանավորված է հայ եկեղեցու հոգևորականաց դասի սև վեղար և սև սքեմ կրելով: Արարատյան

բարբառում, ինչպես և Խաչատուր Աբովյանի երկերի բառարանում *սևազուխ* բառը նշված է «վարդապետ կամ արեղա» իմաստներով («Ի Կարնոյ Կարմիր վանք կոչեցելումն սևազուխ մի կայր»): Երևանի խոսվածքի, Թիֆլիսի բարբառի *սևազուխ* բարդությունը և Այնթապի, Վանի բարբառների *սև գլուխ* բառակապկցությունը կուսակրոնության սահմանազատում չի արտահայտում և նշանակում է ընդհանրապես «կրոնավոր, հոգևորական»: Կարելի է ենթադրել, որ նշված կազմություններում *սև* արմատական ածականի շեշտումը նաև հակադրություն է արտահայտում, քանի որ սպիտակ փաթեթոցով մահմեդական կրոնավորին, ախունդին կամ մուլային անվանում էին *սպիտակազուխ*:

Բարբառախոսները *մոնթ* (Քանաքեռ, Խաչատուր Աբովյանի երկերի բառարան) // *մօնթ* (Շամշադին-Դիլիջան) բառային զուգաբանության պարզ *օ* և երկբարբառային *ռ* հնչատարբերակներով առանձնացնում են վանական դպրոցի աշակերտին: Կեսարիայի, Մուշի, Սասունի, Բուլանուխի և այլ վայրերի բարբառախոսներին հայտնի էր *նըվիրազ* // *նըվիրակ* բառը՝ «վանքի համար պտղի, մատաղ և այլ նվիրատվություն հավաքող կրոնավոր, վանական պաշտոնյա» իմաստով: Ինչպես գիտենք, նվիրակը կաթողիկոսական կոնդակի համաձայն գործող եպիսկոպոս կամ վարդապետ է, որը շրջում է հայաշատ վայրերում, կաթողիկոսի անունից հոգևոր և բարոյական աջակցություն է ցուցաբերում, ինչպես նաև նվիրատվություններ է հավաքում եկեղեցու համար:

Ինչպես ցույց են տալիս բերված բարբառային օրինակները, դրանք հիմնականում ժողովրդի հետ անմիջական շփում ունեցող հոգևոր պաշտոնյաների անվանումներ են:

Հր. Աճառյանը, «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ անդրադառնալով կրոնական բառաշերտին, նկատում է, որ «Կրոնական գաղափարների վերաբերմամբ շատ աղքատ են նախահայերը: Նրանց միակ աստվածությունն է *դիք*, վոր հնդկոպական ծագում ունի, մյուս բոլոր աստվածները իրանական կամ ասորական ծագում ունեն. նույն իսկ *աստուած* բառը փոյոզիա-

կան ծագում ունի⁴ : Պակասում են նույնպես կրոնական դասակարգ, ծեսեր ու արարողություններ նշանակող բառերը»⁵:

Պետք է շեշտել, որ նախահայերենի համեմատությամբ հայերենի բարբառները բավականին հարուստ են կրոնական իմաստալից խմբին պատկանող բառաշերտով: Անգամ ստեղծվել են աշխարհիկ կրոնականից տարբերող բառեր, ինչպիսին են Ջեյթունի, Վանի, Մուշի բարբառների *աշխարհի* և Արարատյան բարբառի Քանաքեռի խոսվածքի *մարմնավորական*⁶ բարբառաբանությունները՝ «աշխարհական, ոչ կրոնավոր» իմաստով (հմմտ. «Կա *աշխարհի*, չկա անապատի. կա անապատի, չկա *աշխարհի*», Վաղարշապատ, Բուլանուխ, Վան)⁷:

Նվիրապետական կարգ նշող բառերը հիմնականում հունարենից հայերենին անցած գրական փոխառություններ են, որոնք բարբառներում մեծ մասամբ հանդես են գալիս հնչյունական տարբերակվածությամբ:

Այստեղ, նախքան նվիրապետական բարձր դասին վերաբերող բառաշերտի քննությանն անդրադառնալը, նշենք, որ եկեղեցու նվիրապետական իշխանության խորհրդանիշը և եկեղեցու վարչական կառուցվածքի կարևոր բաղկացուցիչը կոչվում է *աթոռ*: Այն փոխառություն է հունարենից և սովորական իմաստից բացի բարբառախոս հանրության կողմից ընկալվում է նաև եկեղեցական իմաստով՝ իբրև «կաթողիկոսական գահ» և «կաթողիկոսի նստավայր»: Հայերենի բարբառային գրեթե բոլոր տարածքներում այն ունի հնչյունական զուգաբանություններ: Այսպես՝ ա) արևելյան բարբառախումբ, *աթոռ* (Նոր Զուղա) // *աթոռք* (Նոր Զուղա, Զուղա, Սալմաստ) // *աթոռ* (Արարատյան, Բուրդուր) // *այթոռ* (Կարճևան, Կաքավաբերդ) // *աթոռ* (Թիֆլիս) // *աթուռ* (Մեղրի) // *այթուռք*

⁴ Փոյուզիական ծագման տեսությունը հնացած է: Տե՛ս Վ. Համբարձումյան, *Հայերեն աստված բառի ծագումն ու տիպաբանությունը*, Ե., 2002:

⁵ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 1, ԵՊՀ, ՅԵ., 1940, էջ 123:

⁶ Գ. Գասպարյան, *Բառարան Խ. Արուսեանի երկերի*, էջ 39:

⁷ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 180:

(Ագուլիս) և այլն: Ջուղայի բարբառն ունի նաև *առթոռ* դրափոխված ձևը:

բ) Արևմտյան բարբառախումբ՝ *աթոռ* (Համշեն, Շատախ, Վան) // *աթոր* (Հաջըն) // *աթօռ* (Առտիալ, Խարբերդ, Մոկս, Ռոդոսթո, Մուչավա, Տիգրանակերտ) // *աթժօռ* (Ակն, Ասլանբեկ) // *աթժօն* (Ջեյթուն) // *ատոռք* (Մուշ) // *ատոռ* (Ալաշկերտ) // *աթոռք* (Վան) // *աթօռք* (Ախալցխա, Կարին, Նոր Նախիջևան) և այլն:

Մի շարք վայրերում կաթողիկոսական աթոռին որպես հոմանիշ կիրառվում է *գահ* (հյուս. պիլ. *gāh*, մանիք. պիլ. *gāh*—«գահ») բառը:

Վերը նշեցինք, որ նվիրապետության բարձրագույն դասը կաթողիկոսությունն է՝ հանձինս ընդհանրական հայրապետի կամ ամենայն հայոց կաթողիկոսի, նաև պատրիարքի:

Կաթողիկոս հունարեն բառ է՝ «ընդհանրական, համընդհանուր, քահանայապետ, հայրապետ, եպիսկոպոսապետ»⁸ իմաստներով: Կաթողիկոսին են վերապահված եպիսկոպոսական ձեռնադրությունը, մյուռոնի օրհնությունը, ազգային-եկեղեցական ժողով գումարելը, թեմակալ առաջնորդներ նշանակելը, կարգազանց հոգևորականներին պատժելը կամ կարգալույծ անելը:

Եպիսկոպոսական հագուստ կրող կաթողիկոսին վերապահվում է հայրապետական կոնքեռ և հովվական ասա՝ որպես իշխանության խորհրդանշան: Հայերենի բարբառներում *ասա* բառի փոխարեն կրոնական իմաստով գործածվում է *գավազան* գրական փոխառությունը՝ որոշակի հնչատարբերակներով. *Գըվազան* (Լոռի), *գավազան* (Թիֆլիս, Մեղրի), *գ՛ավազան* (Երևան, Նոր Ջուղա, Ջուղա, Ալաշկերտ, Ախալցխա, Առտիալ, Խարբերդ, Կարին, Մուշ, Մեֆաստիա), *գավաճան* (Կարճևան), *կավազան* (Արարատյան, Մարաղա, Ուրմիա), *կ՛ավազան* (Շամախի, Հավարիկ), *կըվաճան* (Բերդ), *կաւվաճան* (Իջևան, Դիլիջան, Մոկս, Շատախ, Վան),

⁸ *Կաթողիկէ* բառը Մ. Օրմանյանը բացատրում է այսպես. «Յունական բառին թարգմանական իմաստով կը նշանակէ ընդհանրական և նմանութեամբ սկսաւ նշանակել եւս մեծ եւ գլխաւոր, եւ մայր եկեղեցիները կոչուեցան կաթողիկէ եւ յատուկ կերպով այդ անունը տրուեցաւ Էջմիածնի Մայր տաճարին»:

քավագան (Երզնկա, Մարզվան, Նոր Նախիջևան, Կեսաբիա, Մալաթիա, Պոլիս, Ռոդոսյոն), *գ'ավագան* (Ոզմ), *կավագուն* (Սվեդիա), *քավագան* (Տիգրանակերտ, Ջեզիրե), *կավագոն* (Համշեն, Հաջրն), *կավգոն* (Բեյլան, Գըրըկխան) և այլն: Յ. Կարստը Ջեյթունի բարբառի համար նշում է *կազվոն* դրափոխված ձևը⁹: Նշված հնչյունական գուգաբանությունները և՛ արևելյան, և՛ արևմտյան տարածքային տարբերակներում գործածվում են միայն կրոնական իմաստով և նշում են բարձրաստիճան հոգևորականի գավագանը (հմմտ. «Ղըռ չը մըտի ավագան, ձեռք կը թալէ գավագան», Բուլանուխ):

Քանի որ գավագանն արտահայտում է պետության, իշխանության, հեղինակության գաղափար, և հայոց թագավորները ևս ունեցել են գավագան կրելու արտոնություն, հիշյալ հնչատարբերակները ձեռք են բերում նաև աշխարհիկ գործառության լեզվանդակություն:

Գավագան գրական փոխառության փոխարեն որոշ տարածքներում գործածական են հոմանիշներ. *տէյնէկ* (Երզնկա, Ամասիա), *ջոխի* (Վարհավար) և այլն: Միայն Կոզենի բարբառում հանդիպեցինք *ասա* բառի *հ'ասա* ձայնեղ հագագային հնչատարբերակին: Սվեդիայի Քարուսիե բնակավայրում բարբառագետ Գ. Հանանյանը գրանցել է *վա՛րից // աւ վա՛րէյց* ձևերը՝ կրոնական իմաստով: Կարելի է ենթադրել, որ երկրորդ օրինակում *աւ* բաղադրիչն առաջացել է *ասա* բառից: Քեսաբի բարբառն ունի *վա՛րուց* հնչատարբերակը. հմմտ. «Քիտվուօծ վա՛րուցը իէշ չը՝ գըհր»¹⁰:

Չանաքկալեում, Բուրսայից Իզմիր ընկած մի շաք բնակավայրերում կատարած մեր հարցումների արդյունքում պարզեցինք, որ ժամանակակից թուրքերենում *ասա* բառը գործածվում է «իշխանություն» իմաստով, նաև նշվում է հատկապես Մովսես մարգարեի ասան:

⁹ Տե՛ս Յ. Կարստ, *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն*, Ե., 2002, էջ 53:

¹⁰ Յ.Չոլպեան, *Քեսապի բարբառը*, էջ 356 («Նախշուն գավագանը էշ չի քշի»):

Բարբառախոս մի շարք վայրեր հոմանիշներով կամ հնչատարբերակներով զանազանում են եպիսկոպոսական գավազանը սովորական ձեռնափայտից: Զեյթունի բարբառում կրոնական իմաստին համապատասխանում են *գ'ավազոն // գ'ավազոն* հնչատարբերակները, իսկ «հասարակ գավազան, փայտ, ցուպ» նշող հնչյունական զուգաբանություններն են դրափոխված *գ'ազվոն // գ'ազվոն*-ը: Նկատելի է, որ բարբառախոսները կրոնական իմաստով գործածելիս ավելի ուշադիր են գրական փոխառության արտասանությանը հարազատ մնալու հարցում: Ղարաբաղի բարբառում նկատում ենք հակառակ երևույթը. կրոնական իմաստով գործածվելիս գրական փոխառությունը ենթարկվում է բարբառին բնորոշ հնչյունական օրենքներին՝ դառնալով *կըվաճան*, իսկ ոչ կրոնական իմաստով գործածվելիս պահպանում է *գավազան* գրական ձևը՝ նշանակելով «նորատունկ որթատունկ, մատղաշ վազ»: Գործիցիները *կըվաճա՞ն // կիվաճա՞ն* հնչատարբերակներով զանազանում են եպիսկոպոսական գավազանը վարդապետի գավազանից՝ վերջինս անվանելով *թոլամագ*: Օրինակները ցույց են տալիս, որ հնչյունական տարբերակվածությունը բարբառախոսների համար ծառայում է որպես կարևոր լեզվական հնարանք՝ կրոնական և աշխարհիկ իմաստները զանազանելու համար:

Կրոնական իմաստ չունեն Եդեսիայի բարբառի *փա՜ն*, Կարնո բարբառի և Լոռու խոսվածքի *չօմբախ*, Սալմաստի բարբառի *կամվաճան*, Սասունի բարբառի *պիր* բառերը («*Չովսյաբը հովվը պիրը*»)¹¹:

Փոքր Ասիայի հայերից թուրքերենին և թրքախոս հայերի ու հույների բառապաշարին է անցել *geveze* բառը՝ «վանական տուրք, հոգևորականներին տրվող ժամոց» իմաստով: Վանի բարբառում և Մուշի բարբառի Բուլանուխի խոսվածքում այդ իմաստն արտահայտվում է *գավազանապըտուղ* բարդությամբ:

Եպիսկոպոսական գավազանը՝ ասան, նվիրապետական իշխանության խորհրդանշան է: Այն լինում է խաչանշան, խաչագլուխ, օձագլուխ, օձաձև, քանի որ «Եւ օձն էր իմաստնագոյն քան

¹¹ Վ. Պետոյան, *Սասունի բարբառը*, էջ 89:

գամենայն գազանս ի վերայ երկրի, զոր արար Տէր Աստուած» [Ծննդ. Գ. 1]: Գավազանակրության արմատները հասնում են հնագույն ժամանակներ: Հին Եգիպտոսի փարավոնները կրում էին գավազան՝ իբրև դիրքի, իշխանության, հեղինակության խորհրդանիշ: Աստվածաշնչում Մովսեսը՝ իբրև Աստծո մարգարե, և Ահարոնը՝ իբրև վարդապետող, կրել են գավազան: Վարդապետական տվչության ժամանակ վարդապետին տրվում է գավազան: Գավազանն արտահայտում է պետության, իշխանության, հեղինակության գաղափար, այդ իսկ պատճառով հայոց թագավորները ևս ունեցել են գավազան կրելու արտոնություն:

Կարելի է ենթադրել, որ վիշապագլուխ գավազանի իմաստային համաբանությամբ է կերտված Գանձակի խոսվածքի *ուշէփ* (=«վիշապ») «քահանա» ծածկաբառը: Չի բացառվում նաև բառի փոխաբերացման հիմքում «անկուշտ» հատկանիշի ընկած լինելը: Հմմտ. «Մար ու ծոր՝ տէրտորչ փոր» (Շատախ)¹²:

Ինչպես նշեցինք, նվիրապետության գլխավոր անձը կաթողիկոսական օծումով և ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ ընտրված հայրապետն է: Գրական հայերենում այդ անձը բնորոշվում է *հայրապետ, ամենայն հայոց կաթողիկոս, հովվապետ, ծայրագույն պատրիարք* պատվանուններով: Հայերենի տարածքային տարբերակներում գրանցված են հիմնականում *կաթողիկոս* գրական փոխառության հնչյունական տարբերակները: Մյուս պատվանունները բարբառախոսների կողմից գործածական չեն: Արարատյան բարբառում որպես հովվապետի հոմանիշ հանդիպում է *հոգևոր տէր* որոշիչ-որոշյալ բառակապակցությունը, որը գործածվում է նաև դարաբաղիների կողմից՝ *հոգևոր դեր* տարբերակով: Ղարաբաղի բարբառում այն կաթողիկոսից բացի կարող է միաժամանակ նշել նաև թեմի առաջնորդին: Ինչպես հայտնի է, Ղարաբաղի բարբառին բնորոշ է Աճառյանի օրենքը՝ ձայնեղների խլացմամբ և հարակից ձայնավորների քմայնացմամբ, սակայն տվյալ դեպքում ունենք բառասկզբի *տ* խուլ պայթականի ձայնեղացում: Այս երևույթը նույնպես կարելի է բացատրել բարբառախոս-

¹² Մ. Մուրադյան, *Շատախի բարբառը*, էջ 171:

ների կողմից աշխարհիկ և հոգևոր իմաստների սահմանազատմամբ:

Կաթողիկոս («ընդհանրական, համընդհանուր, քահանայապետ, հայրապետ, եպիսկոպոսապետ») բառը փոխառություն է հունարենից: Մ. արք. Օրմանյանը *կաթողիկե* բառը բացատրում է հետևյալ կերպ. «Յունական բառին թարգմանական իմաստով կը նշանակէ *ընդհանրական* եւ նմանութեամբ սկսաւ նշանակել եւս *մեծ* եւ *գլխաւոր*, եւ մայր եկեղեցիները կոչուեցան *կաթողիկե*, եւ յատուկ կերպով այդ անունը տրուեցաւ Էջմիածնի Մայր տաճարին»¹³:

Նվիրապետության գլխավոր անձը կաթողիկոսական օծումով և ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ ընտրված հայրապետն է, որին գրական հայերենում համապատասխանում են *հայրապետ*, *ամենայն հայոց կաթողիկոս*, *հովվապետ*, *ծայրագույն պատրիարք*, *տէր - տէր* (S.S.) պատվանունները: Հայերենի տարածքային տարբերակներում գրանցված են հիմնականում *կաթողիկոս* գրական փոխառության հնչյունական տարբերակները. մյուս պատվանունները բարբառախոսների կողմից գործածական չեն (թվով՝ 40 հնչյունական միավոր): Ղարաբաղի բարբառում այն բազմիմաստ է և նշանակում է՝ 1) «կաթողիկոս», 2) «հոգեվոր թեմի առաջնորդ»:

Ոգմի բարբառում *կաթողիկոս* բառը բառային տարբերակով արտահայտված չէ: Կարծում ենք, որ Վան-Վասպուրական աշխարհի մաս կազմող այս տարածքում ևս ընդունված է եղել *հայրիկ* պատվանունը:

Արևելյան խմբակցության բարբառներում կաթողիկոս գրական փոխառության փոփոխակներն են՝ *կաթողիկոս* (Գորիս) // *կաթուղիկոս* (Նոր Զուղա, Զուղա) // *կաթըղիկոս* (Նոր Զուղա, Զուղա, Մալմաստ) // *կաթուղուկոս* (Բուրդուր) // *կաթուղուկոս* // *կաթուղուկո՛ւ* (Կաքավաբերդ) // *կաթաղակոս* (Մալմաստ, Ուրմիա) // *կաթաղակոս* (Շամախի) // *կաթղիկոս* (Լոռի) // *կաթէղիկոս* (Ստեփանավանի Ագարակ և Ուռուտ) // *կաթղիկոս* (Արարատյան, Մեղ-

¹³ Մ. արք. Օրմանյան, *Ծիսական բառարան*, էջ 144:

րի, Կարճևան) // *կաթղիկօ՛ւ* (Կուրիս, Մեղրի) // *կաթխիկօս* (Արա-
րատյան) // *կաթուղիկօս* (Ագուլիս) // *կաթաղագօս* (Երևան) // *կա-
թուղիկոս* (Թիֆլիս) // *կաթուղուկօ՛ւ* (Վարհավար) // *կաթօղուկօս*
(Մարաղա) // *կըթըղըկօ՛ս* (Ղարաբաղ) // *կաթըղկոս* (Նոր Ջուղա)
և այլն:

Արևմտյան խմբակցության բարբառներում ունենք հետևյալ
պատկերը. *կաթողիկօս* (Ախալցխա, Կարին) // *կաթաղիկոս* (Վան)
// *կատիղիգօս* // *կաթղիգոս* (Մուշ) // *կաթղուկոս* (Շատախ) //
կաթաղիկոս (Վան) // *կատողիգոս* (Ալաշկերտ) // *կատաղիկոս*
(Բուլանուխ) // *կաթխակոս* (Մոկս) // *կուրթուկօս* (Շատախ) //
գաթօղիգօս (Պոլիս) // *գաթօղիգէօս* (Սեբաստիա) // *գաթօղգօս* (Նոր
Նախիջևան) // *գաթըղգոս* (Մալաթիա) // *գաթղիգոս*, (Կեսարիա) //
գաթթօղգոն (Զեյթուն) // *գաթթուղգիս* (Սվեդիա) // *գաթաղօս*, Այնթ.
(Բյուրակն, 1900, 671բ) // *գաթգուէս* (Հաջն) և այլն:

Կաթողիկոս հասկացության հետ են առնչվում Վանի բար-
բառի *Դըրսի տուն* // *Դըրսիտուն* և *Ջըրհան* բարբառությունները: Այս-
պես էին կոչվում Վանա լճի Աղթամար և Լիմ-Կտուց կղզիների
դիմաց ծովեզերքի մոտ գտնվող վանական շինությունները՝ նավա-
հանգիստներով, որոնք պատկանում էին Աղթամարի կաթողի-
կոսանիստ վանքին: Այդտեղ ապաստանում էին վանքի մշակները,
հոտաղները, հովիվները, վանքի ներքին և արտաքին գործերով
զբաղվողները: Այդտեղ էին բնակվում նաև Աղթամարա կաթողի-
կոսները և Լիմ անապատի վանահայրերը, որոնք անմիջական
կապ էին պահպանում հայ գյուղերի հետ, նրանցից նվերներ ստա-
նում, ինչպես նաև ընդունում անցանկալի հյուրերին, որոնց չէին
ուզում ցույց տալ կղզիներն ու վանքերը: Ինչպես նկատելի է, տվյալ
օրինակներում ևս չի գործել Աճառյանի հնչյունական օրենքը:
Ջրհան, որ Վանի բարբառում պիտի լիներ *Ճըրխան*, և *Դըրսի տուն*
(*Տըրսի տուն*)¹⁴ գրաբարատիպ հնչարտաբերությունները վկայում
են կրոնանկեղեցական լեզվական միավորների նկատմամբ բար-
բառախոսների ունեցած վերաբերմունքի մասին:

¹⁴ Հ. Թուրջյան, *Բառարան Վանի բարբառի*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե.,
2018:

Ուղղափառ եկեղեցու գահակալի բարձրագույն՝ *կաթողիկոս* տիտղոսին համարժեք է *պատրիարք* (բառացի՝ «հայրապետ, հայրերի ավագ») անվանումը: Պատրիարքը հայրապետական ձեռնադրությամբ և օծմամբ եպիսկոպոս է՝ արքեպիսկոպոսի տիտղոսով:

Բարբառախոս գրեթե բոլոր վայրերում գործածվում է *պատրիարք* գրական փոխառությունը՝ բարբառին բորոշ հնչյունական տարբերակներով: Միայն Վանի բարբառում է մնացել *պատրիարք* գրական ձևը: Մյուս վայրերում ունենք հետևյալ պատկերը. *պատրիարք* (Մոկս), *պառիարք* (Կարին), *բաղրիարք* (Ռոդոսյոթ), *բա՛րիարք* // *բա՛րիար* (Ասլանբեկ), *բաղրիյոյք* (Զեյթուն), *բաղիյոյք* (Հաջըն) և այլն:

Պատրիարք փոխառյալ բառի տարբերակային բազմազանությունն ունի Պոլսի բարբառը՝ *բաղրիարք* // *բաղիրյարք*, այլն *բաղվիրարք* միավորներով: Պոլսի բարբառի՝ մեկից ավելի տարբերակների առկայությունը կարելի է բացատրել բարբառախոս վայրում կաթողիկոս-պատրիարքության առկայությամբ (մյուսը Երուսաղեմում է): Այդ բարբառի ծածկալեզվին հատուկ է նաև *պատի քարք* բառակապակցությունը, որը կազմվել է *պատրիարք* բառի *-արք* մասի դրափոխությամբ, որ կեղծ (ծողովրդական) ստուգաբանություն է, ունի փոխաբերական, հարգական իմաստ (պատրիարքը կարևորվում է որպես եկեղեցու վեմի՝ պատի քար): Ի դեպ՝ այս վերջին իմաստն ունի աստվածաշնչական հիմք, ըստ որի՝ Քրիստոս բնորոշվում է որպես վեմ քար. «Եւ ես քեզ ասեմ. զի դո՛ւ ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց գնա մի՛ յաղթահարեսցեն» [Մատթ.16.18]:

Ըստ այսմ՝ *բաղվիրարք* (Պոլիս, Խարբերդ, Մալաթիա) գոյականը հավանաբար կազմված է *պատվիրան* բառի իմաստային ձուլմամբ, իսկ *պաղրյալք*-ի (Մուշ) հիմքում ընկած է *առաքյալ* իմաստը. այդ ձևերում առկա է բառակազմական և բառիմաստային համադրություն:

Ինչպես նկատում ենք, օրինակները բացառապես արևմտյան բարբառային տարածքից են: Բարբառների արևելյան խմբին *պատ-*

ըիրաք բառը բնորոշ չէ, քանի որ Արևելյան Հայաստանում պատ-
րիարքական աթոռ չկա:

Պատրիարք բառը երբեմն հանդես է գալիս դրափոխությամբ՝
պաղիարք (Երզնկա), բաղիարք (Ակն, Մեֆաստիա, Բալու, Կե-
սարիա). վերջին տարածքին բնորոշ է բաղիարքարան («պատ-
րիարքարան») բաղադրությունը:

Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի և մյուս վայրերի
թրքախոս հայերի բառապաշարում հանդիպում է *buyuk papaz* (= «մեծ տերտեր») թուրքաբանությունը՝ ի հակադրություն Թուրքիայի
բազմալեզու այլազգիների *ermani* կամ *ermanilerin buyuk papaz*
(= «հայ կամ հայերի մեծ տերտեր») ձևի: Ընդհանուր առմամբ թրքա-
խոս մահմեդականների շրջանում հարցումներ կատարելիս *buyuk papaz*
և *ermani buyuk papaz* ձևերը մեզ համար մի տեսակ կոդմո-
րոշիչ դեր էին կատարում հային օտարներից զանազանելու հա-
մար: Ինչպես հետո պարզում էինք, իրենց հայ լինելը թեկուզ մա-
սամբ գիտակցողները, *ermani* («հայ») կամ *ermanilerin* («հայերի»)
բառերը չէին ասում:

Եկեղեցական պաշտոնյաների երկրորդ դասը *եպիսկոպո-
սությունն* է՝ հանձինս *արքեպիսկոպոսի*, *քորեպիսկոպոսի* և *եպիս-
կոպոսի*: *Արքեպիսկոպոս* և *քորեպիսկոպոս* բառերը բարբառնե-
րում գրեթե չեն գործածվում: *Եպիսկոպոսը* (հուն. επίσκοπος)՝ «հո-
գինների հովիվը և տեսուչը» [Ա. Պետրոս, 2.25], քրիստոնեական
եկեղեցու նվիրապետական կարգի բարձր աստիճան է, որին գերա-
զահ է միայն կաթողիկոսը [Պողոս Առաքյալ, Ա. Տիմ. 1.7-9]:

Հայերենի բարբառներում *եպիսկոպոս* բառը, թեև ունի հա-
մապատասխան հնչատարբերակներ, սակայն լայն գործածակա-
նությամբ օժտված չէ, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, ոչ բոլոր
բարբառախոսներն են տարբերում նվիրապետական դասերը և
դրանց համապատասխան անվանումները: Թերևս այդ է պատճա-
ռը, որ այդ բառից բացի այլ զուգաբանության չենք հանդիպում:
Ունենք հնչյունական հետևյալ տարբերակները. *յէքիսկոպոս* (Ղա-
րաբաղ), *յէպըսկապըիս* (Մարաղա), *իպիսկոպոս* (Վան), *իպիկո-
պոս* // *իպիսկոպոս* (Մոկս), *յէպիսկապաւս* // *յէպիսկապոս* (Ուզմ),

էրիսկօրօս (Ռոդոսթոն, Մալաթիա), *յէրիսգաբոս* (Սվեդիա), *իպիսկոբոս* (Մուշ), *էրիսգօրօս* (Զեյթուն), *էրիսգէ՛բէ՛ս* (Ասլանբէկ) և այլն:

Որոշ հնչատարբերակներ միաժամանակ գործածվում են և՛ արևելյան, և՛ արևմտյան տարածքի բարբառներում. *յէրիսկօրօս* (Գորիս, Մուշավա), *յէպիսկապոս* (Նոր Զուղա, Սալմաստ, Վան), *յէրիսկաբոս* (Բուլանուխ, Երևան) և այլն:

Գերազանցապէս արևմտյան բարբառախմբին պատկանող *յէրիսգօրօս* (Առտիալ, Սեբաստիա, Մուշավա, Նոր Նախիջևան, Խարբերդ) տարբերակը, որպէս արևելյան տարածքի կղզյակային դրսևորում, բնորոշ է Ղարաբաղի բարբառի Շամախու խոսվածքին, որում միաժամանակ գործածվում են նաև *յէկիսպակօս* // *յէկիսպակօս* հնչափոփոխակները: Պոլսի բարբառում արձանագրված են *էրիսկաբօս* // *էրիսգաբօս* հնչատարբերակները՝ որպէս հին բառաձևեր, իսկ *յէրիսգօրօս*-ը՝ որպէս նոր: Ակնում *էրիսկօրօս* տարբերակն ունի ծաղրական իմաստ, նշանակում է «գինովցած» (հավանաբար ակնցիներին հայտնի հոգևորականներից մեկի՝ խմիչքի հանդեպ հակում ունենալու հետ կապված փոխաբերական իմաստի դրսևորում):

Ինչպէս ցույց են տալիս օրինակները, հնչատարբերակներում արտահայտված համակարգային հնչյունափոխությունների կողքին երբեմն կան հնչյունափոխական ինչ-ինչ ձևեր, որոնք օրինաչափ չեն տվյալ բարբառային տարածքի համար. օրինակ՝ *ւյ*, *կ* խուլ պայթականների ձայնեղացում է արձանագրված Ղարաբաղում, Շամախիում, Գորիսում, Երևանում, *ւյ* պայթականի միջձայնավորային սպասվելիք ձայնեղացում է բացակայում Կարնո բարբառում և այլն: Հնչյունական նման երևույթները կարելի է բացատրել կրոնաեկեղեցական բառապաշարին տարբերակիչ հատկանիշներ վերագրելու բարբառախոսների ունեցած միտումով:

Եպիսկոպոս բառին հոմանիշ է *սրբազան* կոչականը. «*Սուրփա՛ զան, հավատացիր Քրիստոսին, էազանէամ տու նրանց պսակաթուղթ էս տվալ*» (Շամախի)¹⁵:

¹⁵ Ռ. Բաղդամյան, *Շամախիի բարբառը*, Ե., 1964, էջ 259:

Հայ եկեղեցու եպիսկոպոսական կարգին առանձնահատուկ են խույրի, գավազանի, եպիսկոպոսական մատանու և պանակեի, Ավետարանի՝ իբրև կանոնական իրավասության հավաստիքի կիրառությունները: Նշված խորհրդանշաններից բարբառախոս աշխարհիկ հանրությանը ծանոթ են հատկապես *գավազանը* և *Ավետարանը*:

Մատանի բառը հայերենի բարբառներին հայտնի է համապատասխան հնչատարբերակներով, որոնց բարբառախոսները կրոնական իմաստ չեն վերագրում, քանի որ հիմնականում տեղյակ չեն դրա կրոնական բովանդակությանը և գործառական առանձնահատկությանը:

Խույր բառը պատկանում է գրական հայերենի պասիվ բառաշերտին, ուստի բարբառներում արտացոլված չէ: Լավագույն դեպքում հոգևորականի, ինչպես և արքայի գլխանոցը անվանում են *թագ*, որը հանդիպում է բարբառների մի մասում (Բուրդուր, Կարճևան, Մեղրի, Նոր Զուղա): Մյուս մասում հնչյունական զուգաբանություններն ունեն թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական բովանդակություն (միայն Մալաթիայում ունի բացառապես կրոնական բովանդակություն). *թաք* (Մոկս, Շատախ), *թաք* (Տիգրանակերտ), *թաք* (Վան), *թակ* (Շամախի) և այլն:

Այսպիսով, նվիրապետության բարձրագույն կարգին՝ կաթողիկոսությանը առնչակից *աթոռ*, *գավազան*, *կաթողիկոս* հունական փոխառությունները հայերենի տարածքային տարբերակներում հանդես են գալիս որպես գրական փոխառություններ և հիմնականում ենթարկվում են տվյալ բարբառին բնորոշ հնչյունափոխական իրողություններին:

Mesropyan Haykanush - Dialect characteristics of words associated with the highest theocratic ranks. - Speakers of dialects, in general, without differentiating the duties of church ministers, call everyone "priest" or "priest". Society distinguishes only the main hierarchy of the theocratic system, the patriarch, who is called the "Catholicos". Words

denoting spiritual dignity are mainly Greek literary borrowings, which appear with phonetic variability in Armenian dialects. The symbol of theocracy is the throne. This word has phonetic parallels in dialects. The main person in the theocratic hierarchy in the literary Armenian language is called “patriarch”, “supreme patriarch”, “Catholicos of all Armenians”, “pastor”. The Greek borrowings “throne”, “skiper”, “katholikos” associated with the Catholicosate in Armenian dialects act as book borrowings and undergo phonetic changes characteristic of these dialects.

Месропян Айкануш - Диалектная характеристика слов связанных с высшими теократическими чинами. -Носители диалектов, в целом не дифференцируя обязанности служителей церкви, всех именуют “поп” или “священник”. Общество различает только главного иерарха теократической системы-патриарха, которого называют “католикос”. Слова, обозначающие духовный сан, в основном, являются греческими литературными заимствованиями, которые в армянских диалектах выступают с фонетической вариативностью. Символ теократии-трон. Это слово в диалектах имеет фонетические параллели. Главное лицо в теократической иерархии в литературном армянском языке называется “патриарх”, “верховный патриарх”, “католикос всех армян”, “пастырь”. В диалектах армянского языка зафиксированы, в основном, фонетические варианты литературного заимствования слова “католикос”. Связанные с католикосатом греческие заимствования “трон”, “скипер”, “католикос” в армянских диалектах выступают как книжные заимствования и подвергаются фонетическим изменениям, свойственным данным диалектам.

ԳԼՈՒԽ Դ. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՁԵՎԵՐԻ ՇՈՒՐՋ*

Բառնասյան Ջեմա
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հայ մեծանուն լեզվաբան Հ.Աճառյանն իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» կոթողային աշխատության 2-րդ հատորն ամբողջությամբ նվիրել է դերանուն խոսքի մասին՝ աշխարհի բազմաթիվ լեզուներից (562) քաղած հարուստ տվյալները վերլուծության ենթարկելով և ցույց տալով այն բազմաթիվ դրսևորումները, որ ունի դերանունն աշխարհի բազմազան լեզուներում և հայերենում (գրաբար, աշխարհաբար, գրական երկու լեզուներ և հայերենի բարբառներ), ներկայացնելով հայերենի բարբառներում առկա իրողությունները պատմական զարգացման մեջ:

Բարբառների բառապաշարում դերանունները ներկայանում են գերազանցապես բնիկ արմատներով, երբեմն էլ փոխառյալ ձևերով՝ իմաստային նրբերանգներ արտահայտելու համար: Հանդիպում են նաև դերանվանական ինքնատիպ բառաձևեր, որոնցից մի քանիսն ընտրողաբար ուղղակի ներկայացնենք՝ հիմք ընդունելով բարբառագիտական, ազգագրական մենագրությունների և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում կուտակված մոտ 500 խոսվածքային միավորների մատուցած նյութերը:

Հայերենի բարբառներում *անձնական և անդրադարձ* դերանունների իմաստագործառական քննությանը նվիրված մեր ուսումնասիրության մեջ¹ առանձնացրել ենք ընդհանրական կամ մասնավոր իրողություններ, դերանվանական և անվանական հոլովումների ներթափանցումով առաջացած ինքնատիպ հոլովաձևեր,

* «Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 159-165:

¹ Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2012, էջ 14-26:

օրինաչափ կամ ոչ օրինաչափ հնչյունափոխությամբ, մասնիկների հավելումով, կրկնահավելումով, ինչպես նաև հնչյունների անկումով անճանաչելիության աստիճանի փոխված դերանվանական բառաձևեր, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև: Բառապաշարի համահայերենյան շերտին պատկանող անձնական դերանունները երբեմն ներկայանում են առաջին հայացքից տարօրինակ թվացող բառանվանումներով, ինչպես ասենք՝ եզակի առաջին դեմքի համար փաղաքշական **-իկ** մասնիկի բազմակի հավելումով Շամախիի բարբառում գործառող **յէսիկիկիկըս** բառաձևը²: Անձնական դերանունների հոլովական համակարգում առկա բազմապիսի հետաքրքիր իրողություններից ներկայացնենք մի քանիսը: Վանի բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ Հ. Աճառյանն ուշադրություն է հրավիրում անձնական դերանունների ինքնատիպ հոլովաձևերի վրա, օրինակ՝ **յէս** դերանվան տրականն ու հայցականը՝ **ձի, ձիկ, բացառականը՝ ձիյնից (ինձնից)**, իսկ գյուղերում՝ **ձինէ, ձրկնէ**: Այդ հոլովաձևերը Աճառյանը համարում է նախավանկի անկումով **ինձի(կ)** ձևից սերող, ինչն էլ տալիս է այն հարցի պատասխանը, թե բառասկզբի ձայնեղ բաղաձայնն ինչու՞ օրինաչափորեն չի խլացել (**ձ>ծ**), ինչպես՝ **տուք-ծեգ-ծեզնից**: Այդ առիթով նաև նկատում է, որ բարբառին անձանոթ մարդու համար դժվար կլինի տարբերել՝ **ձիզնից (ինձնից)** և **ծեզնից (ձեզնից)**³: Հետաքրքիր բառակազմական պատկերով են ներկայանում անդրադարձ դերանունները, որոնք իրենց բնույթով ձևաբանական, շարահյուսական, ոճական խնդիրներ են լուծում խոսքում՝ արտահայտելով նույնություն գործողության սուբյեկտի հետ: Վանի բարբառում ինքս ինձ իմաստով գործառող **ձիյձի** բառաձևն ակնհայտորեն վերոհիշյալ տրականաձև **ձի** դերանվան կրկնությամբ է առաջացել:

Ինքնատիպ դերանվանական մի հոլովաձև էլ Աճառյանը հայտնաբերել է Վան-Վասպուրական ազգագրական գոտու բանահյուսության մեջ՝ **մէնէս** (ինձնից): Նշելով, թե բարբառում այդ ձևն

² Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ.Բ., Ե., 1973, էջ 33:

³ Հ. Աճառյան, *Քննություն Վանի վարբառի*, Ե., 1952, էջ 150:

արդեն կենսունակ չէ՝ Աճառյանն այն համարում է բացառական հոլովի *մէն* մասնիկը, որից առաջ եղած արմատը կորել է, իսկ *մէնէս* ձևի վերջահար *ս*-ն առաջին դեմքի ստացական հոդն է⁴:

Ցուցական դերանունները, որոնք մատնացույց են անում առարկան կամ նրա հատկությունը, թիվը, ինչպես նաև գործողության հատկանիշը՝ ձևը, չափն ու քանակը, հայերենի բարբառներում ներկայանում են բառակազմական, ձևակազմական բազմազանությամբ՝ գրեթե միշտ պահպանելով եռադիմայնությունը: Մեծանուն գիտնական Ա. Մեյեն զարմանքով է նշում հայերենի ցուցական դերանունների կանոնավորության մասին՝ ավելացնելով, թե «վերին աստիճանի համաչափ այս համակարգը հայերենի ստեղծագործությունն է. հնդեվրոպական ոչ մի ուրիշ լեզու չունի դրա համագորը, և միայն հատուկենտ լեզուներից կարելի է համեմատելի ձևեր ներկայացնել»⁵: Այդ կանոնավորության խնդրին հաճախ է անդրադառնում նաև Հ. Աճառյանը հայ բարբառներում գործառող դերանունների, մասնավորապես ցուցականների հարցը քննելիս: Ասենք, Արևմտյան խմբակցության շատ բարբառներում առկա *hou, hor, hoñ* ցուցականները, որոնք վկայված են նաև միջինհայերենյան գրական հուշարձաններում, Հ. Աճառյանը չի ստուգաբանում, սակայն նրանց ցուցականությունն արժևորում է հենց *ս, դ, ն* վերջնահնչյուններով՝ դերանվանական արմատական այդ հնչյունները համարելով բնիկ հայկական ծագման վկայություն:

Փոխադարձ դերանուններից հետաքրքիր է Ղարաբաղի բարբառում գործառող *տուրուր տալ* արտահայտությունը՝ *ընդ+իրար+տալ* բաղադրությամբ, ուր *ընդ* նախդիրը անձանաչեղիորեն «մաշվել է»: Նույն իրողությունն առկա է նաև բարբառների Արևմտյան խմբակցության Քեսաբի բարբառում, ուր վիճել, բախվել, իրար մեջ անցնել իմաստով գործառում է *դիր^աօր իյնիլ* կայուն բառակապակցությունը⁶:

⁴ Նույն տեղում:

⁵ Ա Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1978, էջ 293:

⁶ Յ. Չոլաքեան, *Քեսապի բարբառը*, Հալեպ, 1986, էջ 92:

Անորոշ դերանունների արժեքով հայերենի բարբառներում բնիկ հայերեն բառանվանումների կողքին գործառում են նաև պատմական շփումների ընթացքում տարբեր ժողովուրդների բառամթերքից վերցված համապատասխանություններ՝ այդ հասկացության վերացականությունը հաղթահարելու նպատակով: Հ. Աճառյանի վկայությամբ՝ աշխարհի շատ լեզուներում սովորական է **մարդ** բառին անորոշ դերանվան իմաստ վերագրելը: Անդրադառնալով հայերենին՝ նա գրում է. «Հայերենի մեջ էլ սրա գործածությունը շատ հին է և մինչև 5-րդ դար է հասնում, շատ հաճախ Փարպեցու մոտ ունենք **ամենայն մարդ**՝ փոխանակ **ամենայն ոք**»⁷: Անորոշության երանգն առավել խտանում է **մարդ-մուրդ** հարադրության մեջ, ինչպես օրինակ՝ **Մատու-մուտ** տէսա՞ր հօնի (Մշո բարբառով): Հետաքրքիր է Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում առկա **օքմին** անորոշ դերանունը, որը, հավանաբար, **ոք+մի** բառաբաղադրությունն է՝ մարդ, էակ բառիմաստով: Հետաքրքիր է, որ արտաբերվելով մեկ շեշտով՝ **օքմին** (վերջընթեր վանկի շեշտումն օրինաչափ է), կարող է հանդես գալ անորոշ հոդին համարժեք **մի** բառի կրկնահավելումով, որից՝ **մի օքմին**՝ «ինչ-որ մարդ նշանակությամբ»: Հ. Աճառյանը Թիֆլիսի բարբառում հաճախադեպ գործառող **օքմին**-ի կողքին բերում է նաև դրափոխությամբ առաջացած **օմքին** ձևը, իսկ Երևանի խոսվածքում՝ **օքմին, օքնիմ, Ագուլիսի** բարբառում՝ **ուխման**, իսկ հոգնակին՝ **ըխմընա տիք**, ինչպես նաև վկայում է որպես անորոշ դերանուն կիրառվող **ուխման, էխման** բառաձևերը⁸: Վանի բարբառի անորոշ դերանունները թվարկելիս Հ. Աճառյանը ներկայացնում է բանահյուսական պատառիկից քաղված «հնության մի հետաքրքրական մնացորդ՝ **ոմը**»։ **Ոմը** զարկի բուկյարին, **ոմը** զանի քյամանչեն, **Ոմը** ասի խաղ, **ոմը**՝ տաղ.....⁹ (պահպանել ենք աճառյանական տառադարձումը):

Որոշյալ դերանվան մի եզակի օրինակ կա Ղարաբաղի բարբառում. ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ **ամենքը** որոշյալ դե-

⁷ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 2, Ե., 1954, էջ 415:

⁸ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 2, Ե., 1954, էջ 426:

⁹ Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1952, էջ 150:

քանվան իմաստով միայն այդ բարբառի խոսվածքներում է գործառուում **լօխ** համապատասխանությունը: Վերջերս հրատարակված «Ղարաբաղի բարբառային բառարանում» **լօխ** բառահոդվածի դիմաց նշված է «ողջ, ամբողջ, բոլոր» իմաստները, թեև չի նշվում ծագումը¹⁰: Այդ ինքնատիպ դերանվան մասին խոսել է նաև Հ. Աճառյանը՝ նշելով, որ միայն Ղարաբաղի բարբառում **ողջ, բոլոր** որոշյալ դերանվան արժեքով գործառուող այդ **լօխ** ձևը. «հոլովման ժամանակ ստանում է **չ** հավելվածը, օր.՝ **լօխչանը յէտը** (բոլորից հետո): Հոգնակին լինում է **լօխչունք**, սեռ. **լօխչունց**, բաց. **Լօխչունցան**: Այս բառը այնքան բնորոշ է Ղարաբաղի համար, որ շրջակա գավառներում **լօխ** բառը ծածկալեզվով նշանակում է դարաբաղցի, օրինակ՝ լօխերը եկան (դարաբաղցիք եկան)»¹¹:

Կարևոր բարբառում **որոշյալ դերանվան** արժեք ունի **մէհօկավօր** բաղադրությունը, որ գործածական է խոսակիցների ծանոթանձի մասին խոսելիս: Օրինակ՝ **Էն մէհօկավօրը** հ՞ու՞ր է: Ոճական առումով արհամարհական նրբերանգ ունի:

Ինչ վերաբերում է **ժխտական դերանունների** գործածությանը, նշենք, որ հետաքրքիր իրողություն է խոսքի շղթայում շարահյուսական հատուկ կառուցվածքով ժխտական իմաստ արտահայտելը, ինչպես՝ Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում «ոչ ոք» ժխտական դերանվան արժեքով գործածվում է **մինն էլ ա**, իսկ ոչ մի դերանվան իմաստով՝ **մի բան էլա, բան էլա** կապակցությունները: Ինչպես՝ **Միննէլա** լեկավ վօջ («ոչ ոք չեկավ»), կամ **բանէլա չրկա** («ոչինչ չկա»): Խոսվածքի ուսումնասիրությանը նվիրված մենագրության մեջ նշվում է, թե «խոսվածքը փաստորեն ժխտական դերանուններ չունի»¹²:

Հարցահարաբերական դերանունները հայերենի բարբառներում հանդես են գալիս բառակազմական, ձևակազմական բազմազանությամբ: Հին գրական հայերենի հարցական **ո՞, զի՞նչ, ո՞ր** դերանունների կողքին առկա **ընդէ՞ր, վասն է՞ր** հարցականները կեն-

¹⁰ Ա. Մարգարյան, *Ղարաբաղի բարբառային բառարան*, Ե., 2013, էջ 252:

¹¹ Հ. Աճառյան, *Հիականաբար քերականություն հայոց լեզվի*, հ.2, Ե., 1954, էջ 424:

¹² Մ. Սաստրյան, *Լոռու խոսվածքը*, Ե., 1968, էջ 113:

սունակ են և գործառուժ են պարսկահայ խոսվածքներում **հէ՞ր** բառանվանմամբ՝ «ինչու՛, ինչի՛ համար» իմաստներով, ինչպես՝ **հէ՞ր ասամ** («ինչու՛ ասացի»):

Բնիկհայերենյան **ա՞** դերանվան կենսունակության ուղղակի վկայություն կարելի է համարել նախդրիվ հայցականի՝ **յա՞** («դեպի ու ը») ձևի կիրառությունը Քեսաբի բարբառում, ինչպես՝ **Յօ՞ւ ուր-թուք** («ու՞ր եք գնում»)¹³:

Ինչպես գիտենք, Հ. Աճառյանը Նոր Ջուղայի բարբառի նախահայրենիքը տեսնում է Ագուլիսի և Ղարաբաղի միջավայրում՝ Հին Ջուղայում: Համեմատելով Նոր Ջուղայի բարբառում **դ՞օ՞րըն** կամ **ի՞նչ դ՞օրըն** և Ղարաբաղի բարբառում գործառոդ **թօ՞ռն** կամ **ի՞նչ թօռն** հարցական դերանունները՝ Աճառյանը առավել հին է համարում Ջուղայի բարբառում առկա ձևը՝ **ընդ որ > դ՞օր** անցումով: Այսպես՝ **Ի՞նչ դ՞օրն աս գ՞ընում** (Ջուղա) և **ի՞նչ թօռն** ըսքիս (Ղարաբաղ)¹⁴: Վանի, Բայազետի, Մշո բարբառներում նույնպես առկա է տեղի, շարժման ուղղության մասին հարցում անող **դ՞օ՞ր** հարցական դերանունը: Հնչյունափոխական մի այլ օղակ է ներկայացնում Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում առկա **ղըվօ՞րը** բառաձևը:

Ո՞ր հարցական դերանվան հետ կարելի է կապել **օրի, Խօրի** ձևերը՝ **ի՞նչ բանի համար, ինչու՞** իմաստներով Արևմտյան խմբակցության հարավկենտրոնական բարբառախմբի Մուշ-Ալաշկերտի, Տիգրանակերտի, Սասունի բարբառներում գործառոդ: **Օ՞րի** հարցականը կիրառվում է նաև Համշենի բարբառում, ինչպես՝ Մօնչըս, **օ՞րի** չիս ասիլ, օր օնօտի իս (սոված ես)¹⁵:

Հետաքրքիր, գրեթե անճանաչելիության աստիճանի կրճատված դերանվանական ձև է Վանի բարբառում գործառոդ **դու՞ց** (որտեղի՞ց) հարցականը, ինչպես՝ **դու՞ց կնկյաս**, որը Հ. Աճառյանը հա-

¹³ Յ. Չոլաքեան, *Քեսապի բարբառը*, Ե., 2009, էջ 368:

¹⁴ Հ. Աճառյան, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1940, էջ 24:

¹⁵ Հ. Գուրունյան, Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991, էջ 88:

մարում է *ի՞նչ տեղից* բառակապակցության խիստ մաշված ձևը. «Ջնջվել է ամբողջապես *ինչ* բառը, բայց միայն մնացել է *և* ռնգայինի ազդեցությունը տեղ բառի *տ*-ի վրա և վերածել է *դ*-ի»¹⁶: Կարծում ենք, որ այդ *դ*-ն ոչ թե հնչյունափոխության արդյունք է, այլ պարզապես *դէհ, դիհ՝* ուղղություն ցույց տվող բառի կրճատված բացառական հոլովաձևն է:

Դերանվանական ինքնատիպ ձևեր շատ կան Համշենի բարբառում, ինչպես՝ *վէ՛լ* հարցական դերանվան սեռականն է՝ *վու՛մ*: Բերենք օրինակ համշենահայ բանահյուսությունից. Ամօթ չըլլի հայծընուշը, տուն վու՛մ հայսն իս («Ամոթ չլինի հարցնելը՝ դու ու՛մ հարսն ես»)¹⁷: Այդ *վում*-ը, հավանաբար, *վել* և *ում* ձևերի բաղադրության արդյունք է: Համշենի բարբառի Տրապիզոնի խոսվածքով գրառված հեքիաթում գտել ենք *նյու՛ր* հարցական դերանունը, որի կազմում *ու՛ր* բաղադրիչն ակնառու է: Այսպես՝ Դուն ի՞նչ մաշդ իս, *նյու՛ր* տեղէն գութաս, *նյու՛ր* կէշտաս («դու ի՞նչ մարդ ես, որտեղի՞ց ես գալիս, ու՛ր ես գնում»)¹⁸:

Հետաքրքիր մի բառաձև է կիրառվում Եդեսիայի բարբառում՝ *ուշկաց* կամ *ուշկըց*, որը բարբառագետ Ա. Հանեյանը բարբառի քննությունը կատարելիս *ուստ*-ի բացառական ձևն է համարել¹⁹:

Իբրև դերանվանական ինքնատիպ ձև՝ կարելի է նշել նաև Ն. Նախիջևանի բարբառում *ինքը* դերանվան «իրենք» հոգնակին ներկայացնող *ժէք*-ը՝ ձայնավորի անկումով և *ք>ժ* օրինաչափ հնչյունափոխությամբ²⁰:

Անատոլիայի տարածքի Սիվրի-Հիսարի բարբառը հարուստ է արագախոսության հետևանքով «սեղմված» բառերով (ընդունված է *ամփոփում* անվանել), որն առկա է նաև հարցահարաբերական դերանուններում, ինչպես՝ *ինչիկ* («ինչ+իրք, ինչ բան»), *իփիս* («ինչպես»), *վըսոխ* («որտեղ») և այլն: Բերենք օրինակներ՝

¹⁶ Հ. Աճառյան, Քննություն Վանի բարսառի, Ե., 1952, էջ 200:

¹⁷ Հ. Գուրունյան, Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991, էջ 124:

¹⁸ Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, Ե., 1986, էջ 18:

¹⁹ Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Ե., 1982, էջ 221:

²⁰ Հ. Աճառյան, Հիակատար քերականություն հայոց լեզվի, հ.2, Ե., 1954, էջ 129:

Օսկիերը **ի՞նչիկ** չըհանեցիր, **վըտօ՞խ է, ի՞շ տեղ է** («Ոսկիներն ինչու՞ չհանեցիր, որտե՞ղ է, ի՞նչ տեղ է») ²¹:

Այսպիսով՝ բարբառների բառապաշարում գործառնում են դերանվանական բազմաթիվ ձևեր, որոնց քննությունը փաստում է դրանց ծագումը բնիկհայերենյան արմատական ձևերից, որով էլ հաստատվում է նշանավոր բարբառագետ Ա. Ղարիբյանի կարծիքը, թե ոչ մի բարբառ դերանվանական նոր արմատ չի գործածում: Բոլորն օգտագործում են համաժողովրդական լեզվի միևնույն արմատական ձևերը՝ տարբեր արտասանությամբ ²²: Արդի հայերենի բոլոր դերանուններն էլ առկա են հայ բարբառներում, թեև դերանվանական որոշ ձևեր կարող են բացակայել տարբեր խոսվածքներում:

Джемма Барнасян– О некоторых разновидностях местоименных форм в диалектах армянского языка. – В армянских диалектах есть множество местоименных форм, своеобразных лексических единиц, исследование которых свидетельствует об их коренном исконно армянском происхождении. Следует заметить, что ни в одном из диалектов нет нового местоименного корня. Все диалекты используют одни и те же корневые формы общенародного языка в соответствии с фонетическими закономерностями каждого диалекта.

²¹ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ.2, Ե., 1954, էջ 129:

²² Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 144:

ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ*

Գևորգյան Գայանե
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հայտնի է, որ լեզվի կառուցվածքային բաղադրիչներից արտալեզվական գործոնների ազդեցության ամենից շատ ենթարկվում է բառապաշարը: Սակայն դրանից զերծ չեն մնում նաև քերականական կառուցվածքի բաղադրիչները: Ինչպես գրական հայերենում, բարբառների եղանակաժամանակային համակարգերում ևս ժամանակի ընթացքում կատարվել են տեղաշարժեր՝ ներլեզվական ու արտալեզվական գործոններով պայմանավորված:

Բարբառային մի խմբում տեղաշարժեր են տեղի ունեցել եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկներով կազմություններում: Այսպես՝ *կոր* ժամանականիշը և նրա փոփոխակները ընդգրկում են Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառի Սեբաստիայի բարբառը, Պոլսի, Եվդոկիայի խոսվածքները, Սյուլոզի միջբարբառը: Ա. Ղարիբյանը *կոր* (գոր) մասնիկի գործառություն է արձանագրում նաև Օրդուի խոսվածքում, սակայն, ըստ ՀԲԱ-ի ծրագրով հավաքված նյութերի, Համշենի Օրդուի խոսվածքում գործառում է *ունի/զունի* մասնիկը (ՀԲԱՆ, Համշեն, Օրդու, 39): Նմանատիպ երևույթ է առկա նաև Շապին Գարահիսարի բարբառում: Ա. Ղարիբյանը նշում է *դէ* մասնիկի գործառություն¹, բայց ինչպես Հ. Խաչատրյանի՝ Շապին Գարահիսարին նվիրված ուսումնասիրությունում², այնպես էլ ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Շապին-Գարահիսարի բարբառը» աշխատանքում (տե՛ս ՀԲԱՆ, Շապին-Գարահիսար, 3) այն արձանագրված չէ: Այստեղ

* «Գիտական նյութերի ժողովածու (հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու)», Վանաձոր, 2013, էջ 60-69:

¹ Տե՛ս Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 184:

² Տե՛ս Հ. Խաչատրյան, *Շապին Գարահիսարի բարբառ*, Հայերենի բարբառագիտական ասոլաս, Ե., 1985, էջ 149:

շարունակական ներկայի և անցյալ անկատարի հարացույցներում *դար* ժամանականիշն է գործառում՝ *կը բաքնէմ դար...*³ : Հավանաբար այս բարբառում ժամանակի ընթացքում *դէ* եղանականիշը փոխարինվել է *դար* մասնիկով:

Պոլսի միջբարբառի Տրապիզոնի խոսվածքում, Սիվրիհիսարի միջբարբառում, ըստ Հ. Աճառյանի, շարունակական ներկայի և անցյալ անկատարի հարացույցներում գործառում է *էր* մասնիկը: Այն ունի հետադաս գործածություն՝ *սիրիւ էր, սիրիս էր, սիրէ էր, սիրինք էր, սիրիք էր, սիրին էր*⁴: Ա. Ղարիբյանը *էր* մասնիկի գործածությունն արձանագրում է միայն Տրապիզոնի բարբառում⁵: ՀԲԱ-ի ծրագրով լրացված Տրապիզոնի խոսվածքում շարունակական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևեր չեն նշվում: Այստեղ ներկայի ու անցյալ անկատարի իմաստների արտահայտման ձևաբանական միակ միջոցը *գու* մասնիկով և ըղձական եղանակի բայաձևերով զուգորդությունն է, այսպես՝ *կըրիւ գու* (գրում եմ), *կըրիս գու*, *կըրա գու*, *կըրիկ գու*, *կըրէկ գու*, *կըրին գու*, անցյալ անկատար՝ *մընայը գու* (մնում էի), *մընայըր գու*, *մընար գու*, *մընայկը գու*, *մընէկը գու*, *մընայնը գու* (ՀԲԱՆ, Տրապիզոն, 99): Վերոնշյալից ենթադրվում է, որ այս տարածքում շարունակական ժամանակների իմաստակիր *էր* ժամանականիշը դուրս է ընկել, և որպես ներկայի և անցյալ անկատարի իմաստների միակ արտահայտիչ՝ գործառել են *գու* եղանականիշ մասնիկով համադրված կազմությունները:

Հայկակ մասնիկը, ըստ Հ. Աճառյանի, շարունակական ժամանակների իմաստներ է արտահայտում Ադափագարում: Սակայն ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Ադափագարի խոսվածքում» *հայկակ* ձևը արձանագրված չէ: Դրա փոխարեն այստեղ նշված է *հայ* եղանականիշ մասնիկը, այսպես՝ *գառթամ հայ*, *գառթաս հայ*, *գառթա հայ*, *գառթանք հայ*, *գառթաք հայ*, *գառթան հայ*, անցյալ

³ Տե՛ս Հ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 151-152:

⁴ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ* 562 լեզուների, Ե., էջ 98:

⁵ Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., 1953, էջ 184:

անկատար՝ *գառթայի հայ, գառթայիր հայ, գառթար հայ, գառթայինք հայ, գառթայիք հայ, գառթային հայ* (ՀԲԱՆ, Աղափազար, 306): Հավանաբար ժամանակի ընթացքում կատարվել է հնչյունական փոփոխություն. *հայկակ* ժամանականիշի վերջնավանկի անկամար առաջացել է *հայ* ձևը:

Մալաթիայի բարբառում տեղի է ունեցել *ա* ժամանականիշ մասնիկի իմաստագործառական փոփոխություն: Այս բարբառում շարունակական ներկայի և անցյալ անկատարի՝ *ա* եղանականիշ մասնիկով կազմվող ժամանակաձևեր են նշվում Ա. Ղարիբյանի և Հ. Աճառյանի կողմից⁶: Հարցի վերաբերյալ այլ տեսակետ ունի Թ. Դանիելյանը: Նա, ուսումնասիրելով Մալաթիայի բարբառը, արձանագրում է, որ Մալաթիայի բարբառի այժմյան վկաները՝ բարբառախոս մալաթիացիները, չեն տարբերակում ընդհանրական ներկան և շարունակականը⁷:

Իրոք, ներկայումս Մալաթիայի բարբառում բայի դիմավոր ձևերի և *ա* մասնիկի հարադրությամբ կազմվում են ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը, այսպես՝ *մընամ ա, մընաս ա, մընա յա, մընանք ա, մընաք ա, մընան ա*, անցյալ անկատար՝ *մընայի յա, մընայիր յա, մընար ա, մընայաք ա, մընայիք ա, մընային ա* (ՀԲԱՆ, Մալաթիա, 165): Հիշյալ երևույթը Թ. Դանիելյանը բացատրում է այն փաստով, որ Մալաթիայի բարբառը նախապես եղել է Կը ճյուղի բարբառ և *ա* բառ-մասնիկով կազմել է շարունակական ժամանակներ. «Միայն հետագայում մթագնվել է այդ մասնիկի շարունակական իմաստը, և այն իր տեղը զիջել է բուն կամ սովորական ներկային: Սակայն ձայնավորով սկսվող բառերի մոտ *կը*-ն մնացել է անփոփոխ, հավանաբար արտասանական անհրաժեշտությամբ»⁸: Համամիտ լինելով վերոնշյալին՝ հարկ է հավելել, որ մասնիկավոր կազմությամբ բարբառների

⁶ Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 181, **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, Ե., 1961, էջ 98-99:

⁷ Տե՛ս Թ. Դանիելյան, *Մալաթիայի բարբառը*, Ե., 1967, էջ 17:

⁸ Թ. Դանիելյան, *Մալաթիայի բարբառի հոլովումն ու խոնարհումը*, Պատմաբանասիրական հանդես, 2, Ե., 1964, էջ 145:

եղանակաժամանկային համակարգերում կը (զը) եղանականիշ մասնիկը ներկայի և անցյալ անկատարի իմաստների հիմնական կրողն է, նաև ենթադրական եղանակաիմաստի արտահայտիչը: Հավանաբար Մալաթիայի բարբառին հատուկ է եղել ներկա և ապառնի ժամանակաձևերի վերոնշյալ կազմությունը (ենթադրական եղանակի հարացույցում այժմ էլ գործառում է *զը* մասնիկը): Սակայն ժամանակի ընթացքում, ըստ երևույթին, շարունակականի *ա* մասնիկով կազմվել են ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը՝ դուրս մղելով ընդհանրական ներկայի կազմիչներին՝ միաժամանակ լուծելով ներկա և ապառնի բայաձևերի ձևաբանական տարբերակման խնդիրը: Նշված փոփոխությանը կարող էր նպաստել այն հանգամանքը, որ ընդհանրական և շարունակական ժամանակաձևերն իրարից խիստ անջրպետված չեն, իմաստային մեծ տարբերություններ չունեն, և անցումը մեկից մյուսին հնարավոր է: Այս վարկածը հիմնավորող փաստարկներից մեկն էլ այն է, որ Մալաթիայի բարբառում ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի ժամանակաձևերին բնորոշ է ձևային տարաբժեքությունը, այսպես՝ ներկա՝ *սիրիմ ա, սիրիս ա, սիրէ յա*, անկատար անցյալ՝ *գուղէի յա, գուղէիր յա, գուղէր ա*, ապառնի՝ *գուղիմ, գուղիս, գուղէ*, անցյալի ապառնի՝ *զը սիրէի, զը սիրէիր, զը սիրէր*⁹: Նույն երևույթն է առկա նաև Արաբկիրի բարբառում, որտեղ Հ. Աճառյանի կողմից *ը* մասնիկը նշվել է որպես շարունակական ժամանակների իմաստների արտահայտիչ, իսկ *զը*-ն՝ ներկայի և անցյալ անկատարի¹⁰:

Սակայն, ըստ ՀԲԱ-ի ծրագրով լրացված նյութերի, Արաբկիրի բարբառում շարունակական և ընդհանրական ժամանակաձևերի տարբերակում չկա. երկուսի համար էլ գործածվում են *ը/նը*

⁹ Տե՛ս Գ. Գևորգյան, *Սահմանական եղանակի ներկա ժամանակի տարածագործառական բնութագիրը հայերենի բարբառներում*, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010, էջ 285:

¹⁰ Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, Ե., 1961, էջ 98:

մասնիկները՝ *մընամ ը, մընաս ը, մընա նը, մընանք ը, մընաք ը, մընան նը*: Այստեղ ևս ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի ժամանակաձևերը բնորոշվում են ձևային տարաբաժանությամբ, այսպես՝ ապառնի՝ *մընամ գու, մընաս գու, մընա գու, մընանք գու, մընաք գու, մընան գու*, անցյալի ապառնի՝ *մընայի գու, մընայիր գու, մընար գու, մընայինք գու, մընայիք գու, մընային գու* (ՀԲԱՆ, Արաբկիր, 132): Այսպիսով, ներկայումս Մալաթիայի և Արաբկիրի բարբառներում սահմանական ներկայի և անցյալ անկատարի ցուցիչները *ա, ը* մասնիկներն են, որոնք, ծագմամբ շարունակական լինելով, այժմ իբրև այդպիսին չեն գիտակցվում:

Հաջորդ տարածքում՝ Մարաշ-Ձեյթունի, Կեսարիայի և Բեյլանի բարբառներում գործառում են *կա* մասնիկը և նրա փոփոխակները՝ *գա գաբրիմ, գա գաբրիս գա գաբրե, գա գաբրինք, գա գաբրեք, գա գաբրին* (ՀԲԱՆ, Բեյլան, 459): Կիլիկիայի բարբառախմբի Մարաշ-Ձեյթունի բարբառում *կա* մասնիկի *գո* փոփոխակն է գործածվում, այսպես՝ ներկա՝ *գո գայթօմ, գո գայթօս, գո գայթօ, գո գայթօնք, գո գայթաք, գո գայթօն*, անկատար անցյալ՝ *գո խուսի, գո խուսիյ, գո խուսեյ, գո խուսինք, գո խուսիք, գո խուսին* (ՀԲԱՆ, Ձեյթուն, 110): Ըստ Հ. Աճառյանի՝ Կիլիկիայում *գո* եղանականիշ մասնիկի համադրմամբ կազմվում են ինչպես շարունակականի, այնպես էլ ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը, և դրանց միջև տարբերությունը առկա է միայն ձայնավորասկիզբ բայերի դեպքում¹¹: Մական բարբառային նորագույն փաստերը այլ բան են արձանագրում: Այսպես, ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Ձեյթունի բարբառը» և «Մարաշի բարբառը» աշխատանքներում շարունակական ժամանակաձևեր նշված չեն, իսկ *գո* եղանականիշ մասնիկը գործառում է ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերի կառուցատիպերում, այսպես՝ *գո մընօմ, գո մընօս, գո մընօ, գո մընօնք, գո մընեք, գո մընօն*,

¹¹ Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, Ե., 1961, էջ 102:

անցյալի անկատար՝ *զօ մընայի, զօ մընայիր, զօ մընէր, զօ մընայինք, զօ մընայիք, զօ մընային* (ՀԲԱՆ, Մարաշ, 337):

Լեոնային Կիլիկիայի Ֆուռնոս (Ուլնիա) գյուղաքաղաքի (այն գտնվում է Ջեյթուն քաղաքից արևմուտք՝ հետիոտն վեց ժամվա հեռավորության վրա) խոսվածքում *զօ*-ն շարունակականի մասնիկն է, իսկ ընդհանրականինը (նաև ապառնունը)՝ *զը*-ն կամ *գու*-ն է, օրինակ՝ ներկա-ապառնի՝ *զըկըրիւ, զըկըրիս, զըկըրէ, զըկըրինք, զըկըրէք, զըկըրին, շարունակական ներկա՝ զօ գուղիւ, զօ գուղիս, զօ գուղէ, զօ գուղինք, զօ գուղէք, զօ գուղին* (ՀԲԱՆ, Ջեյթուն, Ֆուռնոս Ուլնիա, 295): Վերոնշյալից երևում է, որ բարբառային հիշյալ տարածքում *զօ* եղանականիշ մասնիկը գործածվում է իր նախնական իմաստով, որից կարելի է ենթադրել, որ Կիլիկիայի միջբարբառախմբում ներկայումս ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ արտահայտող *զօ* նախամասնիկը ծագմամբ շարունակական է¹²: Սա կարելի է հիմնավորել նաև այն փաստարկով, որ այդ միջբարբառախմբում ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի կազմությունները տարբեր են սահմանական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերից, այսպես՝ ներկա՝ *զօ կըյիւ, զօ կըյիս, զօ կըյէ, զօ կըյինք, զօ կըյէք, զօ կըյէն*, անկատար անցյալ՝ *զօ կըյի, զօ կըյիյ, զօ կըյէյ, զօ կըյինք, զօ կըյիք, զօ կըյին, ապառնի՝ կու կըյիւ, կու կըյիս, կու կըյէ, կու կըյինք, կու կըյէք, կու կըյէն* (ՀԲԱՆ, Ջեյթուն, 110): Կեսարիայի և Բեյլանի բարբառներում ևս ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, ներկայի և անցյալ անկատարի իմաստներն արտահայտող կառուցվածքային կաղապարները ձևային արտահայտությամբ տարբերակված են. ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստներն արտահայտվում են *կա* (գա)՝ *գա կըրիւ, գա կըրիս, գա կըրէ, գա կըրինք, գա կըրիք, գա կըրին, անցյալի անկատար՝ գա կըրի դի, գա կըրիր դի, գա կըրէր դի, գա կըրինք դի, գա կըրիք դի, գա կըրին դի*, ենթադրական ապառնիինը և

¹² Տե՛ս **Գ. Գևորգյան**, *Սահմանական եղանակի ներկա ժամանակի տարածագործառական բնութագիրը հայերենի բարբառներում*, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010, էջ 286:

անցյալինը՝ *զը* եղանականիշ մասնիկներով, այսպես՝ ապառնի՝ *զը կըրիս, զը կըրիս, զը կըրէ, զը կըրինք, զը կըրիք, զը կըրին, անցյալի ապառնի՝ զը կըրի դի, զը կըրիր դի, զը կըրէր դի, զը կըրինք դի, զը կըրիք դի, զը կըրին դի*: Կա նախամասնիկը թէն Հ. Աճառյանը նշում է իբրև շարունակական ներկայի և անցյալ անկատարի մասնիկ, սակայն նա այդ փաստը ներկայացնում է ոչ իբրև սեփական ուսումնասիրության արդյունք, այլ ուրիշ աղբյուրների վրա հիմնվելով¹³: Ս. Անթոսյանը գտնում է, որ Հ. Աճառյանի՝ Կեսարիայի բարբառում շարունակական ներկայի գործառության վերաբերյալ տեղեկությունները սխալ են, քանի որ «Կա մասնիկը Կեսարիայի բարբառի ներկայի կազմության ընդհանուր ձևն է, այդ ընդհանուր ձևի տակ էլ, ինչպես շարունակականի հատուկ դրսևորում չունեցող այլ բարբառներ, Կեսարիայի բարբառն արտահայտում է և՛ պարզ ներկայի, և՛ ըստ անհրաժեշտության, շարունակական ներկայի իմաստ»¹⁴: Մասամբ համամիտ լինելով Ս. Անթոսյանի կարծիքին՝ հարկ ենք համարում հավելել, որ Կեսարիայի և Մարաշ-Ջեյթունի բարբառներում, ինչպես Արաբկիրում և Մալաթիայում, կատարվել է նույն տեղաշարժը. Հավանաբար *կա*-ն սկզբնական շրջանում եղել է շարունակական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերի իմաստակիր, և հետագայում, ընդլայնելով իր գործառական հատկանիշները, մասնակցել է նաև ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի հարացույցների ձևավորմանը: Այս ամենից հետևում է, որ *կա*-ն, ինչպես *ա* և *ը* մասնիկները, ծագմամբ շարունակական են¹⁵: Հաջընի բարբառում ևս հիշյալ ժամանակաձևերը ձևային տարաբեքությամբ են հատկանշվում. ներկայի և անցյալ անկատարի իմաստները դրսևորվում են *զը* նախամասնիկով և դիմավոր

¹³ Տե՛ս Հ. Աճառյան, *Հիականտար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, Ե., 1961, էջ 106:

¹⁴ Ս. Անթոսյան, *Խոնարհման համակարգի զարգացման ընթացքը*, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Ե., 1975, էջ 195:

¹⁵ Տե՛ս Գ. Գևորգյան, *Մահմանական եղանակի ներկա ժամանակի տարածագործառական բնութագիրը հայերենի բարբառներում*, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, էջ 287:

բայաձևերով համադրված կազմություններով (*զը նըստիմ, զը նըստիս, զը նըստէ, զը նըստինք, զը նըստիք, զը նըստին*), իսկ ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիինը՝ *գու եղանականիշով (գու կըյլէմ, գու կըյլէս, գու կըյլէ, գու կըյլէնք, գու կըյլէք, գու կըյլէն)* (ՀԲԱՆ, Հաջըն, 93):

Հ. Գասպարյանը նույնպես նշում է, որ Հաջընի բարբառում սահմանական ներ-կան և անցյալ անկատարը կազմվում են *զը* եղանականիշի և դիմավոր բայաձևերի զուգորդությամբ, սակայն «Հաջընի բարբառը» աշխատության վերջում հեղինակի կողմից բերված բարբառային նմուշներում կան օրինակներ, որոնցում ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստներով գործածվում են նաև *գու* նախամասնիկով կազմությունները, այսպես՝ *Գադուն մուգը ինք իյ համա գու սպօնէ. Հովը ճույ գը խմէ, իյգինքը գու հէյի. Մայը ճույ չի խմէ, կինի գու խմէ*¹⁶:

Վերոբերյալից երևում է, որ Հաջընի բարբառում ներկայի և անցյալ անկատարի իմաստների արտահայտման համար գործածվում են երկու եղանականիշներ, որոնք գործառական-իմաստային տարբերակվածություն չունեն: Թերևս վերջիններս երբևէ տարբեր գործառություն են ունեցել, այլապես դրանց միաժամանակյա գործածության փաստը դժվար է հիմնավորել: Այս ամենից հետևում է, որ Հաջընի բարբառում ևս տեղի է ունեցել նույն տեղաշարժը, ինչ որ Արաբկիր, Մալաթիա, Կեսարիա, Կիլիկիա բարբառային գոտում: Միայն թե այստեղ հավանաբար շարունակական *զը* մասնիկի իմաստագործառական փոփոխությունը չի ուղեկցվել ընդհանրական ժամանակաձևեր կազմող *գու* եղանականիշի անկմամբ: Վերջինս պահպանվել է, բայց սահմանափակ կիրառությամբ: Նմանատիպ երևույթ է առկա նաև Սեֆաստիայի Դենդիլ գյուղի խոսվածքում (ի դեպ, այն, ըստ բարբառախոսի, գտնվել է Սեֆաստիա և Կեսարիա քաղաքների մեջտեղում, ավելի մոտ՝ Կեսարիային. «Գնացել են քայլելով, առավոտից մինչև կեսօր»), որտեղ սահմանական ներկայի և անցյալ անկատարի հարացույցներում զուգահեռաբար գործածվում են *կը(զը), կա (գա)* եղանակա-

¹⁶ Տե՛ս Հ. Գասպարյան, *Հաջընի բարբառը*, Ե., 1966, էջ 145, 148, 156:

նիշ մասնիկները, այսպես՝ *գըմընամ, գըմընաս, գըմընա, գըմըմանք, գըմընաք, գըմընան* կամ *գըրէմ գա, գըրէս կա, գըրէ կա, գըրէնք կա, գըրէք կա, գըրէն կա*, անկատար անցյալ՝ *գըգարթայի, գըգարթայիր, գըգարթար, գըգարթայանք, գըգարթայիք, գըգարթային* կամ *գարթայի գա, գարթայիր գա, գարթար գա, գարթայանք գա, գարթայիք գա, գարթա-յին գա* (ՀԲԱՆ, Սեբաստիա, Դենդիլ, 458): Կա նախամասնիկը, ինչպես նշվել է, Սվեդիայի բարբառում գործածվում է *գու* տարբերակային ձևով, այսպես՝ *գու կըրիմ, գու կըրիս, գու կըրէ, գու կըրինք, գու կըրիք, գու կըրին*¹⁷: Հ. Աճառյանի և Տ. Անդրեասյանի կողմից հիշյալ բարբառում ներկայի և անցյալ անկատարի իմաստակիր է նշվում *գը փոփոխակը՝ գը խուսէմ, գը խուսէս, գը խուսա, գը խուսանք, գը խուսաք, գը խուսէն*, անցյալ անկատար՝ *գը խուսար, գը խուսէր, գը խուսիր, գը խուսայրընք, գը խուսայրըք, գը խուսայրըն*¹⁸: Գու եղանականիշ մասնիկով կազմությունները, ըստ Հ. Աճառյանի, շարունակական ժամանակների իմաստներ են արտահայտում¹⁹, իսկ Գ. Հանանյանի կարծիքով՝ ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի՝ շարունակական ժամանակների համար կիրառելով *գէու* նախամասնիկով համադրված կազմությունները²⁰: Ինչպես երևում է, այստեղ էլ բարբառային հին և նոր տվյալների միջև տարբերություն է առկա. մոտ 4 տասնամյակ տևողությամբ ժամանակահատվածում հավանաբար վերոնշյալ կառույցների բովանդակության պլանում կատարվել է տեղաշարժ:

Համշենի բարբառի ճանիկի խոսվածքում Հ. Աճառյանի վկայությամբ շարունակական ժամանակների իմաստը դրսևորվում է երկու ձևով. «...հները դնում են ուղղական ենթակա, որին կցում են անորոշ դերբայը՝ ավելացնելով էական բայի եզակի Գ դեմքը, իսկ նորերը այս ձևը չգիտեն և ենթական դնում են սեռական հոլովով

¹⁷ Տե՛ս Ա. Փաշայան, *Սվեդիայի բարբառը*, Ե., 1964, էջ 65:

¹⁸ Տե՛ս Տ. Անդրեասյան, *Սվեդիայի բարբառը*, Ե., 1967, էջ 96:

¹⁹ Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, էջ 100-101:

²⁰ Տե՛ս Գ. Հանանյան, *Սվեդիայի բարբառը (Խորքերի խոսվածքը)*, Ե., 1995, էջ 125:

(ստացական դերանվան ձևով): Այսպես ըստ հների՝ յես էգուշ ա, տու էգուշ ա..., իսկ ըստ նորերի՝ իմա (իմը) էգուշ ա, քուզըդ (քուզը) էգուշ ա (դու հիմա գալիս ես) ...»²¹:

ՀԲԱ-ի ծրագրով հավաքված նյութերում, որոնք լրացված են համշենցիների օգնությամբ, շարունակականի իմաստի դրսևորման որևէ օրինակ նշված չէ (ՀԲԱՆ, Համշեն, Ճենիկ (39), Օրդու (94), Չիբլուխու (52): Շարունակական ժամանակների հիշյալ ձևերի առկայությունը ստուգելու նպատակով տարբեր վայրերում բնակվող համշենահայերին ուղղված մեր հարցումները ևս որևէ դրական արդյունք չեն տվել (բարբառախոսները շարունակականի այդպիսի ձևեր չեն ճանաչում)²²:

Այս ամենից ենթադրվում է, որ շարունակականի՝ Հ. Աճառյանի կողմից նշված կազմությունները տասնամյակներ անց Համշենի բարբառում դադարել են գործառել. համշենահայերի նորագույն սերնդի ներկայացուցիչները ներկայումս այդպիսի ձևեր չեն գործածում: Դա կարող էր տեղի ունենալ նրանց՝ իրենց բնակավայրերից հեռանալու և բարբառախոս միջավայր չունենալու պատճառով:

Այսպիսով, բարբառների մի որոշակի խմբում շարունակական ժամանակների մասնիկները ժամանակի ընթացքում դարձել են ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստակիրներ, այսինքն՝ ներկայումս միտում է նկատվում ոչ թե ներկայի իմաստների տարբերակման, այլ իմաստային բոլոր դրսևորումների համար մեկ մասնիկի գործառություն:

Համշենի բարբառի խոսվածքներում ապառնի ժամանակաձևերի կառուցվածքային կաղապարների գործառության տեղաշարժ է նկատվում: Այսպես, Չիբլուխուի խոսվածքում ենթակայական դերբայով և օժանդակ բայով կառույցը բազմիմաստ է.

²¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 100: Համշենի բարբառում շարունակականի վերոնշյալ կազմությունն են ներկայացրել նաև Ա. Ղարիբյանը և Ա. Աբրահամյանը (տե՛ս Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 187, Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, 1953, էջ 283:

²² Տե՛ս Գ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 292:

դրսևորում է սահմանական և ենթադրական ապառնիների իմաստներ՝ *ասող ըմ (էղի) (ասելու եմ, էի, կասեմ, կասեի), ասող ըս (էղդ), ասող ա (էր), ասող ընկ (այքը), ասող ըկ (էքք), ասող ըն (էն)* (ՀԲԱՆ, Համշեն, Չիբլուխու, 52): Օրդուի խոսվածքում հիշյալ կազմությունները գործառում են սահմանական և հարկադրական ապառնիների իմաստների դրսևորման համար. հարկադրականի հարացույցում *-ող* վերջամասնիկն ունեցող դերբայով կազմություններին զուգահեռ կիրառվում են նաև *պիտի* եղանականիշ մասնիկով կազմված զուգադրությունները՝ *նըստիմ ինի, նըստիս բիդի, նըստի բիդի, նըստինք բիդի, նըստեք բիդի, նըստին բիդի* կամ *փօրօղ ըմ, փօրօղ ըս, փօրօղ է, փօրօղ ընք, փօրօղ էք, փօրօղ ըն* (ՀԲԱՆ, Համշեն, Օրդու, 94): Համշենի Սամսուն գավառում ապառնիի վերոբերյալ ձևերը գործառական հստակ տարբերակվածություն ունեն։ *-Օղ* վերջամասնիկն ունեցող դերբայով և օժանդակ բայով հարադրությունները սահմանական ապառնիի հարացույցում են գործառում, իսկ *պիտի* նախամասնիկով և դիմավոր բայով զուգորդությունները՝ հարկադրական, այսպես՝ *ուղօղ իմ* (ուտելու եմ), *ուղօղ իս, ուղօղ ա, ուղօղ ինկ, ուղօղ իկ, ուղօղ ին* և *կըրիմ իդի* (պիտի գրեմ), *կըրիս բիդի, կըրա բիդի, կըրինկ բիդի, կըրիկ բիդի, կըրին բիդի* (ՀԲԱՆ, Համշեն, Սամսուն, 187): Ի հակադրություն վերոնշյալի՝ Համշենի բարբառի Ծինգիր և Միմեր խոսվածքներում ենթակայական դերբայով հարադրությունները գործառում են միայն հարկադրական եղանակի ժխտական խոնարհման կազմություններում, այսպես՝ *կըրօղ չիմ, կըրօղ չիս, կըրօղ չը, կըրօղ չիկ, կըրօղ չէկ, կըրօղ չին* (ՀԲԱՆ, Տրապիզոն, Ծինգիր, Միմեր, 99): Այս փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ նշված վայրերում տեղաշարժ է կատարվել սահմանական և հարկադրական եղանակների ապառնիների կառուցվածքային կադապարներում։ Թերևս նախապես կիրառվել է *պիտի* եղանականիշ մասնիկով կազմությունը, որոնց զուգահեռ հետագայում գործածվել է ենթակայական դերբայով և օժանդակ բայով հարադրությունը՝ հավանաբար որպես սահմանական և հարկադրական ապառնի ժամանակաձևերի տարբերակման ձևաբանական միջոց։ Այն,

նախապես գործառելով *պիտի* մասնիկավոր կազմություններին զուգահեռ, հետագայում ձեռք է բերել սահմանական ապառնիի իմաստ, իսկ որոշ վայրերում պահպանվել է միայն ժխտական խոնարհման հարացույցում:

Այսպիսով, ինչպես երևաց վերոբերյալից, բարբառներում առկա տեղաշարժերը պայմանավորված են բարբառային ազդեցություններով և ներթափանցումներով, եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկների հնչյունական և իմաստային անցումներով, դրանց անկմամբ կամ մեկ ուրիշով փոխարինմամբ, ինչպես նաև կաղապարային կառույցների գործառական սահմանափակմամբ:

Геворгян Гаяне - Изменения в системе наклонения и времени армянских диалектов. - Известно, что среди структурных компонентов языка словарный запас больше всего подвергается влиянию экстралингвистических факторов. Этому влиянию подвергаются также компоненты грамматической структуры. В системе глагола диалектов, так же как в литературном армянском, диахронически произошли изменения, детерминированные диалектными влияниями и вкраплениями, фонетическими и семантическими переходами частиц образующих время и наклонение, их элиминированием или заменой другими, а также функциональным ограничением модальных конструкций.

Gayane Gevorgyan- Diachronic Changes in the System of Mood and Tense of Armenian Dialects. - Among other structural components of language, word stock is known to be influenced by extralinguistic factors most. Components of grammatical structure, however, are not hereft of that influence either. The verbal system of both Literary Armenian and dialects has noted a number of shifts determined by dialectical influence, phonetic and semantic changes of particles denoting mood and tense, their omission or substitution, as well as functional restriction of model structures.

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՆՑՅԱԼ
ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐՈՒՄ*

Գևորգյան Գայանե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Քերականական համանիշությունը լեզվաբանության կարևորագույն հարցերից է, սակայն հայ քերականագիտության մեջ այն քիչ է ուսումնասիրված¹: Քերականական համանիշները² քերականական միևնույն իմաստների, հարաբերությունների դրսևորումներն են քերականական տարբեր միջոցներով, որոնք ունեն իմաստային կամ ոճական նրբերանգներ, և որոնց հիմքում ընկած են առարկայական նույն հարաբերությունները³:

Հայերենի տարածքային տարբերակներին բնորոշ է համանիշությունը, այսինքն՝ նույն իմաստի դրսևորման համար քերականական տարբեր կառույցների կիրառումը բայական հարացույցներում: Դրանք եղանակաժամանակային ձևերը կազմելիս գործառում են ձևաբանական այնպիսի միջոցներ, որոնք հատկանշվում են իմաստային համարժեքությամբ և ձևային տարաբաժանությամբ: Նյութի դիտարկումից պարզվում է, որ բայական համակարգում առկա համանիշության դրսևորումները գուրկ են բացարձակ միօրինակությունից և անհամասեռ պատկեր են ներկայացնում ոչ

* «Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ» Պրինտ», 2013, էջ 165-171:

¹ Տե՛ս Ն. Պառնապյան, *Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում*, Ե., 1970, էջ 9:

² Լեզվաբանության մեջ քերականական համանիշների խմբում միավորվում են ձևաբանական և շարահյուսական մակարդակներում առկա համանիշները: Հոդվածում *քերականական համանիշներ* եզրույթը գործածվում է միայն ձևաբանական համանիշների համար:

³ Տե՛ս Ն. Պառնապյան, նշվ. աշխ., էջ 24:

միայն ըստ տարածական բնութագրի, այլև բայական միևնույն հարացույցի ներսում⁴:

Անցյալ ժամանակաձևերում առկա համանիշության դրսևորումները պայմանավորված են բայական տարբեր կազմությունների՝ մասնիկակազմ և դերբայակազմ, դերբայական տարածք ձևերի, տարբեր հիմքերով բայաձևերի, նույն դերբայի փոփոխականների գործառնամբ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ սահմանագծվում են բարբառային հետևյալ տարածքները: Բուրդուրի, Հավարիկի բարբառները, Նախիջևանի որոշ խոսվածքներ⁵ կազմում են առաջին տարածքը, որտեղ նույն ժամանակաձևի համար տարբեր կազմություններ են գործածվում: Այսպես՝ անցյալ ժամանակաձևերի իմաստը Բուրդուրի, Զեյթունի բարբառներում արտահայտվում է *իդի* բառ-մասնիկի հարադրությամբ կամ առանց դրա, օրինակ՝ *քիցէմ իդի//քիցէյի, քիցէս իդի//քիցէյիր, քիցէր իդի//քիցէր, քիցէնք իդի//քիցէյինք, քիցէք իդի//քիցէյիք, քիցէն իդի//քիցէյին*⁶: Անցյալ ժամանակաձևերի՝ *իդի* մասնիկով կաղապարային կառույցի գործառնությունը Ն. Մկրտչյանը բացատրում է օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերում հոգնակի 1-ին դեմքերի (երկու դեպքում էլ հոգնակի 1-ին դեմքն ունենում է *ինք* ձևը) համանունության փաստով⁷: Վերոբերյալ կարծիքին հարկ է հավելել, որ հավանաբար *իդի*-ով կազմությունները արևմտահայ տարածքի

⁴ Քանի որ լեզվաբանական գրականության մեջ նույնանիշները միավորվում են համանիշների խմբում և կոչվում են բացարձակ համանիշներ (տե՛ս Ն. Պառնասյան, նշվ. աշխ., էջ 24), այդ պատճառով էլ դրանց դրսևորումները կներկայացվեն *քերականանական համանիշություն* անվանմամբ:

⁵ Եղանակաժամանակային ձևերի տարածական բնութագիրը տալիս օգտվել ենք Գ. Զահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական քննության արդյունքում առաջացած բարբառային միավորների դասակարգումից, և դրանց տարածքային նկարագիրը ներկայացվում է՝ ըստ բազմահատկանիշ դասակարգման (տե՛ս Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132-136):

⁶ Ն. Մկրտչյան, Բուրդուրի բարբառը, Ե., 1971, էջ 126:

⁷ Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 119:

բարբառային ազդեցությունների և ներթափանցումների հետևանք են (գուցե Հաջընի, Ջեյթունի), իսկ վերջամասնիկագուրկ ձևը կարելի է դիտել որպես Ղարաբաղի բարբառին հաստուկ բարբառային հատկանիշ (բուրդուրցիները Փոքր Ասիա են գաղթել Ղարաբաղից):

Նախիջևանի Տանակերտ և Փառակա գյուղերի ենթախոսվածքներում, Հավարիկի բարբառում անցյալ կատարյալի իմաստն արտահայտվում է պարզ և բաղադրյալ ժամանակաձևերի զուգահեռ կիրառությամբ, այսինքն՝ այստեղ համանիշությունը դրսևորվում է բայական տարբեր կազմություններով, այսպես՝ *խըմաս, խըմաս, խըմալ ա, խըմաք, խըմաք, խըման//խըմալ ըմ, խըմալ ըս, խըմալ ա, խըմալ ըք, խըմալ ըք, խըմալ ըն* (ՀԲԱՆ, Ագուլիս, 22)⁸: Անցյալ կատարյալի պարզ կազմությունը, ըստ Ս. Սարգսյանցի, առաջացել է բաղադրյալ ձևերից *լ* ձայնորդի անկմամբ՝ *թակալ ըմ>թակամ, թակալ ըս>թակաս, թակալ ըք>թակաք* և այլն⁹: Հ. Աճառյանը թեև չի մերժում հիշյալ մեկնությունը, սակայն չի բացառում մեկ այլ բացատրություն. «Անտարակույս այս կատարյալը շարունակությունն է հին հայերենի *հասսի*, աշխարհաբար *հասսա* ձևի. առաջին դեմքի վրա ավելացել է *մ*՝ նմանությամբ սահմանական ներկայի. կարելի չէ՝ ենթադրել, որ նույնը տեղի ունեցած լինի նաև Ագուլիսի բարբառում, բայց այստեղ նմանությունը շարունակվելով՝ երկրորդ դեմքն էլ ստացած լինի ս»¹⁰: Հավանաբար Ս. Սարգսյանցի բացատրությունը հավանական կարելի է համարել անցյալ կատարյալի այն պարզ կազմության համար, որը չի կապվում գրաբարյան անցյալ կատարյալի հետ և լինելով բաղադրյալ կազմությունների հետագա զարգացման արդյունք՝ պատմական գոյացություն է ու առկա է հայերենի տարածքային տարբերակների որոշակի հատվածում միայն, այն է՝ Ագուլիսի բարբառում: Հնա-

⁸ Հոդվածում օգտագործված են Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերը, որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում և ներկայացվում են հետևյալ հապավմամբ՝ ՀԲԱՆ (Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր):

⁹ Տե՛ս Ս. Սարգսյանց, *Ագուլեցոց բարբառը*, Մոսկվա, 1883, էջ 116:

¹⁰ Հ. Աճառյան, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 202:

րավոր է՝ հիշյալ բարբառում վաղակատարով հարադրությունները արտալեզվական և ներլեզվական գործոնների ազդեցությամբ լեզվի պատմական զարգացման ընթացքում կրել են որոշ փոփոխություններ: Թերևս սրան կարող էր նպաստել այն հանգամանքը, որ Ագուլիսի բարբառը հայերենի բարբառների համատարած շղթայում առանձնանում է ենթադրական եղանակի կազմությամբ: Շեղվելով հայերենի բարբառներին հատուկ զարգացման միտումից՝ այն հիշյալ եղանակի իմաստն արտահայտում է ոչ թե եղանականիչ մասնիկով, այլ անորոշ դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ: Գուցե և հետագա ժամանակաընթացքում անորոշ դերբայով և հ(ե) լծորդության բայերի վաղակատարով կազմությունների քերականական համանունությունից խուսափելու համար Ագուլիսի բարբառում վաղակատարի -չ վերջնահնչյունի անկմամբ առաջացել է կատարյալի՝ պարզ կազմության մի երկրորդ տարբերակ, որը ծագումնաբանորեն չի կապվում գրաբարյան անցյալ կատարյալի հետ՝ տարբերվելով դրանից եզակի թվի բոլոր դեմքերում: Այսկերպ կարելի է մեկնել նաև վաղակատարի՝ Հ. Աճառյանի համար տարակուսանք առաջացնող գործածությունը եզակի թվի 3-րդ դեմքում՝ այն համարելով որպես անցյալ կատարյալի նախնական ձևի՝ վաղակատարով կազմության մնացուկային արտահայտություն: Վերոհիշյալ ժամանակաձևը, սակայն, տարածման միտում չի ցուցաբերել և մնացել է մեկուսի՝ կղզիանալով Ագուլիսի տարածքում¹¹: Հիշյալ վարկածի հավաստիությունը կարելի է հիմնավորել հետևյալ փաստարկներով:

1) Ա. Ղարիբյանը, նշելով Ագուլիսի բարբառում անցյալ կատարյալի կազմության երկու ձև՝ պարզ և բաղադրյալ, գրում է. «Այս ձևը (իմա՝ պարզ) քիչ գործածական է, ըստ երևույթին նոր է

¹¹ Տե՛ս Գ. Գևորգյան, Անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությունների գործառական-տարածքային բնութագիրը, Գիտական աշխատություններ: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն: Պր. 4, Ե., 2004, էջ 153:

ձեռք բերված: ...Ավելի գործածական է անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը, որ հարազատ է Ագուլիսի բարբառին»¹²:

2) Բարբառային նյութի քննությամբ պարզ է դարձել, որ միայն Ագուլիսի բարբառին են բնորոշ անցյալ կատարյալի հետևյալ դրսևորումները՝ կատարյալի հարացույցում պարզ և բաղադրյալ կազմությունների զուգաձևություն, մ և ս դիմանիշների առկայություն եզակի 1-ին և 2-րդ դեմքերում՝ *խըմամ, խըմաս, խըմալ ա...*, եզակի 3-րդ դեմքում *վաղակատար դերբայ + օժանդակ բայ* կաղապարային կառույցի գործառություն, այսպես՝ *ծակամ, ծակաս, ծակալ ա, ծակաք, ծակաք, ծական*:

Վերոբերյալ փաստերը, կարծում ենք, հավաստի վկայություն են այն մասին, որ Ագուլիսի բարբառում գործառող անցյալ կատարյալի կազմությունները պատմական գոյացություններ են, որոնք, լեզվական որոշակի գործոնների ազդեցությամբ դուրս մղելով հին ժամանակաձևերը, դարձել են այդ տարածքում անցյալ կատարյալի իմաստն արտահայտող դրսևորումներից մեկը:

Հավարիկի բարբառում ևս անցյալ կատարյալը կազմության երկու եղանակ ունի, սակայն այստեղ բաղադրյալ կազմությամբ անցյալ կատարյալին բնորոշ է հարակատար դերբայով կաղապարային կառույցը՝ *մնացած ըմ, մընացած ըս, մընացած Է, մընացած անք, մընացած աք, մընացած ան* (ՀԲԱՆ, Հավարիկ, 40): Նկատենք, որ այս բարբառը վաղակատար դերբայ չունի, և վաղակատար ժամանակի իմաստը արտահայտվում է հարակատար դերբայով:

Բարբառային երկրորդ տարածքում դերբայական համանիշ ձևեր են գործառում նույն ժամանակաձևի (հարակատար) իմաստի դրսևորման համար: Այսպես՝ վաղակատար և հարակատար դերբայներով հարադրությունների զուգահեռ գործածություն է առկա արևմտյան խմբակցության Անտիոքի բարբառախմբի Բեյ-լանի, Հաջընի, Փոքր Ասիայի բարբառախմբի Մեֆաստիայի բարբառներում, Պոլսի միջբարբառում, ինչպես նաև Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի Մուշի, Վանի միջբարբառախմբի Վանի բարբառ-

¹² Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 248:

ներում, արևելյան խմբակցության Ղարաբաղի բար-բառում, այսպես՝ *կըրած էմ // կըրէր էմ...* (ՀԲԱՆ, Նիկոմեդիա, Խասկալ, 283):

Ի տարբերություն վերոնշյալի՝ Սասունի, Վանի, Տիգրանականերտի, Բայազետի բարբառներում վաղակատար և հարակատար դերբայների գործառությունը հատկանշվում է սեռային տարբերակմամբ: Չեզոք և կրավորական սեռի բայերը *-ուկ* (ուգ) վերջամասնիկն ունեցող հարակատար դերբայով են կազմում հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևեր, իսկ ներգործական սեռի բայերը՝ *-եր* վերջավորությամբ վաղակատար դերբայով, այսպես՝ *սիրեր իմ, սիրեր իս, սիրեր է և խապվուգ իմ, խապվուգ իս, խապվուգ ք, նըստուգ իմ, նըստուգ իս, նըստուգ ք* (ՀԲԱՆ, Խուրթ, Բիջունկ, 34): Վանի և Մոկսի խոսվածքներում *-ուկ* վերջամասնիկով հարակատարը բնորոշ է կրավորական սեռի բայերին՝ *խափվուկ իմ (էր), խափվուկ իս (էր), խափվուկ ի (էր), խափվուկ ինք (էնք), խափվուկ իք (էք), խափվուկ ին (էն)* (ՀԲԱՆ, Մոկս, Ապարանց, 298): Եդեսիայի, Հաջընի, Բեյլանի բարբառներին, Ջեյթունի և Սևերեկի խոսվածքներին հատուկ է նաև հարակատար դերբայի՝ *-ման* (մոն) ձևությամբ վերջավորվող տարբերակը: Վերջինս, ինչպես *-ուկ* վերջամասնիկովը, հաճախ գործառում է *ած*-ով հարակատար դերբային զուգահեռ՝ բայասեռով պայմանավորված, այսպես՝ *կըրոձ իմ (գրած եմ), կըրոձ իս, կըրոձ է, կըրոձ ինք, կըրոձ իք, կըրոձ ին, սիրմոն իմ (սիրված եմ), սիրմոն իս, սիրմոն է, սիրմոն ինք, սիրմոն էք, սիրմոն ին* (ՀԲԱՆ, Բեյլան, 459):

Տարածքային տարբերակների մի մասում հարակատար դերբայով կազմությունները սահմանափակ գործառություն ունեն վաղակատար ժամանակաձևերի հարացույցում, որի հետևանքով համանիշություն է առաջանում հարակատար և վաղակատար դերբայներով բաղադրված կառուցատիպերի միջև: Այսպես՝ Մուշի (Միրբար), Մոկսի (Խալենց), Վանի (Խոշաբ, Ջենիս, Քոեր), Խուրթի (Թաղվու) խոսվածքներում հարակատար դերբայով կազմությունը առկա է շրջուն շարադասությամբ կառույցներում՝ հոգնակի 3-րդ դեմքում, այսպես՝ *Ընդոք ա զըրած* (Մուշ, Բուլանուխ, Միրբար, 96): Ուղիղ շարադասության դեպքում գործածվում է վաղակատար

դերբայի -եր ձևությամբ դիրքային տարբերակը, այսպես՝ *կըրհր իմ, կըրհր իս, կըրհր ի, կըրհր ինք, կըրհր իք, կըրհր ին* (ՀԲԱՆ, Մոկս, Հադին, 287): Մուշի բարբառի Ալաշկերտ, Սպարկերտ, Վանի բարբառի Շատախ, Բիթլիս, Մոկս, Աղբակ (Հասպատան) խոսվածքներում, Բուն Սասունի, Հաջընի բարբառներում հարակատարով հարադրությունները հատուկ են ներգործական սեռի որոշ բայերի. վերջիններս գործածվում են վաղակատար դերբայով բաղադրված ժամանակաձևների հետ միևնույն հարացույցում՝ եզակի և հոգնակի 3-րդ դեմքերում՝ *կըրէր էմ, կըրէր էս, կըրած ա, կըրէր էնք, կըրէր էք, կըրած էն* (ՀԲԱՆ, Գավաշ, Հարպերտ, 75): Հարակատարով գուգորդությունները արտահայտում են վաղակատար ժամանակի իմաստային նրբերանգը՝ կատարված գործողություն՝ *կըրած ի* (նշանակում է գրել, վերջացրել են), *տարած ի* (տարել են), օրինակ՝ *Պուլօ ախչիկ տարած ի* (Պողոսի աղջկան տարել են, այսինքն՝ նա ամուսնացել է) (ՀԲԱՆ, Շատախ, 17):

Արճեշի (Ծայծակ), Սասունի (Իրցանք, Կոմք, Հոսներ) բնակավայրերի խոսվածքներում օժանդակ բայը եզակի և հոգնակի 3-րդ դեմքերում չի գործառում: Հոգնակի 3-րդ դեմքն արտահայտվում է հարակատար դերբայով, իսկ եզակի թիվը՝ վաղակատարով՝ *մացեր էմ, մացեր էս, մացեր, մացեր ենք, մացեր էք, մացած* (ՀԲԱՆ, Արճեշ, Ծայծակ, 58): Այս տարածքում հարակատարին բնորոշ իմաստ (գործողություն հետևանքային վիճակով) ունի -ուզ ձևությամբ դերբայը՝ *քընուզ էրէխա, նէղէծուզ մառտ, կօղրուզ փէդ*:

Բարբառային հաջորդ տարածքը կազմում են բարբառային այն միավորները, որոնցում համանիշություն է առաջանում անցյալի ցոյական և անորոշի հիմքերը գուգահեռաբար գործառելու հետևանքով: Հիշյալ հատկանիշն առկա է արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի, Վանի, Եղեսիայի, արևելյան խմբակցության Խոյ-Մարադայի, Ագուլիս-Մեղրիի բարբառախմբերի տարածքային տարբերակներում, այսպես՝ չափիցի/չափի, չափիցիք/չափիր, չափեց, չափիցինք/չափինք, չափիցիք/չափիք, չափիցին/չափին (ՀԲԱՆ, Լիզ, Մուշ, 255): Վերոնշյալ տարածքում բարբառային որոշ միավորներ հիմքակազմության մեջ հատ-

կանշվում են սեռային տարբերակվածությամբ: Այսպես՝ Եդեսիայի բարբառում տարբեր հիմքերի գործածությունը պայմանավորված է բայասեռով. ներգործական սեռի *է(ե)* լծորդության բայերը անցյալ կատարյալը կազմում են անցյալի հիմքով՝ *գաբէցի, փախցուցի*, իսկ չեզոք և կրավորական սեռի *ի* լծորդության բայերը՝ անորոշի հիմքով՝ *թօումալ, օլըրվալ*¹³:

Շատախի խոսվածքում, որը կազմում է վերջին տարածքը, – *ի*ը ձևությամբ վաղակատար դերբային զուգահեռ գործածվում է նաև երկրորդ տարբերաձևը՝ *ի* վերջնահնչյունով: Վաղակատարի հիշյալ տարբերակային ձևերը գործառական և իմաստային որևէ տարբերություն չունեն և հավասարապես կիրառվում են ժխտական խոնարհման հարացույցում՝ *չըմ (չի) խակիր/խակիրի, չըս (չիր) խակիր/խակիրի, չը (չէր) խակիր/խակիրի, չընծ (չինծ) խակիր/խակիրի, չըծ (չիծ) խակիր/խակիրի, չըն (չին) խակիր/խակիրի*¹⁴:

Այսպիսով, ժամանակային նույն իմաստի դեպքում ձևաբանական տարբեր միջոցների գործառությամբ բարբառների եղանակաժամանակային համակարգերում առանձնանում են քերականական նույնանիշներ և համանիշներ. նույնանիշները գործառության ծավալային սահմանափակում չունեն, իսկ համանիշների կիրառությունը սահմանափակված է քերականական որևէ հատկանիշով՝ բայի սկզբնահնչյունով, բայական սեռով, լծորդությամբ, դեմքով և այլն:

Гаяне Геворгян-Проявления грамматической синонимии в прошедших временах армянских диалекто. - Для территориальных вариантов армянского языка характерна также грамматическая синонимия, т.е. употребление в модально-временных системах разных структурных конструкций с одинаковыми значениями. В диалектах образование модально-временных форм может происходить посредством синони-

¹³ Տե՛ս Ա. Հանեյան, *Եդեսիայի բարբառը, Հայերենի բարբառագիտական ատլաս*, Ե., 1982, էջ 227:

¹⁴ Տե՛ս Մ. Մուրադյան, *Շատախի բարբառը*, Ե., 1962, էջ 21:

мичных морфологических средств, одинаковых по значению и разных по форме.

Gayane Gevorgyan-Manifestations grammatical synonymy in past tenses of Armenian dialects. - Grammatical synonymy i.e. the usage of the modal-temporal systems of various structural constructions of the same meaning, is also characteristic of the territorial varieties of the Armenian language. In the dialects the formation of the modal-temporal forms may occur by means of synonymic morphological means having the same meaning and different forms.

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ*

Գևորգյան Գայանե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Համանունությունը բացահայտում է լեզվական միավորների ձևախմբաստային փոխհարաբերությունները և արտահայտվում է լեզվական բոլոր մակարդակներում: Գ. Ջահուկյանը, անդրադառնալով համանունության խնդրին, կարծում է, որ անհրաժեշտ է տարբերել քերականական համանունությունը քերականական բազմիմաստությունից, քանի որ առաջինը կապված է հարացուցային, երկրորդը՝ շարակարգային հարաբերությունների հետ: «Եթե տվյալ միավորը կարելի է դիտել որպես տարբեր հարացույցների անդամ, ապա մենք գործ ունենք համանունության հետ: Եթե տվյալ միավորի իմաստային տարբերությունները կախված են տարբեր կոնտեքստներից, ապա մենք գործ ունենք բազմիմաստության հետ»¹: Ա. Աբրահամյանը, անդրադառնալով ժամանակակից հայերենի ձևաբանական մակարդակում գործառող համանունության դրսևորումներին, ընդունում է երկու տիպի համանունություն՝ ներհարացուցային և միջհարացուցային²: Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերում առկա են համանունության վերոնշյալ երկու տիպերը: Միջհարացուցային համանունությունը արտահայտվում է դիմավոր բայաձևերի, դերբայի և դիմավոր բայաձևի, դերբայական ձևերի միջև՝ դիմաթվանիշների և վերջամասնիկների համանունությամբ պայմանավորված:

* «Կանթեղ: Գիտական հոդվածներ», Ե., 2013, էջ 122-128:

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 104:

² Տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայերենի քերականական համանունության շուրջը*, ՊԲՀ, 1, Ե., 1974, էջ 26:

Դիմավոր բայաձևերում առկա համանունությունը դրսևորվում է ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի, ըղձական ապառնիի և հրամայական եղանակի բայաձևերի միջև³: Ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի միջև առկա համանունությունը ունի արտահայտման տարբեր ձևեր, որոնց համապատասխան էլ առանձնացվում են բարբառային տարածքներ: Առաջինում համանունությունը առկա է ըղձական ապառնիի եզակի 3-րդ (կըրեմ, կըրես, կըրի) և ըղձական անցյալի եզակի 1-ին դեմքերի միջև (խօսի, խօսիր, խօսեր) (ՀԲԱՆ, Նիկոմեդիա, Արմաշ, 304)⁴: Այս հատկանիշով միավորվում և բարբառային տարածք են կազմում արևմտյան խմբակցության Մարաշ-Ջեյթունի (Մարաշ), Քեսար-Սվեդիայի (Խտրբեկ) բարբառները, Պոլսի (Նիկոմեդիա, Ադափազար, Պարտիզակ) միջբարբառը, Վանի (Սիսկյա, Միսկներ, Հուրթուկ) բարբառը, Էրզրումի (Քդի Հարդիֆ, Քոշկ), Կարսի (Փալդրվան) խոսվածքները, արևելահայ խմբակցության Արարատյան, Ղարաբաղի, Նոր Ջուղայի, Շամախիի (Մադրասա), Ագուլիսի բարբառները, պարսկահայ (Փերիա (Չիգյան), Ղարադաղի (Թագաքենդ, Սարդու), Շամքորի (Բարսում, Օրջոնիկիձե), Իջևանի (Ծաղկավան, Աչաջուր), Շամշադինի (Բերդ, Նավուր), Իգդիրի (Հախվերիս), Նոյեմբերյանի (Կոթի) խոսվածքները⁵: Եդեսիայի

³ Ըղձական ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերի միջև առկա համանունությունը դրսևորվում է նաև այն բոլոր ժամանակաձևերի դեպքում, որոնք կազմվում են ըղձականից (սահմանական ներկա և անցյալ անկատար (արևմտյան խմբակցության բարբառներ), ենթադրական, հարկադրական ապառնի և անցյալի ապառնի), սակայն հոդվածում կրկնությունից խուսափելու համար նշվում է միայն ըղձական եղանակի ժամանակաձևերի համանունության փաստը:

⁴ Հոդվածում օգտագործված են Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերը, որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում և ներկայացվում են հետևյալ հապավմամբ՝ ՀԲԱՆ (Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր):

⁵ Եղանակաժամանակային ձևերի տարածական բնութագիրը տալիս օգտվել ենք Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական քննության արդյունքում առաջացած բարբառային միավորների դասակարգումից, և դրանց տարածքային նկարագիրը ներկայացվում է՝ ըստ բազմահատկանիշ դասակարգման (տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132-136):

բարբառը կազմում է հաջորդ տարածքը, որտեղ ձևային նույնությամբ են հատկանշվում *ի* լծորդության բայերի ըղձական ապառնիի եզակի 3-րդ (*հավնիմ, հավնիս, հավնի*) և անցյալի եզակի 1-ին (*հավնի, հավնիր, հավնէր*), ինչպես նաև ապառնի (*հավնինք, հավնէք, հավնին*) և անցյալ (*հավնինք, հավնիք, հավնին*) ժամանակաձևերի հոգնակի 1-ին և 3-րդ դեմքերը⁶:

Բարբառային մյուս տարածքը (Մշո բարբառի Մուշ, Ալաշկերտ (Ուշքիլիսա) խոսվածքներ) բնորոշվում է ըղձական ապառնիի (*գը գըրիմ, գը գըրիս, գը գըրա, գըգըրինք, գըգըրիք, գըգըրին*) և անցյալի (*կըխօսի, կըխօսիր, կըխօսէր, կըխօսինք, կըխօսիք, կըխօսին*) հոգնակի բոլոր դեմքերի համանունությամբ (ՀԲԱՆ, Ալաշկերտ, Ուշքիլիսա, 332): Բուրդուրի բարբառում օժանդակ բայի ներկա ժամանակը դրսևորման 3 ձև ունի՝ *է, ք, ի* ձայնավորներով և դիմանիշներով զուգորդված⁷:

Ի ձայնավորով օժանդակ բայի ներկայի հոգնակի թվի բոլոր դեմքերը (*իմ, իս, ի, ինք, իք, ին*) համանուն են պարզ անցյալ անկատարի հոգնակի թվի դեմքերին (*ի, իր, էր, ինք, իք, ին*)⁸: Սասունի բարբառում համանունություն է առկա ըղձական ապառնիի հոգնակի 2-րդ, անցյալի եզակի 1-ին, հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի միջև⁹, այսպես՝ *կըրմ, կըրս, կրէ, կըրք, կրէք, կըրն* (ապառնի) և *կրէք, կրէր, կրէր, կրէք, կրէք, կրէն* (անցյալի ապառնի)¹⁰:

Ձևային նույնաբծեությամբ են հատկանշվում նաև ըղձական և հրամայական եղանակների ժամանակաձևերի կադապարային կառույցները: Նկատի ունենալով այդ դրսևորումները՝ սահմանա-

⁶ Տե՛ս Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1982, էջ 234:

⁷ Հստ Ն. Մկրտչյանի՝ օժանդակ բայի երեք տարբերակների առկայությունը պայմանավորված է նրանց նախադաս և հետադաս կիրառմամբ. «...այսինքն՝ նախորդող կամ հաջորդող բառերի արմատական ձայնավորների ծանր կամ թեթև լինելու փաստով» (Ն. Մկրտչյան, *Բուրդուրի բարբառը*, Ե., 1971, էջ 118):

⁸ Տե՛ս Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 118:

⁹ Հիշյալ փաստը նշելով՝ Վ. Պետոյանը հավելում է. «Այս ժամանակներում առաջին դեմքերի եզակի և հոգնակի ձևերն իրար հետ չշփոթելու համար համապատասխան անձնական դերանունները բայի խոնարհման ժամանակ գրում ենք...» (Վ. Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 57):

¹⁰ Տե՛ս Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 47:

գծվում են հետևյալ տարածքները: Կիլիկիայի միջբարբառախմբի Մարաշ-Ջեյթունի (Մարաշ), Փոքր Ասիայի բարբառախմբի Կարի-նի, Մալաթիայի, Խարբերդ-Երզնկայի բարբառներում, Շապին-Կարահիսարի, Պոլսի (Պոլիս) միջբարբառներում, Համշենի միջբարբառախմբի Համշենի, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի Բուն Սասունի, արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի (Խոյ-Մարաղայի), Արարատյան (Արարատյան), Ագուլիս-Մեղրիի բարբառախմբերում համանունությունը բնորոշ է ըղձական ապառնիի եզակի 3-րդ դեմքի (ըսիմ, ըսիս, ըսէ) և եզակի հրամայականի բայաձևերին (*գորէ՛, բռնէ՛, գաբէ՛*) (ՀԲԱՆ, Մարաշ, 337):

Ջեյթունի բարբառում ձևով նույնանում են ոչ միայն ըղձական ապառնիի եզակի 3-րդ դեմքի (*ուղիմ, ուղիս, ուղէ...*) և *ե* խոնարհման պարզ բայերի հրամայականի ձևերը (*աբբէ՛, խուսէ՛, գաբէ՛*), այլև ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքի (*խուսի, խուսիյ, խուսէյ*) և ածանցավոր բայերի եզակի հրամայականի կազմությունները (*հաբէ՛յ, անցէ՛յ, կրդէ՛յ, տիմացէ՛յ*) (ՀԲԱՆ, Ջեյթուն, 110): Բարբառային մյուս տարածքում (Մոկս) վերոնշյալին գումարվում է եզակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի համանունությունը, այսինքն՝ համանուն կազմությունները ընդգրկում են ըղձական անցյալի եզակի թվի (*ընձէր, ընձէր, ընձէր*) և հրամայականի ձևերը (*ընձէ՛ր*):

Համանունության հաջորդ դրսևորումները ըղձական և հրամայական եղանակների հոգնակի թվի կազմություններին են վերաբերում: Այսպես՝ արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Շապին-Կարահիսարի, Պոլսի (Պոլիս) միջբարբառներում, Կարի-նի, Խարբերդ-Երզնկայի (Երզնկա), Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի Տիգրանակերտի, Համշենի միջբարբառախմբի Եդեսիայի, արևելյան խմբակցության Արարատյան, Խոյ-Մարաղայի բարբառներում առկա է ըղձական ապառնիի հոգնակի 2-րդ դեմքի (*խըմէմ, խըմէս, խըմէ, խըմինք, խըմէք, խըմին*) և հոգնակի հրամայականի (*խաձէ՛ք*) բայաձևերի ձևային նույնարժեքություն¹¹: Պոլսի բարբառում վերոնշյալ երևույթը առկա է միայն *յ*

¹¹ Դ. Կոստանյան, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 105, 106:

և է լծորդության ածանցավոր բայերի դեպքում՝ *հաքնիլ-հաքեք, բաքնել-բաքեք*:

Համանունության հաջորդ դրսևորումը առկա է դիմավոր բայաձևերի և դերբայների միջև: Նկատի ունենալով դրանց տարբեր արտահայտությունները՝ առանձնացվել են բարբառային հետևյալ տարածքները: Անտիոքի (Բեյլանի), Մուշ-Տիգրանակերտի (Բուն Սասունի (Մառնիկ) բարբառախմբերում, հարավային միջբարբառախմբի Վանի բարբառի Մոկսի խոսվածքում համանունություն է առկա ըղձական ապառնիի եզ. 3-րդ դեմքի (խումիմ, խումիս, խումե) և ժխտական դերբայի միջև (չըքոմ) խումե)¹²: Հաջորդ տարածքում՝ Կիլիկիայի միջբարբառախմբի Հաջընի, Մարաշ-Ջեյթունի (Ջեյթուն) բարբառներում, ժխտական դերբայը (չիմ) ասի) համանունության շարք է կազմում ըղձական անցյալի ապառնիի 1-ին դեմքի բայաձևերի հետ (խուսի (խոսեի), խուսիյ, խուսեյ) (ՀԲԱՆ, Ջեյթուն, 110):

Արևմտյան խմբակցության Շապին-Կարահիսարի, Պոլսի միջբարբառներում, Արաբկիրի, Խարբերդ-Երզնկայի, Եդեսիայի, Սեբաստիայի, Մալաթիայի, Կարինի, Մուշի բարբառներում, որոնք կազմում են բարբառային երրորդ տարածքը, համանունությունը դրսևորվում է ըղձական անցյալի եզ. 3-րդ դեմքի (*սիրէյի, սիրէյիր, սիրէր*), ժխտական և վաղակատար դերբայների միջև՝ (չեմ) *սիրէր, դէսէր* (եմ)¹³: Պոլսի բարբառում համանուն կազմությունները տարբերակելու համար որպես միջոց ընտրվել է օժանդակ բայի դիրքի փոփոխությունը. եթե տվյալ բայաձևը ներկայի և անցյալ անկատարի իմաստով է գործածվում, օժանդակ բայը նախադաս է (*չեմ կըրէր*), իսկ վաղակատար ժամանակաձևերի դեպքում այն հետադաս կիրառություն ունի (*կըրէր չեմ*): Արևմտյան խմբակցության Հաջընի և Կարնո բարբառներում համանունությունը դրսևորվում է ըղձական անցյալի ապառնիի 3-րդ դեմքի բայաձևերի (*գիխօսի, գըխօսի, գըխօսէ*) և վաղակատար դերբայի միջև (*կըլէ (եմ)*) (ՀԲԱՆ, Հաջըն, 97): Ըղձական անցյալի ապառնիի եզակի 2-րդ դեմքի բայա-

¹² Հ. Քուլիեյան, *Բեյլանի բարբառը*, Ե., 2008, էջ 120:

¹³ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 1, Ե., 1941, էջ 135, 148:

ձևերի (*կըրիմ, կըրիր, կըրէր*) և վաղակատարի (*կըրիր էմ*) միջև առկա համանունությամբ հատկանշվում են արևմտյան խմբակցության հարավկենտրոնական (Տիգրանակերտ), հարավարևմտյան (Քեսաբ-Սվեդիա) բարբառախմբերը, հարավարևմտյան (Մարաշ-Ջեյթուն) միջբարբառախումբը, արևելյան խմբակցության Խոյի (Մեյրավար) բարբառը: Ըղձական անցյալի ապառնիի եզակի 3-րդ դեմքի բայաձևերի (*պանէր էմ (գործէի), պանէր էս, պանէր*) և ժխտական դերբայի (*չի պանէր էմ, (չի) պանէր էս*) համանունություն է առկա Քեսաբի բարբառում¹⁴:

Համանունություն է դրսևորվում նաև *ե* և *ի* խոնարհման բայերի անորոշ (*ասէլ, դընիլ*) և վաղակատար (*ասէլ, դընիլ*) դերբայների միջև: Այս հատկանիշով բնութագրվում են հարավարևմտյան միջբարբառախմբի Մարաշ-Ջեյթունի (Մարաշ), հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան (Լոռի) բարբառները (տե՛ս ՀԲԱՆ, Թումանյան, Թեղուտ, 136, Մարաշ, 337):

Ներհարացուցային համանունությունը դրսևորվում է ըղձական անցյալի ապառնիի ժամանակաձևերում՝ հինհայերենյան անցյալ անկատարի դիմաթվանիշ վերջավորությունների նույնաբ-
ժեքությամբ պայմանավորված: Վերջիններս համանուն գույգեր են կազմում եզակի և հոգնակի թվի տարբեր դեմքերում: Ըստ դիմաթվանիշ վերջավորությունների համանուն գույգերի առկայության՝ առանձնացվում են հետևյալ տարածքները: Առաջինը բնորոշվում է նրանով, որ դիմաթվանիշ վերջավորություններից յուրաքանչյուրն ունի իր հատուկ ձևը, այսպես՝ *մընայի, մընայիր, մընար, մընայինք, մընայիք, մընային* (ՀԲԱՆ, Պարտիզակ, 284): Այն ընդգրկում է համեմատաբար մեծ տարածք՝ իր մեջ ներառելով արևմտյան խմբակցության Անտիոքի, Կիլիկիայի, Փոքր Ասիայի, Առտեալի բարբառախմբերն ու միջբարբառախմբերը:

Հարավային միջբարբառախմբի Վանի բարբառի (Մոկս, Ոզմ, Վան (Ոստան, Քարադաշտ) խոսվածքները կազմում են երկրորդ տարածքը: Այստեղ նույնանում են եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի ցուցիչները. երկու դեմքերի համար էլ գործածվում է *էր* վերջավորու-

¹⁴ Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 452-453:

թյունը, այսպես՝ *մընէ, մընէր, մընէր, մընէնք, մընէք, մընէն* (ՀԲԱՆ, Մոկս, 287): Բերկրիի խոսվածքում վերոբերյալ դիմաթվանիշ թեքությունները տարբեր են մասամբ: Դրանք տարբերակված են միայն լծորդ ձայնավորով, օրինակ՝ *գուրցիւ, գուրցիւր, գուրցէր, գուրցիւնք, գուրցիք, գուրցիւն* (ՀԲԱՆ, Վան, Բերկրի, 243):

Երրորդ տարածքը (Սպարկերտ, Ալաշկերտ, Գավաշ, Շատախ) բնորոշվում է դիմաթվանիշ թեքությունների համանունության եռանդամ շարքով: Այն ընդգրկում է եզակի թվի երեք դեմքերը՝ դրանցում գործառելով *էր* մասնիկը, այսպես՝ *խօւէր, խօւէր, խօւէր, խօւէնք, խօւէք, խօւէն* (ՀԲԱՆ, Սպարկերտ, 158):

Բուն Սասունի բարբառը, Բիթլիսի, Խուրի, Խնուսի, Մուշի (Լիզ), Ալաշկերտի, Շատախի (Կվերս, Գյարմավ) խոսվածքները կազմում են հաջորդ տարածքը: Այս բարբառային գոտում համանուն գույգեր են եզակի թվի 2-րդ և 3-րդ դեմքերի *էր*, ինչպես նաև եզակի և հոգնակի 1-ին դեմքերի *էնք* դիմաթվանիշ ցուցիչները: Ընդ որում՝ եզակի 2-րդ և 3-րդ դեմքի *էր* մասնիկները համանուն են թվի կարգում, իսկ եզակի և հոգնակի 1-ին դեմքերի վերջավորությունները՝ դեմքի կարգում, այսպես՝ *խօւէնք, խօւէր, խօւէր, խօւէնք, խօւէք, խօւէն* (ՀԲԱՆ, Խնուս, Գոպալ, 45):

Հաջորդ տարածքը, որին հատուկ է եզակի թվի 2-րդ և 3-րդ դեմքերի դիմաթվանիշների երկանդամ, ինչպես նաև եզակի թվի 1-ին և հոգնակի թվի 1-ին ու 2-րդ դեմքերի համանունության եռանդամ շարք, ընդգրկում է հիմնականում Սասունի (Գելիգուզան) և Մուշի (Մնձնուտ), Շատախի (Տղացպար) մի շարք բնակավայրեր, այսպես՝ *խօւէկ, խօւէր, խօւէր, խօւէկ, խօւէկ, խօւէն* (ՀԲԱՆ, Սասուն, Գելիգուզան, 62): Սասունի մի շարք բնակավայրերի (Հազգո, Հոսներ, Քոփ, Արփի) խոսվածքներում եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի համանունությանը զուգահեռ առկա է հոգնակի 1-ին ու 2-րդ դեմքերի նույնությունը, այսպես՝ *խօւէւ, խօւէր, խօւէր, խօւէկ, խօւէկ, խօւէն* (ՀԲԱՆ, Սասուն, 201): Միայն հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի վերջավորությունները համանունության շարք են կազմում Համշենի Սամսոն գավառի խոսվածքներում, այսպես՝ *գինայի, գինայդ, գինար, գինայկը, գինայկը*,

գինայնը (ՀԲԱՆ, Համշեն, Օրմոնքոյ, 410): Տիգրանակերտի բարբառը հատկանշվում է եզակի և հոգնակի 1-ին դեմքերի համանունությամբ, այսպես՝ *մընէնք, մընհր, մընէր, մընէնք, մընհք, մընէն*¹⁵:

Դիմային վերջավորությունների ներհարացուցային համանունությունը գլխավորապես բնորոշ է անցյալի դիմաթվային ցուցիչներին, սակայն Ագուլիսի (Ագուլիս, Փառակա, Բիստ, Փարադաշտ, Շուռուք), Մեղրու բարբառների (Կարճևան) խոսվածքներում այն հատուկ է օժանդակ բայի ներկա ժամանակաձևերին: Համանունություն է նկատվում հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերում՝ *խօսըմ ըմ, խօսըմ ըս, խօսըմ ա, խօսըմ ըք, խօսըմ ըք, խօսըմ ըն* (ՀԲԱՆ, Նախիջևան, Փառակա, 13):

Ի մի բերելով ներհարացուցային համանունության դրսևորման ձևերը՝ կարելի է ենթադրել, որ նախապես տեղի է ունեցել եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի նույնացում, որոնք զրաբարում տարբերվում էին միայն *ի* հնչյունի առկայությամբ, այսպես՝ *էիր* (եզակի 2-րդ դեմք)-*էր* (եզակի 3-րդ դեմք): Հնարավոր է՝ *ի* հնչյունի անկմամբ դրանք ստացել են ձևային միևնույն արտահայտությունը, որն այնուհետև համաբանությամբ ընդգրկել է նաև 1-ին դեմքը՝ առաջացնելով եզակի թվի դիմային վերջավորությունների եռանդամ շարք: Բացի այդ, բարբառներում առկա է եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի դիմանիշների նույնություն, սակայն չի արձանագրվել եզակի 1-ին և 3-րդ դեմքերի թեքույթների համանունություն: Համանման ճանապարհով, ըստ երևույթին, սկզբնապես կատարվել է նաև հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի նույնացում, որոնց տարաբժեքությունը զրաբարում պայմանավորված էր *ա* և *ի* հնչյուններով, այսպես՝ *աք* (հոգն. թվի 1-ին դեմք), *իք* (հոգն. թվի 2-րդ դեմք): Հիշյալ նմանությունն էլ հոգնակի 1-ին դեմքի *ն* հնչյունի հավելման պատճառ է դարձել¹⁶: Նկատի ունենալով բարբառներում հոգնակի 1-ին դեմքի *եսք* դիմաթվանիշի դիմաց *եսնք* ձևի առկայությունը՝ Հ. Աճառյանը առաջ է քաշում *ն* հնչյունի հավել-

¹⁵ Տե՛ս Ա. Հանեյան, նշվ. աշխ., էջ 135:

¹⁶ Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն, հայոց լեզվի*, մաս Բ, Ե., 1961, էջ 19:

ման երկրորդ վարկածը. «...ոչ թե նախ ձայնավորների միակերպությունն է կատարված, որի պատճառով էլ ավելացել է հետո *և* ռնգայինը, այլ նախ ավելացել է *և* ռնգայինը՝ նմանողությամբ ներկայի և կատարյալի հոգնակի Ա դեմքի, ուր միշտ *և* կա, որից հետո հեշտությամբ գործադրվել է ձայնավորների միակերպության օրենքը, բայց ոչ դեռ բոլոր բարբառների մեջ»¹⁷:

Հնարավոր է, որ նշված երկու փոփոխություններն էլ կատարվել են, միայն թե բարբառային միավորների մի մասն ընթացել է հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի զարգացման առաջին, իսկ մյուսը՝ երկրորդ ճանապարհով: Նկատենք, սակայն, որ հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի, ինչպես նաև եզակի 1-ին դեմքի համանունության բազում փաստերն առանց ռնգային *և* հնչյունի ավելի հավանական են դարձնում առաջին վարկածը: Ենթադրելի է, որ ավելի ուշ դիմային վերջավորությունների զարգացման գործընթացը հաջորդաբար ընդգրկել է նաև եզակի և հոգնակի թվի 1-ին դեմքերը: Հավանաբար հիշյալ երևույթը նախորդել է *և* ռնգայինի հավելմանը, քանի որ մի շարք վայրերում արձանագրված է հոգնակի և եզակի 1-ին դեմքերի համանունությունն առանց *և* դիմանիշի: Նման դեպքերում նկատելի է եռանդամ համանունություն. եզակի և հոգնակի 1-ին, ինչպես նաև հոգնակի 2-րդ դեմքերում գործածվում է *-էք* վերջավորությունը: Կարելի է ենթադրել, որ հիշյալ եռանդամ համանունությունն էլ *և* ռնգայինի հավելման պատճառ է դարձել:

Այսպիսով, տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերում միջհարացուցային համանունությունը արտահայտվում է դիմավոր բայաձևերի, դերբայի և դիմավոր բայաձևի, ինչպես նաև դերբայական ձևերի միջև՝ դիմաթվանիշների և վերջամասնիկների համանունությամբ պայմանավորված, իսկ ներհարացուցային համանունությունը դրսևորվում է ըղձական անցյալի ապառնիի ժամանակաձևերում՝ դիմաթվանիշ վերջավորությունների նույնարժեքությամբ պայմանավորված:

¹⁷ Նույն տեղում:

Геворгян Гаяне - Выражение грамматической омонимии в системе наклонения и времени армянских диалектов. - В системе времени и наклонения армянских диалектов наличествует интрапарадигматичеке и интерпарадигматические типы грамматической омонимии с их различными выражениями. Интерпарадигматическая омонимия находит свое выражение в безличных глаголах, деепричастиях и глаголах в личной форме, а также в деепричастных формах. Вышеупомянутая интрапарадигматическая омонимия определяется омонимией флексий и афиксов, указывающих лицо и число. Интрапарадигматическая омонимия в свою очередь выражается в формах будущего времени сослагательного наклонения прошедшего времени и детерминируется тождественностью флексий, выражающих категории лица и числа имперфекта /прошедшее несовершенное действие/ древноармянского языка.

Gevorgyan Gayane - The Expression of Grammatical Homonymy in the Mood-Tense System of Armenian Dialects. - In the tense-aspect system of Armenian dialects there are intra- and interparadigmatic types of grammatical homonymy with their various manifestations. Interparadigmatic homonymy is expressed in the forms of finite verbs, verbals and finite verbs, and infinite verbs conditioned by the homonymy of person-number forms and (word)-final units. Intraparadigmatic homonymy is expressed in the tense forms of future-in-the-past of the subjunctive mood conditioned by the equivalence of the person-number forms of Old Armenian past imperfective.

ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ*

Միքայելյան Ժաննա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բազմահատկանիշ դասակարգմամբ Կոզենի բարբառը մըտնում է Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ և ունի միայն մեկ՝ Կոզենի խոսվածք [*Ջահուկյան*, էջ 136]: Ըստ բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության՝ այն պատկանում է *ՀԻՄ* ճյուղին:

Անցյալ դարի 60-ական թթ. տվյալներով Կոզեն գյուղը գտնվում էր Ադրբեջանի տարածքում՝ Քուռ գետի աջափնյա դաշտավայրում: Այն մշտապես կտրված է եղել հայկական բնակավայրերից և շրջապատված ադրբեջանական գյուղերով. «...միակ հայաբնակ գյուղն է սա, որի հիմնադրման թվականը հայտնի չէ» [*Բաղդասյան*, 1961, էջ 1]: Այդ նույն՝ 60-ականներին Կոզենն ուներ 50 տուն հայ և 30 տուն ադրբեջանցի ընտանիք: Իսկ ներկա պահին գյուղը, անտարակույս, հայաթափված է, և դժվար է ասել՝ որտեղ են հաստատվել նրա նախկին բնակիչները, արդյոք ցաքուցրիվ տեղափոխվել են զանազան վայրեր, թե համայնքով հիմնվել են, ասենք, մեկ-երկու կոնկրետ բնակավայրում: Հնարավոր է՝ Կոզենի բարբառը արդեն հայերենի մեռած տարբերակների թվին է պատկանում, եթե մտածենք, որ գյուղի բնակիչները տարբեր միջավայրերում են ապրում և ստիպված այլևս չեն հաղորդակցվում իրենց մայրենիով:

Կարծիք կա, որ միջին դարերում կոզենցիներին ձուլվել են ուտիացիներ, որոնք նույնպես դարձել են հայախոս ու հայադավան: Եթե դա ճիշտ է, ուրեմն, հավանական է՝ այս բարբառն ունի

* «Ջահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումներ»: Ե., «Էդիթ» Պրինտ, 2013, էջ 189-200:

նան եկվորների լեզվի ազդեցությունը: Սակայն այդ փաստին չենք անդրադառնա՝ այն համարելով մեր բուն նպատակից դուրս:

Ռ. Բադրամյանի հավաստմամբ՝ Կոզենի բարբառը բառապաշարի և քերականական որոշ «ընդհանրություններ ունի Շամշադինի ու Լոռու ենթաբարբառների և Գանձակի միջբարբառի հետ»: Այնուհետև հեղինակը հավելում է, որ «....բարբառն ավելի շատ շփման կետեր ունի Արեշի միջճյուղային բարբառի հետ...» [նույնը, էջ 5]:

Կոզենի խոսվածքն (նույնն է՝ Կոզենի բարբառը) ունի 6 դերբայ. անորոշ, անկատար, ապառնի, հարակատար, ենթակայական և մակբայական: Վերջինս իր մեջ ներառում է անորոշ դերբայի բացառական և գործիական հոլովները: Այս ցանկում բացակայում է վաղակատար դերբայը: Սակայն հեղինակը նշում է, որ «նոր սերունդն» արդեն տարբերակում է վաղակատար և հարակատար դերբայները: Դերբայների օրինակներ (*ա* և *է* խոնարհման). անորոշ - *աղալ*, *ընգնեւէլ*, անկատար - *աղաս* կամ *աղալի*, *ընգնեւէ/իս* կամ *ընգնեւէլի*, հարակատար - *աղացած*, *ընգնծ*, ենթակայական *աղացող*, *ընգննող*, մակբայական - *աղալով*, *ընգննիլէն* կամ *ընգննիլով*, ապառնի - *աղա(լ)*, *ընգնեւէ/ի(լ)*: Վերջինս ձևով նման է խոսվածքի անորոշ դերբային:

Բայի խոնարհման յուրահատկություններից մեկն այն է, որ «....ըղձական եղանակի անցյալի ապառնին առնվում է իբրև անցյալի անկատար, որ նշանակում է, թե գրաբարյան անցյալի անկատարը պահվում է անփոփոխ»: Այսպես. *քոյ ըսիք* «դու ասում էիր», *Համբոն գրնէր* «Համբոն գնում էր» [նույնը, էջ 123]:

Հիմնական բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար, ապառնի, հարակատար դերբայներով և օժանդակ բայով: Օրինակ՝ *Տրդին տարած ըմ, ցաքի տակին դրրած...* Նու ը («վերցնում է») *խընէցին գըցէլի, թըռցընէլի, բէրէլի էտ տըղին տալի* [նույնը, էջ 157]:

Կոզենի բարբառում «Պակասող ժամանակները լրացվում են *ինէլ/լն* բայով» [նույնը, էջ 158]: Փաստորեն տվյալ դեպքում խոսքը

վերաբերում է բայի երկրորդական բաղադրյալ ժամանակներին: Ապա Ռ. Բաղրամյանը գրում է. «Բաղադրյալ ձևերը կազմվում են **անկատար** կամ **հարակատար** դերբայներից և օժանդակ բայից կամ *ինիլ//նիլ* «լինել» բայից» (ընդգծումները մերն են - Ժ.Մ.) [նույնը, էջ 159]: Անհասկանալի է, թե ինչու է հեղինակը երկրորդ դեպքում այլ բառաձևեր բերում՝ որպես «*լինել*» օժանդակ բայի բարբառային տարբերակներ: Ինչևէ: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ բաղադրյալ երկրորդական ժամանակները կազմվում են խոնարհվող բայի անկատար կամ հարակատար դերբայներով և *լինել* բայի խոնարհված ձևերով:

Կոդեքնի բարբառում *ինիլ* «լինել»-ի դերբայական ձևերն են՝ անկատ. – *ինիս//ըլիս, ինէլի*, ապառ. – *ինի*, հարակ. – (*ի*)*լւծ//ըլւծ//լւծ*, ենթ. – *ինօղ*, մակբայական – *ինէլօվ, ինէլէն*: Իսկ *եմ* օժանդակ բայի սահմանականի ներկան է՝ – *ըմ, ըս, ի, ընք, ըք, ըն*. անցյալը՝ *էլի, էլիր, էր, էլինք, էլիք, էլին*:

Հեղինակը մեզ հետաքրքրող խնդրին առնչվող ուրիշ ոչինչ չունի վկայած: Սակայն աշխատության մեջ բերված օրինակներից և բարբառային տեքստերից հստակ կարող ենք առանձնացնել երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը: Այսպես. *Առտընէն ձիյանի յէմը վէր տալիս ինիս* («...որ տալիս լինես»): *էտ յէզան միսը համա յերկու դօվ ի վէր նուլիս ըլւծ* («...երկու դն է վերցնելիս եղել»): *էն մարդը օրական գընալիս իլւծ, տապըլ ընօլիս* («...գընալիս (է) եղել, ձուկ բռնելիս»): *Հինգ տապիկ բէրէլիս, ամաքին մինը տալիս ըլւծ*: («Հինգ ձուկ բերելիս ամեն մեկին մեկը տալիս (է) եղել»): *Աճկերը հըրէն պատըմը դըրած ըլւծ* («...դրած (է) եղել»): *Յէրթած ըմ լւծ* («Գնալիս եմ եղել») [Բաղրամյան, 1961, էջ 159-160]: Սրանք բոլորը տրված են բաղադրյալ ժամանակների անվան տակ, գլխավոր բաղադրյալ ժամանակներին զուգահեռ՝ առանց լրացուցիչ բացատրության: Հարկ է նշել, որ այս նույն օրինակները կրկնվում են նաև Ռ. Բաղրամյանի աշխատության բարբառային տեքստերում:

Այդ տեքստերից այլ օրինակներ. *Կընաս ինի սանէլի մի շէն* («Գնալիս (է) լինում, տեսնում մի գյուղ»): *Էտ կընիկը թաքավերի յէդը կընիկը լւնծ, տըղին մօրթած, գըլօխը քսրվանի բախանէլըմը դըրած լւնծ* («...տղին մօրթած, գլուխը ... դրած (է) եղել») [նույնը, էջ 247]:

Ինչպես բերված օրինակներից է երևում, և նաև Ռ. Բաղրամյանն է վկայում, գրեթե միշտ բացակայում են *եւ*՝ օժանդակ բայի խոնարհված ձևերը: Դրանք գործառնում են հատկապես հարադիր բայերի հետ կամ էլ խոնարհված բայի շրջուն ձևերում, այսինքն՝ երբ օժանդակ բայը նախադաս դիրքում պետք է լինի:

Դատելով խնդրո առարկա հարցին վերաբերող օրինակների սակավությունից՝ կարելի է ենթադրել, որ երկրորդական բաղադրյալ ժամանակներն արդեն իսկ քիչ գործածական էին այս բարբառում: Ռ. Բաղրամյանի՝ բարբառն ուսումնասիրելու պահին գուցե դրանք աստիճանաբար անհետանալու միտում ունեին:

Կոզենի խոսվածքի (բարբառի) երկրորդական բաղադրյալ ժամանակների ժխտականը, ինչպես և բաղադրյալ մյուս՝ գլխավոր ժամանակներինը, դարձյալ կազմվում է չ- մասնիկի օգնությամբ, որը կցվում է *եւ*՝ օժանդակ բային: Այսպես. *Յէրթած չըմ լւնծ, դըրած չի լւնծ, կընաս չի ինի* և այլն: Հիշեցնենք, որ այս դեպքում չ- ժխտական մասնիկի հետ *եւ*՝ օժանդակ բայը նախադաս է և պարտադիր գործառնում է:

Մեր ուսումնասիրության՝ արևելյան խմբակցության հաջորդ՝ Շամախիի բարբառի մասին Հ. Աճառյանն իր «Հայ բարբառագիտութիւն» աշխատության մեջ գրում է, որ դրանով խոսում են Շամախի քաղաքի մեջ և նրա մոտակա մի քանի գյուղերում: Նա նշում է նաև, որ այն պատկանում է ՌԻՄ ճյուղին և «...կը կազմե միջին օղակ մը Ղարաբաղի և Զուղայի բարբառներուն» [Աճառեան, էջ 76]: Հեղինակը, ցավոք, հիշյալ աշխատությունում բարբառային այս միավորի հնչյունական համակարգին վերաբերող որոշ տվյալներ է միայն ներկայացրել: Բայական համակարգի որևէ քննություն չկա: Սույն բարբառախոս տարածքը, Աճառյանի վկայությամբ, գտնվում է Աղվանքի մեջ [նույնը, էջ 25]:

Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ բարբառիս մեջ մտնում են Շամախիի և Քյարքյանջի խոսվածքները [*Ջահուկյան*, էջ 136]: Բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմությամբ Շամախիի խոսվածքը պատկանում է ՌԻՄ ճյուղին, իսկ Քյարքյանջինը՝ ԼԻՄ-ին:

«Շամախիի բարբառը» գրքում Ռ. Բաղրամյանն ուսումնասիրել է այդ խոսվածքով խոսող Շամախի քաղաքի և շրջակա գյուղերի՝ Մեյսարիի, Մադրասայի, Քյալախանիի, Սադյանի, Շիրվանզադեի, Միրիշենի, Քյարքյանջի ենթախոսվածքները (ինչպես և այլ դեպքերում, պայմանականորեն ենք «ենթախոսվածք» անվանում): Հեղինակը վկայում է, որ Շիրվանզադե գյուղում նախկինում հիմնականում խոսել են պարսկահայ բարբառով, իսկ այն ուսումնասիրելու պահին այդտեղ ավելի շատ իշխում էր գրական արևելահայերենը կամ Շամախիի ու Ղարաբաղի բարբառներին մոտ մի խոսվածք [*Բաղրամյան*, 1964, էջ 9,10]:

Խնդրո առարկա բարբառում *եմ* օժանդակ բայի սահմանականի ներկա ժամանակն է՝ *ա/էմ, էս, ա, ա/էնք, էք, ա/էն*, իսկ անցյալը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Այստեղ գործառում են անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները: Բացակայում է ժխտական դերբայը:

Իր այս աշխատությունում, ի տարբերություն նախորդի, Ռ. Բաղրամյանն ունի «Երկրորդական բաղադրյալ ձևեր» վերտառությամբ բաժինը: Հեղինակը գրում է, որ դրանք «...կազմվում են անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար դերբայներից, *էական* բայից կամ *իլիլ* «լինել» բայից» [*նույնը*, էջ169]: Սակայն վաղակատարով ժամանակաձևեր աշխատանքում չգտանք: Ստորև նույնությամբ ներկայացնում ենք աշխատության երկրորդական ժամանակներով խոնարհված բայերը՝ գրական թարգմանություններով հանդերձ. *տալիս ա իլիմ* «տալիս է լինում», *կսլոմ յս իլոմ* «գալու է լինում, գալիս է լինում», *յէկած կիլէր* «եկած կլիներ», *կիրած կամ* «գրած կամ, երբևէ գրել եմ», *տոմ բիդի կարթացած իլիր* (Մեյսարի) «դու պիտի կարդացած լինեիր», *յէս ալ բիդի կարթացած չիլի* (Մյ.) «ես էլ պիտի կարդացած չլինեի», *բիդի կարդացած չիլի*

(Մաղյան) «պիտի կարդացած չլինեի», *տու յէլ բըղէր կարթացած չիլիր* (Քյարքյանց) «դու էլ պիտի կարդացած չլինեիր», *յէս էլ բըղէր կարթացած չիլի* (Քյ.) «ես էլ պիտի կարդացած չլինեի», *նա քէզ հէսնէ պսն ասած կա՞* (Քյար.) «նա քէզ այդպիսի բան ասած կա՞», *կսնլիս ա հիլիս* «գալիս է լինում» (Սղ.), *ճընանչէլիս կիլի* «ճանաչելիս կլինի, կարող է ճանաչել» (Մեյ.) [*նույնը*, էջ 169-170]:

Վերոհիշյալ աշխատության բարբառային տեքստերի բաժնում երկրորդական հարադրական ժամանակների գործառության միայն մեկ օրինակ գտանք. ...*կօլը ծանդըռած ա ընըմ* «կովը (ծանդընէլ «հղիանալ») հղիացած է լինում» (Մաղրասա) [նույնը, էջ 276]:

Ինչպես տեսնում ենք, խոնարհված բայերը չեզոք ու ներգործական սեռերի են: Իհարկե, չենք բացառում, որ կրավորական և պատճառական բայաձևերով նույնպես երկրորդական բաղադրյալ ժամանակներ կարող են կազմվել: Ժխտականը, ինչպես և այլ բարբառային միավորներում, կազմվում է օժանդակ բայի վրա դրվող չմասնիկի օգնությամբ:

Ուսումնասիրելով խնդրո առարկա ժամանակաձևերը բարբառային այս միավորում՝ դրանց համար նոր ձևակերպում կարելի է տալ. **Շամախիի բարբառում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են խոնարհվող բայի որևէ դերբայի (անորոշից բացի) և օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ:** Տվյալ դեպքում որպես օժանդակ բայեր հանդես են եկել ոչ միայն *լինէլ-ը* (*հիլի*), այլ նաև *կամ-ը* և *պիտէլ-ը*: Ի դեպ, վերջինս բարբառում սահմանափակ կիրառություն ունի՝ *բըղէր* (եզ. 3-րդ դեմք) բառաձևով միայն, և դրա կամ *պիտի-ի* օգնությամբ հարկադրական եղանակն է կազմվում: Նրանց զուգահեռ՝ նույն նախադասության մեջ կարող է նաև *լինէլ-ը* գործառել՝ դարձյալ որպես օժանդակ բայ: Նշված երկու օժանդակ բայերի՝ *կամ*, *պիտէլ*, առկայությամբ երկրորդականները նմանվում են Ղարաբաղի բարբառի՝ բայական այդօրինակ կառույցներին (օր. *յէս քսցած կամ, յէս քսցած պիտի* և այլն):

Բուրդուրի բարբառով «....խոսել է Արևմտյան Անատոլիայի Բուրդուր քաղաքի հայ համայնքը՝ մինչև 1915թ. Մեծ եղեռնը»: Բնակչության թիվը այդ ժամանակ եղել է մոտ 2500 հոգի [*Մկրտչյան*, էջ 5, 6]: Հ. Աճառյանի վկայությամբ՝ բուրդուրցիները «գաղթել են Ղարաբաղից ժե դարում կամ ավելի ուշ» և իրենց լեզուն պահել են «անկորուստ» [*Աճառյան*, 1911, էջ 61]:

Բարբառը միահատկանիշ դասակարգմամբ պատկանում է ՈՒՄՃյուղին: Բազմահատկանիշ դասակարգմամբ այն ունի միայն մեկ՝ Բուրդուրի խոսվածքը և մտնում է արևելյան խմբակցության մեջ [*Ջահուկյան*, էջ 136]:

Բարբառումս գործառում են հայերենին ընդհանրապես հատուկ հետևյալ դերբայները. անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ըղձական կամ ժխտման: Եղանակային ձևերի կազմությանը, ինչպես և այլ բարբառային միավորներում, չի մասնակցում միայն անորոշ դերբայը: Հարկ է նշել, որ հայ քերականագիտության մեջ ընթացական (համակատար) դերբայը նախկինում համարում էին անկատարի տարբերակը՝ *-ուս* վերջավորության կողքին նաև *-իս* վերջավորությամբ բայաձևը, որը առանձին դերբայ չէր համարվում: Այդ պատճառով շատ հեղինակների աշխատանքներում այն չի հիշատակվում:

Երկրորդական բաղադրյալ ժամանակները, ըստ Ն. Մկրտչյանի, կազմվում են անկատար, ապառնի, հարակատար դերբայներով ու «լինել» բայի խոնարհված ձևերով: Այսպես. *նէլիս ըմ ընուս*, «գնալիս եմ լինում», *նէլրս ըմ ընուս իղի* «գնալիս էի լինում», *նէլու վէմ ընուս* «գնալու եմ լինում», *նէլու վի ընուլու* «գնալու էի լինելու» (օժանդակ *եմ* բայի խոնարհված ձևերի վրա, ինչպես Ղարաբաղի բարբառային միավորներում, ավելանում է *վ-* բաղաձայնը՝ հորանջից խուսափելու համար), *նէցած ըմ իլած* «գնացած եմ եղել», *նէցած ըմ ընուս* «գնացած եմ լինում», *պէտք ա նէցած ընէմ* «պիտի գնացած լինեմ», *պէտք ա նէցած ինիմ իղի* «պիտի գնացած լինեի»:

Ըստ Ն. Մկրտչյանի՝ *իդի*-ն փոխառյալ մասնիկ է, որի միջոցով «անկատարի իմաստ է դրսևորվում»: Խնդրո առարկա ժամանակների վերաբերյալ հեղինակը որևէ այլ բացատրություն չի տալիս [*Մկրտչյան*, էջ 158]: Վերը բերված օրինակներում *զնալ* բայը խոնարհված է միայն սահմանական և հարկադրական եղանակներով: Սակայն, ծանոթանալով բայի խոնարհման ընդհանուր համակարգին, դժվար չէ նման ձևով կազմել նաև ըղձական ու պայմանական եղանակների երկրորդական բաղադրյալ ժամանակները: Օրինակ՝ ըղձ. *նէլու ինէմ* «զնալու լինեմ», *նէլու ինէմ իդի* «զնալու լինեի», պայմ. *նէլու կինէմ, նէլու կինէմ իդի* «զնալու կլինեի»:

Բուրդուրի բարբառում թուրքերենից փոխառյալ *իդի* մասնիկը գործառում է սահմանական, պայմանական, ըղձական և հարկադրական եղանակների՝ անցյալի բաղադրյալ բոլոր ժամանակաձևերում: Ի դեպ, հիշյալ անցյալ ժամանակները ունեն առանց *իդի* մասնիկի զուգաձևեր նույնպես (*քիցած ի և քիցած ըմ իդի*): Այսինքն՝ այդ փոխառյալ մասնիկը թուրքերենից Բուրդուրի խոսակցական լեզու է թափանցել ավելի ուշ շրջանում:

Արևելյան խմբակցության Արդվին-Թբիլիսիի բարբառի խոսվածքներն են Թբիլիսիի և Արդվինի բարբառային միավորները [*Ջահուկյան*, էջ 136]:

Սայաթ-Նովայի՝ մեր օրերը հասած երգերի և Գ. Սունդուկյանի պիեսների շնորհիվ լեզվական առատ նյութ կա Թբիլիսիի խոսվածքն ուսումնասիրելու համար: Նախ՝ ասենք, որ բայը բարբառային այս միավորում ներկա ժամանակում (սահմ. եղ.) խոնարհվում է ՈՒՄ-ով կամ ԿՈՒ մասնիկով: Վերջինիս առկայությունը ՈՒՄ ճյուղի կողքին, ինչպես և այլ խոսվածքներում ենք նման երևույթի հանդիպում, անշուշտ, պայմանավորված է Արևմտյան Հայաստանից Թբիլիսի ներգաղթած բարբառախոսների լեզվից տվյալ խոսվածք թափանցելու փաստով:

Երկրորդական հարադիր կազմություններով ժամանակներ գտնում ենք և՛ Գ. Սունդուկյանի պիեսներում, և՛ Սայաթ-Նովայի խաղերում (ավելի սակավ):

Գ. Սունդուկյանի երկերի լեզվի բարբառային կառուցվածքին է անդրադարձել Ա. Քոչոյանն իր ծավալուն ատենախոսության մեջ: Ըստ հեղինակի՝ Թբիլիսիի խոսվածքում բայն ունի երկու լծորդություն՝ *ա* և *ի*: Այստեղ գործառում են անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման կամ ըղձական դերբայները (իրենց կառուցվածքով նման են գրական արևելահայերենի համապատասխան դերբայներին, միայն խոսվածքումս *ի* խոնարհման բայերի անորոշի և վաղակատարի վերջավորությունը *-իլ է*) [*Քոչոյան*, էջ 114-120]:

Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *իմ, իս, է, ինք, իք, ին*, իսկ անցյալինը՝ *էի, էիր, էր, էինք, էիք, էին*: Հարկ է նշել, որ Սայաթ-Նովան իր երգերում *ես* օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքում *է*-ի փոխարեն գործածում է նաև *ա* բայաձևը՝ միայն բանաստեղծական հանգը պահելու համար:

Նախքան բայի խոնարհման ընդհանուր պատկերը ներկայացնելը Ա. Քոչոյանը գրում է, որ Գ. Սունդուկյանի երկերում առկա են երկրորդական բաղադրյալ ժամանակներ, և դրանք կազմվում են *ըլիլ*-ի՝ որպես օժանդակ բայի թեքված ձևերի օգնությամբ: Օրինակ. *Ըլէլու՝ բան է, վուր ինչրու էտի, նա մըտէն ըլի գըցի գըլուխը*: *Հէնց գիղէնաս աստղիրը հիտըդ մասլահաթ ըլին անում*: *Էլա ծ բան է, վուր զանդուկը տակէն ըլին կօտրի* [նույնը, էջ 122]: Հիշյալ ժամանակաձևերի վերաբերյալ ատենախոսության մեջ այլ նկատառումներ չկան:

Գ. Սունդուկյանի ստեղծագործություններից մենք խնդրո առարկա բայաձևերով նույնպես օրինակներ ենք առանձնացրել: Այսպես. *Էս էլ վուր առանց փուղ չըլի ճարվում* («ճարվելիս չլինի»), *օ՛վ արժանի կօնիր միգ* [Հայ դրամատուրգիա, Պեպո, էջ 26]: *Հէնց գիղէնաս աստղիրը հիղըդ մասլահաթ ըլին անում* («անելիս լինեն»)[նույնը, էջ 27]...*կօսիս շահ-զաղի վուրթիք ունենանք մէձքած* («ունենք մեծացրած») [նույնը, էջ 47]: *Փուղ ու բաժինք էլ էնքան կու տան, վուր ջեր օջովու էլ չըլին տըվի* («տված չլինեն») [Սունդուկյան, 1984, *Խաթաբալա*, էջ 63]: ...*կընիկըս մընում կուլի* («մնալիս կլինի»), *ամա մէ քիչ պրավաժատ կօնիմ* [նույնը, էջ 64]:

էս չախըն ի նչ **կուլիս շինում** («ինչ ես շինելիս լինում, շինում») *դուն էստի* [նույնը, էջ 68]: *Քու արիվը, իմացիլ կուլի* («իմացած կլինի») *վուր փուղ շատ ունիմ ...* [նույնը, էջ 78]: *Ստէփան Դանէլիչը, էն միլիօնէրու տէրը, ախչիկ ըլի տալի...* («տալու լինի») [նույնը, *Էլի մեկ գոհ*, էջ 323]:

Բերված օրինակները բավական են՝ եզրակացնելու համար, որ Գ. Սունդուկյանի ստեղծագործելու ժամանակաշրջանում բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը բավականին կենսունակ են եղել Թբիլիսիի խոսվածքում: Դրանք կազմվում են լինել-ի և ունենալ-ի՝ որպես օժանդակ բայերի խոնարհված ձևերով և խոնարհվող բայի որևէ դերբայով: Ի դեպ, ի տարբերություն արևելյան խմբակցության այլ բարբառային միավորների՝ Թբիլիսիի խոսվածքում խնդրո առարկա հարադրական կառույցներում հաճախ են հանդիպում անկատար և վաղակատար դերբայները: Իսկ ժխտական ձևերը դարձյալ կազմվում են չ- մասնիկով, որը դրվում է օժանդակ բայի վրա (*չունենանք մէձրած*):

18-րդ դ. ստեղծագործած Սայաթ-Նովայի խաղերում հանդիպում են հարադիր կազմությամբ երկրորդական ժամանակներ, սակայն դրանք ավելի սակավաթիվ են: Պատճառը, թերևս, այն է, որ բայական այդ կազմությունները հեղինակի ապրած ժամանակաշրջանում դեռևս նոր էին մտնում կիրառության մեջ: Օրինակներ. *Քու դըռանըտ նընգած ըլիմ* (ըդձ. ապառնի), օվ տէսնէ, ասէ՛ տուսաղ իմ. [Սայաթ-Նովա, 1987, էջ 22]: *Տարին տասներկու ամիս մագիրըտ հուսած կուլի*. (պայմ. ապառն.) [նույնը, էջ 27]: *Հափիլ ըլիս գար-գարբաբըն խաս ալօվ* («հագած լինես...», ըդձ. ապառն.) [նույնը, էջ 32]: *Արտասունքըս արուն շինէցիր, խիլքըս գըլխէս ունիմ տաքած* (սահմ. հարակ.) [նույնը, էջ 34]: Հատկանշական է, որ խոսվածքումս խնդրո առարկա կառույցներում օժանդակ բայի դեր է կատարում նաև *ունենալ*-ը:

Արևելյան խմբակցության Թբիլիսիի բարբառի Արդվինի խոսվածքին նվիրված իր ատենախոսությունում («Արդվինի բարբառը») Ս. Ալավերդյանը գրում է, որ այն «...տարածված է եղել պատմական Հայաստանի Տայոց գավառում»: Մինչև 1878 թ. դրանով խոսել

են Արդվին քաղաքում, Արդանուշում, Տանձոտ, Նորաշեն գյուղերում, ինչպես նաև Շավշետի շրջանի մի քանի այլ գյուղերում: Իսկ այնուհետև բարբառակիրների մի զգալի մասը գաղթել և բնակություն է հաստատել Արդահանում, Սև ծովի ափի մի շարք ռուսական բնակավայրերում [*Ալավերդյան*, էջ1]:

Արդվինի խոսվածքի բայական համակարգում գերակշռում է **ԼԻՄ** ճյուղի խոնարհումը: Սակայն երբեմն սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են **ԿՈՒ** մասնիկով, ինչպես և Թբիլիսիի խոսվածքում: Այսպես՝ սահմ. ներկա - *կու խօսիմ*, *կու խօսիս*, *կու խօսի* և այլն [նույնը, էջ 125]:

Բարբառային այս միավորում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են որևէ բայի անկատար, ապառնի, հարակատար դերբայներով և *ըլնէլ* «լինել» բայի խոնարհված ձևերով: Ս. Ալավերդյանի աշխատանքում բերված է *խօսէլ* բայի խոնարհումը հիշյալ երկրորդական ժամանակաձևերի բոլոր եղանակներով (ըղձականից բացի), նույնիսկ հրամայականով: Ներկայացնենք տրված ժամանակներով խոնարհված բայի միայն եզակի առաջին դեմքը՝ *խօսէլիս ըլնեմ* (սահմ. ներկա), *խօսէլիս ըլնէլ* (սահմ. անց. անկատ.), *խօսէլու ըլնեմ* (սահմ. ապառնի), *խօսէլու ըլնէլ* (անց. ապառնի), *խօսած ըլնեմ* (սահմ. հարակ.), *խօսած ըլնէլ* (անց. հարակ.), *խօսած էղա* (անց. կատար.), *կու խօսած ըլնեմ* (պայմ. ապառնի), *կու խօսած ըլնէլ* (պայմ. անց. ապառնի), *տի խօսած ըլնեմ* (հարկ. ապառնի), *տի խօսած ըլնէլ* (հարկ.անց. ապառնի), *խօսած էղի ը/ց* (հրամայական եղ.): Հրամայականի հոգնակի թվի համար Ս. Ալավերդյանը գրում է, որ այն գործածական չի եղել [*Ալավերդյան*, էջ 150- 152]: Ժխտական խոնարհման օրինակներ՝ *խօսէլիս չըլնեմ*, *կու խօսած չըլնեմ*, *տի խօսած չըլնեմ*:

Մեր ուսումնասիրած հաջորդ բարբառը Հավարիկինն է՝ միայն մեկ՝ Հավարիկի խոսվածքով [*Ջահուկյան*, էջ136]: Ընդունված է նաև հայերեն այդ տարբերակը կոչել Արեշի բարբառ: Ըստ Ռ. Բաղրամյանի, օրինակ, քանի որ Արեշ գավառի վարչական կենտրոնը միշտ եղել է Արեշը, ուրեմն բարբառն էլ ճիշտ է կոչել դրա անունով, մանավանդ, որ գավառի բոլոր 7 գյուղերը խոսում են

միմյանցից չնչին տարբերություններ ունեցող ենթախոսվածքներով: Նույն կարծիքին է նաև Ա. Լուսենցը [*Բաղրամյան*, 1961, էջ 6. *Հուսենց*, էջ 9]: Վերջինս, բնիկ արեշցի, մայրենի բարբառին նվիրված գիրք ունի հրատարակած: Հեղինակի վկայությամբ՝ Արեշի գավառի բնակչության թիվը 1918թ. դրությամբ 10 հազար էր: Այդ նույն ժամանակ գավառը մտնում էր Ելիզավետպոլի, այսինքն Գանձակի նահանգի մեջ, որը ներկայիս Ադրբեջանի տարածքում է գտնվում: Անցյալ դարի կեսերից արեշցիներ են տեղափոխվել ու վերաբնակվել Երևանի Նոր Արեշ թաղամասում: Ռուսաստանի Կրասնոդարի մարզի Անապայի շրջանի Պավլովկա, Վառվառովկա, Սուպցեխ, Հայկաձոր գյուղերում և Անապա քաղաքում նույնպես նախկին արեշցիներ են ապրում [*Հուսենց*, էջ 7]: Ներկա պահին, անշուշտ, ողջ Արեշ գավառը, Ադրբեջանի տարածքում գտնվող մյուս հայկական բնակավայրերի նման, հայաթափված է:

Հավարիկի (Արեշի) խոսվածքում (կամ բարբառում) բայը սահմանականի ներկա ժամանակում խոնարհվում է *ԼԻՄ* և *ՈԻՄ* ճյուղի բարբառների նմանությամբ: Բարբառիս դերբայներն են՝ անորոշ – *կըտանէլ* «գտնել», *մօտանալ*, անկատար – *կըտանէլիս*// *կըտանէլի*// *կըտանէլըմ*, *մօտանալըս*// *մօտանալը*// *մօտանալըմ*, հարակատ. – *կըտած*, *մօտացած*, ապառ. – *կըտանէլա* // *կըտանէլացուկ*, *մօտանէլա*, *մօտանէլացուկ*, ենթ. – *կըտանօղ*, *մօտացող*// *մօտանող*: Այս բարբառային միավորում, ինչպես և Կոզենի խոսվածքում, բացակայում է վաղակատար դերբայը:

Սահմանականի ներկա ժամանակով *եմ* օժանդակ բայի խոնարհումը՝ *ըմ*, *ըս*, *ի*, *անք*, *աք*, *ան*. անցյալով *էյ*, *էյր*, *էր*, *էյնք*, *էյք*, *էյն*:

Ուսումնասիրելով սույն բարբառի բայական համակարգը Ա. Լուսենցի աշխատության մեջ՝ երկրորդական բաղադրյալ ժամանակներին վերաբերող ոչ մի օրինակ կամ ակնարկ չգտանք: Դրանք չեն հանդիպում նաև աշխատության բարբառային տեքստերում: Նույն հեղինակի՝ ըստ ՀԲԱ (Հայերենի բարբառագիտական ատլաս) ծրագիր-հարցարանի լրացրած «Հավարիկի բարբառը» աշխատանքում էլ չկա խնդրո առարկա ժամանակին առնչվող որևէ

օրինակ (հիշեցնենք, որ ՀԲԱ ծրագրում ներառված չեն երկրորդական բաղադրյալ ժամանակները):

Իսկ Գրիգոր Տեր-Պողոսյանի՝ սույն բարբառին նվիրված հոդվածում հեղինակը փաստում է *ինչ* օժանդակ բայով կառույցի առկայությունը. «Ամեն բայի դերբայները կցում են *ինչ* օժանդակ բայի կատարեալի արմատին և նրա գրաբարաձև խոնարհման կարգով կազմում են այլ ևս 7 ձև՝ 3 յարակատար, 2 պայմանական և 2 ըղձական ...» [*Տեր-Պողոսեան*, էջ 168]: Հեղինակը նաև մի այլ հետաքրքիր դիտարկում ունի խնդրո առարկա հարցի վերաբերյալ: Նա գրում է, որ շատ ժամանակաձևեր՝ անցյալ և ապառնի, իրենց «...**նրբութիւններն** (ընդգծումը մերն է - Ժ.Մ.) արտահայտում են բարդ բաղադրութեամբ... դերբայական ձևը՝ կցուած *եւ* օժանդակ բային, ընդունում է այլև միւս օժանդակ բայի՝ *ինչ*, ոչ միայն կանոնավոր խոնարհումը, այլև բարդ և բարդ բաղադրյալ ձևերը» [նույն տեղում]: Բերում է օրինակ՝ *գորեչիս եւ լինում*: Հոդվածում բերված բարբառային սակավ քանակի տեքստերում, սակայն, չգտանք հարադիր կազմությամբ որևէ երկրորդական ժամանակաձև:

Վերը շարադրվածը, ինչպես նաև մինչ այժմ կատարած մեր ուսումնասիրությունները ի մի բերելով՝ փաստում ենք, որ հայերենի արևելյան խմբակցության գրեթե բոլոր բարբառներին հատուկ է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի գործառությունը: Դրանք հիմնականում կազմվում են խոնարհվող բայի հարակատար, ապառնի, ընթացական (համակատար), անկատար, նաև վաղակատար (Թբիլիսիի խավ.) դերբայներով: Որպես օժանդակ բայ մշտապես ծառայում է *լինել*-ը, որոշ դեպքերում՝ նաև *կամ*-ը, *պիտեւ*-ը (վերջին երկուսը՝ ներկա և անցյալ ժամանակներով): *Ունեւ*-ը (*ունենալ*) միայն Արդվին-Թբիլիսիի բարբառում է հանդիպում, որը հայերենի արևմտյան տարբերակներից այս բարբառ ներթափանցելու հետևանք է: Արդվինի խոսվածքում երկրորդական ժամանակները հանդես են գալիս նաև հրամայական եղանակով: Սա հազվադեպ է հանդիպում հայերեն բարբառներում: Պետք է նշել, որ հիշյալ նկարագրական բայաձևերը այսօր էլ կենսունակ են հատկապես Ղարաբաղի և Արարատյան բարբառ-

ներում: Այդ ժամանակաձևերը, ընդհանրապես, ի հայտ են գալիս ավելի ուշ շրջանում՝ տվյալ բայական համակարգի պատմական զարգացման ընթացքում առաջացած կերպաժամանակային բացերը լրացնելու պահանջով:

Օգտագործված գրականություն

1. Ալավերդյան Ս.Ա., Արդվինի բարբառը, թեկն. ատենախոսություն, Ե., 1970:
2. Աճառեան Հր., Հայ բարբառագիտութիւն, Մոսկուա - Նոր-Նախիջեւան, 1911:
3. Բաղրամյան Ռ. Հ., Կոզենի բարբառը, Ե., 1961:
4. Բաղրամյան Ռ. Հ., Շամախիի բարբառը, Ե., 1964:
5. Լուսենց Ա. Ղ., Արեշի բարբառը, Ե., 1982:
6. Հայ դրամատուրգիա, Գ. Սունդուկյան, Պեպո, էջ 18- 84, Ե., 1985:
7. Մկրտչյան Ն., Բուրդուրի բարբառը, Ե., 1971:
8. Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
9. Սունդուկյան Գ., Երկեր, Ե., 1984:
10. Տեր-Պողոսեան Գր., Հաւարիկի բարբառը, Բանբեր, էջմ., գիտ. ինստիտուտի, 1921-1922:
11. Քոչոյան Ա. Կ., Թբիլիսիի բարբառի կառուցվածքային առանձնահատկությունների արտացոլումը Գ. Սունդուկյանի երկերում, թեկն. ատենախոսություն, Ե., 1958:

Микаелян Жанна—Второстепенные составные временные формы глагола в некоторых армянских диалектах восточной группы. — В статье изучаются особенности *второстепенных составных временных форм* глагола в крзенском, шамахинском, бурдурском, ардвин-

тбилисском и аварикском диалектах. Во всех этих диалектах данные времена образуются при помощи вспомогательного глагола *ɣhɛɛɭ* “есть, быть” и соответствующего деепричастия спрягаемого глагола. В шамахинском диалекте в роли вспомогательного глагола так же функционируют *ɣɔɔɭ* и *ɣɣhɛɛɭ*, а в тбилисском говоре – глагол *nɛɛɛɭ*.

Второстепенные составные временные формы характерны для повествовательного стиля речи и передают оттенок предположительности, недостоверности сказанного. В ардинском говоре во *второстепенных составных временных формах* глагола функционирует и повелительное наклонение, которое очень редко встречается в таких диалектных конструкциях. Надо отметить, что эти времена особенно продуктивны в араратском и в карабахском диалектах по сей день.

ԳԼՈՒԽ Ե. ԶՈՒԳԱԴՐԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ
ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ*

Մկրտչյան Գարիկ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հայ բարբառագիտության զարգացման հեռանկարում այսօր կարևոր նշանակություն է ստանում հայերենի առանձին բարբառների ու միջին հայերենի զուգադրահամադրումը: Հայերենի բազմաթիվ բարբառների ամբողջական կազմավորման համայնապատկերը լեզվական համապատասխան դրսևորումներով տեսանելի է հենց հայերենի զարգացման միջինհայերենյան շրջանում: Սույն ուսումնասիրությամբ դիտարկվում են Մշո բարբառի ու միջին հայերենի հոլովումների առանձնահատկությունները՝ ընդհանրությունները և տարբերությունները:

Միջին հայերենի և Մշո բարբառի անվանական հոլովումներն աչքի են ընկնում բազմաձևությամբ: Ըստ սեռական-տրական հոլովաձևի՝ միջին հայերենի համար ընդունվում են արտաքին թեքման 8 տիպ՝ *h* [ազգ-ազգի], *n* [աթոռ-աթոռոյ], *ni* [այգի-այգու], *w* [Ադամ-Ադամայ], *wn* [երիկ-երկան], *wn* [գալուստ-գալստեան], *nɔ* [տիկին-տիկնոջ], *wn* [ցորեկ-ցորեկվան], իսկ ներքին թեքման 6 տիպ՝ *w* [արեգակն-արեգական], *h* [անձն-անձին], *h* [դուստր-դստեր], *o* [եղբայր-եղբոր], *hw* [արին-արեան], *wni* [օր-աւոր] [Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, 1975, էջ 11]:

* «Ձախուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Ե., «Էդիթ» Պրինտ» հրատ., 2013, էջ 215-225:

Ի տարբերություն բոլոր գոյականներն ընդգրկող 14 հոլովումներով ներկայանալի միջին հայերենի՝ Մշո բարբառի համար ընդունելի է կանոնավոր հոլովման 8 տիպ՝ արտաքին՝ *ու, ի, ան, վա, ոչ, ա, ց*, իսկ ներքին՝ *ո* և *ա* հոլովումները: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը Մշո բարբառի համար չի տարբերակում *ա* ներքին հոլովում [Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, 1958, էջ 81]։ այլ լեզվավիճակներում *ա* ներքին թեքման բառերի ճնշող մեծամասնությունը, ինչպես կտեսնենք, Մշո բարբառում ներկայանում են արտաքին թեքման այլ հոլովումներով: Ընդամենը հինգ բառ Մշո բարբառում *ա* ներքին թեքման են՝ պահպանելով ավանդականությունը՝ *տան, շան, սան, ճան, անվան*: Մշո Մկրագոմի խոսվածքում և «Մասնա ծոեր»-ում անուն բառը ներկայանում է նաև *ի* հոլովիչով՝ *անու/ընի*:

Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքն ուսումնասիրած Ք. Մադաթյանը նույնպես տարբերակում է հոլովումների 8 տիպ՝ որոնցից *ի, ու, ան, վա, ոճ, ա* հոլովումներն արտաքին թեքման են, իսկ *ո* և *ա* հոլովումները՝ ներքին: Ալաշկերտի խոսվածքում Ք. Մադաթյանը առանձնացում է *ա* հոլովման տիպը՝ արտաքին և ներքին թեքումներով: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանն իր «Մշո բարբառը» մենագրության մեջ գրում է. «Մի հոլովիչով հոլովվող բառը երբեք այլ հոլովիչ ընդունել չի կարող» [նույն տեղում, էջ 81]՝ որպես բացառություն նշելով տեքր բառը, որը հոլովվում է երկու կերպ՝ սեռականում ունենալով *տեքեր/տեքոր* ձևերը, և -ում ածանց ստացող բառերը, որոնք *ի* հոլովիչով հոլովվելուց բացի, կարող են հոլովվել նաև *-ան* հոլովիչով՝ *կօղօրում-կօղօրումի/ան*: Բարբառագետի այս բնութագրումը կասկած է հարուցում, քանի որ Մշո բարբառին ու նրա խոսվածքներին հոլովումների փոխանցումները՝ մինևնույն բառի տարբեր հոլովական տիպերով ներկայանալը, օրինաչափ դրսևորումներ են, որոնք հիմնավորվում են ոչ միայն տարբեր ժամանակներում ավանդված Մշո բարբառի բանահյուսական ու գեղարվեստական գրականության տվյալներով, այլև Մշո բարբառով հաղորդակցվող մերօրյա բարբառախոսների լեզվական տվյալներով: Խոսքը հատկապես վերաբերում է այն գոյա-

կան անուններին, որոնք ներունակ են զուգահեռ ներկայանալու *ի/ու, ի/ու/ան, ի/ու/ա, վա/ան, ոջ/ի* հոլովումներով:

Ինչպես միջին գրական հայերենում, այնպես էլ Մշո բարբառում *ի* արտաքին հոլովման տիպը ձևային կամ իմաստային հոլովում չի, ներառում է բառերի մեծ խմբեր: Ի հակադրություն սրա՝ Ս. Ն. Բաղդասարյան-Թափալցյանը Մշո բարբառում ամենատարածված հոլովումը համարում է ու-ն՝ առանց հիմնավորելու դրա հանգամանքները: Ինչպես մեր վիճակագրական փաստերն են վկայում, Մշո բարբառում *ի* և *ու* հոլովման տիպերի սահմաններն անկայուն են, դժվար է սպառիչ որոշել նրանցից որևէ մեկի ընդհանրական լինելը: Ըստ մեզ՝ այս երկու հոլովումների գործառական ծանրաբեռնվածությունը հավասարազոր է: Ք. Մադաթյանը «Ալաշկերտի խոսվածքը» ուսումնասիրության մեջ գերակշռողը *ի* հոլովման տիպն է համարում՝ դարձյալ չհիմնավորելով փաստարկը: ՀԲԱ ծրագրով լրացված Մշո բարբառի մի խումբ խոսվածքներ [տետրեր 35, 56, 55, 152, 36, 312], ըստ մեր վիճակագրական քննության, իրարամերժ տվյալներ են տրամադրում *ի* և *ու* հոլովման տիպերի՝ միմյանց նկատմամբ ունեցած գերակշռության հարցում: Առկա նյութի քարտազմամբ վերլուծումը ցույց է տալիս, որ, օրինակ, Մշո Սկրագոմի խոսվածքում *ու* հոլովումն ավելի ընդհանրական է, քան *ի*-ն, իսկ Մշո բարբառի Արծկեի շրջանի Առնջկույս, Հառեն և Արջրա, Բիթլիսի շրջանի Շամիրամ գյուղի խոսվածքների, ՀՀ Արագածի Վարդաբլուր գյուղ գաղթած Խնուս և Մանազկերտ քաղաքների բարբառախոսների լեզվում *ի* հոլովումը զգալի գերակշռություն ունի *ու* հոլովման համեմատությամբ:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ուսումնասիրության հավելված հատվածում բերվում է *ի* հոլովման պատկանող շուրջ 1600 բառանունների ցանկ: Նշված բառերի մի մասը բազմաթիվ գործոններով պայմանավորված չի գործածվում Մշո բարբառում, ինչպես՝ *ազգակ-ազգակի, աղջոյր-աղջոյրի, բազմական-բազմականի, գեղջ-գեղջի, դեկան-դեկանի* և այլն, մի մասը ներկայանում է *ի* հոլովման տիպով, իսկ մի ստվար մասն էլ ներկայանում է ոչ միայն հոլովական *ի*, այլև *ու, ա, ան* տիպերով,

այն է՝ *ագռավի/ու, ահի/ու, աշտարակի/ա, բըթի/ան, բընի/ ու/ ան, գէղի/ու/ան, դէկտեմբերի/ու/ա, կըժի/ան/ու, կօղի/ու/ան* և այլն: Եթէ միջին հայերենում *ի* հոլովման տիպը ձևային և իմաստային տարբերակում չունի, ապա Մշո բարբառի խոսվածքներում, կարելի է ասել, նման տարբերակման միտում կա: Ըստ որի, ձևային տարբերակման հիմունքով կարող ենք կատարել հետևյալ խմբավորումները՝ ա) ու վերջնահանգ ունեցող բառերը՝ *‘առվի, կաղվի, ճճվի, լըվի, ‘առվի, ք* - ագան, -էլիք, -ուօ/տէն, -օղ, -ուգ, -իկ/գ, -անք/կ, -ոււ, -ավօր, -ածու, -էղէն, -արան, -իճ, -օտտ, -վօր, -օծ վերջածանցներով կազմված բառերը, այդ թվում՝ -ագ վերջածանց ունեցող մի քանի բառեր, գ) ա ձայնավորով վերջացող բոլոր բառերը՝ *ագռի, թալվի, գճատի, շուրվի, քէճի, քճվի, շօրվի* և այլն, դ) մայիս, հունիս, հուլիս ամսանունները, իսկ մյուս ամսանունները բացի այս տիպից կարող են ներկայանալ ա արտաքին հոլովմամբ ևս, ե) անձնանունների մեծ մասը՝ *Արուսի, Շօղիգի, Պօղօսի, Նօվիգի, Պէդրօսի, Հօվանէսի* և այլն, գ) Մշո բարբառում և նրա խոսվածքներում *ի* հոլովման են պատկանում ռուսերենից ու գրական լեզվից կատարված նորագույն փոխառությունները՝ բացի ինքնուրույն և ուն-ով վերջացող բառերի՝ *մաշինի, կօլխօգի, տըրակտօրի, դճասարանի, բըրիգադի, կաքինի* և այլն, է) մարմնի մասերի հետևյալ անունները՝ *քրտի, քճրնի, մէճկի, անգաճի, մաղի, ըղունգի, լընդի* և այլն, ը) ազգ, ժողովուրդ նշանակող բառերի մեծ մասը՝ *թուրկի/ու, ‘ռուսի, տաջիգի, պառսիգի, արաբի, աղվանի* և այլն, թ) գրաբարում և վերջնահնչյուն ունեցող բառերի մի մասը՝ *վօղի, քճնի, գճառի/ու, հառսի, թօռի/ու, դճիսցի, աղմի, ասիսի* և այլն, ժ) ձևաիմաստային տարբերակում չունեցող բազմաթիվ բառեր՝ *ախշըրի, քաղքի, օխշըրի, օքուղի, արմաղի, ամնի/ու, արառածի, ավգի, հացի, գճութի, արնի, քարի, հողի* և այլն: Այդուհանդերձ, ինչպես կտեսնենք, *ի* հոլովման տիրույթը մեծանում է, քանի որ մյուս հոլովումներին ենթարկվող բառերը զուգահեռ կարող են ստանալ նաև *ի* թեքույթը:

Այստեղ ուշադրության է արժանի մի կարևոր հանգամանք: Շատ հաճախ վերջնահանգում ձայնավոր ունեցող անձնանունները, սեռական հոլովում, բացի մեզ հայտնի *ի* ընդհանրական հոլովակերտ ունենալուն, զուգահեռ կարող են ստանալ *յ* կիսաձայնը կամ չստանալ, որը, ըստ էության, թեքության գործառույթ է կատարում՝ *գ՛էլօ/յ, Գարօ/յ, Մարօ/յ, Ալօ/յ, Սօւէ/յ* և այլն: Օրինակ՝ *Գարօյ տուն հարսնիկ է, Զալօ ախճիգ փախալ Անդօ տըղի հէղ, Սօւէ ախճիգ կարկըվալ, առալ գ՛ըրկէ տըղին* և այլն: Ըստ Ք. Մադաթյանի՝ այս իրողությունը բացատրելի է հնչյունական հիմունքով. շեշտը մնում է արմատական ձայնավորի վրա, չի անցնում *ի* հոլովչին, վերջինս թույլ է արտասանվում ու փոխարկվում է *յ*-ի [Ք. Մադաթյան, 1985, էջ 75], ապա հեղինակը հավելում է, որ, որպես հատկացուցիչ, այս բառերի *յ*-ն ընկնում է: Այս դեպքում հոլովական իմաստն արտահայտվում է զրո վերջավորությամբ: Անկախ այս բացատրության հիմնավոր կամ ոչ հիմնավոր լինելուց, այս պարագայում կարևոր նշանակություն է ստանում բերված անձնանունների հոլովման տիպի արտահայտման սկզբունքը: Եվ քանի որ հոլովման տեսակները որոշելիս կարևոր է ձևաբանական գործոնը, որոնք թեքությավորվում են համապատասխան մասնիկներով կամ հերթագայությամբ, ապա այս դեպքում *յ*-ն հանդես է գալիս որպես թեքությ: Հետևաբար, հիմք ընդունելով բերված անձնանունների կիրառությունները՝ Մշո բարբառի համար կարելի է տարբերակել *յ* կիսաձայնով արտաքին հոլովական տիպ: Այս իրողությունը, թեև հոլովման տեսակի արտահայտման յուրահատուկ դրսևորում է, բայց նորագոյացություն չի կարելի համարել. այն իր պատմական վկայությունն ունի հայերենի զարգացման ավելի վաղ փուլերից սկսած: Դեռևս գրաբարում ա վերջնահանգն ունեցող մի քանի հատկանուններ՝ *Աննա/Աննայ, Յուղա/ Յուղայ* և այլն, սեռական հոլովում, որպես վերջավորություն, ստանում են *յ* թեքությոթ, իսկ այդօրինակ բառերը ա վերջնահանգն ունենալու պատճառով գրաբարի քերականները ընդգրկում են ա արտաքին հոլովման մեջ [Ա. Աբրահամյան, 1958, էջ 30]: Մշո բարբառում ավելի լայն ընդ-

գրկում է ստացել այս երևույթը՝ ներառելով ա, է, օ վերջնահանգ բներ ունեցող ավելի մեծ թվով անձնանուններ:

Միջին հայերենում տարբերակվում են *n* և *nz* արտաքին հոլովումները, որոնք գործածության հաճախականությամբ հաջորդում են *j* հոլովմանը: Մրանց տարածման ոլորտները իրենց ծավալի զգալի մասով համընկնում են միմյանց [Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, էջ 17]: Ընդգծենք, որ միջին հայերենում *n* և *nz* հոլովման սահմանները հստակեցված չեն, քանի որ անունները կարող են ներկայանալ երկու հոլովման տիպերով էլ: Մշո բարբառում *n* արտաքին հոլովում չի առանձնացվում, քանի որ ոյ>ու հնչյունափոխական անցմամբ միջինհայերենյան այս հոլովումին պատկանող բառերը համալրել են *nz* հոլովման շարքերը: Եթե միջին հայերենում *n* և *nz* հոլովումների բաշխման ոլորտի մեծագույն մասն ընդգրկում է *j* ձայնավորով ավարտվող բառերի շարքը, ապա Մշո բարբառը, բացի *j* ձայնավորով ավարտվող բառերից, ներառում է ձևափոխության տարբերակում չունեցող բառերի մեծ շերտ, ինչպես նաև հոգնակի թվի հոլովումը: Չենք բացառում, որ այս հիմունքով է Ս. Բաղդասարյանը Մշո բարբառում հոլովման *nz* տիպը իշխող համարում:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ուսումնասիրության մեջ բերվում է այս հոլովման շուրջ 700 բառ: Այս ընտրանքը քննելով՝ պետք է ասել, որ այդ բառերը Մշո բարբառում հայտաբերում են որոշակի յուրահատկություններ. Մշո բարբառում միջինհայերենյան *n* հոլովումը ներկայանում է գուգահեռ և՛ ու, և՛ ի տիպերով՝ *ագռաւոյ-ագռավի/ու, գլխոյ-գլխի/ու, գրաստոյ-գլրաստի/ու, դիհոյ-դլի/ու, երեցոյ-երիցու/ի, արծրոյ-արծրի/ու* և այլն, մի չնչին մասը ներկայանում է *j* ընդհանրականով՝ *աթոռոյ-աթօռի, անասնոյ-անասնի, խաղողոյ-խաղօղի, հաւատոյ-հավատի, խորհրդոյ-խօրհրդի* և այլն: Վիճակագրական հաշվարկումները և զուգադրահամեմատումը ցույց են տալիս, որ Մշո բարբառում միջինհայերենյան *n* և *nz* հոլովման տիպերը գտնվում են *j* և *nz* հոլովումների կիրարկման հավասարազոր տիրույթում: Թե՛ միջին հայերենի, թե՛ Մշո բարբառի

համար ընդհանուր է *ի* ձայնավորով ավարտվող բոլոր բառերի՝ հոլովման *ու* տիպին պատկանելը:

Ու հոլովումը, ըստ էության, Մշո բարբառում ձևախմաստային հոլովում է: Կարելի է կատարել հետևյալ ստորաբաժանումները՝ ա) *ի* վերջահանգ ունեցող միավանկ ու բազմավանկ բոլոր բառերը վերցրած ամբողջությամբ, այդ թվում նորագույն փոխառությունները՝ *ճիու, թիու, էզէղէցու, գիինու, օսկու, հօքու, խընամու, հայլու, սինու, մըշէցու, գէղացու, դժլու* և այլն: Բացառություն են կազմում *ի*-ով վերջացող ժամանակ ցույց տվող բառերը՝ *տարվա, կիրազվա, իրէքշափթվա, չօրէքշափթվա, հինգշափթթվա* և այլն, բ) ազգությունների անունները, որոնք կարող են զուգահեռ ներկայանալ *ի* ընդհանրականով՝ *հայու/ի, քըրթու/ի, թըրքու/ի, ըռըսու/ի, գ)* կրոնական իմաստ ունեցող հետևյալ բառերը՝ *աստըձու, վանքու, դըժոխքու/ի, դըրախտու/ի, ժամու/ի, էքիսկօթօսու/ի* և այլն, որոնք զուգահեռ կարող են հանդես գալ նաև *ի* հոլովման տիպով, դ) մի շարք կենդանիների անուններ՝ *բ՛ադու, գիլու, կօվու, մադագու, օցու, կաքավու, ձէդու, հավու, ջանավըրու, ուլու, լազլագու, քավէջու, գըմէջու, էղըվնէգու, Կանձէդու* և այլն: Ստորև բերվող բառերը հավասարաչափ կարող են պատկանել նաև *ի* ընդհանրական հոլովման, ե) մարդու մարմնի մասերի անուններ՝ *գըլիսու/ի, Կանգըջու/ի, ճագադու/ի, փօրու/ի, ծէնվու, էրէսու/ի, սըրդու/ի, գ)* արյունակցական հարաբերություններ ցույց տվող՝ *զավագու, մանչու, լամկու, էրէխու, ճրժու, պաքու, մամու* բառերը, է) ձևախմաստային տարբերակում չունեցող բազմաթիվ բառեր՝ *բընու, ամսու, գճմու, կաթօդու, մըթու, առավօտու, ծադրու, ջ՛արթու* և այլն, որոնք կարող են նաև *ի* հոլովիչով ներկայանալ, ը) տեղանուններ՝ *Էրէվընու, Ալվառինջու, Մըշու, Ալաշկերտու, Հնրձըրու* և այլն, թ) բնության և դրա երևույթների անուններ՝ *էրգընքու, էրգըրու, արէվու, լուսու, անձրէվու, մըթու, ցըրդու, շօքու* և այլն, ժ) Ալաշկերտի խոսվածքում ու ձայնավորով վերջացող երկու բառ՝

կաղնու, բրվու, ա ձայնավորով վերջացող մեկ բառ՝ ճամպու, -ում-ով վերջացող եթում բառը՝ էթմու, -ուզ ածանց ունեցող երկու բառ՝ գէղագու, դըռնագու, ամսանուններից աբրիլ բառը՝ աբրիլու, ամսու/վա, մրտու/ան, ժա) տեղանունները պատկանում են ա հոլովման տիպին, բայց պատահում է նրանց գործածությունը նաև ու տիպով՝ Ապարանա/ու, Ալագյազա/ու, Լենինազանա/ու, Թիվիզա/ու, Թավրեզա/ու: Հոգնակի թիվը միջին հայերենում ենթարկվում է ոյ հոլովման տիպին, իսկ Մշո բարբառում ամբողջությամբ ենթարկվում է ու հոլովման, թեև բարբառն ունի եզրային առանձին խոսվածքներ, որոնք ենթարկվում են ի հոլովման, ինչպես ասենք՝ Բիթլիսի նահանգի Խիզանի շրջանի Պոռշենց գյուղի՝ ներկայիս Արարատի մարզի Ավշար գյուղի խոսվածքն է՝ անընէրի, պանցերի, պերների, գազանէրի, կիշէրների և այլն: Ըստ էության, Մշո բարբառում ի/ու հոլովումների հստակ տարանջատում երբեք չի եղել, որի հիմքերը գալիս են դեռևս միջին հայերենից: Այս չհաղթահարված լեզվական խնդիրը եղել է Պատմական Հայաստանում, երբ մշեցիները չէին կորցրել իրենց տարածական բուն հիմքերը, և այն պահպանվել է մինչ օրս:

Ինչպես միջին հայերենում, այնպես էլ Մշո բարբառում ա արտաքին հոլովումը իմաստային հոլովում է: Միջին հայերենում արտաքին թեքման ա հոլովումը սահմանափակ կիրառություն ունի: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ բերվում է այս հոլովման պատկանող շուրջ հիսուն անուն՝ հիմնականում անձնանուններ ու անձնանիշ բառեր, ավելի քիչ՝ տեղանուններ՝ Ադամայ, Անթափայ, Յակոբայ, Վասակա, մամկայ, տիկնայ, քրմուհեայ և այլն [Ակնարկներ..., էջ 26]: Մշո բարբառում այս հոլովման տարածման սահմաններն ավելի մեծ են, քանի որ ընդգրկում են ոչ միայն վաղ շրջաններից ավանդված, այլև նորագույն շրջանում ի հայտ եկած հատկանունները, ինչպես նաև որոշ ամսանուններ: Ընդ որում, ի տարբերություն միջին հայերենի, Մշո բարբառում այս հոլովման պատկանող տեղանուններն ավելի շատ են, քան անձնանունները. ա) անձնանուններ՝ Հովսիզա, Ավիզա, Ծաղզա, Լուսիզա, Թըրթիզա,

Մաագա, Մէսրոպա, Մարգա և այլն, բ) տեղանուններ՝ գյուղ, քաղաք, շրջան՝ *Խըլաթա, Էռզըրումա, Վանա, Մասնա, Հացիգա, Բըլխէրա, Ալաշկէռդա, Մըսրա, Խընուսա* և այլն, լեռներ, գետերի անուններ՝ *Մասիսա, Ալագճագա, Շողանկատա, Արագա, Առպա-չայա* և այլն, գ) -ստան ածանցով երկրների անունները՝ *Հայաստանա, Վըրաստանա, Ըռուսաստանա* և այլն, դ) ամսանուններ՝ *հունվարա, փեդրըվարա, մառդա, աքրէլա, մաիսա/ի, հունիսա/ի, հուլիսա/ի*: Վերջին երեք ամսանունները կարող են գուցահեռ *ի* թեքույթը ստանալ: *Ա* արտաքին հոլովման են պատկանում նաև հետևյալ՝ *մայրիգա, ախյըգա, իրիգա, թոնըգա, սանիգա, կընգա* անձնանիշ գոյականները, նաև՝ *թունդըրա, վառկա, ավագանա/ի, հոտըրկ/գա* հասարակ գոյականները:

Արտաքին թեքման վան/ուան/ւան հոլովումը միջին հայերենում դիտվում է նորակազմ հոլովում՝ ընդգրկելով ժամանականիշ բառերի մի խումբ, այն է՝ *գիշերվան, յեգուցվան, ցորեկվան, օրվան, մահուան* և այլն: Վերջին՝ մահ-մահուան բառն ավելի հին կազմություն է, քան ժամանականիշ բառերը, քանի որ վկայված է տակավին դասական հայերենում: Մշո բարբառում այս հոլովման տիպը, որը ներկայանում է *վա* թեքույթով, ավելի է ընդլայնել իր գործառման սահմանները՝ ընդգրկելով ժամանակ ցույց տվող բոլոր բառերը, այդ թվում՝ այն բաղադրությունները, որոնց եզրի անդամը ժամանականիշ բառ է՝ *գախվա «ժամանակ», սաքախտանվա, շուդվա, շուդուցվա, ավալթ/վա, շափաթվա/ու* և այլն: Նշված բառերից *շափաթ* և *առավօդ* բառերը կարող են հոլովվել և *ու* հոլովիչով: Կէս բառը, թեև ժամանակ չի ցույց տալիս, բայց գործածվելով ժամանակ ցույց տվող բառերի հետ՝ նույնպես հոլովվում է *վա* հոլովիչով՝ *օրուկիսվա, տարիուկիսվա, շաքաթուկիսվա*: Ալաշկէրտի խոսվածքում *վա* հոլովման սահմաններն ընդլայնվել են ի հաշիվ *ի* ձայնավորահանգ բնիկ ու փոխառյալ տեղանունների՝ *Մուկըրվա, Ջանգըրվա, Լօովա, Փառպըրվա* և այլն:

Միջին հայերենում արտաքին թեքման *ան* հոլովման պատկանող անունների մեծ մասը միավորվում է ձևական ընդհանուր հատկանիշով, քանի որ բառավերջում ունեն իկ, ալ, ուկ հանգը:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատությունը վկայում է շուրջ 32 բառ՝ *երկան, անձկան, աշնան, գարնան, Գորգկան, ըղեղան, եղբայրկան* և այլն [էջ 26-27]: Մշո բարբառում այս հոլովման տիպն ընդլայնել է կիրառության սահմանները՝ ներառելով հետևյալ բառաշերտերը՝ ա) -ում հանգ ունեցող բոլոր բառերը, որոնք միաժամանակ ենթարկվում են նաև ի հոլովման՝ *‘ուսման, հեռուման, սիլոսածման, սօծմըռծման, խօստման* և այլն, բ) գրաբարում և վերջնահնչյուն ունեցող և բարբառում այն կորցրած բառերի մի մասը՝ *շրրթան, խըփան, յեզան, ճըզան, աս-խան, դըռան, նըռան* և այլն, գ) ուն-ով վերջացող բառերը: Այս հոլովման ենթարկվող աշուն, գարուն բառերը բարբառում ունեն նաև աշունք, գարունք ձևերը, որոնք հոլովվում են վա հոլովիչով, դ) այս հոլովմանն են պատկանում տարվա եղանակների անուններից երկուսը՝ *ամռան, ծըմռան*՝ գուգահեռ ենթարկվելով *վա* հոլովման՝ *ամըռվա, ծըմըռվա*, ե) ձևաիմաստային տարբերակում չունեցող մի խումբ բառեր՝ *ճըղան, մազան, լըձան, թըմբան, կըղըցան, կըժան, լընդան, գ’օրդան* և այլն:

Միջին հայերենի հոլովման համակարգում *ռջ* հոլովումը իր ոլորտում ներառում է մի շարք ազգակցական առնչակցություն ունեցող անուններ և այն բաղադրությունները, որոնց եզրի անդամը ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառ է՝ *այրոջ, այրուկնոջ, ընկերոջ/չ, տիկնոջ, տիրոջ/ու, քուրոջ* և այլն: Ոջ հոլովման իմաստային այս ընդգրկումն արտացոլված է նաև Մշո բարբառում՝ *քըրօջ/ջ, տալ/վօջ/ջ, կիսրօջ/ջ, տիրօջ/ջ, հօրքըրօջ/ջ, քալօրօճ/չ* և այլն: *Տեքըր* բառը ոջ հոլովումից բացի կարող է ընդունել նաև ե, ո ներքին թեքույթները՝ *տեքեր/տեքօր*: Մշո բարբառի Առնջկույս գյուղի խոսվածքում ոչ հոլովումը տարածվում է *թօռ* գոյականի վրա՝ ի-ով ձևին գուգահեռ ունենալով *թօռօջ* տարբերակը: Բիթլիսի Շամիրամ գյուղի խոսվածքում աներ, ընկեր, կիսուր գոյականները կարող են ընդունել նաև ի հոլովումը՝ *աների, ընկերի, կիսուրի*:

Միջին հայերենում սահմանափակ կիրառություն ունեցող արտաքին թեքման եան հոլովումը ներառում է գրաբարյան հոլովումը պահպանող իստ, ուստ, ունդ, ուրդ վերջավորությամբ բառերը՝ *գալստեան, գալստէն, թագստեան, ժողովրդեան* և այլն: Այս կարգի բառերը Մշո բարբառում ներկայանում են հոլովման *ի* տիպով:

Մշո բարբառում տարբերակվում է նաև *ց* հոլովումը, որին ենթարկվում են ենք-ով վերջացող հավաքական գոյականները՝ *Ավիզէնց, Արմօէնց, գիրքօրէնց* և այլն:

Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում ներքին թեքումը գործառական ծանրաբեռնվածության հարցում մեծ ընդգրկում չունի, որը պատմականորեն հիմնավորվում է տարբեր գործոններով: Պահպանված ներքին թեքումներն էլ, ըստ էության, ավելի վաղ շրջանից ավանդված օրինաչափ հոլովական մնացուկներն են, որոնք տակավին ներկայանում են որպես համակարգ, և միջին հայերենն ու Մշո բարբառը դեռ չեն հաղթահարել արտաքին թեքման ամբողջականությունը: Միջին հայերենում ներքին թեքման հոլովումների մեջ գործառական ծանրաբեռնվածության տեսանկյունից առաջնային տեղում է *եա* հոլովումը, որին պատկանում են -իւն, -ութիւն հանգով հիմքերը՝ առողջութեան, արեան, ձեան, ծերութեան, մեծութեան և այլն: Այս հանգով բառերը, ինչպես արդեն ներկայացրել ենք, Մշո բարբառում *ա* ներքին հոլովման են պատկանում, -ութիւն ածանցով հիմքերը գուցահեռ ունակ են կրելու *ի* թեքույթը, իսկ *-եա*-ի վերածումը *ա*-ի հնչյունափոխական օրենքներով է պատճառաբանվում:

Ինչպես անդրադարձել ենք, Մշո բարբառում հայերենի ամենակենսունակ -ություն ածանցով կազմված բառերը ենթարկվում են ընդհանրական *ի* հոլովման, սակայն Արծկեի շրջանի Հառեն և Արջրա գյուղերի խոսվածքներում լավագույնս պահպանել են ներքին թեքման առանձնահատկությունները՝ *ախպէրոյթյանն, ջօշոյթյանն, գօղորթանն, թացութանն*, թեև այդ խոսվածքները գրանցած մասնագետը վկայել է, որ դրանք հազվադեպ հանդիպող ձևեր են: Իսկ

Բիթլիսի շրջանի Շամիրամ գյուղի խոսվածքում -*ություն* հանգով քառերի *ա* ներքին թեքմամբ գործառելը կայուն համակարգ է:

Ներքին թեքման *ա*, *ի*, *է* հոլովումները միջին հայերենում սահմանափակ կիրառություն ունեն և պահպանել են հոլովման գրաբարյան պատկերը: Բաղաձայն-ձայնորդ կապակցություն ունենալու շնորհիվ *ա*, *ի*, *է* հոլովումները ձևային հոլովումներ են դիտվում: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ բերվում է *ա* ներքին հոլովման շուրջ ինստուն բառամիավոր, որոնց մի մասը միաժամանակ կարող է հոլովվել նաև արտաքին թեքման այլ հոլովումներով: Այդ միավորներից այստեղ կհիշատակենք միայն նրանք, որոնք Մշո բարբառում գործածվում են՝ զուգահեռ կրելով այլ թեքություններ՝ *աղեղան/ի*, *ամռան/վա*, *յէզան/ի/ու*, *թաղման/ի*, *ծաղկման* և այլն: Մշո բարբառում *ի* և *է* ներքին հոլովումներ չկան, միջին հայերենում գործառող բառերը ավելի վաղ շրջանների և գրաբարյան մնացուկներ են՝ ակին, անձին, բեռին, թոռին, լերին և այլն: Մշո բարբառում *է* ներքին հոլովման երկու բառ կարող ենք հիշատակել՝ *քվէր*, *տէքէր*:

Միջին հայերենում ու Մշո բարբառում *օ* ներքին թեքման են ենթարկվում հայր, մայր, եղբայր հանգով հիմքերը, որոնք, ըստ էության, նեղ ազգակցական կապեր նշանակող անուններ են՝ *հօր*, *մօր*, *ախպօր*, *սանամօր*, *հօրօխպօր*, *քավօրհօր* և այլն: Միջին հայերենում առանձնացվող *աւու* հոլովման ամբողջ ոլորտը սահմանափակվում է միայն *օր* բառով և, հաշվի առնելով հոլովակազմության սուպլետիվությունը՝ տարարմատությունը, կարելի է այն համարել անկանոն՝ օր-աւուր, որը Մշո բարբառում *օրվա* ձևին զուգահեռ պահպանել է նախնական ձևը: Օրինակ՝ «Մասնա ծոեր»-ի պատումներից մեկում այդ սուպլետիվությունը դրսևորվում է հետևյալ կերպ. «*Չորս ավուր մէջ լման գքառսուն ավահիք շինեցին երկու աղբէր*» [Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, էջ 12]:

Բացի վերոհիշյալ համակարգերի քննությունից՝ Մշո բարբառին հատուկ են որոշ բառաձևեր ու արտահայտություններ, որոնք կանոնավոր ձևեր են, ասենք, գրաբարում՝ *քօ մեղաց/ծ տազ մըղավ*, *ընի իմ ճ՛եռաց/ծ տազ է մէձցի*, *խելաց/ծ կըղուր է քու ըսուգ*,

ընի խօսաց/ծ տագ չըմնա և այլն: Այս տարբերակների առկայությունը հաշվի առնելով՝ Ք. Մադաթյանը *օր, աճկ, ճ՛էռ, վօղ, գ՛արուն, աշուն* բառերը համարում է գրաբարաձև հոլովման բառեր [Ք. Մադաթյան, էջ 84]: -Ք ածանցն ունեցող մի խումբ գոյականներ էլ հոգնակի թվում ներկայանում են գրաբարատիպ՝ *ախպէրդիք/ կ-ախպըրդօց/ծ, քուրվըտիք/կ-քուրվըրդօց/ծ, տէքըրտիք/կ-տէքըրտօց/ծ, գ՛էղացիք/կ-գ՛էղացօց /ծ, կընկըտիք/ կ-կընկըտօց/ծ* և այլն, իսկ Արծկէի շրջանի Հառեն և Արջրա գյուղերի խոսվածքում նշված բառերի մի մասը հոգնակի թվում ներկայանում է հոլովման *ա* տիպով՝ *ախպըրտէկաց, քուրվըտէկաց, տէքըրտէկաց, կընթիք-կընթէկաց, խընամըրտէկաց, դուշմընէրաց, մարդոց* [«Մասնա Ծեր»]: Այս տարբերակների առկայությունը փաստելով՝ Մշո բարբառի համար տարբերակվում է նաև ոց/ծ հոլովումը:

Այսպիսով, միջին հայերենի և Մշո բարբառի հոլովման համակարգերը բնութագրվում են թեքույթների բազմազանությամբ: Եթե միջին հայերենն ունի արտաքին թեքման 8՝ ի, ո, ու, ա, ան, եան, ոջ, վան, ներքին թեքման 6՝ ա, ի, ե, օ, եա, աւու տիպերը, ապա Մշո բարբառը ներկայանում է արտաքին թեքման 8՝ ի, ու, ա, ան, օջ, յ, ց, օց, ներքին թեքման 4՝ ա, օ, ե, աւու հոլովման տիպերով:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1958թ.:
2. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Ե., 1975թ.:
3. Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958թ.:
4. Ժողովրդական բանահյուսություն, Բ, Ժողովրդական վեպ, 1944 թ.:
5. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 10, Ե., 1967թ., հ. 13, Ե., 1985թ.:

6. ՀԲԱ ծրագրով լրացրած տետրեր՝ 35, 56, 55, 152, 36, 312:
7. Ք. Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985թ.:
8. Գ. Մկրտչյան, Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն (ատենախոսություն), Ե., 2011թ.:

Мкртчян Гарик - Сопоставительно-сравнительная характеристика именных склонений среднеармянского языка и диалекта Муша. - В данной статье обсуждаются типы склонений в среднеармянском языке и диалекте Муша и выявляются их схожие черты и различия. Анализ показывает, что как в среднеармянском, так и в диалекте Муша склонения характеризуются неоднотипностью, многообразием окончаний, преимуществом склонений внешней флексии и свободным переносом между их вариантами.

Mkrtchyan Garik - The comparative description of the nominative declensions of Middle Armenian and the Dialect of Mush. - This paper discusses types of declension in Middle Armenian and the dialect of Mush and reveals their similarities and differences. The analysis shows that both in Middle Armenian and in the dialect of Mush the types of declension are characterized by nonuniformity, variety of endings, the advantage of declension of external flexion, and free transfer between the variants.

ԳՈՅԱԿԱՆԻ ՍԵՌԱԿԱՆ-ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ
ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՄՇՈ
ԲԱՐԲԱՌԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՄԲ*

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հայերենում միևնույն բառի հոլովական այս կամ այն իմաստը հնարավոր է արտահայտել տարբեր ձևությոնների օգնությամբ՝ ստեղծելով հոլովական զուգաձևությունների գործածման ազատ տարբերակներ: Այս երևույթը կար տակավին դասական հայերենում, հետագա դարերում ավելի մեծ ընդգրկում է ստանում՝ նախ միջին հայերենի զարգացման ժամանակահատվածում, ապա հայերենի տասնյակ բարբառներում, այդ թվում գրական լեզվի կարգավիճակ ունեցող արևելահայերենում ու արևմտահայերենում: Զուգաձևերի առկայությունը, ըստ էության, պայմանավորված է գրական ու խոսակցական լեզուների, բարբառների սահմանների խախտմամբ, լեզվի ոչ համակարգայնությամբ:

Հոլովման համակարգում զուգաձևությունների գոյությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ ա) հայերենում հոլովական համակարգի անհամակարգայնությամբ և հոլովման տիպերի՝ մեկը մյուսի նկատմամբ գերակշռության ձգտմամբ, բ) ի հոլովման գերիշխող դիրքով, նրա՝ մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու կարողությամբ, գ) ձևային, իմաստային և ձևաիմաստային հոլովումների միմյանց նկատմամբ ունեցած փոխներգործություններով, դ) պատմական գործոնների առկայությամբ¹: Ակադեմիկոս Գ. Զահուկյանը հոլովական համակարգում տատանվող զուգաձևությունների առկայությունը պատճառաբանում է

* «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երրորդ գիտաժողովի նյութեր», Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 93-101:

¹ Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ձևաբանություն, Ե., 2002թ., էջ 85:

ձևական, իմաստային և պատմական գործոններով²: Այս հանգամանքն արդարացված է, քանի որ տատանվող զուգաձևությունների պատմական ուսումնասիրությունը հանգեցնում է երբեմնի եղած առանձին հոլովատիպերի գոյությանը, որոնք դարերի ընթացքում տարբեր գործոնների թելադրանքով փոխարինել են միմյանց՝ ստեղծելով գործառման ազատ տարբերակներ և ընդգրկելով հատուկ և հասարակ անունների՝ բնիկ ու տարբեր ժամանակներում կատարված հնագույն և նորագույն փոխառյալ բառերի ընդգրկուն շերտեր:

Այժմ խնդիրն ըստ ամենայնի: Ստորև քննվում են միջին հայերենի և Մշո բարբառի՝ սեռական-տրական հոլովների եզակի թվում ի հայտ եկող հոլովական զուգաձևությունները: Պատեհ է նշել, որ հոլովման համակարգում հոլովական զուգաձևությունների մեծ մասը պատկանում է սեռական-տրական հոլովին:

Ինչպես մեր ուսումնասիրություններն են ցույց տվել, և՛ միջին հայերենում, և՛ Մշո բարբառում հոլովման տիպերն իրենց գործառական ծանրաբեռնվածության տեսակետից միմյանց համարժեք չեն. անունների բաշխումը խիստ անհամաչափ է ոչ միայն արտաքին և ներքին թեքումների, այլև յուրաքանչյուր խմբի ներսում հոլովման առանձին տիպերի միջև: Այս ամենը մեծ հնարավորություն է ընձեռել հոլովական զուգաձևությունների գործառմանը: Քննարկվող հարցում ինքնին ավելորդ է դառնում անունների՝ հոլովման մեկ տիպից մյուսին փոխանցվելու հաճախականության հանգամանքը. դրանց գործառման մեկ փաստն իսկ կարևոր է և հիշատակման արժանի:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության հեղինակներն ի մի են բերել և առանձնացրել հոլովման տարբեր տիպերի միջև անունների հնարավոր փոխանցումների ցանկերը՝ սեռական-տրական հոլովում տարբերակելով հոլովական զուգաձևի քսանհինգ խումբ՝ ի/ո, ի/ու, ի/այ, ի/ան, ի/եան, ի/եա, ի/ե, ի/ ներքին թեքման ա, ո/ու, ու/ա, ոջ/ա, ոջ/ու, ոջ/ե, ի/ա,

² Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974թ., էջ 195:

ի/ն/ու, ի/ն/ա, ի/ն/վան, ի/ն/եան, ի/ն/ե, ի/ն/վան, ի/ն/ու, ոչ, ո/ն/վան, ի/ն/ու/վան, ի/ն/ ներքին թեքման ա/ ներքին թեքում ի, աւու/ի³: Ինչպէս նկատեցինք, միջին հայերէնում տարբերակվող զուգաձևություններից 14-ը երկթեքույթ են, 9-ը՝ եռաթեքույթ, 2-ը՝ քառաթեքույթ: Ընդ որում, որպէս զուգադրության առաջին եզր տրվում է առավել մեծ հաճախականությամբ օժտված հոլովման տիպը:

Միջին հայերէնի տվյալների վիճակագրական հաշվառումը ցույց է տալիս, որ հոլովական զուգաձևերը հիմնականում արտաքին թեքման են՝ ներկայանալով կա՛մ երկանդամ, կա՛մ եռանդամ հակադրությամբ: Արտաքին թեքման հոլովումներից առավել շարժունակություն են ցուցաբերում ո, ու և մասամբ ոչ հոլովումները, որոնք կարող են հանդես գալ յուրաքանչյուր հոլովման տիպի հետ՝ գործառնելով որպէս ազատ տարբերակ: Ըստ փաստերի՝ միջին հայերէնում ի, ո, ու հոլովումների միջև կարող են տեղի ունենալ ազատ փոխանցումներ՝ ընդգրկելով բառերի մեծ խմբեր, իսկ մնացած դեպքերում փոխանցումների թիվը խիստ սահմանափակ է և վերաբերում է բառերի ոչ մեծ խմբերի: Ստորև կբերենք միջինհայերէնյան հոլովական զուգաձևությունն ըստ ընդգրկման ծավալների.

Ի/ո- աթոռ-աթոռի/աթոռոյ, Աշոտ-Աշոտի/Աշոտոյ, գեղ-գեղի/գեղոյ, երամ-երամի/երամոյ, թոք-թոքի/թոքոյ, խունկ-խնկի/խնկոյ, ծարաւ-ծարաւի/ծարաւոյ, կերպ-կերպի/ կերպոյ, մաղձ-մաղձի/մաղձոյ, քար-քարի/քարոյ և այլն:

Ի/ու- առաւօտ-առաւօտի/առաւօտու, դարբին-դարբնի/դարբնու, ընկոյզ-ընկզի/ընկզու, խաշ-խաշի/խաշու, ծոց-ծոցի/ծոցու, հարկ-հարկի/հարկու, ձագ-ձագի/ձագու, ճամփա-ճամփի/ու, պախրա-պախրի/պախրու, Պօղոս-Պօղոսի/Պօղոսու և այլն:

Ո/ու- աղամորդի-աղամորդոյ/աղամորդու, աղանի-աղաւնոյ/աղաւնու, գերի-գերոյ/գերու, գրաստ-գրաստոյ/գրաստու, էշ-իշոյ/իշու, կենցաղ-կենցաղոյ/կենցաղու, հոր-հորոյ/հորու, ճաշ-ճաշոյ/ճաշու, պալ-պալոյ/պալու, քուն/քնոյ/քնու և այլն:

³ Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմության, Բ, Ձևաբանություն, Ե., 1975թ., էջ 32-34:

Ի/ն/ու-ագռաւ-ագռաւի/ագռաւոյ/ագռաւոյ, ամիս-ամսի/ ամսոյ/ամսու, արջ-արջի /արջոյ/արջու, գուր-գրի/գրոյ/գրու, ուղտ-ըղտի/ըղտոյ/ըղտու, երեց-իրիցի/իրիցոյ/ իրիցու, ծով-ծովի/ծովոյ/ծովու, հաւատ-հաւատի/հաւատոյ/հաւատու, շող-շողի/շողոյ/շողու, փոր-փորի/փորոյ/փորու և այլն:

Ավելի փոքր ընդգրկում ունեն գուգաձևությունների հետևյալ խմբերը.

Ի/այ-Բագրատ-Բագրատի/Բագրատայ, Գէորգ-Գէորգի/Գէորգայ, Եգիպտոս-Ե-գիպտոսի/Եգիպտոսայ, Բւանէ-Բւանէի/Բւանէայ, Սմբատ-Սմբատի/Սմբատայ, Սուլտան-Սուլտանի/ Սուլտանայ:

Ի/ան-ուղեղ-ըղեղի/ըղեղան, դղի/ան, յղեղ-յղեղի/յղեղան, լեղակ-լեղակի/ լեղական, լուսնակ-լուսնեկի/լուսնեկան, ծիծեռնակ-ծիծեռնեկի/ծիծեռնական, կոլինջ-կոլնջի/կոլնջան:

Ի/եան-հանկիստ-հանկստի/հանկստեան, հեծեալ-հեծելի/ հեծելեան:

Ի/ներքին թեքման եա-արուն-արինի/արեան, անկին-անկինի/անկեան, ձին-ձինի/ձեան, պաղութին-պաղութենի/պաղութեան, տաքութին-տաքութենի/ տաքութեան:

Ի/ներքին թեքման ե-աղբիւր-աղբիւրի/աղբեր, աստղ-աստղի/ աստեղ, մեղր-մեղրի/մեղեր, փոքր-փոքրի/փոքեր:

Ի/ներքին թեքման ա-արեգակ-արեգակնի/արեգական, դուռ-դռնի/դրան, եղեգն-եղեգնի/եղեգան, ջերմ-ջերմի/ջերման, սերմ-սերմի/սերման, սիսեռ-սիսռի/սիստան:

Ու/ա-Մարիամ-Մարիամու/Մարիամայ, Մրուան-Մրուանու/ Մրուանայ, Յոհան-Յոհաննու/Յոհանայ:

Ոջ/ա-տիկին-տիկնոջ/տիկնայ:

Ոջ/ու-տէր-տիրոջ/տիրու:

Ոջ/ե-քուր-քոռոջ/քվեր:

Ի/ ներքին ա-եզ-եզին/եզան, լեռ-լերին/լեռան, ակն-ակին/ական:

Ի/ն/ա-Գրիգոր-Գրիգորի/Գրիգորոյ/Գրիգորեայ:

Ի/ոյ/վան-ցորեկ-ցորեկի/ցորեկոյ/ցորեկվան:

Ի/ն/եան-ծնունդ-ծննդի/ծննդոյ/ծննդեան:

Ի/ո/ե-*ոսկր-ոսկրի/ոսկրոյ/ոսկեր*:

Ի/ու/վան-*մահ-մահի/մահու/մահուան*:

Ի/ու/ոջ-*ընկեր-ընկերի/ընկերու/ընկերոջ*:

Ո/ու/վան-*տարի-տարոյ/տարու/տարվան*:

Ի/ո/ու/վան-*գիշեր-գիշերի/գիշերոյ/գիշերու/գիշերվան*:

Ի/ո/ներքին թեքման ա/ներքին թեքման ի-*գառ-գառնի/գառ-նոյ/գառան/գառին*:

Աւու/ի-*օր-աւուր/օրի*⁴:

Բերված լեզվական հիշատակումները վկայում են, որ միջին հայերենում եզակի թվում սեռական-տրական հոլովը դրսևորվում է թեքույթների բազմազանությամբ, որոնք, որպես տարբերակներ, ազատորեն փոխարացնում են իրար միևնույն քերականական նշանակությունն արտահայտելիս: Վերոբերյալից երևում է, որ միջին հայերենում միայն արտաքին թեքման զուգաձևություններ են հետևյալները՝ ի/ո, ի/ու, ո/ու, ի/ո/ու, ի/այ, ի/ան, ի/եան, ու/ա, ոջ/ա, ոջ/ու, ի/ո/ա, ի/ոյ/վան, ի/ո/եան, ի/ու/վան, ի/ու/ոջ, ո/ու/վան, ի/ո/ու/վան, իսկ արտաքին ու ներքին թեքման տարբերակներից ձևավորված զուգաձևությունները հետևյալներն են՝ ի/եա, ի/ե, ի/ա, ոջ/ե, ի/ա, ի/ո/ե, ի/ո/ ա/ի, աւու/ի:

Միջին հայերենում զուգաձևության շարժունակության հարցում ավելի կայուն հոլովման տիպը ներքին թեքման օ հոլովումն է: Վերջինս, պայմանավորված է իր դիրքով, ոչ մի այլ տիպի հետ ազատ տարբերակ չի կազմում: Ներքին թեքման ի հոլովումը, որը, ինչպես տեսանք, միայն մի դեպքում է հանդես գալիս որպես ներքին ա հոլովման ազատ տարբերակ, գործառում է սահմանափակ թվով անունների համար:

Հայերենում հոլովական զուգաձևությունների գործառման հարցում բարբառները, տվյալ պարագայում Մշո բարբառը⁵, մի քայլ առաջ են անցել միջին հայերենի համադրությամբ՝ ավելի խառնիճաղանջ պատկեր ներկայացնելով: Ըստ որի՝ Մշո բարբա-

⁴ *Ակնարկներ.....*, Բ, Ձևաբանություն, Ե., 1975թ., էջ 32-34:

⁵ Ս. Հ. Բաղասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, Ե., 1958թ., էջ 81-91, Բ. Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985թ., էջ 74-85:

ռում սեռական-տրական հոլովը եզակի թվում ի հայտ եկող գու-
գաձևությունները հիմնականում ձևավորվում են ի թեքույթի և այլ
թեքույթների համադրությամբ: Ի ընդհանրականի շրջանակների
ընդլայնման պատճառով այլ հոլովական թեքույթներ ստացող
բառերը ևս կրում են ի թեքույթը՝ ստեղծելով հոլովական գուգա-
ձևերի ազատ տարբերակներ: Մշո բարբառում սեռական-տրական
հոլովում տարբերակվում են հոլովական գուգաձևի քսանչորս
խումբ՝ ի/ու, ի/ա, ա/ու, ի/ան, օձ/ի, օջ/ու, ան/վա, վա/ու, վա/ի, յ/ի,
օձ/է ներքին, ա ներքին/ու, ի/ա ներքին, վա/ի/ու ներքին, ի/ու/ա,
վա/ու/ի, ի/ու/ան, վա/ու/ի, ի/ու/օ, ի/ու/օձ, օջ/օ ներքին/է ներքին,
վան/ի/ու, ի/ու/վա/ու ներքին, ի/ու/ան/վա: Մշո բարբառի գուգա-
ձևությունների շարքերից 13-ը երկթեքույթ են, 9-ը՝ եռաթեքույթ,
2-ը՝ քառաթեքույթ: Ստորև կբերենք այդ շարքերը՝ ըստ ծավալնե-
րի ընդգրկման ու հաճախականության՝

*Ի/ու-ագռավ/-ագռավի/ագռավու, բ՛երա-բ՛երնի/բ՛երնու, գ՛օմէշ-
գ՛օմշի/գ՛օմշու, դ՛էդ-դ՛էդի/դ՛էդու, հիվանդ-հիվընդու/հիվընդի, կա-
դու-կադվի/կադվու, Էրէվան-Էրէվընի/ Էրէվնու, Պոլիս-Պոլսի/ Պոլ-
սու, հայ-հայի/հայու, ըռուս-ըռըսի/ըռուսու, խօրօսկութէն-խօրօս-
կութէնի/խօրօսկութէնու, ծէրութէն-ծէրութէնի/ծէրութէնու/ «Մաս-
նա ծռեր» և այլն:*

*Ի/ա-անանուխ-անանքի/անանքիս, աբրիլ-աբրիլի/աբրի-
լա, մախս-մախսի/ մախսա, շունվար-շունվարի/շունվարա, մառդ-
մառդի/մառդա, փէդըրվար-փէդըրվարի/ փէդըրվարա, շունիս-
շունիսի/շունիսա, ռուլիս-ռուլիսի/ռուլիսա, Խըլաթ-Խըլաթի/Խըլաթա,
սանիգ-սանիգի/սանիգա, շայաստան-շայաստանի/շայաստանա և
այլն:*

*Ի/ան-բ՛ութ-բ՛ըթի/բ՛ըթան, ծունկ-ծընկի/ծընկան, յէզ-յէզի/ յէ-
զան, ասէդ-ասէդի/ասիսան, մուգ-մըզի/մըզան, շուռտ-շըռտի/ շըռ-
տան, նուռ-նըռի/նըռան, կամ-կամի/կաման, անուռ-անընի/ան-
վան, ռուսում-ռուսումի/ռուսման, էռտում-էռտումի/էռտման, սիլօ-
սաճում-սիլօսաճումի/սիլօսաճման, արուն-արունի/արնան, թումբ-*

թըմբի/թըմբան, խուռծ-խըռծի/խըռծան, Եայ-Եայի/Եայան, խունգ-խընգի/խընգան և այլն:

Ի/ու/ան- բ՛ուն-բ՛ընի/բ՛ընու/բ՛ընան, գ՛էղ-գ՛էղի/գ՛էղու/գ՛էղան, գ՛ունդ-գ՛ընդի/գ՛ընդի/գ՛ըդան, գ՛առ-գ՛առի/գ՛առի/գ՛առան, ճ՛էռ-ճ՛էռի/ճ՛էռու/ճ՛էռան, կօղ-կօղի/կօղու/ կօղան, գ՛ուռ-գ՛ըռնի/գ՛ըռնու/գ՛ըռան, վ՛ուօղ-վ՛ուօղի/ վ՛ուօղու/վ՛ուօղան և այլն:

Ա/ու- ԱլաԲազ-ԱլաԲազա/ԱլաԲազու, Լէնինազան-Լէնինազանա/ Լէնինազանու, Թիլվիզ-Թիլվիզա/Թիլվիզու, աղջիկ-աղջկա/աղջկու/«Սասնա ծռներ», ախչիկ-ախչը-կա/ախչըկու, Թավրէզ-Թավրէզա/Թավրէզու:

Վա/ի/ու/ու ներքին-օր-օրվա/օրի/օրու/ավուր:

Ի/ու/ա- Աբարան-Աբարանի/Աբարանա/Աբարանու, բազան-բազանի/բազանու/ բազանա, դեկտերբեր-դեկտերբերի/դեկտերբերու/դեկտերբերա, աղբուր-աղբուրի/ աղբուրու/աղբուրա:

Վա/ու/ի- շափաթ-շափթըվա/շափթու/շափթի, առավօղ-առավօղվա/առավօղու/ առավօղի, ամիս-ամսի/ամսըվա/ամսու:

Օճ/օ ներքին/է ներքին-տէքըր-տէքըրօճ/տէքօր/տէքէր:

Ի/ա ներքին-պաղութէ/ուն-պաղութէ/ունի/ պաղութան, ախկըղուտէն-ախկըղուտէ/ունի/ախկըղուտան, բ՛անծըրրուտէ/ուն-բ՛անծըրրուտէ/ունի/բ՛անծըրրուտան, Երզընու-տէ/ուն-Երզընուտէ/ունի/Երզընուտան, ճ՛ուն-ճ՛ընի/ճ՛ան, սուն-սընի/սան և այլն:

Ան/վա- ամառ-ամռան/ամըռվա, ձըմէռ-ձըմռան/ձըմըռվա:

Վա/ու- Լօռի-Լօռվա/Լօռու, տարի-տարվա/տարու, լուս-լուսվա/լուսու, խէր-խէրվա/խէրու, խըլըս-խըլըսվա/ խըլըսու /Մշո բարբառի Առնջկույս գյուղ/, առավօտ-առքօտվա-առքտու /Մշո բարբառի Առնջկույս գյուղ/:

Վա/ի/ու ներքին-օր-օրվա/օրի/աուր, կէսօր-կէսօրվա/կէսօրի/կէսավուր:

Վա/ու/ի- շապատ-շապտըվա/շապտու/շապտի, ամիս-ամսըվա /ամսու/ամսի:

Վան/ի/ու- մայվան/մաի/մաու:

Օճ/ի-սանէր-սանէրօճ/սանէրի, տանդրկին-տանդրկօյ/տանդրկի, տէրդէր-տէրդէ-րօյ/տէրդէրի, քաւօր-քաւօրօճ/քաւօրի, տալ/վ-տալ/վօճ/տալ/վի, կիսուր-կիսրօճ/ կիսուրի, հօրկուր-հօրկըրօճ/հօրկուրի, մօրկուր-մօրկըրօճ/մօրկուրի, ընկէր-ընկէրօճ/ ընկէրի (Բիթլիսի Շամիրամ գյուղ), անէր-անէրօճ/անէրի:

Օջ/ու-տէր-տիւրօճ/տիւրու:

Օճ/է ներքին-քուր-քը/ուրօճ/քվէր:

Վա/ի-վախտ-վախտվա/վախտի, գիշէր-գիշէրվա/գիշէրի, ցէրէկ-ցէրէկվա/ցէրէկի:

Յ/ի-Սաթօ-Սաթօյ/Սաթօյի, Արշօ-Արշօյ/Արշօյի, Կարօ-Կարօյ/Կարօյի, Ավօ-Ավօյ/ Ավօյի, Անդօ-Անդօյ/Անդօյի, Մարօ-Մարօյ/Մարօյի, Գրկէ-Գըրկէյ/Գըրկէյի և այլն:

Ա ներքին/ու-տուն-տան/տընու, շուն-շան/շընու:

Ի/ու/օճ-թօռ-թօռի/թօռու/թօռօյ (Մշո բարբառի Առնջկույս գյուղ, Արծկէի շրջանի Հառեն և Արջրա գյուղեր):

Ի/ու/օ՝ Մուշ-Մըշի/Մըշու/Մըշօ:

Ի/ու/ան/վա-ձէռ-ձէռի/ձէռու/ձէռան/ձէռվա:

Մշո բարբառի տվյալների վիճակագրական հաշվառումը վկայում է, որ սեռական-տրական հոլովում հայտաբերվող հոլովական գուգաձևերը մեծավմասամբ արտաքին թեքման են, ընդ որում, մեծ թիվ են կազմում երկանդամ ի/ու, ի/ա, ի/ան և եռանդամ ի/ու/ան հոլովական գուգաձևությունները, իսկ մնացյալ գուգաձևերը ներկայանում են սահմանափակ բառախմբերով: Կարևոր է նաև, որ Մշո բարբառում որևէ անձնանուն չի ներկայանում ի/ու, ի/ա, ի/ու/ա գուգաձևությամբ: Ա/ու գուգաձևություն ունեցող բառախմբերը մեր օրերի բարբառախոսները կարող են կիրառել ի թեքույթով ևս: Վիճակագրական հաշվարկից երևում է, որ Մշո բարբառում միայն արտաքին թեքման գուգաձևություններ են հետևյալները՝ ի/ու, ի/ա, ի/ան, ի/ու/ան, ա/ու, ի/ու/ա, վա/ու/ի, ան/վա, վա/ու, վա/ու/ի, վան/ի/ու, օճ/ի, օջ/ու, վա/ի, յ/ի, ի/ու/օճ, ի/ու/օ, ի/ու/ան/վա, իսկ արտաքին ու ներքին թեքման տարբերակներից ձևավորված գուգաձևությունները հետևյալներն են՝ վա/ի/ու/ու, օճ/օ/է, ի/ա, վա/ի/ու, օճ/է, ա/ու:

Որպեսզի հստակ լինի միջինհայերենյան քննարկվող հոլովական գուգաձևերի պատմական հանգուցալուծումը գոնե Մշո բարբառի սահմաններում, ապա կհանգենք հետևյալին՝ 1. ի/ո>ի, ի/ու, 2. ի/ու>ի, ի/ու, 3. ո/ու>ու, ու/ի, 4. ի/ո/ու>ի, ի/ու, 5. ի/ ալ>ի, 6. ի/ան>ի, 7. ի/եան>ի, 8. ի/եա>ի/ա ներքին, 9. ի/ե>ի, 10. ի/ներքին թեքման ա> ի/ան, 11. ու/ա>ի, 12. ոջ/ա>ոջ, 13. ոջ/ու>ոջ/ու, 14. ոջ/ե>ոջ/ե/ո, 15. ի/ա>ի/ան, 16. ի/ո/ա>ի, 17. ի/ոյ/վան>վա, 18. ի/ո/եան>ի, 19. ի/ո/ե>ի, 20. ի/ու/վան>ի/ու/վան, 21. ի/ու /ոջ>ոջ, 22. ո/ու/վան>ու/վա, 23. ի/ո/ու/վան>վա, 24. ի/ո/ներքին թեքման ա/ներքին թեքման ի> ի/ու/ան, 25. աու/ի>վա/աու:

Ըստ էության՝ թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում առկա հոլովական գուգաձևությունների հանրագումարը ցույց է տալիս, որ գուգաձևերի գոյացումը բացառապես հիմնավորվում է պատմական, ձևաբանական, հազվադեպ դեպքերում՝ իմաստային գործոնների թելադրանքով՝ ընկալվելով որպես ավանդաբար հաստատված և համաբանությամբ ու միասնականացման միտումով պայմանավորված լեզվագործածություն: Այս ամենի շնորհիվ առաջանում են տարատեսակ բաշխումներ: Այս գործոնների փոխազդեցությունը նպաստում է, որ միտումների համընկնելու դեպքում դուրանա հիմքերի բաշխման որոշակիությունը և հոլովման տիպի որոշումը, իսկ դրանց չհամընկնելու կամ խաչաձևելու դեպքում, ըստ Գ. Ջահուկյանի, գործում են այսպես կոչված՝ խաչաձևության դոմինանտության և խաչաձևման գուգաձևության օրենքները⁶, որն էլ հանգեցնում է հոլովական գուգաձևերի առկայությանը:

Որպես ամփոփում՝ նշենք, որ քննարկվող լեզվական տարբերակներում գուգաձևերի առատությունը ցույց է տալիս, որ ինչպես միջին հայերենի, այնպես էլ Մշո բարբառի հոլովման համակարգերում առկա է անհամակարգայնություն՝ որպես հայերենի հոլովման տիպերի պատմական զարգացման դեռևս չհաղթահարված գործընթաց: Ինչպես վերոբերյալ փաստերն են հիմնավորում, թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում միևնույն անունը եզա-

⁶ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974թ., էջ 195:

կի թվի սեռական-տրական հոլովներում մինևույն քերականական նշանակությունն արտահայտելու համար մեկ թեքույթին զուգընթաց կարող է ստանալ մեկից ավելի թեքույթներ՝ ստեղծելով զուգաձևությունների ազատ գործածման տարբերակներ: Համապատասխան փոխանցումներն առկա են ինչպես ամենատարածված ի հոլովիչի, այնպես էլ այլ հոլովիչների միջև: Այս հանգամանքը Մշո բարբառի դեպքում արդարացված է, քանի որ խոսքը վերաբերում է հայերենում գրական լեզվի կարգավիճակ չունեցող, չմշակված լեզվավիճակի մասին, իսկ միջին հայերենի դեպքում խնդիրը բարդանում է, քանի որ նմանատիպ փաստերը երկբայում են այդ լեզվավիճակի գրական լեզու լինելու հանգամանքը, որն ինքնին ուսումնասիրության մեկ այլ հարցադրում է:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Ձևաբանություն, Ե., 1975թ.:
2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Ե., 2002թ.:
3. Ս. Հ. Բաղասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958թ.:
4. Ժողովրդական բանահյուսություն, Բ, Ժողովրդական վեպ, Ե., 1944թ.:
5. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 10, Ե., 1967թ., հ. 13, Ե., 1985թ.:
6. ՀԲԱ ծրագրով լրացրած տետրեր՝ 35, 56, 55, 152, 36, 312:
7. Ք. Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985թ.:
8. Գ. Մկրտչյան, Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն, (ատենախոսություն), Ե., 2011թ.:
9. Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974թ.:

Garik Mkrtchyan - Statistical Evaluation of the Variants of Genitive and Dative Cases in Middle Armenian and the Dialect of Moush. - This paper demonstrates that both in Middle Armenian and in the dialect of Moush a singular noun in genitive and dative cases can have more than one declension to express the same grammatical meaning by allowing a free usage of variants. This circumstance is justified in case of Moush dialect as it represents an unpolished language form not regarded as a literary language, while in case of Middle Armenian the issue is getting complicated as the availability of such facts jeopardizes its being a systematized literary language.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	3
ԳԼՈՒԽ Ա. ԲԱՐԲԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	5
Ադաբեկյան Մ.Ա., Հայոց լեզվի բարբառային ձեռագիր նյութերի համակարգչային մշակման խնդիրները.....	5
Մեսրոպյան Հ.Հ., Վանի բարբառային բառազանձի երախտավոր գրառողները.....	13
ԳԼՈՒԽ Բ. ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	23
Կատվայան Վ.Լ., Բայազետի բարբառի ձայնավորների ընդհանուր բնութագիրը.....	23
Միքայելյան Ս.Ա., Արաբերենի բաղաձայնների արտացոլումը Անտիոքի հայերեն բարբառներում (հնչյունաբանական քննություն).....	37
Միքայելյան Ս.Ա., Արաբական փոխառությունների ձայնավորների արտացոլումը Անտիոքի հայերեն բարբառներում.....	51
ԳԼՈՒԽ Գ. ԲԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	62
Աբրահամյան Ա.Ա., Համշենի բարբառում առկա «Լէխտըր» բառանվան շուրջ.....	62
Խաչատրյան Հ.Ռ., <i>Առու</i> հասկացության զուգաբանությունների բարբառային քննություն.....	72
Մեսրոպյան Հ.Հ., Նվիրապետական բարձրագույն կարգին առնչվող բառերի բարբառային բնութագիրը.....	83
ԳԼՈՒԽ Դ. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	98
Բառնասյան Զ.Ա., Հայերենի բարբառների դերանվանական որոշ ձևերի շուրջ.....	98
Գևորգյան Գ.Գ., Տեղաշարժեր բարբառների եղանակաժամանակային համակարգերում.....	106
Գևորգյան Գ.Գ., Քերականական համանիշության դրսևորումները հայերենի բարբառների բայի անցյալ ժամանակաձևերում.....	118
Գևորգյան Գ.Գ., Քերականական համանունության դրսևո-	

րումները հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգում.....	127
Միքայելյան Ժ.Ա., Բայի երկրորդական բաղադրյալ ժամա- նակները հայերենի արևելյան խմբակցության մի քանի բար- բառներում.....	137
ԳԼՈՒԽ Ե. ԶՈՒԳԱՂՐԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻ- ՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	152
Մկրտչյան Գ.Գ., Միջին հայերենի և Մշո բարբառի անվանա- կան հոլովումների զուգադրահամեմատական բնութագիրը.....	152
Մկրտչյան Գ.Գ., Գոյականի սեռական-տրական հոլովների հոլովական զուգաձևությունները միջին հայերենի և Մշո բարբառի տվյալների համադրմամբ.....	166

ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊՐԱԿ Ա

Ձևավորումը և էջադրումը՝
Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի